



# ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ Ա. Մ Ս Ա. Գ Ի Բ

№ 2 1890

ՓԵՏՐԻԿԱՐ

1890 № 2

ԵՐԿՐՈՒԹՅ ՏՎՈՒ

	Երես
1 ՆԱՄԱԿԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ . . . . .	165
2 ՄԱՆՈՒԵԼԱՆՑ ԼԵԽՈՆ . . . . .	174
3 " " " " " . . . . .	175
4 ԱՐԺԻԴԵԱՆ . . . . .	176
5 ՊԻՏՈՇԵԱՆՑ ՊԵՐՃ . . . . .	177
6 ՄԻՒԹԱՐԵԱՆՑ ԱՐԵԱԼՈՅԾ . . . . .	211
7 ԱԲԵՎԱՆ Մ. . . . .	220
8 ՀՈՅԵԼԻ Ից ԱՐԺԻԴԵԱՆ . . . . .	237
9 ԱՅՐՖՈՍԵԱՆՑ ԼԵԽՈՆ . . . . .	240
10 ԱՐԱՄԱԿԱՆԵԱՆՑ ԱԲԵՏԻՔ . . . . .	258
11 Ա. Ա. Ե. Պ. . . . .	276
12 ԼՈՒՄԵՆԻ . . . . .	285
13 Լ. Օ. . . . .	295
14 ԶԼԻՑԵԱՆ ԱՐԵՏԻՄ . . . . .	306
15 Z. . . . .	314
Պատրիկեանի նամակ.։ Օր. Կուալով.	
Դիմակաւորին (բանասանեղծութիւն).	
Մանրուք (բանասանեղծութիւն).	
Տիուր եղզ (բանասանեղծութիւն).	
Բղդէ (շարունակութիւն).	
Ուսուցիչ (բանասանեղծութիւն).	
Ազգակին վեպ (վերջ).	
Երգեր (բանասանեղծութիւն).	
Աց թիւրքաց Հայուսասանին (վերջ).	
Թիվվայր սալօն.	
Գրախոս.—Գրակ. Ֆիրզուափ և այլն.	
Ա. մասաւ Գրօնիկ.—Ակմառիններու.	
Գաւառ . Գրօնիկ.—Մեր կեանքից.	
Մարզառ. Բնկ. ընդհանուր ժողովը.	
Վիլհելմ Ա.ի նոր հրավարակները.	


ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԹԻՖԼԻՍ

Մ. Գ. ՅՈՅՏԻԵՎԱՅՐԻ ՏՊԱՐԱՅ.

Տիոգրաֆիա Մ. Դ. Ռունակա, Խ. Գոլ. պոտ. տօն. ճ. Ն 41.

1890



# ՄՈՒՐՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

## ԱՄՍԱԳԻՐ

№ 2 1890

ՓԵՏՐԻԱՐ

1890 № 2

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

~~~~~

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ԹՈՏՐԵԱՆՑԻ

1890

Дозволено цензурою. Тифлисъ, 1-го Февраля 1890 г.

Типографія М. Д. Ротніанца, на Гол. просп. соб. д. № 41.

# „ՄՈՒՐՃ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍՏԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա.Մ.Ս.Ա.Գ.Բ.Ի

1890 թ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ է

«ՄՈՒՐՃ»-ը կը հրատարակվի ամեն ամիս 9—11 թերթ մեծութեամբ, եթէ բաժանորդագրութիւնը բաւականաչափ յաջող լինի:

«ՄՈՒՐՃ»-ի խմբագրութիւնը դիմում է իւր բոլոր ներկայ բաժանորդներին խնդրելով, որ նոքա իրանց կողմից ջանք չը խնայեն՝ «Մուրճ»-ը իրանց շրջաններում տարածելու համար:

«ՄՈՒՐՃ»-ի 1889 թ. 12 համարները ծախում են 12 բուր-լիով: Բայց ներկայ 1890 թ. նոր բաժանորդները արտօնութիւն ունին անցեալ 1889 թ. «Մուրճ»-ը ստանալ 8 բուրլիով ուղղակի խմբագրութիւնից, երկու հատորներով կազմած:

«Մուրճ»-ի տարեկան բաժանորդագինն է 10 բուրլի:

Ուսուցիչները վճարում են 9 ր., ուսանողները՝ 8 ր.: Ընդունում է բաժանորդագրութիւն նաև մաս-մաս, առաջին կիսամեակում ամբողջը վճարելու պայմանով:

Ուրիշ աեղերից դիմում են՝ Տիֆլիս. Ռեդակցիա ժурнаլա „ՄՈՐՎԵ“.

Արտասահմանից՝ Tiflis (Caucase). Rédaction de la Revue «MOURTCH».

卷之三

小序

序文

# ՊԱՏՐԻԿԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Ա. ՆԱՄԱԼԵԱՆԻ

ՕՐԻՈՐԴ ՆՈՒԱՐԴ

Ս է բ ե ր է ք ո' յ ը

Յիշո՞ւմ ես օրիորդ Նուարդ Մեսրոպեանին, որի մասին գրել էի  
անցեալ նամակում։ Այդ օրիորդից նորերա մի նամակ ստացայ,  
որի հետ կարեոր եմ համարում քեզ ծանօթացնել։ Այդ նա-  
մակը, ի հարկէ, մի անսպասելի բան էր ինձ համար։ Ես շատ ու-  
րախ եմ, որ օրիորդը այդքան համարձակութիւն ունեցաւ և գրեց  
այդ հետաքրքրական խօստովանութիւնը, որը ինձ միջոց տւառ օրի-  
որդին աւելի մօտիկ ճանաչելու։ Ահա՝ նամակի բովանդակութիւնը։

Յարդելի պարոն Պատրիկեան։

Դուք կը զարմանաք՝ կարդալով ստորադրութիւնս։ Մի օրիորդ  
նամակ զրի մի համարեա թէ անծանօթ երիտասարդի, որի հետ  
տեմնելէ հացկերոյթի ժամանակ և որից հազիւթէ մի երկու խօսք  
է լսել—օտարոտի պէտք է թւիր։ Բայց ես յոց ունեմ, որ իմ Զեր վե-  
րաբերութեամբ տուացած հաւատս սխալ չէ, և Դուք կը նայէք  
նամակիս վերայ ո՛չ ըստ ձեւականին, այլ ըստ ներքին իմաստի։

Մեր տան հացկերոյթի ժամանակ ոչ Դուք կարող էիք ինձ ճա-  
նաչել, ոչ ես՝ Զեզ։ Բայց և այնպէս, ես նկատում էի Զեր այն վերին  
աստիճանի ներողամատութիւնը, որ պահպանում էիք դէպի Զեր շր-  
ջապատողները, նա մանաւանդ դէպի Մերգօյեանը։ Դուք դուցէ զար-  
մանում էիք, կամ այժմ զարմանում էք, որ ես ինձ այնքան ան-  
տարբեր էի պահում դէպի ինձ շրջապատողները։ Բայց չէք զարմա-

նալ, եթէ ինձ լաւ ճանաչէք... ես սովորած եմ արդէն իմ դրութեանը:

Դուք, իբրև հիւր, աւելի քան քաղաքավարի էիք և չափազանց լուռ: Ես հաւատացած եմ, որ ուրիշ գէպքում Դուք աւելի քան ասած կը լինէիք և ինձ չէիք ստիպիլ այս նամակը գրելու: Ես յոյս ունեմ, որ Դուք հաստատ կը մնաք Զեր խոստումին և մեզ կրկին կ'ացցելէք: Սակայն ես մտածում եմ.— եթէ ացդ օրն էլ պատահաբար խանգարեն մեզ խօսելու, այն ժամանակ ի՞նչու շահած կը լինեմ ես Զեր ացցելութիւնից:— Ոչի՞նչ: Մինչև անգամ եթէ խանգարողներ էլ չը լինեն— գուցէ խօսակցութիւնը իւր զլխաւոր ինձ հետաքրքրող կէտից շեղւի և ես մնամ անբաւական:

Ուստի, խնդրում եմ, եկէ՛ք մեզ մօտ, բարի հիւր եղէ՛ք. բայց նախապէս իմացէ՛ք իմ մի քանի զգացումները:

Դուք, կարծեմ, ինձ անպատրաստ համարեցիք լուրջ կերպով վերաբերելու Ֆլորերի վէպի ներքին իմաստին: Ես Զեզ չեմ մեղադրում: Զեր տեղը ես լինէի, մի և նոյնը կ'ենթադրէի. ես մինչև անգամ աւելի խիստ կը խօսէի, ուղղակի կը յացտնէի իմ բողոքը, որ անպատրաստ մարդիկ ացգտեսակ վէպեր են կարդում: Իմ կրթութեան մէջ, սակայն, Զեզ անցայտ մի կէտ կայ, որ ինձ ներում է աւելի լուրջ խընդիրներ զնել և քննելը: Այդ կէտը դարձեալ անցայտ պէտք է թողնեմ Զեզ համար, որովհետեւ նրան ուրիշն հաղորդելու համար կարեռ են արտակարգ պայմաններ:

Իմ մայրը դէմ է այն բանին, որ ես չափից դուրս կարդում եմ: Գիտէք. ես ինքս էլ դէմ եմ չափազանց կարդալուն, և ուրախ կը լինէի, եթէ ես ստիպւած չը լինէի այդքան կարդալու: Ըսթերցանութեան մէջ կայ մի յացտնի աստիճան, որ կրթւած մարդու պահանջն է. բայց ես աւելի եմ կարդում և արդէն աւելին ունի նոյն բնաւորութիւնը, ինչ որ թղթախաղը— անմասնագէտ թուղթ խաղացողի համար, որ ժամանակ անցկացնել կամ մոռացութիւն է որոնում:

Ես ուրախութիւնով կը կատարէի մօրս խնդիրքը և չէի կարդալ. բայց ի՞նչ պէտք է անէի այն ժամանակ Պաշնամուր ածէի: Առաջինը՝ միշտ դաշնամուրով զբաղւիլ չի կարելի, երկրորդ՝ դաշնամուրը մարդուն յոզնեցնում է, իսկ նորա զլիսին, նորա ուղեղին բաւականութիւն չի տալիս: Ես խսկապէս մի ամբողջ շաբաթ թողի

գիրք կարդալը, բայց անգործութիւնից ստիպւած՝ սկսեցի ճաշից յետոց քնել և առաւօտները ուշ զարթնել:

Դուք չը կարծէք թէ ես տան տնտեսութիւնով չեմ զբաղ-  
ւում: Բայց այդ տան տնտեսութիւնը ինձնից խլում է միայն մօտ 3  
ժամ... և պէտք է մի բան խոստովանեմ, որ մեր տան տնտեսու-  
թիւնը ինձ չի էլ հետաքրքրում: Մեր ընտանիքը մի արհեստաւորի,  
մի գիւղացու, մի օրւայ աշխատանքով ապրողի ընտանիք չէ, որ  
նորա տնտեսութիւնը ինքն ըստ ինքեան իւր մէջ հետաքրքրական  
բան պարունակի: Մեր տարեկան հաշւեկշուր փոքր ինչ այս կողմ՝  
փոքր ինչ այն կողմ—հոգսի և մտածմունքների առարկայ չէ կարող  
լինել, և փառք Աստծու՝ չէ էլ լինում:

Ուրեմն ի՞նչ անեմ:

Եթէ ես թողնեմ ընթերցանութիւնս և անձնատուր լինեմ իմ  
սիրած գործերին—ես լաւ զիտեմ, որ ինձ դէմ կը զինեմ ոչ միայն  
մօրս, այլ և հօրս և շատ ազդականներիս, և ինձ մի արհեստական  
դրութեան մէջ կը դնեմ:

Ես փորձեցի ձրի դասեր տալ մի տարրական դպրոցում: Բայց  
այդ պարապմունքը չը գոհացրաւ ինձ և վիրաւորեց մօրս և ես շու-  
տով հրաժարեցի: Դպրոցը առանց այն էլ վարժուհի բռնելու կարո-  
ղութիւն ունէր, այնպէս որ իմ պարապելը մինչև անգամ վնասել էր  
մի աղքատ վարժուհու, որին առաջուց խոստացւած է եղել իմ  
կատարած պաշտօնը:

Ես առաջարկեցի ծնողներիս, որ կարողութիւն տան ինձ բա-  
նալու մի փոքրիկ մանկական գրադարան, որից ձրի օգտւեին ուսում-  
նարանի աշակերանները, իսկ ես ղեկավարեի նոցա ընթերցանութիւնը՝  
համեմատ նոցա աստիճանաբար զարգացումին: Ծնողներս այս ան-  
գամ շատ որոշակի բացասեցին, առանց մինչև անգամ հետս վիճե-  
լու, խօսակցելու:

Ես մոտղութիւն ունէի մի փոքրիկ ընկերութիւն կազմելու,  
որի անդամները կանոնաւոր կերպով շրջէին մեր քաղաքի աղքատ  
ընտանիքները և ըստ կարողութեան օգնէին նոցա: Նոյնպէս մոա-  
գիր էի սովորելու մի քանի մասնր-մունր արհեստների: Այդ բոլորի  
մասին երբ ակնարկում էի ծնողներիս, ասում էին. «Էլի «տուտու-  
ցութիւնդ բռնեց»:

Դուք կ'ասէք. ինչո՞ւ էի ես այդքան լսում՝ ծնողներիս, ինչո՞ւ աւելի համարձակ չէի վարւում:

Ո'վ զիտէ, գուցէ այդուեղ ես ևս մեղաւոր եմ, գուցէ ես բաւականաշափ համարձակ չեմ: Բայց ես էլ ունեմ պատճառներս:

Ես այդ բոլոր ենթադրութիւններիս մասին հաղորդում էի իմ ընկերուհիներիս և մի քանի ծանօթ երիտասարդների: Երևակայեցէ՛ք, որ սոցա կողմից ես աւելի վիրաւորիչ սառնութիւն էի տեսնում, քան իմ ծնողների կողմից: Ծնողներս ասում էին, թէ այդ լաւ բաներ ես ցանկանում, բայց աղջկան չի սազիլ այդպէս գործերով զբաղվիլ, թէ դա մեր բանը չէ և այն: Խսկ իմ ծանօթները ուսերն էին թափ տալիս, հանաքի էին գցում կամ մինչև անգամ ծաղրում էին: Խնչ վերաբերում է այնպիսի պարոնների, ինչպէս ձեր տեսած Սեհրաբեանը և Սերգօցեանն են, ես դոցա մինչև անգամ չէի յայտնում իմ իղձերը, համարելով դոցա բոլորովին անպատրաստ լուրջ գործերի համար:

Խնչ անեմ: ի՞նչպէս անցկացնեմ իմ ժամանակը. ի՞նչպէս ես ինձ թմրացնեմ, ինձ խաբեմ, որպէս զի չը զգամ ապրելս:

Ես յոռետես չեմ, ես յուսահատուած չեմ. ես կեանքը գնահատում եմ, ես յոցեր ունեմ... պէտք է ժամանակաւորապէս մի կերպ ինձ պահեմ—մինչև աւելի լաւ բուպէների գալը:

Ես վճռեցի հպատակւել ինձ շրջապատողների հաճոյքին—տանը մնալ անգործ... բայց նւիրեցի ինձ ընթերցանութեան: Կարգում եմ ամեն բան, ամեն տեսակ գրքեր: Մի անգամ կարգացի մի քննադատի յօդւած, որտեղ յայտնւած էր այն միտքը, թէ զիտութիւնը կարող է մարդուն թարմ պահել, պահպաննել յուսահատութիւնից: Ես փորձեցի զանազան զիտութիւններից գրքեր վերցնել և լուրջ պարապել. բայց այդ զիտութիւններից ոչ մէկը, բացի պատմութիւնից, չը կարողացայ մարսել: Յետոյ երբ պատմական գրքեր էլ մի քանիսը թերթեցի—այդտեղ էլ հիասթափւեցի: Այժմ առժամանակ գերադասում եմ վէպերը:

Պատահաբար Դուք ինձ հետ ծանօթացաք այն ժամանակ, երբ ես կարգում էի Մադամ Բօվարին: Այժմ իմ ձեռքին է Մարկ Տուէնի սրամիտ պատկերների և բանասիրականների ժողովածուն: Եզուց կը լինի մի ուրիշ զիրք:

Այժմ կարծեմ մասամբ համոզւեցիք, որ Դուք սխալում եիք ինձ անպատճառ գոնելով—հէսց թէկուղ վէպերի համար։ Պէտք է ասեմ, որ ինչ վէպ հաւանում եմ, նորս վերաց աւելի երկայն եմ կանգ առնում։ Մարդամ Բօվարին ինձ հետաքրքրեց այն կողմից, որ ես տեսայ թէ ի՞նչպէս մի մարդ, որ բաւարարութիւն չի գտնում իւր ներքին իղձերին—կարող է բոլորովին շեղւել իւր ձգտութիւնի ուղիղ ճանապարհից և բոլորովին կորուսոի մատնել։ Դիցուք Ֆլորերի հերոսուհին շատ էր միամիտ, շատ էր սխալ կրթւած։ Բայց խնդիրը միայն այդ կրթութիւնը չէ, այլ և առհասարակ կրթութեան ու կեանքի մէջ եղած տարածայնութիւնը։

Կարո՞ղ էք Դուք ինձ խորհուրդ տալ թէ ես ի՞նչ անեմ։ Ասացէ՞ք—ես շնորհակալ կը լինեմ։ Եկէ՞ք, նստենք, խօսենք։

Կամենում էք՝ հանդիպենք թատրոնում։ Ես այնտեղ եմ լինելու էգուց ծնողներիս հետ։ Եկէ՞ք թատրոն։ միջարարներին բաւական ժամանակ կ'ունենանք ասել-լսելու։

Վճռելով այս նամակը Զեզ գրելու՝ ես յանձն եմ առել ինձ վերաց օտարուի աղջիկ լինելու անունը, ուստի թո՞ղ մի օտարութիւն էլ աւելցնեմ մինչեւ այժմ գրածներիս։ Եթէ այդ բանը իբրև վարմունք չը հաւանէք, մեղաղբեցէ՞ք մեր հասարակական կեանքը և ոչ ինձ։

Իմ ծնողները Զեր մասին բարձր կարծիք ունեն։ բայց Զեզ վերաց չեն նայում իբրև փեսացուի վերաց։ Ես էլ չեմ նայում այդ տեսակէտից։ Ուստի Դուք կարող էք մեզանից չը վախենալ։ Մեր քաղաքում երիտասարդի մի այնպիսի ընտանիք այցելելը, ուր շափահաս աղջիկներ կան, հասկացում է ամուսնանալու, ամուսնացնելու տեսակէտից։ Եւ որովհետեւ այդ տեսակէտը շատ մեծ դեր է խաղում, ուստի մեր երիտասարդների (թէ այր և թէ կին) շրջանում լայն շփում չը կայ, հասարակական ժողովներ չը կան։ Ծնողներս իրանց հաշիւներն ունեն իմ վերաբերմամբ... Եհ բաւական է, այսքան հեռու չը գնանք։ Ուրեմն՝ ես Զեզ կը սպասեմ։

Զեզ յարգող նուարդ Մեսրոպեան։

Ի հարկէ առանց այլ և այլութեան ես գնացի թատրոն։ Օրիորդին տեսայ նստած օթեակներից մէկում իւր ծնողների հետ։ Նա

դիտակով այս ու այն կողմ էր նայում, — շատ արագ նրան խաղացնելով իւր ձեռքում: Յետոյ յանկարծ թողեց դիտակը և բաւականացած իւր նայելուց՝ յետ ընկաւ աթոռի վերայ և կարծես անձնատուր եղաւ մոտածմունքների:

Առաջին միջարարին շատավեցի Մեսրոպեանների օթեակը: Օրիորդը ցանկութիւն յայտնեց դուրս գալ օթեակից փոքր ինչ հետև շրջելու: Ես յայտնեցի բոլոր պատրաստականութիւնս: Օրիորդի ծնողները ուրախ էին, որ ես ինձ վերայ տուայ օրիորդին զբաղեցնելու գործը: Տիկինը մնաց օթեակում, պարոն Մեսրոպեանը գնաց ծխելու: Օրիորդի հետ մենք սկսեցինք յետ ու տուած քայլել:

— Ենորհակա'լ եմ, օրիո'րդ, որ դուք իմ վերայ հաւատ ունեցաք և ինձ նամակ գրեցիք, մի նամակ, որ ինձ անշափ հետաքրքրեցի:

— Ես դեռ էլի ասելիք ունեմ: իմ նամակը բացատրում է ոչ բոլոր իմ կեանքը: Ես ցանկանում եմ, որ դուք անկեղծօրէն յայտնեք ձեր կարծիքը իմ դրութեան և իմ անելիքի մասին: Բայց ես լաւ գիտեմ, որ ուրիշի կեանքի դատավճիռ կարդալը լուրջ մարդու համար հեշտ չէ: ուստի իսկոյն չեմ պահանջում ձեր վերջնական խօսքը, այլ դուք ինձ ցոյց տւէք ուրիշ դատողութեան, ուրիշ տեսակէտի հետեւանքներ, քան իմ յայտնածներն են:

— Օրիո'րդ, ես ձեր զգացմունքների հետ բոլորովին համաձայն եմ: բայց կարծում եմ, որ այդ խնդիրը վճռելը աւելի ձեզնից է կախւած, քան որ և է ուրիշ անձից: Ձեր պահանջները, ձեր ցանկութիւնները մութը չեն. դուք ծարաւ էք իսկական գործունէութեան, մի այնպիսի պարապմունքի, որի մէջ լինէր հասարակաց օգուտ: Սակայն ձեր դիրքը վնասում է ձեր ցանկութիւնների իրագործելուն: Խնդրեմ ասացէք, դուք մտադիր չէ՞ք ձեռք վերցնելու ձեր դիրքից:

— Դիցուք թէ ես կարող լինէի իսկոյն ձեռք վերցնել: Սակայն դուք խորհուրդ կը տա՞ք:

— Եթէ իմ մասին լինէր խօսքը, ես ձեռք կը վերցնէի, բայց ձեր վերաբերմամբ ինքներդ պէտք է վճռէք:

— Դժբաղդաբար, ես վճռել չեմ կարող. ինձ պէտք է այժմ հրամայել, որ ես ձեռք վերցնեմ: Ես կապւած եմ ամբողջ իմ անցեալով իմ ծնողների հետ այն կազմով, որ դուք տեսաք: Ես վճռելու համար պէտք է շատ կուեմ հետո, շատ մտատանջւեմ և դա-

դար չունենամ։ Խակ դուք անկեղծօրէն մտածած և ձեր ձեռքը ձեր սրտի վերայ դրած՝ կարող էք ինձ պատւիրել թէ «գնա՛»—հաւատաւ-լով որ ես էլ խսկոյն այդ պատւէրից յետոյ կը գնամ։

—Ես չեմ կարող պատւիրել։

—Այդպէս էլ ես չեմ կարող վճռել։ Ես ինքս ինձ վերայ չեմ ընդունիլ այդ տեսակ գործի նախաձեռնութիւնը։

Զանգը խփեցին։ Գնացինք դահլիճ։ Միւս միջարարին դարձեալ պատահեցինք։ Օրիորդը անհոգ հարցրեց ինձ։

—Հաւանո՞ւմ էք պիեսը։

—Միջակ է. բայց պէտք է խոստովանեամ, որ ուշադիր չեի։ Ես, ճիշդն ասած, ձեր խօսակցութիւնների ազդեցութեան ասկ էի։

—Դիտէք ի՞նչ, աղ. Պատրիկեան։ Ես ձեզնից շնորհակալ եմ ձեր խօսքերի համար։ Դուք մեղաւոր չէք. Եթէ չէք կարող վճռել իմ վիճակը։ Դուք պարզ ասացիք, թէ դուք ի՞նչպէս կը վարւէիք, եթէ իմ տեղը լինէիք, դա ինձ համար բաւական է։ Այժմ ես զի-տեմ, որ ես պէտք է սպասեմ, մինչեւ որ կամ աւելի համարձակ դառ-նամ, կամ հանգամանքները իրանք իրանք փոխւեն, կամ ինքս ընտելանամ իմ վիճակին և այլ ես պահանջ չը զգամ ուրիշ կեանքի։

—Օրիորդ, պէտք է խոստովանաբար յայտնեմ, իմ տպաւորութիւնը ձեր մասին։ Ես ձեզ բաւականաչափ դարձեալ չը ճանաչեցի։ Մնում են ձեր սրտում դաղտնիքներ, որոնց դուք պահպանում էք ձեր սրտում։ Եթէ այդ գաղտնիքները կամ աւելի լաւ ասած՝ այդ յուսատեղերը չը լինէին, դուք չէիք կարող այդքան հանգիստ լինել, այդքան գւարիթ։

—Ճիշդ է, «բարեկա՛մ»։ Ներեցէ՛ք համարձակութեանս այդ խօսքի համար։ բայց ես այդ խօսքը ասում եմ, իբրև ընկերի, եթէ կ'ընդունէք։ Ես ունեմ գաղտնիք։ և այն պատճառով, որ նա գաղտնիք է, չեմ կարող ձեզ յայտնել։ Բայց ես կը ցանկանաչի, որ ինձ համար բարեկամ մնայիք և ապագայում, աւելի յարմար հանգա-մանքներում, ինձ օդնէիք։

—Ամենայն պատրաստականութիւնով։

—Որ այդպէս է, խօսենք ներկայի մասին և զբաղւենք ներկայով։ Ախ, պարսն Պատրիկեան։ Ես կեա՞նք եմ ուզում, կեա՞նք։ Անբաւական եմ իմ անցկացրած օրերից։ Նկէ՛ք մեր տուն։ Ես ձեզ

համար լաւ-վաս ինչ գիտեմ կը նւագեմ, ժամանակ կ'անցկացնենք,  
կը խօսենք այսուեղի մարդկերանց կեանքից. ես ձեզ ցոյց կը տամ իմ  
նկարած մի կենդանագիրը. ով գիտէ ինչե՛ր պատմեմ...

—Կ'աշխատեմ անպառնառ. գալու:

—Ներեցէ՛ք, իբրև համեմատութիւն չ'ընդունէք. բայց հա-  
մաձայնւեցէ՛ք, որ կարելի է սովորել այն տեսակ անձինքներին, ինչ-  
պէս Սերգոյեանն է: Ես նախանձումեմ, տեսնելով նորա աղաւնէա-  
կան միամտութիւնը, նորա ոգևորւած և համոզւած դատարկաբա-  
նութիւնը... դոնէ գոհ է իրանից: Տւէ՛ք ինձ մի երկու երջանիկ  
օր. ես յետոյ դարձեալ կը տանեմ Սերգոյեանին: Ուրեմն ես ձեզ  
կը սպասեմ: —

Թատրոնից դարձայ տուն մի ծանր տպաւորութեան տակ: Օ-  
րիորդի հետ ունեցած խօսակցութիւնը վերանորոգւում էր իմ ցիո-  
դութեան մէջ և ինձ մոտառանցում:

Երկու օրից յետոյ ես կրիին այցելեցի օրիորդին: Տէ՛ր Աս-  
տուած. ի՞նչ ուրախ և զւարժ էր նա: Որչա՛փ պարզ և մի և  
նոյն ժամանակ նուրբ վարւեցողութիւն ունէր:

—Ահա տեսնում էք, ասաց նա, ոսկեզօծ վանդակում տանջւող  
մի թռչուն եմ ես: Վանդակս կազմում է այն շրջանը, որտեղ ես  
պտտում եմ: Դուք նկատեցիք, ի հարկէ, որ ծնողներս ուրախ են,  
որ ես ուսում եմ առել, բայց եթէ քննէք, կը տեսնէք, որ նոցա  
պէտք չէ ինքը ուսումը իւր հետեանքներով. նոքա գնահատում են  
այն մի տեսակ փայլը, որ ուսումը տալիս է մարդուն: Նոքա զար-  
դարել են իրանց սենեակները. ինչո՞ւ չը զարդարէին և իրանց աղ-  
ջկան, տալով նորան բայցի զգեստից և՝ ուսումնական փայլ: Ե՛հ. —  
բայց թողնեմ գանգատներս: Պարոն Պատրիկէ՛ան, պատմեցէ՛ք ինձ  
թէ ի՞նչ տեսակ յցաներ ունի ձեր՝ երիտասարդների շրջանը իւր ապա-  
գայ անելիքի վերաբերմամբ: Դուք մեզնից աւելի բաղդաւոր կը լինէք:

Սկսեցինք օրիորդի հետ երկայն խօսակցութիւն զանազան նա-  
խագիծների, մտադրութիւնների մասին: Այդ խօսակցութիւններից  
երեւաց, որ օրիորդը ծանօթ է մի քանի բանիմաց երիտասարդների  
հետ, որոնք այժմ բացակայ են այս քաղաքից: Կամաց-կամաց  
պարզեց և գաղտնիքներից մէկը, երբ օրիորդը ցոյց տւալ իւր  
ձեռքով նկարած մի երիտասարդի կենդանագիր: Այն միջոցին երբ

ես զննում էի պատկերը, օրիորդը սեղմած շրթունքներով և լուրջ նայում էր իմ երեսի արտայացութեան:

—Սա գիտէ՞ք ով է, առաջ նա ինձ. սա—իմ ուսուցիչն է, իմ մասնաւոր ուսուցիչը. նա, որ ինձ վարդապետում էր զպրոցից դուրս: Դուք նորան չեք ճանաչում. նա մայրաքաղաք չէ գնացել կատարելագործելու, այլ... Թողնե՞նք, գաղտնիք մնայ առ այժմ:

Օրիորդը ցոյց տալով անկատար թարգմանութիւնների մի քանի փորձեր ասաց.

—Ես այժմ աշխատում եմ այս բանում կատարելագործելու, որովհետև այս գործը թողարկում է իմ վանդակում: Բայց դեռ վարժ չեմ բաւականաշափ:

Խօսեցինք թարգմանական գրականութեան մասին. նա ցոյց տւառ իւր ընտրած գրքերի ցուցակը, որ մեծ չէր և միջակ էր կազմած:

—Աչա՛ այս տեսակ է մեր կեանքը, հառաչեց օրիորդը. սենեկացին գործունէութիւն, նուրբ կերպասների և գեղեցիկ կահ կարասիքների մէջ թողարկութիւնի գործունէութիւն:

—Բայց, օրի՛որդ, կան մեզանում տիկիններից և օրիորդներից և՛ վարդուհիներ, և՛ մանկաբարձուհիներ, և՛ դաստիարակուհիներ:

—Այո՛ կան և ծանօթ եմ շատերի հետ. բայց ինձ ինչ օգուտ ես գործնական բեղմանաւոր գործունէութեան ծարաւ եմ զգում. ինձ գործելու միջոց տւէ՛ք:

Սիրելի քո՛յր. այս նամակը, հաւատացած եմ, քեզ շատ կը հետաքրքրի: Եթէ դու տեսնէիր, թէ ո՛րչափ շնորհալի և անարհեստական ու անկեղծ է խօսում օրիորդը՝ կը զարմանաչիր: Գուցէ դեռ էլի գրեմ մի քանի տող նորա մասին:

Քո Ա. Պ.

Ցորութիւն:

## ԴԻՄԱԿԱՒՈՐԻՆ

ԼԵԽՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

Քո համեստափալլ և քաղցրաժըպիտ այդ դիմակի տակ  
Տեսնում եմ ես չար և սըտապատիր եագօյի պատկեր,  
Եւ այդ սիրալիր աչքերի տեղակ  
Դարանագործի նենգաւոր աչքեր:

Նատ ես խոյս աղւել դու ազնիւ և բաց ճակատամարտից՝  
Գաղտուկ փորելով թշշնամիներիդ ոտների տակը. —  
Կը գալ ժամանակ, և քո սև դէմքից  
Ես կը պատառեմ զազիր դիմակը:

Բայց թող իմ սըրտում դեռ երկար եռայ ատելութիւնը,  
Եւ պատիր հոգիդ դեռ երկար երկար թող խաբէ աշխարհ, —  
Կը պայթէ մի օր համբերութիւնը,  
Եւ այն օր — վախճան ինձ կամ քեզ համար:

Մօսկով. 1889 թ., դեկտեմբերի 18.

# ՄԱՆՐՈՒՔ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԵԼԵԱՆՑԻ

## I

Մենակ ես նըստած եմ տիխուր սենեակում  
Մարող ճըրագիս առաջին.  
Եւ դուրսըն անձրե է մաղում ու մաղում,  
Սուլում ու կոծում է քամին...  
Մենակ ես նըստած եմ և լաց եմ լինում,  
Ինչպէս որբացած մի մանուկ,  
Եւ ինքըս, ես ինքըս էլ չեմ հասկանում՝  
Ինչու եմ թափում արտասուք:

## II

Կայ մի մալը հեռաւոր հարաւում,  
Զառամեալ, սըրտամաշ մի էակ.  
Լուռ ու մունջ նա արցունք է թափում,  
Անտէր, անըսփոփ, միայնակ:

Արցունք թափելով ըսպասում է  
Նա անգին և պանդուխտ իւր որդուն.  
Բայց որդին հողի տակը նընջում է  
Հեռաւոր ձիւնապատ հիւսիսում:

## ՏԽՈՒՐ ԵՐԳԵՐ

ԱՐՄԻԿԻՆԱԿԻ

Գարունն անցաւ... և գարնան հետ  
Չքնաղ վարդը թառամեց.  
Խեղճ սոխակն էլ իւր սիրաւէտ  
Գողտըիկ երգին վերջ դրեց:

Եւ պարտիզում կանաչազարդ,  
Ուր տիրում էր կեանք եռուն,  
Այժմ գունատ, որպէս հիւանդ,  
Խուլ տնքում է մերկ աշուն:

Էլ չի լսւում ոչ ճըլվըլոց  
Անհոգ, անվիշտ ճնճղուկի,  
Ոչ զեփիւռն է՝ առած իւր ծոց՝  
Բերում մեզ բոլըն յասմիկի:

Ալդպէս, աւանդ, սիրտ իմ խղճուկ,  
Անցաւ և՛ քո վառ գարուն.  
Եւ քեզ պատեց վիշտը խեղդուկ,  
Որպէս անկեանք, ցուլու աշուն...

# Բ Ղ Թ է

ՊԵՐՃ ՊՈՌԵԱՆՑԻ

Նուէր մեծ, բժշկապետ Յովհաննէս Գասպարիանցին.

(Նաբունակութիւն 1)

## ԺԱ.

Գ Ն Զ Ո Ւ Ն Ե Ր

Գնչուների ցեղերից երեքն են թափառում հայ աշխարհի գիւղերումը—հայ բօշէք (Գնչու), մթուրներ և չինգեանէք, կամ ղարաչիք։ Թէ առաջինները հին ժամանակն ինչ ծագում են ունեցել և ի՞նչ լեզու՝ իմ գործս չէ, բայց այժմ նրանք հայ են լեզուով և դաւանութիւնով, հայ են հագուստով և բարեհամբոյր ու խաղաղ բնաւորութիւնով։

Ախալքալաքի Ծալկայի գաղթական ժողովրդի լեզուն ու հագուստի տարագն ունին նրանք։

Բօշէքն են մատակարարում մեր աշխարհքին զատկութիւն քաղցր խմորեղէններ և թղթի նման բարակ ու սպիտակ կծկուծ լաւաշներ շինելու համար շարմաղ ալիւր (Կաշկա) մաղելու շարմաղի մաղեր, սովորական հաց թխելու մաղեր, ցորենի միջից չը ծեծուած հասկերը մաքրող շատարարներ, բրինձ և այլ հացահատիկներ ու ընդեղէններ յառակող խախալներ, ցորենի քարերը ջոկող քար-

1) Տես «Մուրճ»-ի 1889 թ. № 12 և 1890 թ. № 1:

մաղներ և տներ շինելու հողմաղներ։ Առաջին երկուսը շատ ճարտարարուեսութեամբ գործում են ձիու պոչի մազից, կամ որ նոյնն է՝ ձարից, մնացածը հիւսում են հորթի կաշուց քաշած բարակ փոկից։

Իօշէքանց ձեռադրծներն են նոյնպէս ուռի բարակ և ճկուն ճղնիկներից հիւսած մեր լաւաշ թխելու յառափաթէքը, մեր հաց դարսելու, մրգեղին չորացնելու և զինու կարասների բերանը ծածկող սալաները։

Իօշէքանց վաստակն արդար է, աշխատում են և վարձ են սուանում։

Նրանք չ'ունին հաստատ բնակութիւն. վարում են թափառական կեանք և ամեն տեղ վայելում են աղգաբնակութեանց յարգանքն ու համականքը։

Թափառում են բօշէքը խմբովին՝ հինգ հինգ, վեց վեց գերդաստուն միասին, և ամենայն գիւղ ուրախութեամբ պատսպարում է նրանց իրանց գատարկ մարազներում։

Նրանց բարձրահասակ հաստ ու պինդ ընտիր իշանն են բառնում իրանց վերայ բոլոր ծանրութիւնը։

Եցնում են բօշաները մի գիւղում և գիւղը կենդանութիւն է սուանում։

Իօշի աղամարդը բինումը (կլեան) նստած՝ գործում է մինչեւ երեկոյ մազ ու խախալ, սալայ ու յառափաթայ. իսկ նորա կինն ու հարսը, կամ հէնց հասած աղջիկը, կոկիկ արելիները հազին, մի մի երկան հօնի մահակ ձեռքներին, շրջում են գոնի գուռը և վաճառում են։

Արեն ու անձրելը, թափառականութիւնն ու բաց օղը ծեծում են բօշի կնոջը, ներգործում են նորա կաշու և գծագրութեան վերայ, բայց անզօր են գտնուում խլել նրանից նուրբ և սիրուն ու հաճոյական կիրապարանքը։

Գանուում են տղեղներ բօշի կանանց մէջ, բայց մեծամասնութիւնը գեղեցիկ և զրաւիչ է։ Նրանց զլուխն ու երեսը, ներքին ծնուռի հետ բոլորուած՝ մի ձուաձև շրջանակ են կազմում, որոնց միջին շարունակ խաղում են բօշի խաժակն աղջկայ կրակոտ, փայլուն և կենդանի աչքերը՝ բարակ, շիկագոյն, կամար յօնքերի

տակից: Ամբողջանում և լրանում է գեղեցկութեան կատարեալ տիսլը, երբ համեստութեան հետ մի ամօթիսած ժպիտ էլ խաղում է նորա բարակ և նօսր շրթունքների վերայ:

Մանում են ազատ համարձակ բօշի կանայքը դիւղացու տունը և իրանց ապրանքը փոխում են սովորաբար տեղական բերքերի հետ:

Բօշի կնոջ համար ոչ մի փակ դուռը չը կաց. նա վատահաքաց յառաջ է գնում մինչեւ վերջին անկիւնը՝ եթէ տան տիրուհին բակումը չի իրան զիմաւորում:

—Անանե՛ր (*Տայըե՞ր*), բաջինե՛ր (*Քոյրե՞ր*), խաթուննե՛ր, մաղ առե՛ք, խախալ առե՛ք, սալաց առե՛ք...

Ո՛չ միայն տան տէրը չի վշտանում բօշի կնոջ ազատ ներս մտնելու վերայ, այլ կատաղի շներն էլ անզօր են գանուում արգելել նրանց մուտքը: Բօշի աղջիկը այնպէս յաջողակ է սպառեցնում մահակը և շրջանաձև դիծ կազմում օդի մէջ իւր չորս կողմը, որ գլխից ձեռք քաշած շունն էլ յետ է լնկրկում և ճանապարհ է տալիս:

Գնեցիր բօշի կնոջից ցանկացածդ ապրանքը կամ ոչ, —մի և նոյն է, դու նրանից չես աղասուիլ՝ մինչեւ նորա կողքից կախուած ոչ խարենի պարկի մէջ ժողոված հացերի վերաց մի կտոր չ'աւելացնես:

Ահա՛ մի ատելի յատկութիւն, որով բօշան լնդհանրապէս զանազանուում է իւր նստկան կեանք վարող հայ եղբօրից:

—Բօշի երես ունիս, ասում են մեզանում պնդերես մարդին:

Ոկալ համեմատութիւն չէ այս, հայհոյի՛ր, անարդի՛ր, հրի՛ր, կոնիցը բռնի՛ր դուրս ձգիր, —բօշի կինը քո տանից դուրս չի դնիլ ոտքը, մինչեւ մի բարիք դուրս չը տանի. իսկ այդ բարիքներից առաջինը և բօշի կնոջ դիմաւոր օգտուելու առարկան հացն է:

Հազար կրկնի՛ր, երդուի՛ր, հաւատացրո՛ւ, թէ տանը թիսած հաց ըլ կաց, թէ վաղը հաց պէտք է թիսենք, վաղն արի տար՝ անհնար է, բօշի կինը երեսը դէմ կը տայ և թովչի լեզու կը թափի, մինչեւ մի բան դուրս իլի:

—Աստծուն ամանաթ եղնի՛ս (*Պատնի՛տ*), մանչերուդ խէրը տեսնես, Լուսաւորչու լուսէն բաժին առնես, արեւուդ սաղաղէն (*Խեռնի՛տ ոկրէս*), բօշին բաժինը տո՛ւր, մի՛ կարիր:

—Մի մաղ տուիր, երկու մաղ ալիւր ստացար, տա՛ր հաց թիսիր ու կե՛ր, սոխաղուում ես ասել բօշի կնոջը:

— Բօշան հաց չի ըներ, ջամնի՞կս, բօշի ձեռքը խմորին չի կպէիր։  
Նա սուտ չի ասում։ Հաւանական է, որ շարունակ թափառակա-  
նութիւնը լոլել է բօշայից հաց թիւելու սովորութիւնը և այս գար-  
ձել է նրանց համար աւանդական նուիրագործուած սովորութիւն։

Մահու շափ յանցանք է բօշի կնոջ համար ձեռքը խմորին  
դիպցնելը. ամենածանր անէծքը, որ բօշի կինը տալիս է իւր դըս-  
տերը, այդ խմոր անելու գաստապարտելն է նրան։

— Քեզի տեսնիմ՝ սև առիքին (տառապաղ) տակը ծածկուե՛ս,  
ջուխտ ձեռքով խմոր էնե՛ս։

Յայտնի է, որ հացատունների առաստաղը թոնրի միսից մշտա-  
սե է. իսկ խմորը շաղախուում և թխուում է սև առիքի կամ ա-  
ռաստաղի տակ։

Ամենասիրելի գրաստը բօշայի համար, ինչպէս ասացինք, հեզ  
էշն է, միակ չորքուտանին է, որ նորա հարստութիւնն է կազմում։  
Նորա գգուանքի առարկան է, նորա երեխանների ուրախութիւնն է։

Կով, եզ, ոչխար, այծ հօտերով առաջարկի՛ր բօշային, նա եօթն  
օրէն ճանապարհ հեռու կը փախչի, զրանով դու նորա ընտանեկան  
պատիւը կ'արատաւորես, նրան կը վիրաւորես։ Նա ինքն իւր սրտի  
վիշտը դէպի իրան ցաւացնող, սուահակ, անհնազանդ զաւակը հե-  
տևեալ կծու անէծքովն է դուրս վիժում իւր նեղացած սրտից։

— Քեզի տեսնիմ, օղո՛ւլ (ռբռէ), հօ՛-հօ՛ էնես, չո՛ւ-չո՛ւ չ'էնես,  
քուոյի (էշն) ձէն չը լսես, սև մաքու գառը գրկես, անպէս խմա-  
նաս, թէ սև իշուն սփան է (էշն գուառուի)։

Հօ-հօ հնչումով սովորաբար քշում են կովու եղանը, իսկ չո՛ւ-  
չո՛ւ ձայնով վարում են իշին։ Բօշէն անիծում է իւր որդուն, որ  
նա երբէք իւր կեանքի մէջ չ'արժանանայ էշ քշելու, իշի զուոց  
լսելու և իշի ձագ գրկելու։ Այս անէծքով նա իշին առաւել գերա-  
զանցութիւն է տալիս գառնից։

Այսշափը չեն, որով բօշէքը խոստովանում են իշանց առաւե-  
լութիւնը ուրիշ զրաստներից։ շատ ասացուածքներ ու աւանդու-  
թիւններ ծածկում են նրանք բօշայական շըջանից դուրս գտնուած  
արտաքին աշխարհից։

Հետաքրքիր են նոյնպէս բօշէքանց հարսանիքների, մահենիք-  
ների, հասարակական ճաշերի և այլ ծէսերի նկարագիրները՝ երգերով

և գործով կառարուած։ Ափս՛ս, որ խսպառ կորչելու է անյայտութեան մէջ։ Վահիենալով չ'ենթարկուել ծաղրի ու կատականքների այն ժողովրդականներից, որոնց մէջ իրանք կատարում են այդ ծեմերը, բօշէքը աշխատում են փախուստ տալ պապենի աւանդութիւնից։ այժմ՝ նրանք ոչ միայն զարար են առել կատարելուց, այլ և մերժում են ացդպիսի սովորութիւնների և երդերի դոյութիւնն իրանց մէջ։

Բօշէքը սովորութիւն են ունեցել պսակուած երեկոյին նորափեսային նատեցնել սառը թռնրի մէջ։ նատում էր փեսան և չէր դուրս գալիս թռնրից, մինչեւ որ նորահարսը մի երկար ու ձիգ երգով խոստումն չ'անէր տունէ տուն թափառիլ, վաստակել, մուրալ, անարգանքներ կրել, երեսը սեացնել, բերել և նրան պահել ու մնուցանել։

Բանաստեղծական բարձր հանճարի ծնունդ կարելի էր համարել այդ երգուածքը, եթէ հնար լինէր ձեռք բերել։

Ոչինչ խոսումներ և բարիք իմ կողմից չը հրապուրեցին բօշացի պառաւին՝ նորից թելազրել ինձ իւր ուրախ որամադրութեան վայրկենական ազդեցութեան ներքոյ երգածը զրի առնելու համար։

Բօշացի կինն իւր գլուխն սպանում էր։ նա լեզու հանած աղաչում էր ինձ՝ իբրև ամենազաղոնի խոսանվանութիւնն պահել իւր իմարական լեզուագարութիւնը։

Բոլորովին նման չեն հայ բօշէքանցը հայ աշխարհի թափառաշրջիկ գնչուների միւս երկու ցեղերը—չին գեանաները և մթռուր, կամ դարաւչիները։

Զինգեանանները մահմեղական շիա գաւանութեանը պատկանող մի ցեղ են, որոնց գործածական լեզուն և հագուստը վերցրած է Հալիբերէջանի թաթարներից։ Աղոտու են նրանք, աներես են, գող են, բայց մի որոշ չափով։ նրանց պարապմունքը մաղ ու խախալ ծախսեն է։ սիրում են նոյնպէս և բարակ ներով որս անել։ Աղուէսներ, կուզներ և մասսմբ զայլեր, էժան գնով ձմեռները կարելի է նրանցից առնել։ Նըջում են նոքա զլիսաւորապէս թուրքերի գիւղերումը։ հայերի մէջ մի տեսակ խորթութեամբ են ներս սողում։

Զինգեանի կնոջ գլխաւոր շաւահէտ եկամուտներից մինն է՝ բարեբաղդ գուշակութիւններով հայ կանանցը խաբելը։ նրանք գուշակում են առաւելապէս եղունդի վերայ և գաւաթի մէջ լցրած չըին նայելով։

Զինգեանաներն իրանց հետ տանում են սև այծի մաղից դործած մի վրան, որի տակին նստելը մի և նոյնն է, թէ բաց օդումը ամեն կողմից փչում է, անձրեն էլ շոշալով ներս է վագում:

Ամենից անպատիւ, աներես, անհասկացող, թուրք և հայ ձանձրացնող, բոլորից արհամարհուած ու անարզուածները՝ դարաւ համ մթուուր ասուած ցեղն է:

Ի՞նչ կրօն են դաւանում սրանք, ի՞նչ նախնական ծէս ու աւանդութիւն ունին—իրանք էլ չը զիտեն. աւելի հաւանական է, թէ սիւննի աղանդին յարուած լինին, բայց և ոչ երբէք չեն մտածում կրօնի վերաց. խօսում են մի տեսակ քրդերէն և պարսկերէն լեզուների խառնուրդով:

Սրանք դառն աղքատ են, ծոց են, գործել չեն սիրում և միայն մուրացկանութեամբ են քարշ գալիս:

Զգուելի է զարաչու տեսքը, գործքը, չափազանց աներեսութիւնը, անասելի աղտօտութիւնը, նիստ ու կացը և վարքը: Մարդկութեան խողերն են իրանց կեղոտոտութիւնով այս ատելի, մերկանդամ թափառաշրջիկները. ընտանիք, տուն, կահ կարասիք, անօթեղէններ ի՞նչ է,—չը զիտեն. աղբանոցներից ժողոված հնտանիների կորներ՝ առանց, գոնէ, սառը ջրի մէջ լուանալու, հաստ մախաթով միմէանց կպցրած՝ փակում է չափահամների մերկ փորոտիքը և մէջքը. կին է, մարդ է, աղջիկ է, նորահարս է, երիտասարդ է, թէ ծեր է՝ հաւասարապէս կիսամերկ են, ձեռք ու կռներ, սրունք ու անդամներ, կուրծք ու զլուխ անպատկառաբար բաց են. մանուկները հօ՛ երկու սեռն էլ միանգամացն մերկանդամ են: Այս ամենը, ի հարկէ, մեզ համար է անպատկառութիւն, նրանք ամօթխածութեան վերաց դաղափար անգամ՝ չ'ունին:

Մի աղտոտ փալասի մէջ պարանոցովը կապած, լանջի վերաց ճնշելով քարշ է ածում իւր հետ ստնդու մայրն իւր երեխային: Զմքած, ցամաքած, ածխի նման սեւացած ստինքը տալիս է մարդակերպ փոքրիկ լամուկի բերանն ու աչքը շլացրած, մէջքը կզացրած, ոտքը կաղալով, ուժահատ, կիսամեռ հիւանդի դալկացած դէմքով, ձեռքի երկար մահակով շների հետ կոխով, ձախ ձեռքով մի ուրիշ մերկ երեխաց ևս քարշ ածելով զիւղերի փողոցներում ճանապարհներին հանդիպողին ձեռք է պարզում զարաչու կինը:

Մարդ չը կայ, որ նրանց չ'անարգէ, չը հաջհոյէ, չը հալածէ.  
մարդասէր գեղջուկ հայ կանայքը, որոնց համար աղքատից երես  
թեքելլ մահացու յանցանք է, որոնց ողորմածութեան պատուիրանն  
է՝ «տո՛ւր ոսկի գօտին, մի՛ քննիլ», որոնց համար ամեն աղքատ ու  
տնանկ, ինչ ազգ ու լեղուից կ'ուզէ՝ թող լինի, Աստուծոյ աղքատն  
է, այսպիսի խնամագութ կանայքն անգամ շատ յաճախ զգուան-  
քով գուրս են անում զարաշու կնոջը, զարաշու մարգուն, զարաշու  
մանուկին:

— Մայրի՛կ, աղքատ է եկել, ի՞նչ տամ, հարցնում է կարեկցե-  
լով դուսորը:

— Ամա՞ն, ամա՞ն, դուրս արա՛, ներս մի՛ թողնիր, մթուուք է,  
զգուշացի՛ր, աչքի սուրմա կը թոցնի, դրանց մեծ ու փոքրը բո-  
լորը գող են:

Անուշադիր է մթուուքը տանտիրոջ արհամարհանքին. նա ճըկ-  
ուում է, ոլոր մօլոր է գալիս, հաշմ ու արաաաւորի դիրք է ստանում,  
երեսի կնճիւները թշուառի է նմանեցնում ու ողորմութիւն է հայցում:

Քրիստոս, մէր-Մայրամն են հայ զիւղերումը նորա մաղթանաց  
առարկաները, խաչակնքելն է գութ զարթացնող զէնքը. իսկ պարս-  
կին պատահելուս՝ մահմեղական զիւղերում՝ Փէզդամբարը, հազ-  
րաթի Ալին, Հասան Հիւսէններն են նրան օգնութիւն: համազը:

— Մայրիկ, ինչ անում եմ, չեմ անում՝ զարաշու կնիկը չի  
գնում, գանգատուում է զիւղացու աղջիկը:

— Աղջի՛, թող մնայ, լաւ մխտքս ընկաւ, գամ քեզ համար  
վիճակ բաց անել տամ, ձայն է տալիս ներսից դստեր ապադայ  
բազգով հետաքրքիր մայրը:

Այդքան բաւ էր մթուուքի կնոջ համար. նա տեղն ու տեղը  
ծանր նստեց չոր գետնի վերայ և սկսեց գովել խորոտիկ աղջկայ  
զարադաշ (Աթոյտ) աչքերը, բերանը, քիթը, քայլը և ամեն ինչը:

Սիրուն օրիորդի քիմքը քաղցրացաւ զարաշու կնոջ հաճոյախօ-  
սութիւնից. մօր բազմապատիկ զգուշական խօսքերը նա մոռացաւ,  
տուն մտաւ, գոգը լիքը գուրս բերեց հայ, ալիւր և մթուուքի կը-  
նոջ պարկը լցրեց:

Այս զուշակութեան վճարքը չէ, այն փողով պէտք է լինի, ա-  
պա թէ ոչ քալը չի խօսիլ (Գուշիռութեանը չի երագրագրուել):

Աշա ստացաւ մժոռուբի կինը զաւակասէր մօրից մի երկու կոպէի և սկսեց անխնայ շռայլել սիրուն աղջկաց առաջին ամենացն բարիք:

— «Սպիտակ նժողովի վերաց, ասողերի տակ թուցնելով՝ նստած է ընչացքը նոր ծլած փեսացուն՝ ձեռքերը ոսկու և արծաթի մէջ. նա գալիս է իւր բաղդի ոտքը. վաղուց նա օդը ճղելով թռած, յափրշտակած կը լինէր իւր գողարիկ որսը, բայց մի մեծ անհուն անդունդ նորա առաջին բացուած է, մի երկնամբարձ սար ճանապարհ չի տալիս նրան. իսկ այդ վիճն ու լեռը ոչ ոք են, եթէ ոչ քանի մի ուրիշ կտրիճներ, որոնք նախանձելով երիտասարդի բաղդառութեանը, իրանք են ուզում անմահական խնձորին տիրանալ»:

— «Օ՛հ, ի՞նչ երջանիկ ես, խորոտմորոտ աղջի՛կ, զլուխտ լուանալուս սանտրի հետ իջած քո մի հատ մազը աներևութաբար մօսդ կանգնած խատուտիկ աղաւնու ոտքն է փաթաթուել. աղանին բաղդ բաժանող հուրիների հրամանակատարն է. նա պարզ երկնքի վերացից թեթև հողմին է յանձնել մազդ. հովն երկար ժամանակ իւր թեւերի վերաց տարուբերել է անուշ քնով քնած սիրաբորբոք երիտասարդների զլիսալերել. շատերի միջից միայն քո ճակատի գրուածն է դուր եկել իւր քաղցր ու սիրուն պատկերով հեղասիւգ հովիկին և նա վայր է ձգել մազդ ջահել տղամարդի աչքերի վերաց, երբ նա անոյշ երազներով հարբած՝ մրափած է եղել քնի մէջ: Մազդ խտողեցրել է երիտասարդի աչքերը. նա ձեռքը տարել և վերցրել է երկար ու փափուկ կանացի մազը: Այդ մազ չէր, այդ Զափար աղի ճօմիւն տէզի սուր ծայրն էր, որ ցցուեց հուրիների սիրելի քաջ իգիթի սիրու, չը վիրաւորեց, արիւն չը դուրս բերեց, այլ կրակ դառաւ, վառեց նրան. — Եօթը սարի ետեւը լինիս, եօթը թերթ երկինքը բարձրացած լինիս, եօթը տակ գետինքը մտած լինիս, ուր որ կաս, որտեղ գտնուաւմ ես, դու ի՞մն ես, իմ ձեռիցը չես պրծնիլ, ասաց սիրեկանդ ու թուրը մէջքը կապեց, նժողովի քամակն ընկաւ: Խեղաց տղայ, ի՞նչ դժուար տեղն է. քամին ուրիշ սիրակէզ երիտասարդների քիթն էլ է մտել, նրանք բոլորը զարթնել են, հոտով իմացել են մազի տեղը, եարիդ (սիրահար) առաջը կտրել են և հուրիների պարզեին տիրանալ են ուզում: Այ, ա'յ, ա'յ, ուզքք, Արարիչ Աստուած, զու ազատես, էս ի՞նչ եմ տեսնում

եղունգիս ծայրին, սո'ւր, կոբ'ւ, արի'ւն, բրդո'ց, կոտորո'ց.  
բոլորն իրար են խառնուել. հարիւրը մէկի վերայ են յարձա-  
կուելու:

«Ուհ... փակում է զարաչին աչքերը և ցնցողական շար-  
ժումներ անում. նայեցէ՞ք, լաւ մտիկ տուե՞ք, գաւաթի ջուրն ա-  
րին դառաւ, չէ՞ք տեսնում»:

Դարաչին մօր ու աղջկայ ուշադրութիւնը հրաւիրում է դէ-  
պի գաւաթի ջուրը:

—Ոչինչ չի երևում, յայտնում է մայրը. իսկ խեղճ աղջիկը,  
ցանկանայ ևս, հնարաւորութիւն չ'ունի տեսնելու. նորա աչ-  
քերը արտասունքով լցուած՝ մթնակալել են. եթէ ամօթխա-  
ծութիւնը արգելք չը լինէր, վաղուց նա երեխայի նման լալիս  
կը լինէր»:

—Մի՛ ցաւացնի գեղեցիկ աչքերդ, աննման աղջի՛կ, աչքի կո-  
պով աղջկայ այլայլմունքը տեսնելով՝ ասում է զարաչին. մտի՛կ տուր,  
հուրիները քեզ սիրել են. «ահա ոտնատակ տուեց քո սիրահարդ  
բոլոր միւս երկուու միներին, նրանցից շատերին կոտորեց, գետնին  
փուեց, մնացողներին էլ փախցրեց և իջաւ ձիուցը, պարզ աղբրի  
ական վերայ կուացած՝ լուանում է արիւնոտ սուրը. ահա՛ նա կրկին  
թռաւ հրեղէն ձիու արծաթապատ թամբի մէջ. պատրաստ կա՛ց,  
նազելի աղջի՛կ, այսօր է՛ նա կը գայ, վաղն է՛ քեզ կը ճկի իւր ու-  
ժեղ կռների մէջ»:

—«Ի՞նչ ես գոյն տալիս, գոյն առնում, սիրունի՛կ, ժպտալով  
խրախուսում է զարաչին, չը լինի՞ վախում ես նորա տղամարդի  
խոժոռ դէմքից. նորա առնական հսկայ մարմնի մէջ թագ է կա-  
ցած մի քնքոյշ սիրտ, սէրը իւր գահը դրել է կտրիճի սրտի մէջ.  
այդ սէրը ապրում է, շնչում է քեզ համար ու քեզանով:—Դու  
ինքդ ես այն սէրը»:

Արշալուսին թերթիկները արձակող կիսարաց կոկոն վարդի  
թարմ կարմրութիւնից աւելացաւ պարկեցաւ կուսի կարմրութիւնը:  
նա համեստօրէն ցած թողեց իւր նազիկ աչքերը և նորա կուրծքը  
սկսաւ մեղմ և պարզորակ լճակի երեսին խաղացող հեղասահ զե-  
փիւրից պատճառած ծածանումի նման ել և էջ առնել:

Մթռութի կինը հասաւ իւր նպատակին: Օրիորդից ոչ պակաս

ցնծաց որդեսէր մայրը. նա հրամայեց աղջկանը մի հաց ևս վերադիր պարզե տալ բազդ գուշակողին:

— Նանա Մէյրամը (Տայք Առողութածածին) քեզ բաշխի այս թառլան դուշը (Քաղաք), բաջի՛, օգուտ է քաղում յարմար դէպէից զարաչն, մի հինշ ապիկ, կամ վարտիկ տուր իմ այս երեխային, հիւանդէ, մրտում է. մի կտոր էլ պանիր, միս, ձու, ինչ որ քո քաղցր սրտից բղիսի՝ տո՛ւր, մի՛ խնայիր, որբ է, հացը չ'ունի, հինգօր չը կայ՝ հօրը թաղեցինք:

Դարաչու կինը հաստատ հաւասարացած էր, որ մի երկու բան դուրս պէտք է տանի այս տանից. և չը սխալուեց:

Մեղաւոր չէր գիւղացի հաց մայրը. մթուուրի կինն այնպիսի վստահութեամբ և վարժ է ապագան առաջիդ բաց անում, այնքան ճարտար և կենդանի է նկարագրում և այնպիսի կոկու ողորկ ոճով որ ո՛վ ասես՝ կը հաւասաց. իսկ բոլոր գուշակութիւնը կատարուում է տեղական թուրքերէն լեզուով, ապա թէ ոչ, մթուուրները հայերէն շատ քիչ են խօսում՝ այն էլ աղճատեալ ալաշկերացու բարբառով:

Այդ մթուուրների կանայքն են, որոնց գիմում է շատ անդամ գիւղացին՝ իւր կորուսուը գտնելու համար:

Մի յուսալի երկդիմի պատասխան տալիս է միամիտ նախասաշարեալին զարաչին և իւր հասովթն ստանում:

Մթուուրները, սովորաբար, իջնում են գիւղերից շատ հեռու, ճանապարհների վերաց, ջրին մօտիկ: Զինգեանի վրանների նման մի կիսամաշ ծածկոց էլ սրանք ունին:

Բաւական է, եթէ մի մաքուր հագնուած ձիաւոր, կամ փոստով գնացող մի ճանապարհորդ տեսնեն մթուուրները: Առանց ժամանակ կորցնելու՝ մօր մի ակնարկից հասկացան և դուրս թափուեցան վրաններից մթուուրի երեխայքը շների հետ միասին: Վազում են նրանք ամենայն զօրութեամբ. նրանց աղաշական ձայները կորչում են վտիտ և ազազուն շների նուազ հաջոցի մէջ. հետզհետէ շները յոդնում են, էլ չեն ընկնում ճանապարհորդի քամակից, դադարում են հաչելուց, իսկ ժիր մանուկները մի քանի հարիւր քայլ հետեւում են թռչող սաղակին կամ սրընթաց ձիաւորին:

Նրանց շունչը կտրուում է, ձայները փորն է ընկնում և միայն

մի խուլ մրմռոց լսուում է ձեռքերը պարզած ողորմութիւն հայցող մանուկների վոհմակից:

Կաց ու զուարձացի՛ր, եթէ ճանապարհորդը խղճաց և մի կոպէկ շպրտեց ճանձրալի մուրացկաններին:

Ականջներդ փակի՛ր, որ չը լսես նրանց բերանից դուրս թափուած միմեանց ուզգած անգրելի հայհոյանքները. կոպէկը ձեռքից ձեռք անցաւ, ծեծ ու ջարդ, երես ծուատել, խռապոտ և կերկերածայն աղաղակներ, նզովք, անէծք իրար է խառնուել:

Վերջապէս մի աւելի ճարպիկը փախցրեց փողը, իւր մօրը տուեց և խաղաղութիւնը տիրեց:

Ահա՛ հէնց այս չինդեանաների մէջ նշանաւոր ֆաթմա պառաւի մօտ էր գնում մեր բաղդախնդիր նզիքէն:

Նա մսաւ վրանի տակը:

## ԺԲ.

### ԱՄԵՆԱԳԵՏ ԵՂՈՒՆԳ

— «Մի բուռն աւաղին թիւ ու համար կայ, գեղին շողշողուն իշամեղուները նրանցից շատ են, բզզոցը ականջին դուրեկան է, տուածը սրտի ուրախութիւն է. դառը քրտնքի բերած կոպէկը ուզտի պոչ է՝ չի երկարի. իշամեղուն թող քեզ կծի, թաք ընի դու նորա արիւնը ծծի. սե փողը սե օրին բանացրո՛ւ, զեղին ոսկով սարեր դարձրո՛ւ. ի՞նչ ես հարցնում՝ ո՞վ է, տրորի՛ր վրովն անցկացի՛ր՝ թէկուզ անտակ ծով է. իդիթ մարդի մի ձեռը եղումն է, մինը մեղրումը: Աև իշով գնացած ճանապարհը կարճ կը լինի. Գեօռօղուի ամպերում թռչոսող դռաթը կատարեալ արծիւ է, որ կայ. որտեղ հասար՝ ճանզերիոդ մէջն ա՛ռ, ծուիկ ծուիկ արա՛, սիրտը քրքրի՛, փետուրն աշխարհքով մին արա՛. ոյժը քոնն է, ոչ ով չի համարձակիլ ասել, թէ աչքիդ վերևն յօնք կայ. իշամուուն շատ զօրեղ է, ինքը փոքր է, բայց խթանը ջուհարդար պողպատից սուր է»:

— Սիրուն աղջիկն ուրիշի ապրանք է, բայց ուզեցար՝ քոնը կը լինի. մէկ երկու պապղան օսկով գլխին տուիր՝ հասած ծիրան է կը կաթի, բուռդ կ'ընկնի. ճաշակովդ չէ՝ ճալի՛ր ու շպրտի՛ր, ուրիշ ծառերի վերայ շատ կան:

— «Կրակը լափեց շէներ ու տներ՝ կրակ տուողի սի՞րան ընչի ցաւի, ձիդ քշի՛ր վրայովն անցկացի՛ր, իշամեզուն բուռն արա՛ քցի՛ր, ո՛չ մտածիր, ո՛չ հոգս քաշիր...»

— «Փա՛հ, փա՛հ, փա՛հ, փա՛հ, հեղեղատի ջուրը վարարել է, սարեր է պատռում, քար ու թումբ է քանդում, ամեն բան կուլ է տալիս... Է՛... Է՛... Է՛... Է՛հ, ափսո՛ս, ջուրը նստում է, սարերի ձիւները հալուեցին...»

— «Ի՞ հերիք է, աշխարհքումն ի՞նչն է յաւիտենական, առաց և աչքը բուժ մատի եղունգից հեռացրեց զարաչի ֆաթման:

Վերեի անկապ ու անհասկանալի երկդիմի խօսքերը սազի ու քեամանչի ներդաշնակ նուազից առաւել քաղցր հնչեցին կօլոտ չարչու համար: Նա շատ լաւ հասկանում էր զարաչու կնոջ խօսքերը:

Ֆաթմէն ֆալ էր բաց անում, զարաչու պառաւը Բղդէի բաղդն էր գուշակում. չինգեանէն եղունգին նացող էր:

Բղդէն երկու կոպէկանոցով երեք անդամ խփել էր զարաչու պառաւի եղունգին ու սե փողը բուռը զրել, զրամը յետ էր գցել եղունգի գաղտնիքը ծածկող հաստ վարագոյրը, բացել էր պառաւի աշքերը և նա յայտնապէս կարդացել էր Բղդէի երեսին իւր ապագայ վիճակը:

— Բերանիդ մեռնե՛մ, բերանի՛դ, սրտի ուրախ փղձկանքն արտայացեց Բղդէն և ձեռքը գրպանը տարաւ, մի երեք կոպէկանոց էլ պարզե տուեց ֆալի կնոջը:

— Թէ Աստուած կը տայ, ասածներիդ կէսն անգամ կը կատարուին՝ զլուխու ոսկու մէջ կը թաղեմ, — լիասիրա խոստումն արաւ նա և տեղիցը վեր կացաւ:

## ԺԳ.

### Ի Շ Ա Մ Ե Ղ Ո Ւ Ն Ե Ր Ը

Շատ ուշ գլխի ընկաւ կօլոտ Բղդէն: Նա կանգնել էր Կարբու Կիղի-մատուռի զանդակառան մէջ, ապուշի նման բերանը բաց՝ ինքնամուայութեամբ աչքը չէր հեռացնում զանգակատան լուսամտի քարի ճեղքից:

’րա աշքի առաջին կատարուում էր մի նորանշան երեսյթ և այնքան անսպասելի արագութեամբ, որ նա ժամանակ չ’ունեցաւ արտասովոր դէպքը ծանր ու թեթև անելու:

Ասեմ, թէ ի՞նչ պատահեցաւ:

Այս անցքից մի քանի օր յառաջ Բղդէն գնացել էր Երևան՝ ապրանք գնելու:

Նատ ժամանակ չէր, որ նա իւր գործը կապել էր Երևանի հետ:

Զհուտ Աղաջանից նա ձեռք քաշեց այն օրը, որ առաջին անգամն Աղաջանը սկսեց հայրաբար յանդիմանութիւն կարդալ նորա երեսին:

—Ամեն տեղից գանդատներ են հասնում ականջիս, նախառեց Աղաջանը. ասում են, որ դու ձեռը կարճ, աղքատ մարդի երեխեց քանց բերանի հացն ես կորում, նրանց տակի վերջին փալասն ես դուրս քաշում, մէկին երկու տոկոս ես առնում, մի շահու ապասիկն երեք անգամ աւելի ես նշանակում, քո ընկեր չարչիներին վնաս ես տալիս, քաղցր լեզուով մուշտարու աչքն ես մտնում, վերջը տակը ջուր կապում. իրա՞ւ է այս բաները:

—Հապա՛ ես ո՞ւյ հօրն եմ պարտական, որ մինչև երեկոյ ոտքեր մաշեմ, տանջուիմ, չարչարուիմ ու աշխատանքս պատահողի փորը կոխեմ:

—Քչով բաւականացի՛ր:

—Աղբանոցներումն եմ գտե՞լ, թէ տուած ապրանքիդ փողը շես ստանում, յանդգնաբար պատասխանեց Բղդէն Աղաջանին:

—Բայց ես քեզ խեղդո՞ւմ եմ, անխիղն կերպո՞վ եմ հետդ վարուում, կրկնապատիկ օգո՞ւտ եմ ստանում:

—Եահ չունենաս ընչի՞ կը տաս, գանձ հօ՛ չե՞ս գտել, հողի տակիցը հօ չե՞ս հանել. արդար վաստակով ո՞վ է հարստացել, որ դու մի կապոց հասարակ կտառով ջհուտութիւն անեիր, էնքան վաստակեիր, որ էս ծովի պէս խանութը բաց անեիր ու չարչիք շինեիր, աշխարհքը տարածեիր. ի հարկէ դու էլ նեղել ես, հարլատահարել ես, մէկին հինգ գրել ես, տներ ես քանդել, էս օրին հասել, որ Կարբու մէջ բոլորը գլորուեցին, դու ոչինչ տեղից յառաջ եկար. մտի՛կ տուր էսքան հին խօջաներին, որոնք Բայազիդումն անքուն ցեցերի, անթիւ հարստութեան տէր են եղել, հետները բե-

րած կայտնքը թիով է քերուել ու էս օր վերջին շունչներն է կոկորդումը տրըփում, քժերը բռնես՝ քաղցածութիւնից հոգիները կը տան, ամեն մէկի խանութումը քո մի օր ծախածի չափ ապրանք չը կայ. էս ի՞նչպէս եղաւ, դու նրանցից շա՞տ իւելօք ես:

— Տօ՛, ապերախտ ու անաղուհաց քրդի շո՛ւն, բարկացաւ ջնուտ Աղաջանը, իմ տնկած ծառերի մէկն էլ դու ես, ոչ բարով իմ չբաղն ես, քեզ մի օր նեղացրե՞լ եմ:

— Իմ աչքը ծափում է, որ ուր գնում եմ, քո լաւութեան վերայ են խօսում, քո լիքը խանութն են գովում, քեզ են երկինք բարձրացնում. լեզի է իմ կերածն ու խմածը, եթէ քեզ զլխի վերաց չը կործանեմ, հողի հետ չը հաւասարացնեմ ու մէն միայն Կարրու գաւառումը մատով ցոյց տալու չը դառնամ:

— Օձի ձագ եմ տաքացրած եղել ծոցումս, որ ուրիշներին կծելուց յետոյ՝ ինձ էլ խայթի, դո՛ւրս, անպիտա՞ն, ճշաց ջնուտ Աղաջանը և հանեց իւր արկդի միջից Բղդէի հիմնադրամ նշանաւոր տասը չուրուկ կոպէկը ու քսակով շպրտեց փողոց:

— Ես Սալլու տղաց կօլոտ Բղդէն չեմ, եթէ ասածս չը կատարեմ, ասաց դառն և կծու ժայիտվ ու աներես անպատկառութեամբ և շտապ քայլերով դուրս ընկաւ, վերցրեց իւր քսակն ու աներեւութացաւ:

Այդ օրից էր ահա, որ Բղդէն կտրուել էր Աղաջանից և ամիսը մի անգամ Երևան էր գնում ապրանք բերելու. այդ օրից սկսած՝ Բղդէն աւելացրել էր իւր աղահութիւնը, կրկնապատկել և եռապատկել էր ընչաքաղցութիւնը. ամենատեսակ միջոցներ՝ ներելի և աններելի՝ չէր խնայում հարստանալու և իւր բարերարին կործանելու. — զափում էր, զջլում էր, տեղն ընկած ժամանակը դողանում էր, բայց աչքը միշտ անկուշտ էր, ախ էր քաշում ու ծուխը քթիցը չէր դուրս գալիս. այս մանր ու աննշան հնարքները բաւական չէին իւր նպատակներն իրագործելու համար:

Ի՞նչ անէր ուրեմն. ի ցաւ իւր սրաի՝ նորա յայտնի հակառակորդը, քանի գնում է, ընդլայնում է իւր առետուրը. բաւական չէին նորա առեղծած չարչիքը, որոնք Բղդէի աչքի փուշն էին, մի օր էլ յանկարծ Կարբու նախկին հարուստ և այժմ ընկած աներից մէկին՝ Բստինենց Կարապետին, որը մշակութեան և երկրագործու-

թեան անսովոր լինելով՝ դուռն երեսին ծածկած էր մնացել, մեր բարեսիրտ ջհուտ Աղաջանը հրաւիրեց քաղցրութեամբ իւր խառնութը, խոստացաւ զրամագլուխ և խորհուրդ տուեց Աշտարակումը մի խանութ բաց անել, կտաւեղէն և մանրունք ծախել:

Այս էլ հերիք չէր. ջհուտ Աղաջանն առաջարկեց իւր մի հատիկ աղջիկը Կարապետի որդի Սահակին, որին, աեղական սովորութեան համաձայն Ահօ կրծառեալ անունով էին կոչում:

—Հիմի՛, որ հացիս կէսը պակասեց, Աշտարակն էր իմ գլխաւոր առեւորի կենդրոնառեղին, եթէ այնուեղ խանութ բացուեց, էլ ո՞վ ինձ պէս մի չարչուց ապրանք կ'առնի, մտածեց Բղդէն և խոպառքիչ մնաց խելքը կրցնում էր:

Ահա այս հանգամանքներն էին, որ նրան ֆալքի ֆաթմացի գուռն ուխտ ուղարկեցին, այս ձեռնարկութիւններն էին, որ նորասուքը Աղաջանի խանութից կարեցին և երեսն երեւան դարձրին:

Ահա գնել էր Բղդէն երեւանից կարեւոր ապրանք և բօշի տղին բարձած յետ էր զառնում, երբ Կարբուց երեւան փոխուած իւր հայրենակից մի վաճառական նրան կանգնացրեց և իւր հետ խօսող ուրիշ անձանօթին ասաց.

—Ամեն օր Կարբի գնացող էիր հարցնում, այս չարչին մեր Սալբու տղայ Բղդէն է, սա է Կարբու անդրանիկ ծնունդը, հիսկ տուն է գնում, ինչ ասելու ես՝ սրան ասա՛, սա կը կատարի:

—Եթէ ացգակս է, մի լաւութիւն արած՝ կը լինես, Բղդէ եղբա՛յր, ասաց նրան անծանօթը, եթէ այս թուղթը տանես և գնես ձեր եկեղեցու Կիզի-մատուռ կոչուած զանգակատուն լուսաւմի վերաց:

Ընծանօթը հանեց գլխարկի միջից մի թուղթ՝ եռանկիւնի ծալած և տուեց Բղդէն:

—Անցեալ տարի ես Մպահանումն էի, պատմեց անծանօթը, մի սպահանցի հայ, երբ իմացաւ, թէ ես երեւանցի եմ, Կարբին մեղանից մօտ է, խնդրեց, աղաչեց, օձի լեզու թափեց, որ այս թուղթը իմ, կամ ուրիշի ձեռքով հասցնեմ Կարբու զանգակատունը: սպահանցին ինքը մեր կողմերը չէր եղած. իւր ասելով՝ նրանք բնիկ հին կարբեցի են եղել. իրանց պապերից մէկը կտակել է իւր զաւակներին, թոռներին և ծռներին՝ երբ և իցէ, ինչպէս որ լինի, էս թուղթը հասցնել Կարբու Կիզի-մատուռի զանգակատան պա-

տուհանը. նզովքով ու անէծքով պատուիրել է իւր կտակը կատարել:

—Հիմա, ասում էր ինձ սպահանցին, կարծես մեր պապի անէծքը  
մեր տան զլիսին ծանրացել է, մեր մէկը երկու չի դառնում, ան-  
բաղդութիւնը տարեց տարի մեզ իւր ճանդերի մէջ է սեղմում: —  
Աղաջում էր, որ էն ցասումն իրանց տանիցը վերացնեմ, որովհետև  
իրանք աչք չեն բացանում, որ անձամբ կատարեն պապի հրամանը:

—Ահա տարին լրանում է, աւելացրեց անծանօթ երևանցին,  
որ թուղթը մօսս է, չը գտայ մի կարբեցի, որին յանձնեմ. շնոր-  
հակալ եմ բարեկամից՝ խնդիրս կատարեց, քեզ ինձ հանդի-  
պեցրեց:

Ամենայն ուրախութեամբ յանձն առաւ Բղդէն և թուղթը  
դրեց ծոցը:

Այս թուղթն էր այժմ, որ Բղդէի ուշադրութիւնը գրաւել էր:  
Դրեց չը դրեց նա եռանկիւնի թղթի փաթեթը Կիղի-մա-  
տուռի զանգակատան բաց պատուհանի վերայ, որ նորա աշքերի  
բքերը յետ բացուեցան, խելացնորի կերպարանք սուացաւ և աչքը  
անկեց պատուհանի տակի շարաքարերից մէկի ճեղքին:

Ի՞նչ էր այն:

Դուրս թուան յանկարծ միմեանց ետևից, կարգապահ զինուոր-  
ների նման, ոսկեփայլ և խոշոր իշամեղուները, որոնց ժողովուրդը  
բոռ անունն է տալիս և որոնց խայթուածքը կարծի կծածից ա-  
ւելի կակծեցուցիչ է:

Բոռերը հետևելով իրարու՝ պատուհանից դուրս էին թռչում:

Միջաների ացդ տեսակից ամեն ոք զգուշանում է, միայն մեր  
Բղդէն էր, որ անշարժ արձանի նման տեղումը մխուեց ու մնաց:  
Նա շուարած էր: Նորա զլուխը միայն ամառուայ շողին՝ թէժ  
արևել տակ՝ դաշտումն արածող և ճանձերից ճանձրացած ճիռ զլիսի  
նման բարձր ու ցած էր անում. նա աչքով ուղեկցում էր իւրա-  
քանչիւր իշամեղուին, մինչև որ օդի մէջ աներևութանում էին:

Սթափմունքը շատ ուշ եղաւ, կերևի, Բղդէի մոքովը մի բան  
անց կացաւ. մի ակնթարթում զլսարկով տուեց, ճեղքից դուրս  
եկող միջաներից երկուսին սպանեց: Միջատը գետին ընկաւ և թափ-  
ուած խճերի մէջ կորաւ:

Բղդէն կուացաւ որոնելու իւր արած որսերը:

Օ՛հ, սարսա՛փ, ոսկի էր առաջին անդամ՝ նորա աշքով լնկած առարկայն, մի մեծ, մէջը փոս, գողաւոր ոսկի:

Այնպիսի արագութեամբ չի յարձակուում որսկան կատուն ծակից անզգու շաբար դուրս սողացած մկան վերայ, որքան Բղդէն իւր անձը սարսուռ ձգող ազնիւ մետաղի վերայ: Զեմ կարծում, թէ նա զգացած լինէր իւր մատի կսկիծը, կամ տեսած լինէր արիւնը, որ սուր քարերին դիպչելով ծորացել էր նորա եղունգի ծաշրից:

Բղդէն չը դադարեց որոնել. ինքը երկու հաս բոռ էր սպանել այդ նա լաւ տեսել էր, իսկ այժմ գտել է միայն մինը. անկարծիք, երկրորդն էլ պէտք է լինի և կայ, մի ինչ որ դեղին փայլուն բան պսպղում է խճերի արանքում. ոսկի է անշուշտ: Երկմտութիւն չի պէտք, իսկական ոսկի է: Բղդէն շատ տանջուեց և չը գտաւ:

— Յիմա՛ր եմ, ի՞նչ է, բարձր ձայնով արտասանեց Բղդէն, իմ բաղդին իմ ձեռքով եմ հարուածում. ո՞ւր եմ թողնում սրանց հեռանան:

Նա դիւթական զօրութիւնով օժտուած թուղթը յափշտակեց լուսամոխ վրայից, գրպանը կոփեց և ձեռքով պինդ փակեց քարի ձեղքի բերանը:

Բղդէն կրակ է կորուել. սարսափելի միջատների խայթիւնը նորա վերայ լուի կծածի շափ սկզբումը չեն ազդում, ոսկու խանդը ցաւի մրմուռի զօրութիւնը չքացրել է: Բայց այս միս ու արիւն է, քար ու երկաթ չէ, խայթի հարուածը մէկ չէ, երկու չէ՝ հարիւրաւոր սլաքներ են շեշտուում նորա ձեռնամիջին, սրան տանել չի լինիլ: Որքան և ատամները միմեանց սեղմեց, երակները ձգեց ամրացրեց, բայց և այնպէս յաղթուեցաւ, թուլացաւ, ձեռքն ինքն անգիտակցաբար յետ դնաց խորշաբերանից:

Ո՞վ զարմանք. անցքն ազատ է, բայց բոռերն այլ ևս չեն դուրս գալիս, իսկ բղզոցը զանգակի մեղմացող զողանջիւնի նման դեռ լսուում է Բղդէնի լսելիքում:

Ի՞նչ է այս:

Բղդէն չը կարողացաւ հասու լինել. արդեօք ի՞նքը ձեռքով ձմել է խորշից զլուխը նոր դուրս հանած ժամանակը մի երրորդ իշամնդուի, որ ոսկի է դարձել և անցքի մէջ ամրացել մնացել, թէ ինչպէս պատահեց, որ խորշն ինքն իրան փակուեց:

Այսպէս է, այնպէս է, վեց հազարեակի զօրութիւնն է,—իւր գիտնալիք գործը չէ, բայց երրորդ տպին փականքի պաշտօն է կատարում, կենդանի գանձերին ներսը բանտարկել է, այլ ևս դադարեց միջատների ուղերորութիւնը:

Ով կեանքի ուշ առիթ է ունեցել տեսնելու բարակ որսկան շանը, երբ նա քանդում է աղուէսի գետնափոր որջի բերանը, նա կը նմանեցնի այս վայրկենում մեր Բղդէին որսորդի բարակին: Նոտապ շտապ յետ է տալիս որսկան շունը ճանգերի ծացրով փորուած հողը և հուստելիքը դնչի հետ միասին թաղում ծակամուտքի մէջ հաւաստելու՝ նե՞րսն է այժմ՝ թանկագին մուշտակացու կենդանին:

Սոյն օրինակ քանդում, քերում է Բղդէն արիւնվուայ եղունգներով պատուհանի քարացած, զարերով ամրացած կրի շաղախը, որպէս թէ, իւր խելքով լայնացնելու ճեղքի բացուածքը և դուրս քաշելու ներսումն ամրացած մետաղը. բայց երբ եղունգները չեն բռնում, երբ մատների ոյժն ու յարմարութիւնը անբաւական են լինում ծացըն երևեցնող դրամը դուրս կորգելու, կօլուր գլուխը կորցրած՝ ատամներն է ի գործ դնում, քիթ ու մոռթն է քարերին շփում:

Ի գուր էր խեղճի տանջանքը. կարելի է ասել ամբողջ ժամ ունայն կորցրեց նա. երբեմն կռանում էր, շաղախները քանդում, երկրորդ սպանածը որոնում և դարձեալ ծակում մնացածի ետևից ձգտում. ոչ մինն է ձեռք գալիս և ոչ միւսը: Նա սկսեց մինչև անգամ ատամներով կրծոտել քարին կպած շաղախը, բայց զուր ջանք և անօգուտ վաստակ, քարը շաղախից և շաղախը քարից կարծրացել էին:

Յուսահատութիւնից սիրու քիչ էր մնում պատուի, և գուցէ առաջին անգամ իւր երեխայութիւնից դուրս եկած օրից լաց եղաւ՝ ճիշդ կամակոր երես տուած մանկան նման, որի անտեղի պահանջներն անկատար են մնում քնքոյշ մօր կողմից:

— Ի՞նչ ցաւ ու կրակ է, մըմնջաց նա, հիմա ես ի՞նչ անեմ:

— Ոչի՞նչ, շա'տ հեշտգործ, — շտապիր տուն, ա'ռ բրիչն ու մուրճը և վերագարձի՛ր, դրդեց նրան ներքին ձայնը:

Բայց օրով-ցերեկով ո՞նց անէր. Կիզի-մատուռը զիւզի կենդրունումն է, դուռը շարունակ բաց է, շարածճի մանուկները սովորա-

բար խաղում են աւերակի մէջ, վայրի աղաւնիների բներն են քանդում, մաշկաթեւ չղջիկներ են հանում պատերի արանքներից. բացի դրանից քուչիցն անցկենողը կարող է նկատել նրան, և ահա Բղդէն իւր հացը կերաւ:

Ի՞նչ անի ուրեմն, ի՞նչ քար գցի իւր զլիխն: Նա մնաց տարակուսած կանգնած, ոչինչ ելք չը կայ. յետ ու յետ գնաց անգիտակցաբար, նստեց թափուած քարերից մէկի վերայ ու աչքը տնկեց պապան ոսկու երևեցող ափին: Երբեմնապէս էլ նորա զլուխը յետ է դառնում դէպի դուրս.—այդ զգուշութեան թելաղբութիւնն էր:

— Յորեկո՛վ... զիշերո՛վ... ցորեկո՛վ... գիշերո՛վ... կրկնեց նա մի քանի անգամ այդ անկապ խօսքերն և վերջը տեղիցը կանգնեց:

— Ե՛ւ ցորեկով և՝ զիշերով, թէկո՛ւզ տարիներով, մինչև որ ձեր բունը քանդեմ, իմ սիրուն շողշողուն բոռե՛ր. զլուխս այստեղ վէր կը դնեմ և ձեզ չեմ թողալ այսոտեղից հեռանաք: Ի՞նչ ուրախ եմ, որ ձեր ընկերը ձեռքիս տակին ճխլուեց, պատի խորշումը մնաց, ձեր ճանապարհը փակեց, ձեզ բանտը ձգեց: Ափս՛ս, սկզբից յիմար ոչխարի նման պէլացել մտիկ էի տալի, թէ ի՞նչպէս են ձեր ընկերները մին մին հեռանում, իմ տունը բանդում, սպահանցու տունը շինում. տե՛ս ի՞նչ Աստուած խելքս առել էր, թլիսմի թուղթը շուտ չէի վերցնում: Հը՛...հը՛...հը՛... տեսա՞ք ինչպէս տազ արիք. հարիւրաւոր տարիներ հանգիստ պառկած էիք, ո՞նց հիմի էլ լուռ կացաք ու կուշ եկաք քարի տակին, որ մի ժամկից շղշղկաք իմ քսակի միջին:

— Դուք հօ ի՞մն էք ու իմը, բայց ի՞նչ եղաւ ձեր երկրորդ ընկերը. ես իմ աչքովս տեսայ, որ գտակով ձեզանից երկսին սպանեցի, այս մէկն ահա իմ գրպանում, հապա մի՞ւմն ուր է:

— Զէ՛, չէ, զլուխս մահի կը տամ ու ձեզնից ձեռք չեմ քաշիլ, հաստատապէս շեշտեց Բղդէն և նորից սկսաւ շուռէ շուռ տալ գետին թափած խմերը:

Արևի ուղղահայեաց ճառագայթն այնպէս զգալի կերպիւ չէր ծակծկոտիլ ու փակիլ Բղդէի աշքերը, ինչպէս մի քարի մութը անկիւնից հուրհրասող փոքրիկ մետաղը: Երեք անգամ միմեանց վերայ ցնցուեց նորա ամբողջ ջղային ցանցը, մինչ նա փայլակի արագութեամբ յարձակում գործեց իւր որսի վերայ և հողախառն սեղմեց բուան մէջ:

Այս տեսիլք չէր, երեւակացութեան վաղանցուկ խաղ չէր. այժմ բղդէն բռնած ունի ձեռքի ափի մէջ երկու հատ ոսկի—փայլուն ոսկի. հողը՝ որի մէջ հարիւր տարիներով նրանք թաղուած են եղել, կարծես աւելացրել է նրանց փայլը:

Բղդէն համբոցներն անդադար կրկնում է և չի կշտանում: Տարիածուն, տարիներով ձգտած իւր սիրեկանի քամակից և հազար տաժանելի տանջանքներից յետոյ հասած սրտի փափագին, այնպիսի խանդակաթ ակնարկ և համբոցներ չի դրոշմիլ իւր սրտի առարկացին, ինչպէս կօլոս շարչին թեթև և փոքրիկ ոսկիներին:

—Այս երկո՛ւ, բարձր ձայնով հաշուեց նա, դեռ քանի՛ երկուսը դարսուած են քո տակիդ, ո՛վ անխօս քար. շատ չի քաշիլ, դրանք բոլորն իմը կը լինին, և, սպասի՛ր էն ժամանակը, ջհուտ Աղաջա՞ն, դու քո հացը կերար:

Բղդէն սկսեց խճերով ծածկել քարի բացուածքը, այնպէս որ ոսկու ծայրն էլ չ'երևաց:

—Զարն սատանէն հակառակ է, բաց դուռն է, մէկը ներս կը մտնի, ոսկու փայլն աշքերին կ'ընկնի: Այն ժամանակն արի՛ էլը ցըխիցը հանի՛ր, համ էն մարդի արիւնը զուր կը թափեմ, համ իմ գլուխս կը կորչի, փսփսաց Բղդէն իւր մէջ և յետ յետ նայելով՝ դուրս եկաւ զանգակատանից:

Նորա բացակացութիւնն երկար չը տեւեց. մի բրիչ և մի կուան ձեռքին, դող շան նման, զգուշութեամբ մի տեսակ անցկացաւ Կարբու նեղ փողոցներով և իրան ներս ձգեց Կիզի-մատուռը:

Երկու ժամից աւել նա անլնդհատ աշխատում էր. քրտինքը գագաթի վերին կենդրոնից առուացել էր և չստերի պատուածքից դուրս հոսում:

Աւելորդ աշխատութիւնն էր. մի քանի կուանի հարուածներ և ահա՛, և ահա՛ փշուր փշուր, կտոր կտոր կը թափուէր փուխր և փափուկ քարը: Այդ քարերից շատ կան Հայաստանի ամեն կողմերում. այդ քարերով են կառուցած մեր հոչակաւոր անթիւ տաճարները: Ճարտարարուեաստ քարտաշն այդ քարիցն է տաշել և կերտել մեր սուրբ վանքերի վերայ հայ փառաւոր անցեալի դրօշները: Հայ ճարտարապետութեանն յատուկ սքանչելահրաշ քանդակներն այդ փուխր քարերի վերայ են ձեռագործուել և այսօր աշխարհի

մէջ հայկական ճարտարապետութիւն անուն են յասկացրել։ Հեշտ էր ուրեմն Բղդէին վշրել լուսամտի քարը, եթէ նա երկիւղ չը կրէր հարուածների թնդոցով իւր զլիսին ժողովել հետաքրքիր հարեան-ներին։

Բաղդաւոր էր Բղդէն, որ յունիսի վերջերն էր, ամեն ոք իւր կալ ու կուտի, իւր դաշտացին աշխատանքի հետ էր, բացի պառաւ կա-նանցից և մանրահասակ երեխաներից՝ գիւղումը ոչ ոք չը կար-բաց և այնպէս զգուշութիւնը ձեռքից թողնելու չէր, կունի հար-ուածները կարող էին հետաքրքրութիւն զարթացնել։

— Ե՛հ, ի՞նչ կը լինի, թող լինի՝ էս ժամանակ ո՛վ կայ դիւ-ղումը, որ քարի թրիսկոցը լսի. երկու-երեք հարուած, և ամեն բան վերջացաւ, տանջուելով հոգահան եղաց, մտածեց Բղդէն և մի զարկ իջեցրեց քարի անկիւնին։

Նորա ձեռքերը թուլացան, նորա մագերը ողնու սուր սուր փը-շերի նման ցից ցից կանգնեցան. այս դրութիւնն է սոսանում կեն-դանին, երբ մի հեռաւոր ոտնաձայն նրան զզալ է տալիս թշնա-մու մերձաւորութիւնը. Բղդէի աշքերը մթագնեցին, երկաթի գոր-ծիքը ձեռքիցը թուաւ, ծնկները ճկուեցին։ Անշուշտ վայր կ'ընկնէր Բղդէն, եթէ օգնութիւն չը հասնէր նրան նոյն լուսամտի գոզը՝ նա խոնարհեց, զլուխը վայր դրեց լուսամտի վերայ և այնուհետե-ինքն էլ չ'իմացաւ, թէ որքա՞ն ժամանակ աշքերը փակ մնաց նոյն անզգայ դրութեամբ։

Ի՞նչ պատճառաւ։

Մի ահարկու և զարգանդելի խուլ թնդիւն էր, որ բարձր երկնակամարից կամ հեռաւոր անդնդից տարածուեց զանգակատան ներսը։ Բղդէին թուեցաւ, թէ ամբողջ երկրագունուն իրար անցաւ. մթնոլորտի խաղաղ դրութիւնը նորա փակ աշքերի առաջ երերում էր, սրբավայրը գլխովին տարուրերուեց։

Առաջին անգամ, դուցէ, սև փողի նշանակութիւնը ճանաչելու օրից, Բղդէի կրօնական զգացմունքը վիթխարի հսկացի ահաւորու-թեամբ կուանի զարկի թնդիւնի հետ՝ մասուռի արձագանքի միջո-ցով իւր բոլոր վեհութիւնով նկարադրուեց ջերմեւանդութեան և կրօնասիրութեան մէջ մնուած, բաց մոլորութեան մէջ ամենը կորց-րած դիւղացի երիտասարդի աշքին։

Արձագանքն էր այն, որ ներս մտաւ կամարակապ զանգակատան պատերի մէջ դրուած հողեաց բղիկների մէջ, ոլորապոյտներով անդրադարձ շրջաններ արեց և Բղդէի գործած մէծ յանցանքի ահաւորութիւնը նորա մտապատկերի մէջ կենդանի նկարագրեց:

Բղդէի և ամեն մի հայքը իստոնէի համար Աստուծոյ սուրբ տաճարների ամեն մի քարը նուիրական է. նա լաւ գիտէ, որ մինչև անգամ անհաւաս Տաճիկը, վայրագ Քուրդը, սատանապաշտ Եղիշին մի մթին երկիւղածութեամբ են վերաբերուում դէպի այդ աւերակ սրբավայրը, շատերը ոտքով մատաղ են բերում, ճագալոյս են վառում և միան խիզճը կորցրած շահամոլ սակաւաթիւներն են եղել, որ չեն խնայել պիղծ ձեռքերով քանդել, աւերել մեր վանքերը:

Կօլոտ Բղդէն գիտէ այս ամենը և այժմ ինքը ձեռի կեղու մետաղի համար անհաւատից աւելի զգուելի ու անգոսնելի դործ է կատարում, իւր ձեռքով կործանիչ է հանդիսանում իւր նախնեաց արեան քրտինքով կառուցած սուրբ տաճարին:

Այդ արգարացի պատճառաւ՝ ինքը՝ ահաւոր սրբութիւնը եօթն թերթեան երկնքից լսելի արեց իւր ահեղասաստ բարկութիւնը:

—Մեղայ քեզ, Տէ՛ր, սեերես մեղաւոր եմ Քո առաջին, հաղիւ երկշոսութեամբ մի շշունչ արձակեց շրմունքներից կօլոտը և անվստահ հայեացքով, կուչ ու ձիգ անելով երեսը դարձրեց դէպի զանգակատան կաթուղիկէն: Ես մեղայ Աստուծոյ, խնախ'ր ինձ, ո՛վ սուրբ Կիզիւմատուռ, մի՛ բլիր իմ գլխիս, աղաչեց Բղդէն, քեղ էլ քաջ յարտնի է, որ քեզ քանդելու մոքով չը զարկեցի ըո քարին:

Կարծես, երինային բարկութիւնն անցաւ, ամենայն ինչ նախ կին անշարժութեան մէջ մտաւ, լուսութիւնը թագաւորեց, արձագանքը դադարեց:

Մի քանի րոպէ ևս մնաց Բղդէն և գլուխը բարձրացրեց:

—Հասկա ի՞նչ անեմ, թողնեմ այս պապղան ոսկիքը քարի տակին թագնուած, կամ թէ թլիսմը կրկին տեղը դնեմ, ճանապարհ տամ՝ գնան, հեռանան, ո՛վ գիտէ ո՛ւմ ձանզն լընկնեն ու ես այստեղ աչքերս ալլած՝ ձեռնունայն դատարկ յե՞տ նստեմ և օրը մինչև երեաչ ոտքիս կաշին ուտելով, լեզուս կէս զազ կախած, որսորդի շան կոյ ոտքիս կաշին ուտելով, լեզուս կէս զազ կախած, որսորդի շան պէս գիւղէ գիւղ քարշ գամ, թէ մի քանի ու փող պէտք է աշ-

խառեմ; որ նրանով կարողանամ փողի, անունի տէր դառնալ ու ջհուտ Աղաջանին—իմ ոխերիմ թշնամուն հողի հետ հաւասարացնել, զլիի վերայ կործանել:

—Ամա՞ն, ո'վ սուրբ Կիղիմատուռ, քո զօրութիւնին մատաղ, տարեկան հինգ նաւակատիկին մի մի սպիտակ գառը քո դռանը կը մորթեմ, հում հում կը բաժանեմ, միայն թէ դու մեղք չը համարես, չը բարկանաս, զլիխ խոռով չը կենաս, թողնես, որ ես էս քարը տեղահան անեմ, ոսկիքն իմը շինեմ, ջհուտ Աղաջանի աչքը հանեմ, ես խօսք եմ տալիս՝ նորից իմ ձեռքով քարն իւր տեղումն յարմարացնել:

Բղդէն սիրտ առաւ իւր խոստմունքից և երեք անգամ երեսին խաչակնքեց:

—Հիմի գիտեմ, որ Կիղիմատուռն իմ կռանն է, վսուահօրէն ասաց նա, երբ իւր աշքին երեւաց քարի ներքին կողմը, քարքարուսների մօտ, մի լայն ճեղքուած:

Անմիջապէս բրիչի ծայրը խոռոշին դէմ տուեց Բղդէն և մի վերջին ուժով քարը տեղահան արեց:

—Բը՛զ...վը՛զ...պը՛զ... շշացին Բղդէի ականջին հաղարաւոր իշամեղուներ և իրար խառնուեցին:

Մի բոպէաչափ շմեց Բղդէն, անզգայօրէն շրթունքները յետ բացուեցին, աչքերի բբերն ու բունը լայնացան, մատները անդիտակցաբար շուռեցին, իրարից հեռացան, և ո'վ գիտէ, գեռ կարելի է շատ մնար այդ անբնական դրութեան մէջ, եթէ նոյն ինքն անքան միջատները չը սթափեցնէին նրան:

Բոռերը գտան իրանց հանգստութիւնը խանդարող թշնամուն, որեցին իրանց՝ առանց այն էլ՝ սուր խայթոցները և չորս կողմից զրոհ տուին քաջ պատերազմողների հմտութեամբ Բղդէիս վերայ: Սուր սուր սլաքների հարուածից աւելի զգալի էին մխուռում իշամեղուների կնճիթիկները Բղդէի երեսին, պարանոցին, աչքերին, քթին, ձեռքերին, միով բանիւ մարմնի բոլոր բաց տեղերին:

Ի զուր չէ՞ր նորա ճշոցը. նա սկսեց աշքերը փակել և ձեռքերը օղի մէջ պարտեցնել, որպէս թէ իւր բազուկների զօրութիւնով ցրուելու թշնամու բանակը: Բայց շատ սխալ էր նորա հաշիւր, թըշ-

Նամին խիստ հզօր է եղել. կատաղի միջատները այդպիսով աւելի գրգռուեցին և աւելի խստօրէն յարձակում գործեցին:

Ել չը տարաւ Բղդէն, նա յաղթուեց. կծած տեղն ուռչում է ընկուղաշափ և բարձրանում:

Բղդէն երեսի վերայ վայր ընկաւ խճերի մէջ:

Այժմ թշնամու բանակին օգնութիւն հասան Բղդէի իրան ձեռքերը. ապտակներ է, որ իջեցնում է թշուառական մոլորուածն իւր գլխին, վզին, երեսին. այդպիսով, իւր խելքով, բոռերի դէմ է պատերազմում, բայց իսկապէս ինքն իրան է ծեծում:

Այդ հնարքն էլ չ'օգնեց:

Բոռերն աւելի զայրանում և չեն հեռանում. շատերն սկսեցին խաղթոցները նորա հագուստի գործուածքով ներս խցկել:

Այս անդամ անձնապաշտպանութիւր յաղթեց ագահութեանը. կսկիծն ու մրմուռը, քիչ է մնում, Բղդէն ուշագնաց անի. նա աշքախուփ, խարխափելով դուրս ընկաւ մատուռի միջից:

Նա փախչում է աննպատակ դէպի դաշտը:

Նորա բաղդից ոչ ոք չը հանդիպեց նրան, ապա թէ ոչ, ամենքը կը վախենային այս մարդակերպ փշուած, տկզած տկից:

Միջատների կծած տեղերը հաւասար ուռել էին, աշքերի կոպերն ամբարտակի նման բարձրացել, ծածկել էին տեսանելիքը, մի մի նեղ անցքից միայն աչքերը հազիւ գործում էին:

Յաւը չը թողեց Բղդէին շատ յառաջ վազելու:

Մի առուակ խոխոջելով վայր էր հոսում լեռնաթմբից և Բղդէն նստեց ջրի ափին ու գլուխը դէմ տուեց փոքրիկ ջրվէժի տակին:

Մի դիւթական հանգառութիւն, մի մեղմիչ զովութիւն ամոքեց ցաւի կսկիծը:

Կօլոտը գտաւ իւր դեղը. սառը ջուրը փրկարար ազգեցութիւն գործեց: Աւելի մեղմացուցիչ էր լինում հեղուկ տարրը, եթէ երբեմնապէս մի բարակ քամի, թէև լինէր նա ոչ ցուրտ, հովահարում էր ջրի թրջած տեղերը:

—Ափս՛ո, ջուրը տաք է, մոտածեց Բղդէն, ի՞նչ լաւ կը լինէր, եթէ սուրբ Յովհաննէսի սառն աղբիւրը հետու չը լինէր, բոպէի մէջ երեսիս ուռուցքները կը նստացնէր:

Երկար չ'եղաւ նորա մոտածմունքը. անձը քաղցր է, ցաւի

Խաստութեան դէմ՝ տաք առուակն անբաւական էր, նորա արած տպաւորութիւնը վայրինական էր, ուռոցը քանի գնում, բարձրանում էր, հզօր միջոցների պէտք էր գիմել, և այդ միջոցը—իւր բուժուելու ամենաճիշդ դարմանը նա գտաւ սուրբ Յովհաննիսի ցրտասառոց աղբրակը:

Կիզի-մատուռ, ոսկի, ամենը զոհուեցին անձի առողջութեանը, բոլորը Բղդէն մոռացաւ: Ի՞նչ արեց, մոռացաւ, այն էլ Բղդէն:

Հազար ա'խ ու վայ արեց, հարիւր անդամ՝ ծնկները ծեծեց, քանիցս քայլելու իրանք իրանց էին մասուռի կողմն ուղղուամ, բայց կրկին յետ էին կասուռամ: Թշնամու բանակը քնած չէր. իշամեղուներից մի քանիսը դաշտումն էլ նրան հանգիստ չէին տալիս, առ ոչինչ համարելով Բղդէի գործ դրած զէնքերը—ձեռքերը, հագուստի քղանցը՝ ձեռք չէին քաշում նրանից. մի յանդուզը մինչեւ անդամ իջել էր նորա թիկունքին և իւր բարակ ու սուր կնծիթը շորերի գործուածքների միջոմն էր յցել Բղդէի թիկնամէջը: Ի՞նչ դժուարութեամբ ձեռք հասցրեց Բղդէն և բուին հեռացրեց:

—Ո'վ է իւր գլխիցը ձեռք քաշել, որ բուերի ճանգն ընկնի, կամ ո'վ կը հասկանայ, թէ ամեն մի բուն երկու երեք թուման փող աժի, թլիսմի թուղթը գրապանումն է, էս օր չը լինի, էգուց լինի, զեռ ցաւի կակիծը հովացնելու ճարը տեսնեմ, ասաց վերջապէս Բղդէն, գարձրեց երեսը դէպի հարաւ և փութաց բռնել Քասախ գետի խոր անցքի ճանապարհը:

Սուրբ Յովհաննիսի աղբրակն էր շտապում նա:

## ԺԴ.

ՍԱՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԵՍՆ ԵՒ ԻՒՐ ԱՂԲԻՒՐԸ

Կարբուց դէպի արեելա-հարաւ, Քասախ գետակի ձորաժայուի վերաց, մի գետնափոր խոճուկ գիւղի մօտ գտնուում է մի կիսակործան սքանչելակերտ աւերակ վանք:

Գիւղի կողքոնին անց է կենում Աշտարակից Աբարան տանող ճանապարհը, որտեղից շատ հեռու չէ հսկայական շէնքը:

Սովորական անցորդը, կամ անհետաքրքիր գեղջուկը մի բարեպաշտական երկրագութիւն մատուցանելով կատարած կը հա-

մարի իւր պարտքը դէսի քրիստոնէական օրբարանը. իսկ հեախոցզ գիտնականը յանցանք գործած կը լինի, եթէ ժամեր և օրեր չը նուիրէ ճարտարարուեստ և հրաշալի շնչքի ուստի մնասիրութեանը:

Յովհաննու վանքն է այդ մեծափառ տաճարը; Արագածոտն գաւառի բազմաթիւ հռչակաւոր վանքերի առաջիններից մինը:

Կար ժամանակ, որ Յովհաննու վանքի պարսպում շէն էին հարիւրաւոր վարդապետական խցեր իրանց տնտեսատնով, լիառատ մառանատներով, թանգարաններով և ժառանգաւորաց դպրոցով. մի օր Յովհաննու վանքը կենդրոնն էր Արարատեան աշխարհի աստուածաբան հեղինակ մատենագիրների. 700 տարի առաջ էր այդ, իսկ այսօր միայն քարակոյոնների դիզուածքներ և պատերի բեկորներ են մնացել նախկին փառազարդութիւններից:

Հրաշասքանչ է Յովհաննու վանքի ճարտարապետութիւնը. ամբողջ շէնքը կոփածոյ կարմիր և սև քարերից պնդապէս ամրացած և շաղախուած են միմեանց հետ. մեծ դժուարութեամբ հընարաւոր է այսօր էլ որմնաքարերի կցուանքը որոշել:

Մի ահագին քանդակալից և դրոշմաւոր յաղթանդամ շինութիւն պարապի միջակէտումը հպարտ կանգնած՝ զետեղում է իւր մէջ երկու լայնազիր տաճարներ: Մինը գաւիթն է և միւսը բուն տաճարը:

Հիւսիսից, երևի վերջին դարերում, միացած է փառահեղ շինութեանը մի նոր եկեղեցի սագաձև կամարով:

Երկու կաթողիկէ հովանաւորում են մեծանիստ տաճարին:

Մինը կանգնած է լայնատարած գաւթի գլխին, ամրացած չորս բոլորակաձև հաստատուն սև ապառաժեաց կոփածոյ սիւների վերայ, իսկ երկրորդը՝ բուն տաճարի գլխին:

Երկուսն էլ կիսաքանդ են:

Թէ տաճարի և գաւթի միջին կողմը և թէ արտաքին երեսը լիքն են զարմանալի նուրբ քանդակներով. զանազան խաչեր և սրբոց պատկերներ են ներկացնում այդ քանդակները:

Վանքի հարաւային պատի վերայ, դրսեից, վերից վայր ձգուած են երկու խաչաձև կարմիր քարեաց շրջանակների մէջ հարաւային պատուհանները. մի այդպիսի շրջանով ևս մէջ է առել արևելեան կողմից սեղանի լուսամուտը:

Վանքը կանգնած է անդնդախոր ձորի ծայրին՝ քարափների վերայ:

Մի ահապին այր ձորի կողմից մտնում է ուղիղ վանքի տակը։  
Վանքի հարաւային կողմը Քասախի ափին ձորի մէջ քարափ-  
ների խոռոշների մէկից դուրս է ցայտում սուրբ Յովհաննիսի ամե-  
նապարզ և վճիռ աղբակը։

Ոչինչ էջք, ոչինչ ճանապարհ գէպի աղբակը վանքի պարսպից  
թոյլ չեն տալիս ամենի ժայռերը. սեպաձեւ քարափները դուրս են  
ցցել վանքի տակի քարայրի շարունակութեամբ իրանց խորթ ու  
բորդ քիթ ու մոռութը, հենց իմանաս՝ համբոյր տալու ձորի միւս  
ափերի ժայռերին, իսկ զրանց տակը կազմուել է անհռւն անդունդ,  
կարծես, վերեկց նայել վստահացողին գահավէժ կործանելու։

Ուզում եմ ասել, թէ աղբակը երկու-երեք հարիւր քայլ  
հեռաւորութիւն հազիւ թէ ունենայ վանքից, բայց իջնելու ճա-  
նապարհ միանգամացն չը կայ։

Հաշուի տակ չեն մտնում գիւղական մանուկները. նրանք գետի  
յորձանքը ճղելով՝ կարող են միշտ խմել սուրբ Յովհաննիսի աղբը՝  
քաղցրանոց ջուրը. նրանք վայրի այծերից աւելի ճարպիկութեամբ  
ներքեւ կը սողան ամեն մի քարանձաւի խորշից։ Քասախի ձորամի-  
ջումն երեխաների համար անմատչելի տեղ չը կայ։

Կանոնաւոր և միակ ճանապարհը, որտեղից կարելի է այցելել  
սուրբ Յովհաննիսի աղբակին, այդ կարբու ձորամուտքն է՝ վանքից  
կէս ժամաշափ հեռի. նոյնքան էլ կը աւելի ձորամուտքից մինչեւ  
աղբիւրը։ Նշանակում է՝ Յովհաննու վանքից աղբակը գալու հա-  
մար՝ մի ամբողջ ժամ զոհելու է։

Երջակաց բնակիչների համար նուիրական սրբատեղի է սուրբ  
Յովհաննիսի աղբակը։ Չորի մէջ՝ աջ ու ձախ ափներից՝ շատ տեղեր  
բղխում են մեծ ու մասր վճիռ աղբիւրներ, բայց նրանից ոչ մէն  
այն յարգն ու նշանակութիւնը չ'ունի, ինչպէս այս ընկուզի տրամա-  
գծի չափ հազիւ բղխող աղբակը։ Ամեն ոք մի ներքին երկիւղա-  
ծութեամբ է արտասանում սուրբ Յովհաննիսի աղբը անունը.  
Հազարաւոր հրաշագործութիւններ սկատմուում են պառաւներից  
սուրբ Յովհաննիսի աղբը մասին. նորա ուխտաւորն անպակաս է։

Հարցափրական է լսել աշաբակցի երկու պառաւի խօսակցու-  
թիւնը. զրանցից մինը թող լինի հանգուցեալ Քարտաշենց պառաւը,  
միւսը՝ իրանց հարեւան Գիւլբահարը։

— Հաստատ կենաց սուրբ Յովհաննէսի աղբը ակը, մեռնիմ  
նորա տիրոջ՝ սուրբ Կարապետի ոտի տակին, ասում՝ է Քարտաշենց  
պառաւը. աղջի՛, վեց ամիս էր Հօլիս (Հռիփսիմէ բառի կրծատումն  
է) դող ու էրոցքի մէջ տանջուռում ու մաշուռում էր, էլ զրբաց ու  
ջնդար չը մնաց, որ ըլ լիացրինք, խունկ ու մմին հօ՛ հաշիւ չը  
կայ, որ սրբերի գռներին վառեցինք. մեծ տէր-Առաքելի կապած  
դողը թրի պէս կարում է. խեղճ երէցն երեք չորեքշաբթի իրար  
վերաց կապեց երեխիս դողը, ճար ու մունքիւն չէլաւ. լալազար  
ծաղկի նման կարմրաթուշիկ բալէս մի բարակ դերձան էր դառել,  
ոսկրները մէկ մէկ համարուում էին, քիմքը բռնէիր՝ հոգին կը տար.  
մնացել էինք մոլորուած, ուշք ու մտքներս միանդամայն կորել էր,  
սուրբ Յովհաննէսի աղբիւրը, հէնց բռնի, մոռացել էի: Առում  
է՝ ծովն ընկնողը ձեռները կ'ածի: Լոյս դառնայ տատմէր  
պառաւի հէրը, որ սուրբ Յովհաննէսի աղբը անսունը չը տուեց,  
ես ինձն ու ինձ գետինը մտաց. դու մի՛ ասիլ, հէնց սուրբ Յովհաննէսի  
աղբիւրն է մեր վերաց բարկացած եղել: Զօրանաց Տրդասա,  
էն օրն և եթ մի շիշակ, տարեկան, դմբոճիկ թօխի-ոչխար է առել,  
ձիու վերաց նստել, առջել զրել, մենք էլ տուն ու տեղով հաւաք-  
ուել ենք, տարել սուրբ Յովհաննէսի աղբը մօտ մորթել, մատաղ  
արել: Աղջի՛, կ'աւա՞տաս, Հօլուս աղբը սառը ջրովը լողաց-  
նելս ու դողն ու էրոցքը դանակի պէս կտրիլ կորչիլը մին էլաւ:  
Ազիզ քօրփէս (Քորփէն) մի շաբթի մէջ առաջուանից աւելի լաւ  
լցուեց, կարմրեց, վաշնեց, էս օր էլ հօ՛ քո բարի աչքովդ տեսնում  
ես, գեղի ազափ աղջկերանց աչքն ու մարալն է, թեւերն եկել են,  
էս օր էգուց կը թռցեն:

— Ընչի՛, քի՛րս (Քոյց), դու սուրբ Յովհաննէսի աղբը զօրու-  
թիւնից խամ էի՛ր, մեղաղրում է խօսակիցը, դու չը գիտե՞ս, որ  
ինքն է դող ու էրոցքի տէրը. գարունքը ծէպում է, չորս բոլորքի  
գեղերից նորա լիստաւորը չի կտրուում, թուրք ու հայ, ով դողաց-  
նում է՝ դպա նրան է վազում, փրկուում ու յետ դառնում: Ես ինքս  
էլ Մողնու ծեփի տարին <sup>1)</sup> էնքան դողացրել էի, որ ուժից ընկել

<sup>1)</sup> 1840 թուականին էր, կարծեմ, Մողնի գիւղը ժանտախտը աւերեց: Կառավարութիւնը զօրքով շրջապատեց, հաղորդակցութիւնն արգելեց: Աւդ արգելքը ժողովուրդը ծեփ կամ ծեփել բառով էր արտակատում:

էի, երեսիս դոյնը՝ գեղին զաֆուանը քեզ օրինակ. շատ էլ տապահում էի՝ օր յառաջ ինձ քցել սուրբ Յովհաննէսի աղքիւրը ու ական առաջին շինած պատիկ գեօլիցը (լժոէ) մի երկու փար: Չուր վրէս ածել, բաց քեզ յայտնի է էն տարուայ ցասում բարկութիւնը, զնայ, ոչ յետ գայ, և էր բանը (Ճանոպանացը) Մողնին վեր էր կալել, ոսի սալգատոր չորս բոլորքը կապել նստել էր, երկնքի թևաւորներին էլ չէին ուզում՝ բաց թողալ, ո՞վ էր իւր գլխիցը ձեռք քաշել՝ որ գնայ իր ոտովը կրակը մտնի, կէս սհաթումն ուսուցուորի, սևանայ, անծուխ կորուի ու ճրագի պէս հանգչի, քո միտը կը լինի, կարծեմ, հասած կատարած աղջիկ էիր, էնպէս չի, ևս երկու տարուան քօղլը գլխիս հարսն էի:

— Քա ի՞նչ ես ասում; էս օր էլ աչքիս առաջին է, լնդհատեց Քարտաշենց պառաւը, սալգատների մեծաւորին կոնատ կասկիտան էին ասում, մեր տանն էր կենում. դէ՛, էն ժամանակն էսքան այլան օժախները (Վենայարէ) ո՞վ էր սեցրել, գեղի լաւ տներիցը մինն էլ մեր էս օրուայ խոտանոց դառած կտեր օժախն էր: Հէնց էն տարին ես նշանուեցի: Էն գրողի տանելուն, ո՞վ գիտէ, մեռած է՛, թէ կենդան, իւր գործքովն իրան օղորմի, մի օր թունդրի համար աթար (ժակոր) ներքե ածելում՝ մին էլ օժախիցը դուս եկաւ ջրի փարչը ձեռին ու ոտով գլխով ինձ հասկացրեց, թէ գնա՛, ջուր բե՛ր: Դէ՛, նորա աչքին ո՞վ էր երեսում, շուաքը տեսնելում՝ օխտը պուճախն էինք ներս պրծնում, մէրս մահի կը տար, հէնց ահ էր տուել ինձ ու մեր լսի բաժին ջրառար Թէլլուխն՝ պատիկ աղպօրս նշանածին (Հին), խեղճն երկու տարէն հարսն էր. հէնց որ լսում էինք, թէ ուսները բակումը ման են գալիս, մենք տեղներս սասանում էինք: Սատանական էր, էդ օրը մէրս գնացել էր մեր խնամի Մայրանին զլուխ ապրէք (Տիկլաբաններ)՝ իւր փարբեցի հարսի մօր աշխարհքիս ցաւ ու դարդիցը ազատուելու համար. տղամարդկանցից էլ մեր տանն ոչ ով չը կար. ես էլ գիտէի, որ կռնատ կապիտաննը տանիցը հազարիցը մի անգամ չի դուրս գալիս, արխէցն բարձրացայ կտուրն ու աթար ներքե թափեցի: Էն էի ասում, աղջի՛, որ յանկարծ դուռը բաց չ'արեց ու շէմքի վերայ կանգնած փարչն ինձ մէկնեց, միսս փշաքաղուեց: Ճարն ի՞նչ, գնացի, լցրի ու աղլուխս ընչանք պնչիս ծէրը ցած քաշած՝ զլուխս կրծիս մէջ

կոլած՝ վերև բերի: Տեսայ՝ դուռը ծածկել էր ու ներս մտել: Աիրու չ'արի, որ տուն մտնեմ, դուռը կամաց ծեծեցի:

—Պե՛ր, ձե՞ն տուեց կռատ կապիտանը ներսից: Մեր տղեքն ասում էին, թէ հայերէն կենո երեք խօսք գիտէ—բեր, հաց, ջուր. Էն էլ սուտ ու սխալ էր ասում. բեր ասելու տեղակ՝ ասում էր պեր, հացին՝ խաց, ջրին էլ՝ չուր:

—Ի՞նչ անեմ. ահահար, դողահար դուռը կամանց ճռռացրի ու սիրտս լքլքալով տուն մտայ: Ի՞նչ ես ասում, ա՛յ մէրս, մողկ եմ տալիս, օթախումը մարդ չը կայ:

—Բաս ո՞ւր կորաւ, սատանայ հօ չէ՞ր, որ գետինը վեր խորտակուէր, ի հարիէ, մի տեղ կուչ եկած կը լինէր, խօսքը կորեց խօսակիցը, երևում է մոքումը չարը բնակալած է եղել:

—Սուտ չես ասում, շարունակեց Քարտաշենց պառաւը, գրողը նորա բկիցը կաչի՛, նրան խեղդի՛, ջրի փարչը պատի տակին վերքցեցի ու ետ դառայ թէ չէ, մին էլ էն տեսնեմ, էն սև սրտին դուռը ծածկել է ու միջքով դռանը գէմ ընկել. դու մի՛ ասիլ, փորումն օձեր է ունեցել. քա՛, ի՞նչ ես ասում, աչքերս մւացան, բերանս տաք ջուրը կօխեց, ոտներս բոնուեցին, տեղն ու տեղս մխուեցի, մնացի, երբ որ էն ծակծկուուելուն ժանիքը յետ բացարած՝ լիրը աչքերով ինձ մտիկ տուեց:

—Հողե՛մ նորա զլուխը:

—Ոնց որ մի նետ օձ, մին էլ էն տեսայ՝ ունեցած չ'ունեցած ձախ ձեռքը շլինքովս է փաթաթել, ուզում է թուշս բերանն առնի: Ընտուր են ասել՝ Աստուած սարը կը տեսնի՝ ձիւնը կը դնի: Աստծու ողորմութիւնն էր, որ աջ ձեռքն արժնկիցը կտրած էր:

—Ե՛... յետո՞յ... հետաքրքրութեամբ բերանը կիսաբաց՝ հարց տուեց Գիւլբահարը:

—Յետոյ նորա խնդո՞ցը, թէ իրան կեր կրլնէի, բերնի տաք գոլը որ երեսիս չը զիապաւ, ոնց որ տկի բերանից դուս փչած արագահոտ: Դեռ յառաջ ծնկներս մի բուէ ծալուեցին, քիչ մնաց՝ էն քուանալուի պուօշներն երեսիս էր առնում: Մին էլ, հէնց իմանաս, թէ զինաւոր սուրբ Գէորգը կարմիր ձիու քամակին ինձ օգնութիւն հասաւ. մի էնպէս ծուոց բարձրացրի, որ օճուքը թնդաց, գերանները դողացին ու երկու ձեռքով որ դօշին հուպ տուի, ձեռը շլն-

քիցս պոկ եկաւ ու թիկունքի վերայ թրիսկալով՝ գետնին փռուեց.  
բարդու ծառը քեզ օրինակ, որ կտրում են ու շուռ տալիս:

—Այ թէ աչքը հանել ես:

—Ընչանք կրնատ կապիտանն ուժը կը հաւաքէր, խելքը գլ-  
լուխը կը գար ու վեր կը կենար, ես շունչս մեր հացատանն առայ,  
ու ազատուի՛ ամեն հայ-քրիստոնեայ խաթից ու փորձանքից, ինչ-  
պէս որ ես ազատուեցի: Ել էդ բանից յետոյ՝ օձի մի՞ս էի կերել, որ  
ոսս կտուրը դնէի՛ քանի էն գրողի խեղդածը մեր տանն էր կենում:  
Լա՛ւ, որ Աստուած աշխարհքի աղօթքը լսեց, խեղճ եկաւ, խէր  
բանը (ծանրակիր) վերջացաւ, ճամփէքը բացուեցին:

—Ախար խօսքդ մեռացար:

—Հա՛, էն էի ասում, շարունակեց Քարտաշենց պառաւը, էդ  
օրուանից դողը ջանս մնաւ, էլ դուս չը դնաց. օրէց օր հալ ու  
մաշ էի ընում: Էզ հերիք չէր, մի առաւօտ էլ լուսաղէմին կուժն  
ուսեցի, ծէգծէգելահան գնացի ջուրը: Քուչէքում Աղամորդի չը  
կար, առուի վերայ՝ ջրլցքումը՝ մի հարս, մի աղջիկ չէր երեւում: Ես  
իմ կարճ խելքովս կարծել եմ, թէ որտեղ որ է, լոյսը կը բացուի,  
աղօթարանը կը կապրտի. սիրոս հանդիստ մօտենում եմ ջրլցքին,  
կուժը լցնում, հանում, առուի ափին կանգնացնում, ուզում եմ,  
սաքի թէ, երեսս լուանամ, կուժն ուսեմ, յետ դառնամ: Դեռ երե-  
սիս մի անգամ էի շոփ տուել (ջուր որո՞ւել), մին էլ առուի մէկել  
երեսին աչքիս առաջին մի կատուի շափ մարդ է ցցուած. ոչ աւել,  
ոչ պակաս՝ մեր պոշը ծաղիկ սև կատուն քեզ օրինակ:

—Յիսուս ու Քրիստոս, երեսին խաչ հանեց Գիւլբահարը:

—Այ քեզ մասաղ, էս պստիկ մարդը քիչ քիչ ձգուեց, ձգուեց,  
երկարեց, բարձրացաւ, դառաւ ծանճապանենց մեծ բարդի ծառի  
շափ, հաստութիւնն էլ՝ Խէշանենց պոպոքի ծառիցն երկու անգամ  
աւելի:

—Աղջի՛, բա դու նստել մտիկ էիր տալի՞ս, ախար ալք է էլել:

—Հողը գլխիս, ցեխն արեխս էի մտիկ տալիս, զո՞րթ է, աշ-  
քերս բաց էին, բաց միջին լոյս մնա՞ցել էր, կամ գլխումն զօրու-  
թիւն կա՞ր բան հասկանալու. մին էլ տեսաց, որ էդ ալքը թռաւ  
ջրի մէջը ու լոք լոք տալով՝ իմ կողմն է անցկենում: Դէ՛, նիզոյի  
թռո՞ուլ, ոտներդ իրար տո՛ւր: Ծտի պէս տեղիցս վեր թռայ ու երեսս

յետ շրջեցի: Ել չը գիտեմ, ո՞ւքս դիսպաւ, թէ ալքը խփեց կժին ու փշրեց. Հրիսկոցի ձէնն ականջս ընկաւ, բայց ես ել չը կանգնեցի, մինչեւ տուն մի շնչի փախաց ու տեղաշորիս վերաց փառեցի: Ել հօ՛ աչքս չը փակուեց, ուրիշները զբանից յետոյ օխտը հանդ (անգոյ) քնեցին, նոր լոյսը բացուեց:

—Վա՛յ թէ ձեռաց դողդ կտրուեց. դող ու էրոցքը մի փուչ (չնչչն) բանից կտրուում է:

—Ինչ էլա՞ւ. դու ոչ մեռնիս, դողացնելլ դու ըտուց յետոյ տե՛ս, ատամիկրս որ իրար չեն կպչում, կասես, ջաղացի չախչախ, ձեռ ու ոտս՝ ոնց որ մի ուռոււ լեզուակ տերև՝ թունդ քամու առաջին:

—Բաս վերջը դողդ ո՞նց կտրուեց:

—Դրախտումը ծլվլա՛ս, դու իմ ջրատար մէր, խեղճի հողին դուրս եկաւ. ոնց որ դու ես ասում, ել բան չը մնաց՝ արինք: Նատերը խորհուրդ էին տալիս՝ Թաքիա գեղի թուրք օձ մանածող Օջաղօղլուն բերել, որ օձի գլուխը լիզուիս վերաց դնի, աղօթի, բայց ո՞ւր էր ճանապարհ, անտէր կեր ցաւը (Ճանապարհ)՝ ոնց որ երկնքից վէր ընկած՝ մոտաւ Մողնի գեղը, անսուր, անդանակ բրդեց խեղճ մողնեցնց ու ողջ գեղը ճրագի սկս հանդցրեց. դրա պատճառով ամեն կողմից ճանապարհները կապուեց, գնալ գալը, ոտքը կտրուեց, ել ի՞նչ Օջաղօղլի, ի՞նչ օտարական. սալդատի ահիցն ո՞վ էր տանից դուրս դալիս:

—Ալոջի՛, հիմի էդ ոսի արածն Աստծուն ընդդէմ չէր գա՞լ, որ ճամփէքը կտրել էին, սաքի թէ ցաւն ուրիշ գեղ չ'անցկենաց:

—Հօ՛, քո աշքովդ տեսար, որ ցաւը Մողնուցն էն կողմը չ'անցկացաւ. Աշտարակը Մողնուց շատ հեռու է՛, ձէն տաս՝ կը լսուի, մի ուլի քիթ խոռուեց. Կարբին, Փարբին, Պատի գեղը, Յուշին Մողնու չորս բոլորքի գեղերն են, հինգ օրէն ճանապարհ հեռու չեն, ընչի՞ մնի մի տեղը չը ցաւեց ու մէնակ Մողնին հողէց—հոգի կորաւ:

—Քա՛, խեղճ ես, հոգուդ մեղք մի՛ անիլ, Աստծուն էլ ընդդէմ չը լինի, դէ՛, էն է Աստծու բարկութիւնն էր, իր հրամանն էր, որ կերցաւը Մողնումը գոյանաց, ընտեղ էլ վերջանայ, թէ չէ ցաւը մա՞րդ է, որ թօփ ու թուանքով, գիւլլաց-բարութով յառաջը կը աշը բես, տուն չը թողաս. Աստծու տակիցը փախչել չի լինիլ, մէ՛րս,

դու քո խօսքդ մի՛ մհուանալ. յեռոյ ո՞նց արիր, որ գող ու էրոցքդ պրծաւ:

—Մենք մի մեծ, չալիկ-մալիկ աքլոր ունէինք, էնքան նախշուն ու սիրուն էր, որ արևի տակին փռվում էր, պոչի ջղէն (ոժաղաղ պոչն երկայն գետութը) քրզի թրի պէս կուացել էր. տեսնեմ՝ մի օր մէրս բոնել է, գոգնոցի մէջ փաթաթել:

—Դէ՛հ, մաշկներդ ոտներդ անցկացրո՛ւ, ասեց, ուր որ կ'երթամ՝ քամակիցս անխօս արի՛: Ես էլ ի՞նչ իրաւունք ունէի՝ պուօշս պուօշիս տամ, կամ բան հարցնեմ, հորթի պէս ետև իցը վազեցի:

—Մտել ենք ձորը, ուռի ծառերի փոնուաներովը (Տացառութ) անդադար վերև ենք բարձրանում: ընչանք Մողնու ձորն անցկացանք; մերը մեզ հասաւ, ծառ չ'եղած տեղը կուզէ-կուզ ենք գնում, որ յը լինի՞ թէ ձորի թմբից մի սալդաս տեսնի ու գլխներիս տայ, յետ դարձնի:

—Էլ ի՞նչ յետ կը դարձնէին, կը տանէին գեղից դուրս շինած կարախատինումը (Կարախատին) մի շաբաթ կը պահէին, օրն երեք անգամ մուխ կը տացին: Միտոդ չի՞, գժուարն էն էր գեղիցը դուս դայիր, բռնում էին մխակոլոյ անում:

—Դորա համար մենք չեւ կուչ ու ձիգ անելով, շուաքներիցս վախենալով, խլշկոտալով՝ ոնց եղաւ, մեզ քցեցինք սուրբ Յովհաննէսի աղբիւրը: Կարբեցի երեխէքր գետումը ձուին էին բռնում: մէրս կանչեց, աքլորի գլուխը կորել տուեց, կրակ արեց, աքլորը վետրահան արեց, սուրբ Յովհաննէսի իրան զլզլան, զուլալ ջրավը լուաց, լսի պէս սիստկացրեց. քեզ յացնի է, փայտէ շամփուր էն տեղ հարիւրներով կայ, գնացողը շինում է, մատաղը խորովում ու քարափի տակին թողում: Մէրս շամփուրն անցկացրեց, խորովեց ու էն տղէքանցն ուտացրեց: խեռոյ երեխէքանցը հեռացրեց, շորերս հանեց, աղբը ջրիցը օխոր բուռը վրէս ածեց, լեզացրեց:

—Մեռնի՛մ՝ սուրբ Յովհաննէսի զօրութիւնին, էն է կը Փըրկուէիր էլի՛:

—Իմ երկու ջուխա, մի կենս ասլան ատղէքանցս անունովն եմ երդուում, ամեն ցաւ ու չուս էն տեղ թողի, 40, 50 տարիներ են զլորուել էն օրից, ի՞նչքան լաւ ու վատ ենք տեսել ու իմ ջանս դող ու էրոցքը չի իմացել՝ ի՞նչ բան է:

—Աղջի՛, դու լսել ե՞ս, ասում են էղ տեղ յառաջ աղբիւր չի եղել։  
—Բաս ե՞րբ է դուրս եկել։

—Իմ տասս պատմում էր, թէ սուրբ Յովհաննէսի ժամ շինող  
վարպետը դողացրել է. մարդը հալուում, ուժից ընկնում է. շինու-  
թիւնը կանգնում է։ Ժամ շինել տուող վարդապետը շատ զեղ ու  
զիր է անում, ամեն ժամարարի դողը կապել է տալիս, միաբանքին  
տէր ողորմեա է չոքացնում, ճար չի լինում. նորա ձեռի գործը Հըն-  
դըստան էլ չեն կարող դուրս բերիլ։ Ի՞նչ անի վանահայրը,  
հօ՛ Էնպէս փառաւոր տաճարի շէնքը անփորձ մարդկանց ձեռքը չէ՞ր  
քցիլ, շէնքն ու գեղեցկութիւնը կէս փող չէ՞ր շինիլ. ճարը որ կըտ-  
րում է, ուխտ է անում, որ եթէ սուրբ Յովհաննէսն էս դժուարու-  
թիւնին մի հեշտ ճանապարհ ցոյց տայ, ինքը մի շաբաթ անուաղ  
կը կենայ, մի տարի էլ օրը մի ձեռնաշափ չոր հացով կ'ապրի։  
Սուրբ մարդի ձէնն Ասուուած կը լսի. հէնց էն գիշերը սուրբ Կարա-  
պետը դրան երազ է գալիս, թէ վարպետիդ տա՛ր ձորը, գուշ արած  
(է Գուճա տնիւտալ) քարի տակին մի նոր աղբիւր եմ բղխացրել, նորա  
ջրից օխուը գաւաթժ վրէն լցրո՛ւ, լեղացրո՛ւ, բե՛ր, հանի վանքի գլուխը,  
թող աշխատի։

—Հէնց էն օրից դէմն էղ աղբիւրը դողի փրկութիւն է։

—Բաս չե՞ս ասում, թէ ի՞նչ քաղցը ջուր է, խմելով չես կըշ-  
տանում, մի թխլիկ գառը մենակ կեր, էն ջրիցը խմի', —կը մարսեա

Այս և սորա նման շատ հրաշքներ են պատմում սուրբ Յովհան-  
նիսի արծաթափայլ աղբրի մասին Արագածոտն գաւառի բնակիչ-  
ները և, որ գլխաւորն է, ջերմողներից շատ սակաւին չի յաջողիլ Դի-  
մել, լողանալ և չ'առողջանալ։

(Ալ շալունակի)

## ՈՒՍՈՒՑԻՉ

ԱՐԵԱԼՈՅԱՄ ՄԽԻԹԱՐԵԱՆԻ

...но одиночество, но невыносимое рабство  
учительского звания, но болезнь неотступная...

ТУРГЕНЕВЪ. Томъ I.

### I

Անցաւ կէսպիշեր. բակումն աքաղաղ  
Այս երկրորդ անգամ հաշւում է ժամեր.  
Քնեցէք ամենքդ հանգիստ ու խաղաղ—  
Ուսուցչին միայն չը կայ կէսպիշեր:  
Դեռ որքան նորան գործ է ըսպասում.  
Տետրակներն, որպէս բըլուր բարձրացած՝  
Անհամբեր իրանց հերթին են նայում—  
Դէ, շնոր, մի կանգնիր՝ մօտ է լուսաբաց:  
Եւ գըրում է նա... Ո՞ւր է թէ մի տաք,  
Գոնէ, սենեակում նըստած նա լինէր.  
Նորա գըրիչը շարժւում է արագ,  
Բայց աւելի շուտ շարժւում են ոտներ...  
Հանգչում է լապտեր. գուրսը կատաղած  
Նորից նոր ուժով շընչում է քամին,  
Եւ գեռ իւր գործի վերայ խոնարհած՝  
Դողում է, սառչում ուսուցչի մարմինն.  
Ու թող նա սառչի.—կայ մի վառ կըրտկ,  
Որ ոլժ է տալիս նորան այս գիշեր,

Որ այրւում է միշտ նորա կըրծքի տակ՝  
Զեր սէրն է այն, խեղճ, թըշտառ մանուկներ...

## II

«Ե՛հ, մընաք բարեաւ հիմա, իմ փոքրեր·  
Ես տուն եմ գընում այս երկու ամիս,  
Դուք չեք մոռանալ, գիտեմ, ձեր գասերն  
Երբեմն լիշելու դաշտում խաղալիս:  
Ես կը գնամ, կը գամ, մի լաք, իմ փոքրեր,  
Կը տեսնենք իրար կալոցին շուտով.  
Ծերուկ մալրս ինձ է նալում տնհամբեր.  
Դէ, վերջին անգամ մընացէք բարով։»

Դանդաղ քայլերով՝ լերան կողերից  
Առաջ է գընում ուսուցիչն անձայն,  
Սրտասուքն առատ վազում է աչքից  
Եւ ծանըր հազը խեղդում է նորան։  
Մաշւած, գալկացած նա յետ է դարձնում  
Դէմքը գէպի գիւղ. բայց գիւղն ամպերով  
Փաթաթւած արդէն այլ չի երևում. —  
«Օ՛, գիւղ, մանուկներ, մընաք դուք բարով։»

Եկել է վաղուց ու անցել կալոց.  
Ծընող, մանուկներ գալիս են գըպըոց,  
Գալիս են, կանգնում գըրան առաջին  
Ու լուռ և անձայն յետ դառնում կրկին.  
Տըղայքն ամեն օր գընում են հեռու  
Հեռու գիւղից դուրս, նալում են լալով.  
«Չը կայ, ինչ եղաւ. արդեօք ուր ես դու,  
Անգի՞ն ուսուցիչ, դու ել կաց բարով...»

## III

Թափառիր... ու թող-չը լինի անկիւն,  
Ուր յոդնած մարմինդ հանգչէր մի վայրկեան. —

Ել ով կը յիշէ թըշւառ մարդկութիւն՝  
Դիւղերում կորած, ձըգւած անպաշտպան:

Տես, հեռու այնտեղ՝ սարի ծերակերում,  
Կըսչում են ժայռին մոռացւած որջեր,  
Մարդիկ են այնտեղ դարերով ապրում,  
Եւ այն՝ քո արիւն, քո հարազատներ:

Ապրում են... Քանի անդամ սանձարձակ  
Ես լաց եմ եղել այդ խըրճիթներում,  
Ուր սե օրն անցնում է սե ծածկի տակ,  
Ուր թանձր, անթափանց խաւար է տիրում:

Գնա՛ թափառիք.—լուսով, գիտութեան  
Ճըրագ է այնտեղ հարկաւոր վառել,  
Հարկաւոր է ձեռք մեկնել մարդկութեան,  
Մուլթ խորխորատից ընկածին հանել:

Զօրացէք, ոտնելը անզօր, երերուն,  
Ո՛յժ առ, չարչարւած կուրծք ուսուցչական—  
Կը գալ օր, կը գալ և ձեզ մի անկիւն  
Կը բերէ, որ դուք հանգչէք յաւիտեան:

## IV

Մուլթ անկիւնում հեծում է նա. հետ թըշւառ,  
Զուր ես յիշում ծնող ու տուն հայրական.  
Ուշ է հիմա. չարչարւելով քեզ համար  
Վաղուց մըտան ծընողներդ գերեզման:  
Եւ հայրենի թողած անտէր քո տընակ  
Կանգնած է ալժմ ծերուկ գըլուխն անպաշտպան,  
Ու հեռու չէ, գուցէ, և այն ժամանակ,  
Երբ նա նոյնպէս կը կործանւի յաւիտեան:

Հեծիր, Հեծիր... Միթէ այսքան տարիներ  
 Զը հիւսեցիր դու մի տեղ բոյն սեպհական,  
 Միթէ չ'եղաւ քեզ ցաւակից մի ընկեր,  
 Միթէ անվերջ թափառել ես դու միայն:  
 Ուր են նոքա, որոնց որդւոց, որպէս հայր,  
 Նըւիրեցիր ամբողջ կեանքըդ մինչ այդ օր,  
 Զէ որ սըբել ես դու արցունք անհամար  
 Ու ամոքել ցաւ ու վըշտեր բիւրաւոր:

Հեծիր, Հեծիր, լաց, արտասւէ—քո կըսկիծ  
 Դա կը մեղմէ, միայն ըզգոյշ ու կամաց,  
 Ապա թէ ոչ քո կըտրատւած թոքերից  
 Նորից կ'երթալ արեան աղբիւրն հեղեղւած,  
 Նորից կը գան ու կը թափւին բեկորներ,  
 Կը կատաղի կըըժքիդ ցաւը սաստկագին,  
 Եւ ով պիտի սըբեէ քո կուրծք ու շուրթեր,  
 Ո՞վ կը մաքրէ արնաշաղախ անկողին...

## V

Պըճնում է մայիս. պարտիզիս միջին  
 Կանաչում են սէզ և թուփ և ծառեր,  
 Եւ բաց է անում ծաղիկ-թագուհին  
 Համեստութիւնից կարմըրած թերթեր:  
 Եւ նըստած եմ ես ու անձայն դիտում  
 Մարգարտեալ կաթիւն, որ թըփի վերան  
 Երբեմըն վառւում է, որպէս քըրքում  
 Ու երբեմն, որպէս արցունք կուսական,  
 Փայլում է պայծառ կախւած տերեւից.  
 Եւ փայփայում է լըսելիքս հեռուփից  
 Անոյշ տաղերով մեղմաձայն առուն,  
 Եւ յաւերթական օրհներդն ոգելից  
 Ծառի ճիւղերում երգում է թըրոչուն:  
 Եւ ահա, ահա թաղւած ըզգացմունք

Տարիներ առաջ խաղաց հոգուս մէջ,  
Ահա բացւեցան կարկամած շըրժունք՝  
Բորբոքւած յուսոյ կըրակովն անշէջ...  
Ու երգում էի ես երկար երկար՝  
Մոռացած և' նենդ և' թոյն և' արիւն—  
Ես երգում էի ապագայ աշխարհ,  
Ուր ծաղկելու էր կեանքն, որպէս գարուն:

## VI

Յիշում է մէկն ինձ. ականջիս միջին  
Լըստում է մի սուր հընչիւն զանգակի.  
Ո՞վ պիտի լիշէ աղքատ ուսուցչին՝  
Հեռու մոռացւած կեանքից աշխարհիւ  
Վաղուց չէ հասնում խոր գերեզմանից  
Զայնը ծնողիս. չ'ունիմ ես քոլրեր,  
Եղբայր, ազգական, իսկ կանանց սեռից  
Ոչ ոք ժըպիտով չէ նայել ինձ դեռ:

Բայց հընչում է ձայնն ուժգին ու կըրկին.  
Ա՛խ, տուա, տուա. արգեօք ով ես դու,  
Որ այս լուռ, հանգչած գիշերւայ ժամին  
Միտդ ես բերում ինձ. մօտիկ ես, հեռու,  
Վաղուցւայ ծանօթ, ընկեր մանկութեան,  
Ցաւակից օտար, անծանօթ, անտես,  
Թէ այլ ուսուցիչ, անքուն ինձ նըման  
Ու խեղճ, մոռացւած, կորած որպէս ես...

## VII

Ահա տեսնում եմ կըրկին այն տապան,  
Առանց վիմաքար նա ալժմ անպաշտպան  
Զըդւած է հեռու քարերի խըմքից.  
Հետք էլ չի մընայ շուտով նորանից:

Տարիներ առաջ սորանից՝ մի օր,  
Երբ միայն երկինքն էր մութ, սըգաւոր,  
Քանի մի հոգով յանձնեցինք Հողին  
Մենք տարաբաղդիկ ուսուցչի մարմինն:

Ծանր էր, ծանր այն խաչն, որ երկար օրեր  
Կըրում էր նա իւր ուսին անվեհեր.—  
Թող միայն ապրէր, ծաղկէր գործն, որին  
Նա զոհ էր բերել մարմինն ու հոգին:

## VIII

Հընչում է զանգակն ու մանուկ ամբոխ  
Վազում է ուրախ ուրախ դասարան...  
Անցան տարիներ, բայց գեռ չեմ կարող  
Ես հանել սըրտից այդ զանգակի ձայնն:  
Ու Աստուած գիտէ, պիտի գալի մի օր,  
Երբ ես հաւաքած ոյժ ու զօրութիւն  
Զըսպեմ սըրտիս մէջ ցաւեր բիւրաւոր  
Եւ, որպէս օտար, լըսեմ այդ հընչիւն:  
Սիրում եմ ես այն արդեօք թէ ատում—  
Զը գիտեմ.—միայն երբ առաւօտեան  
Ազամուղջն է գեռ աշխարհը պատում,  
Ես գըպրոցի մօտ կտնգնած եմ անձայն:  
Կանգնում եմ անշարժ, երկար, միայնակ,  
Զը կալ ոչ մի շունչ չորս կողմս այդ ժամին,  
Եւ գողդողում եմ ես իբր աւազակ  
Ու սիրտը բաղխում, խըփում է ուժգին:  
Անցնում են ժամեր. իրար յետևից  
Մանուկ, ուսուցիչ գալիս են ահա,  
Ու ես իմ հեռու, անտես անկիւնից  
Համըր ողջոյներ տալիս եմ նոցա:  
Հընչում են կըրկին զանգակն... Ու յանկարծ  
Խեղդում է կոկորդս անձայն հեծեծանք,

Թափւում է արցունքս առատ հեղեղւած,  
Վառելով հոգուս կըսկիծ ու տանջանք...  
Օ՛, անցաք, անցաք, երջանիկ օրեր,  
Երբ ամբողջ քըսան տարի շարունակ  
Ուղղում էի ես իմ ըշտապ քայլեր  
Դէպի որոշած կեանքի նըպատակ:  
Զը կայ հիմա ալն... Իբր անպէտք ապրանք  
Ինձ դուրս ձզգեցին պաշտածըս շէմքից.  
Կորան ինձ համար հանգիստ ու բերկրանք՝  
Ես դադարեցալ ապրել այն օրից:  
Ու այժմ ալկոր, ջախջախւած սըրտով  
Երանի եմ տալիս ամենին.  
Մահն էլ չի գալիս փըրկել ինձ շուտով—  
Միթէ ես էի Աստծոյ տաելին:

## IX

Քէզ ողբամ ես, կոյս, որ սըրտիդ խորքում  
Թագցընում ես սէրդ անժիւ չարերից,  
Որ չարչարում ես մութ անկիւններում,  
Որ լաց ես լինում ծածուկ ամենից,  
Որ հազիւ երեմն ահով երկիւղով  
Տալիս ես համբոլը սիրած աչերիդ,  
Որ ոչ այժմ ունիս օրեր անվըրդով  
Եւ ոչ ապագայ մօտիկ, առաջիդ...

—

Ի՞նձ ողբամ ես, կոյս, որ թոյլ և անզօր՝  
Զեմ փըրկում ես քեզ այդ գառըն կեանքից,  
Թէպէտ պատառւում է սիրտս ամեն օր,  
Թէպէտ ալրում են ինձ ցաւ ու կըսկիծ:  
Եւ ես քեզ նըման, որպէս մի լանցանք,  
Թաղում եմ իմ մէջ ըզգացմունք սըրտիս.  
Ես էլ ոչ հիմա ունիմ խաղալ կեանք  
Եւ ոչ ապագայ մօտիկ, առաջիս... .

## X

Թող ինձ ճընշեն ցաւ ու հոգսեր. ամեն օր  
Չը հեռանալ դէմքից ըստւեր տըրտմութեան,  
Ներկայ, անցեալ թող ինձ ցոյց տան ահաւոր  
Ապագայի դէմքը խոժոռ ու դաժան,  
Խաչը կեանքի թող ուսերիս ծանրացած  
Չը տայ հանգիստ վաստակաբեկ իմ մարմնին,  
Թող ես լինիմ բոլորից ել հալածւած՝  
Ոտների տակ ձըգւած էակ մի չընչին:

Բայց կայ մի տեղ... Ես ամենայն առաւօտ  
Անց եմ կենում նըւիրական ալդ շէմքից.  
Ոչ մի անարդ չի վըստահիլ իւր նենգ ոտ  
Դընել այնտեղ սըրբապըզւած աշխարհից:  
Այնտեղ պատում են իմ շուրջըս մանուկներ,  
Ժըպիտ, ծիծաղ գուրգուրում են իմ հոգին,  
Անմեղութեամբ փայլատակում են աչեր  
Ու փայփակում են ինձ երգեր քաղցրագին:

Ու չեն ճընշում այլ ինձ ցաւեր. և խսկոյն  
Հեռանում է դէմքից ըստւեր տըրտմութեան,  
Ներկայ, անցեալ ցոյց են տալիս ինձ փայլուն  
Ապագայի դէմքը պայծառ, աննըման.  
Խաչը կեանքի ուսիս վերայ թեթեցած  
Թոյլ է տայիս հանգչել տանջւած իմ մարմնին.  
Ես ըզգում եմ, որ ամենից եմ սիրւած,  
Որ գերագոյն մի էակ եմ տռանձին...

## XI

Մի յուսահատւիր, դըժբաղդ ուսուցիչ,  
Երբ տանջւում է սիրտդ, երբ ամենայն ինչ՝  
Կեանք, բաղդ կորած ես կարծում քեզ համար՝  
Մի յուսահատւիր, մի տըրտմիր, մի լար:

Թող կորչի այդ բաղզն, որի լեռնեից  
Ընկած է ալսօր մարգոց բազմութիւն—  
Նորա պարզեած տմեն մի տուրքից  
Կաթում է անմեղ արցունք ու արիւն:  
Թող այդ վայելեն ուրիշներ, որոնց  
Հըրճւանք է տեսնել տանջանքը մարդոց,  
Որոնց համար կոծ, աղաղակ ու լաց՝  
Երգեր են, պարեր ուրախ հարսանեաց:  
Դու այդ չես ուզում... Դու ուզում ես կեանք  
Ուրախ, երջանիկ, ուզում ես դու սէր,  
Որի խաղաղիկ հովանոցի տակ  
Գըրկւած, փաթաթւած աշխարհը խըմբւէր:

Բայց յիշեր.—դարեր առաջ մեզանից.  
Քարոզում էր այդ մի Մեծ Ռւսուցիչ,  
Որ հըրաժարւած կեանքից գըլիովին  
Ամեն ինչ զոհեց իւր գաղափարին.  
Որ անտուն, անտեղ, որ հալածական  
Անցաւ գիւղից գիւղ, քաղաք քաղաքից,  
Որ չ'ունէր հանգիստ և ոչ մի վայրկեան,  
Որ ուտում էր միշտ Աստծոյ սեղանից.  
Որ հեզ և անձայն հարւածների տակ  
Հալածողներին նայում էր սիրով,  
Որ գատապարտւած, որպէս աւազակ՝  
Աւանդեց հոգին ներիչ խօսքերով:  
Եւ տարածւեցաւ նորա խօսքն աշխարհ...  
Ու լուսազարդւած ազգեր անհամար  
Վազեցին այն հողն, այն հետքը լիզել,  
Որոնց վերալ նու սէր էր քարոզել...

## ԱԶԳԱՅԻՆ ՎԵՊ

Մ. ԱԲԵՂԵԱՆԻ

(Շարունակութիւն և վեց<sup>1)</sup>)

Այսունցի Դաւիթը՝ կամ «Մհերի կուռօ», Կ. Պօլիս, 1874, և «Դաւիթ և Մհեր».  
Շուշի, 1889, ժողովրդական պատումներն իրքիւ կչս-պատմական եւ կէս-դիւ-  
յազնուկան հին միավ.

ԺԴ.

Ամեն զիւցազնական արարք պսակում է արժանաւոր ամուսնութեամբ, որ զիւցազների վարձատրութիւնն է: Մեր հէքիաթների մէջ հերոսները հեռու աշխարհներ են ման գալիս, աշխարհքի լանքն ու երկանքը չափում, զեւ վիշտապի հետ կռւում, զանազան կտրճութիւն և հանճարեղութիւն ցուց աալիս, բայց վերջ ի վերջու նրանք զալիս մի կէտի վերակ հանգչում են.—դա հաւանած և արժանի ու գեղեցիկ աղջկակ հետ ամուսնութիւնն է: Դաւիթն արդէն հոչակաւոր զիւցազն է, նրան ևս պէտք է կեանքի ընկեր, որ, հարկաւ, չէ կարող մի հասարակ աղջիկ լինել. զիւցազնին պէտք է զիւցազնուհի կին, Աղջկիւ կանաք երկուուր կան վէպի մէջ՝ Չմշկիկ-Սուլթան (տիրուհի) և Խանդութ խաթուն (տիկին, բամբիչ), բացի գրանցից և Գոհար խաթուն Մհերի վէպի մէջ (թողնում ենք երկրորդական զեր խաղացող կանաքը):

Ժողովրդական վէպի զիւցազնական կանանց տիպերը սրոշւում են իրանց մեծավազներուչ բնաւորութեամբ. նրանք, ինչպէս զիւցազները, քաջամարտիկ են, քաջավարք են զինաշարժութեան և ձիավարութեան մէջ, նաև անգամ նրանք հանդիսանում են իրքն ազատ տիրուհիներ մի գաւառի կամ մի քաղաքի և ձիու վերակ նոտած, զինաւորւած շրջում են իրանց երկրի սահմանն ու սահմանից

1) ՏԵՇ «Մուլթ»-ի 1889 թ. № 10, 11 և 1890 թ. № 1.

գուրս, կռւսում են թէ զիւցազների և թէ աղ հրեշների դէմ, և դաշտի մէջ զարնում են իրանց վրանները, կամ շինած ունին իրանց ապարանքները (քօշկ ու սարակները), որոնց մէջ հանգստանում են պատերազմական սըխ-րագործութիւններից, և այդաեղ, շրջապատող բուրսաւէտ պարտէզների օղոլ արբեցած, անձուկ են քաշում իրանց արժանի զիւցազնի սիրու կա-րօսով, Երբեմն նրանք զեղեցիկ են ինչպէս հրեղէն ազջիկները, և իրանք ես հրեղէն, աւսինքն զերբնական էակ են, քնքուշ և հրապուրիչ, բայց իրանց կռւսական հապարտութեան մէջ իրանց համար ալր են ճանաչում միան նրան, որ իրանց չաղթում է մննամարտութեան մէջ և իրանցից ուժով գերազանց է վիճում, իսկ իրանցից թողլերին արհամարհելով ար-համարհում են և շատ անգամ նոյն իսկ անինաչ կռուորում են ազդպիսի-ներին. Մեծ մասամբ նրանք հաւատարիմ են ամուսնական սիրուն և պատ-րաստ են իրանց ալրերի համար զոհել ամենաճն բան և նոյն իսկ իրանց կեանքն ևս զոհում են նրանց. Իրանց ամուսնական հաւատարմութեան մէջ ե՛ սաստիկ իւանդոտ են և՛ վրէժինդիր իրանց անհաւատարիմ ամու-սիններից, մահու չափ կռւող են իրանց անձնական պատիւը պաշտպա-նելու համար. և շատ անգամ ետ չաջողում է նրանց վրէժ ասնել իրանց խարդիներից, Երբեմն նրանք զիւցազների ֆիղլիքական անչափ ուժի հետ օժուած են և խօսքի կախարդական ուժով, նախատեսութեան և իմաս-տութեան չնորհքով, որ վէպերի մէջ մեծ մասամբ կանանց է միան վե-րապահում, Սական աջսպիսի զիւցազնակոմ բատկութիւններով փայլում են միան զեռ ևս ալր չը ճանաչող կոտսերը. մարզու զնալուց լեռող լա-ճախ նրանք կորցնում են իրանց գերբնական ոժերը և դառնում են հա-սարակ մահկանացուներ. — Կանացի բնաւորութեան ալսպիսի աղնիւ և ազատ տիպերը ստիղծած սլրտի լինին աճն ժամանակ, երբ որ մահմեղական ցեղերի ազդեցութիւնը զեռ ևս չէ եղել հալոց ընտանիկան կեանքի և մեր կանանց վիճակի վերաբ, երբ որ կանանց բանտարկեալի պէս չէին փա-կում տան մէջ՝ նրանց պատիւն ազատ պահելու համար:

Չմշկիկ-Սուլթանը, որ մի ալսպիսի զիւցազնական կին է և «շատ գե-զալ վահկան», ալրում է Դաւթի հետ ամուսնանալու փափազով: Չէ-նով-Չովլանն, իբրև տան նահատակ, արդէն նրան ուղել էր Դաւթի համար. բայց Դաւթի սիրուը Չմշկիկ-Սուլթանից աւելի զեղեցկին և կտրծին էր ուղում, անսպիսուն, որ իրանից շատ ստոր չը լինէր քաջութեամբ: Ազդ կինը Խանզութիւնաթունն է, որի գուսանական գովքից միան Դաւթիթը սի-րահարւում է նորա վերաբ, որովհետի նա գարնան ձեան պէս սպիտակ է, բամբակի պէս կակուղ ու քնքուշ է, նորա ունքերը զալամով քաշած են, աչքերը չինու կիթխաներ են, իսկ ճակատի լանութիւնը «եօթ ակիւմ է, տել մէկ չաւել է»: Զարմանալի չէ, որ մեր ժողովուրդը կնոջ զեղեցկու-թեան համար ճակատի լանութեանն ազդպիսի մեծ նշանակութիւն է տա-լիս, բայց ճակատի այդ լանութիւնը միանգամաճն և վկայում է Խանզութ

խաթունի չափազանց լազմանդամութեան և զօրեղութեան մասին։ Եւ ճշմարիտ, Խաճդութ խաթունը հասարակ կին չէ. Զէնով-Յովանն անդամ գիտէ, որ քառասուն փահլանան եօթ տարի նորա զռանը նստած են, բաց Խաճդութ խաթունը նրանցից ոչ մէկին հաւանութիւն չէ տալիս և իրան արժանի չէ համարում. Կռւի մէջ նա միայն Դաւթից է իմա մնում և նրանից լազմւելուց հետո միայն համաձանում է նրան կին լինել։ Ազապիսի մի դիւցազնուհի կին, որ գուշակութիւն անելու իմաստութիւն ևս ունէր, կը ցանկանար, հարկաւ, իրան արժանաւոր մէկին ամուսին ունենալ. և Խաճդութ խաթունը, զեռ Դաւթին չը տեսած, նորա քաջազործութիւնների համբաւը միայն լսելով, սիրում է Դաւթին, ինչպէս Շահնամէի մէջ Թեհմինան Որուստամին, և միեչի անգամ ինքն երկու գուսան է ուղարկում, որ իւր գովքն անելով հրապուրեն Դաւթին, որ գայ իրան առնի։ Եւ Դաւթից գնում է գուսաններից դրդւած։

Դուսանների մասին իոսոք բացւելով, աէտք է նկատել, որ ինչքան ժողովրդական վէպը կենդանի և նախնական է, անքան աւելի նկատելի է նորա մէջ գործող անձեւի կապը վէպի երաժշտական և' երգեցաղական կատարման հետ։ Ցունաց քերթածների (Պօթմա) մէջ շատ անգամ բնմ են գուրս գալիս երգիչ ռապուղներ, որոնք սփոփում են ժողովրդին արոյական պատերազմի մասին երգելով. շատ անգամ հերոսներն իրանք և' երգիչ և' երաժիշտ են։ Հայոց ազգավին վէպը, թէպէտե շատ երկար դարեր. է ապրել ժողովրդի բերանում ան ժամանակից, երբ որ զեռ ես նոր էր ստեղծագործւել, — զեռ ևս այդ երգեցաղական և երաժշտական արւեստի նկատմամբ չէ կորցրել բոլորվին իւր նախնականութիւնը. վէպի գործողութեան մեծ մասը թէպէտե պատմում է, բայց վուքր մասն ես մինչեւ ալժմ երգւում է. միւս կողմից ազգավին վէպի մէջ, ինչպէս Խլիականի և Ողիսականի մէջ, զուրս են գալիս և երգիչ-երաժիշտ զործապ անձեւը. ինչպէս Մօրակ կանաք, որոնք երգելով ճանապարհ են դնում Խօլաշոն վէպի Սասուն, և երգելով ընդունում են նրան. ինչպէս վերովիշեալ գուսանները, որոնք իրանց երգով և երաժշտութեամբ շատ էլ երկրորդական դեր չեն կատարում Դաւթի և Խաճդութ տիկնոջ սիրու մէջ. Վէպի հերոսներից երգիչ (ոչ երաժիշտ) են զուրս գալիս և Զէնով-Յովաննը, Խաճդութ տիկինը, Մհերը, որոնք իրանց գործերի մի մասը, առաւելապէս սրտի զգացմունքները երգով են արտակարում. Ամենամեծ երգիչ է վէպի մէջ և Դաւթիթը, որին պատկանում է վէպի երգերի մեծ մասը. Ցատուկ երգեցողութեան և երաժշտութեան չնորնք պէտք է ունեցած լինի և Դաւթի եղբայրը (ըստ հ. Սրուանձտեանի վարիանտի) Խոր-Գուսանը, որի անունն իսկ ցոյց է տալիս, որ նշանաւոր գուսան պէտք է եղած լինի. բայց Խոր-Գուսանի մասին երկու վարիանտի մէջ մի առանձին բան չը կաչ պատմւած։ Երգիչ է զուրս գալիս և մինչեւ անգամ լուռ ու մունջ և խստարարով։ Համտովը, Խաճդութ տիկնոջ կոնապամիը։ Համտովը քառասուն տարի

դռնապահութիւն է արել և, իւր տիրուում արժանաւոր ծառան լինելով, արհամարել է ամեն մի փահլականի և նրանց հետ ոչ միայն խօսք չէ փոխանակել, ազ և նրանց բարել չէ առել. բայց նա, Դաւթին տեսնելով վախենում է նրանից, և ոչ միայն բարեն է առնում, ազ և լեզուն բացում է և երգում է. թէպէտ Դաւթին ևս, որ գաղաճներից ու դիերից չէր վախեցել, Համտօլից վախենում է և իւր կեանքի մէջ առաջին անգամ բարել նրան է տալիս:

Թէպէտն Խանդութ խաթունը տոշորուում էր Դաւթի սիրով, բայց իւր զգաստութեամբ թով չէ տալիս Դաւթին համբոյը առնել իրանից. նա բոնցքի մի հարւածով արիւնջուր է դուրս հանում Դաւթի բերնից, և իւր կանացի փառասիրութեամբ ցանկանում է, որ քաջագործութեամբ անուանի Դաւթիը լատկապէս իրան համար իւր քաջութիւնը ցուց տալ և իրան բերէ մի քանի լաւոնի փահլամանների գրուսը, որոնք իւր՝ Խանդութ խաթունի ձեռքն ուզում էին և, ինչպէս երևում է, ձանձրացրել էին նրան, ոչ այնքան իրանց քաջութեան և մարմնական զօրութեան պակասութեամբ, որովհետեւ Դաւթին անգամ կասկածում է, որ նրանք իւր վերաց «զօռ» լինին,—որքան իրանց արտաքինով և ոչ մարդկացն բնաւորութեամբ, որովհետեւ նրանք շատ աւելի հին ժամանակի սկզբով են վերաբերում, քան թէ Խանդութ տիկնոջ ժամանակն է: Այդ փահլամաններից «Նըբըգան-Խորասականի վերին ունք էնքան էր կախուի, որ էկիր էր հասե վըր սրտին, ու չանդալով կապեր էր ու զորիկ ետեանց վըր պատեկին լին մէկէլ լուաչ Հըմզաչ փահլիվանի ներքեի մուութ զգետին կ'աւէր ու կերթէր»: Դաւթիը մի օր ամբողջ, առաւօտից մինչև երեկոյ, լախտով ու նետուաղեղով կուռում է այդ փահլամանների հետ և հաղիս կարողանում է երկուսին էլ չաղթել, նա զերկուսի գլուխն լէ Կտրեց, ու զերկուսի բրչամ (մազեր) լէ կապեց վիրար ու խուրջինի աւա (նման) թալեց (ձգեց) վըր թարքին. ու ընդունց լեզուն կախուած՝ զգետին գութնի ակօսի աւա կը վարէր: Սուն եղանակով վարուում է և սուսաց վէպի մէջ նվիա Մուրուեց հական Սոլովչէ Ռազբոնիկի հետ, որի լեզուն նոզպէս ձիու գտւակից կախ ընկած վարուում է զետինը:

Նըբըգան-Խորասական և Լուաչ Հըմզաչ փահլամանները ներկայանում են իրիս առասպելական հրէշ-տիտաններ, թերևս աւելի աւագ քան թէ Մարամելիքն և դեկրը, որոնք իրանց խօլականութեամբ հանդերձ այդպիսի անձունի ցուցանք չեն ներկայանում վէպի մէջ, որովհետեւ ժողովրդական վէպի մէջ հսկան, որքան աւելի հին և սկզբնական ժամանակի էակէ, հետագաւ ժամանակում այնքան աւելի զերբական, կամ լաւ ասած, անբնական հրէշաւոր պատկերով և աւելի զօրաւոր է դուրս գալիս. Դաւթիը, որ ոչ մի բանից վախեցել չէ և վստահ է իւր ուժի վերաց, թէպէտ չէ վախենում դրանցից, բայց մի բոպէ կասկածում է նրանց լաղթելուց: Սակայն ինչպէս հնութեան բոլոր առասպելական

(միթական) զարհուրելի հրէշներն ու տիտանները տեղի են տալիս մարդկակին համակրական գիւցազներին, ազգպէս և այդ փահլեանները երկիւղ են տանում և լաղթուում են Դաւթից, որովհետեւ առ ԱՄՐՊՈՅԻ (Ս. Սարգսի) ճորտերուցն է», ծառաներիցն է: Խակ Ս. Ապրգիառ, ինչպէս մի անգամ նկատեցինք, անունով քրիստոնէական սուրբ է, որ փախանակած է մի հին, հեթանոսական աստուծու, բայց ժամանակով աւելի հետապաչ աստուծու, քան թէ տարերաբան տիտաններն են, որոնք պարտութիւն են կրում իրանց ժառանգներից, ինչպէս չունաց ախտաններն Արամազդից:—Խանդութ տիկնոջ գունապան Համատօլն ևս իւր երկար պառկով մօսինում է այս փահլեանների կարգին, ուստի և Դաւթիթը նրանից եռ վախենում է:

## ԺԵ.

Մեր վարիանտով Խանդութ խաթունը հարկ չէ համարում փահլեանների գլուխն ուզելու, քանի որ նա գիտէր թէ ինչպէս Դաւթիթը փահլեանների իւր դէմ լարած դաւաճանութիւնն ի դերեւ էր հանել և նրանց թըրերը բոլորը ծնկին խիթելով կատրատել էր.—Դաւթիթն ինքն է ցանկանում, որ առիթ լինի իւր նշանածի առաջ և իւր նշանածի համար մի քաջութեան ծառակութիւն ցոյց տալու, մանաւանդ որ նշանածը, բայց քով զարնելով, ամօթով էր թողել իրան: Դաւթիթը խնդիրքով գիտում է Աստուծուն, և աստուածակին զօրութիւնը, որ Դաւթի շատ ազաշանքներին լսել էր, նորա աս խնդիրքն էլ կատարում է: Թշնամինները պաշարում են Խանդութ խաթունի քաղաքը, ով պիտի կուտի թշնամինների դէմ:—Դաւթիթն է միայն կուռում և ջարդում թշնամիններին: Այսանդ հանդէս է գալիս մի նոր զիւցազնական պայծառ անձնաւորութիւն, մի և նոյն Արամելիքի զիւանական շառաւիղը, Ցուան-Աէրպոնի որդի Պարտն-Աստղիկը, որին թշնամինները խաբելով Դաւթի դէմ կուտի են հանդում: Պարտն-Աստղիկի պարոն մակրիբը վկացում է, որ խաշակիրների ժամանակի ազգեցութեան տակ է աւելացած, խակ Աստղիկ անունը հեթանոսական հնութիւն և ցոյց տալիս: Պարտն-Աստղիկն իւր թեսաւոր հրեղինի վերաբ նստած՝ Փրփուում է Դաւթի զիւին և կրակ է թափառմ նորա վերաբ, առանց ճանաչելու նրան: Երկութիրե՛ Հաւլունին և Կալծակին, իրար են հանդիպել մի և նոյն ցեղից երկու հոկանների ձեռքին, և կալծակներ են թափում: «Թիրէ շառաւիրքը» օրը ցերեկով անգամ խփում է Խանդութ խաթունի դուռ, պատուհան, ու երդիկ փառկած սենեակին, և Խանդութ խաթունը, հակառակ իւր խոստման, կանացի հետաքրքրութեամբ չէ դիմանում, պատուհանը բանում է և ահ ու սարսափով հանդիսանես է վլնում զիւցազնական կուփն, որի մէջ Դաւթիթը, չը ցանկանալով վասել Պարտն-Աստղիկն, պատուաւոր դիրք չ'ունէր: Բայց, աւազ, զիւցազնին էլ կնոջ հաճուղանալու փափազը չաղթում է, և երիտասարդ ու անփորձ հոկակ Պարտն-Աստղիկը, որ, ներքին զիւցազնա-

կան ուժից դրդւած, արկածների ևտելից էր ընկել, գետին է տապալւում պատերազմների մէջ վարժ ու փորձ գերբնական ուժի տէր Դաւթից, Կոր սէրը վառում է և անմիտ դիմն, և դաշտահրեշին, և' աղնիւ դիւցաղն Դաւթին, որ՝ իւր սիրուհու աշքին նւաստ չ'երեալու համար՝ սպանում է աղջականին. և այս սպանութիւնը Դաւթի բնաւորութեան մէջ միակ խաւար գիծն է, որ դժւար թէ քաւելի լինի սպանելուց լետոյ սպանողի, որտի ցաւից, ուշաթափ լինելով:

Մի լանցանքը ևտելից քաշ է տալիս միւս լանցանքը. սէրը մի անգամ կուրացրեց Դաւթին, բայց սիրոյ գիրգ բազուկներում նա մոռանում է և իւր օրհասական երդումը, որ տւեց «Խաչ-պատարազինի» վերակ մախանքի վրէժիսնդրութեամբ լցւած Զմշկիկ-Սուլթանին. Ո՛ր դիւցաղնի մահաւան պատճառը սէրը, կինը չէ ևղել, որ Դաւթինն ևս կինը չը լինէր: Բայց մինչեւու ուզից աղգերի դիւցաղները, ինչպէս և մեր հեքիաթների մէջ շատ հերոսներ, ընկնում են խարեւակ ու անհաւատարիմ կնոջ նենդութեամբ, մեր Դաւթին աւելի բազզաւոր է իւր մահով: Դաւթի կինը հաւատարիմ էր. նա մինչև անգամ Դաւթի մահից լետոյ կսկծու մոյն է խմում և մնունում, կամ, ինչպէս հ. Սրուանձտեանի վարիանտում է, բերդի զլիից իրան ներքե է ձգում և մնոցնում. Դաւթին ընկնում է խանդոս Զմշկիկ-Սուլթանի ձևոքով, որ ասում է իւր կոսդիւցաղնական վիրաւորւած բոլոր հոգարտութեամբ.

«Դաւթի, ինչու, ևս խօրօս չը,  
Զի ուղեցին քե, աիւ ձի չը խաւար,  
Վար ձի գնացիր, Խանդութ խաթուն բերիր:  
Դէ ար՝ ևս տիւ կոխւ անենք.  
Եա ևս քե տը սպանեմ,  
Ես լէ, Խանդութ խաթուն լէ մնանք որբաւարի,  
Եա տիւ ձի սպանես,  
Նուր էրթաս, Խանդութ խաթնի ծոց պառկես»:

Խսկապէս ասած, Դաւթին ընկնում է դիւցալին գերագոն զօրութիւնը, և ոչ Զմշկիկ-Սուլթանը. որովհետեւ նա սիրոյ հեշտութիւնից արթեցած, մոռանում է իւր անդրելի երդումը Խաչ-պատարազինի վերակ, որ իրան միշտ պահապան և օգնական էր ևղել, երբ որ ինքը ձշդութեամբ կատարում էր նորա արդարութիւնը. ժողովուրդը չէր ներիլ, որ, առանց աստուածակին զօրութեան մատին, Դաւթի պէս մի կատարեալ դիւցաղն չաղթահալւէր որ և է ուժից և կամ սպանեէր Զմշկիկ-Սուլթանից: Ուռասաց հսկաներն ևս աշխարհքից վերանում են ոչ աստեոր, այլ մի երկնակին, գերբնական ուժի ձևոքով, որին պարծենկոտութեամբ կուի ևն կանչում: Որպէս զի Դաւթիը սպանէր, զորա համար հարկաւոր էր, որ

Նա ընկեր նախ Աստուծու աչքից. աչդ անել է տալիս նրան մի ազնիւ և սիրող կին, իսկ մի ուրիշ, սիրով կատաղած կին անազնիւ և ստոր գաղ-տաղողութեամբ սպանում է նրան։ Սպանութեան աչդ դաղտագուղութիւնն անդամ, երբ որ ժողովուրդն ասում է՝ «Դաւիթ սպանուաւ առանց կոփւ», ժողովրդի համար մի տեսակ ցաւ, բաց և միմիթարանք է, որ իւր սիրելի դիւցազնին դարձեալ չեն կարողացել սպանել ճակատ առ ճակատ կուելիս, այլ ետեից գողի նման են հարւած իջեցրել, և այն կրակացրած խոփի նետով, և այն ժամանակ, երբ որ դիւցազնը բոլորովին մերկ էր, չ'ունէր իւր դիւցազնութեան ոչ մի դէնք ու դարզը՝ Խաչ-պատարալին, գլխու-գօտին, կապէն-խաբուկին, քամարն ի մէջքին։ Նա նստած չէր Քուռկիկ-Զալալինի վերաչ, և նորա ձեռքին չը կար Կաթակի Թուրը, և ոչ իսկ լախտը, նետ ու աղեղը կամ վահանը։ Ցաւալի մահ, որով գրեթէ բոլոր դիւցազները վերջացնում են իրանց սիրագործական կեանքը։

Հ. Սրուանձտեանի վարիանտում Դաւիթի մահն ախտէս անշուք չէ նկարագրւած։ Երբ որ Դաւիթը մերկ ժամանակ Աբամելիքի ցեղից Նըշը խսնումի աղջկայ նետով մահացու հարւած ստացաւ մէջքին, «Դաւիթ էլաւ կացնաւ, ու բուաց. որ բուաց՝ ձէն (Խլաթաչ) գնաց ի Սասուն», նման ֆրանկների դիւցազն Ռոլանդի ծանին, որ Պերինեան լեռներից անցնում է մինչև Մեծն Կարողոսի բանակը. «Զէնով-Յովին, Խոր-Դուսան, Քեռի-Թորոս, Ճնճափոքրիկ ու Ցուան Վէգին, (Սասուն դիւանական ճենրը) ժող-վին զիրար. Զէնով-Յովին լէ Սասուն բուաց. — Ու էկան Դաւիթի հաւարին։ Դաւիթ լէ ըդ ջրի մէջ զուր աղօրը ձէն լինց։ Նրանք մաս եկան, զուան Դաւիթին հարւածող «չինի աչքերով» աղջկան, հանեցին թագնւած տեղից. «Բունեց Դաւիթ՝ զոտք զրից վըր մէկ սուլուն, ու քաշեց ճըստեց, թալեց սարու տըկու գնդր։ Դաւիթն, իւր վրէմը իւր ձեռքով լուծելուց մետով, չորս օրից մեռաւ. Սական դրանով միայն չէ վերջանում Դաւիթի մահւան վրէմինդրութիւնը. Մհերը, իւր հօր մահը հօրեղբարներից խմանալով, շատ լաց ու արտասուք թափեց, «հեծաւ զպապու (հօր) քուռակ, ու գնաց ի Խլաթ<sup>1)</sup>, քար ու քանդ էրեց. Հըմլաչ կ'աւրէ... ու կ'ելնէ Նըմրութակ զլուխ, կ'իշէկէ որ ծուխ կ'ելնէր. հաղմ լէ կը զառնէր. Տեսաւ որ պառ-ւուկ մէր մանցի, դէն լէ բունեց. զամէն մէկ ոտ կապեց մէկ ծառ, ու զծառեր թողեց. զէդ լէ հմալ սպանեց, Խլաթաչ ծուխ ու մուխ կտրեց»։

1) Եթէ Զմշկել-Սուլթանը Զմշկածագի տէրը չէ, ինչպէս ենթադրել Ենք, կարելի է կարծել, որ նա Խլաթայ աէքը պիտի լինի, այն ժամանակ երկու վարիան-տի պատմութիւնները կը նոյնանան և կը լըսցնեն իբաց, որովհետեւ Զմշկիկ-Սուլ-թանն և «չինի աչքերով» աղջկելը մի և նոյն անձը կը լինին, և խլաթցիններն, երանց տիրուկու առաջնորդութեամբ, Դաւիթի դէմ՝ դուրս ելած կը լինին, և ոչ ասպատակա-բար, ինչպէս հ. Սրուանձտեանի վարիանտում է։

ԺԶ.

Մենք վերջացրինք Դաւթի դիւցազնական վէպն խը գլխաւոր հերոսներով Դաւթի, Մսրամելիք, Խանդութ խաթուն, Պարոն-Աստղիկ, փահլանները և Զմշկիկ-Սուլթան. բայց ադ հերոսներից զատ կաչ և մի անձնաւորութիւն, որին մոռացել ենք, և որը փոքր գեր չէ խաղում Դաւթի վէպի մէջ, Դաւթի մանկութիւնից մինչև մահը. նա Դաւթի հաջրագիրն է, և ամեն մի գործողութեան մէջ Դաւթի հաջըն է: Զէնով-Յուգանի ուրիշ լատկութիւնների մասին խօսելը թողնելով, որովհետև մեր նպատակը չէ աղքացն վէպի գեղարեւստական քննութիւն գրել, մենք ուղում ենք մատնացոց անել միայն նորա դիւցազնութեան վերակ: Զէնով-Յուգանը օժտւած չէ առանձին հերոսական ուժով, թէպէտե նա հասարակ մահկանացու էլ չէ, որովհետև ձեռքը դնում է Կարմիր և Սպիտակ ձիերու մէջքին, ձիերն իրանց փորը խփում են զետնին, նա Կարողանում է հրեղէն ձիու վերաց նստել,—բայց նա ունի դիւցազնական ձախն. «Ճմալ ձէնով էր, որ եօթն գոմշու կաշի կը թալէր արև չորցնէր, ու կը փաթտէր զինք, ու քու էր, որ չ'եղնէր պատռուէր»: «Զէնով-Յուգան կանչեց, ձէն ընկաւ սար ու ձոր», նորա ձախնը Սասնուց մինչև Խլաթ է հասնում, նորա ձախնը մըսնում է և գետնի տակ Մհերի «մաղաղէն», Դաւթի ձախն ևս Խլաթից Սասուն հասաւ, բայց ադ Դաւթի սեպհական լատկութիւնից չէր, այլ նորա օրհասական դրութիւնից, որ իւր հսկաչական ձախնին առանձին ուժ էր տալիս:

Մեր հեքիաթների մէջ շատ սովորական երեսով է մի անձի մէջ ամփոփել որ և է լատկութեան ծայրակեղ կատարելութիւն միւս դիւցադնական լատկութիւնների բացակարութեան հետ: Ալղպիսի լատկութեան տէր անձերն են՝ լաւ լսողներ, որոնք ականջները դնում են զետնին և ամեն՝ ինչ որ աշխարհիս վերաց կատարում է, լսում են. որին դ ա ծ ո դ հովիւներ, որոնց նւադից լւսները, քարերն ու ծառերը և ամեն ինչ պար են քոնում. արագ վազողներ, որոնք մի ջաղացաքար մի ուաքին, մի ջաղացաքար միւս ուաքին կապած անգամ անգիս վաղում են, որ ետեներից հասնել չի լինի. բայցի զրանցից կան և ծով կուլ տւոդ ներ, որոնք ծովի ջուրը կուլ ատլուց լետու բաց են թողնում և ջրհեղեղ անում. շատակներներ, որ ամեն ինչ ուստում են և գարձեալ ասում են թէ քաղցած մեռանք, և ուրիշ լաւ ու վաս ծալրակեղ լատկութիւնների տէր անձեր, որոնք իրանք մի նշանաւոր գործ չեն կատարում մենակ կամ իրանց անձի համար, այլ գրեթէ բոլորը խմբում են զլիսաւոր հերոսի շուրջը, որ ունենում է անձնական քաջութիւն և խմաստութիւն: Ալղպիսի մի բարձր բուալու լատկութիւն ունի և Զէնով-Յուգանը, որ միանդամացն և խոհեմ նահապետ է իւր տան մէջ, ինչողիս և Շահնամէի մէջ Զենդը դուրս է դալիս իրեն ծալրակեղ սրատնսութեան ներկաչացուցիչ, որի աշ-

Քերը մութի խաւարի մէջ անգամ պարզ տեսնում են հեռաւոր առարկա-ները, և որ, միանդամ միայն մէկին տեսնելով, այլ ևս չէ մոռանում նորա կերպարանքը:—

ԺԵ.

Մհերը Դաւթից զիւցազնութեան մէջ ոչ մի բանով պակաս չէ, մինչև անգամ աւելի է իւր բնական ուժով: Մհերը՝ զա մի մարմնացում է մարդկակին չափազանց ուժ ու զօրութեան, սարսափելի մարմնացում թէ ուժի որակով և թէ քանակով: Նա դեռ չէր ծնւած, որ Դաւթին ասում է Խանդութ տիկնոջ. «Թէ որ ըդ աղէն ինձնից է, վրէն նշան մի, զօրութիւն մի տ'եղնի»: և ինչպէս սպասելի չը լինէր, որ Մհերը մի արտակարդ նշան կամ զօրութիւն չ'ունենար, քանի որ նա Դաւթի և Խանդութ հսկաների ուերունդն էր, քանի որ նա Դաւթի շամբուշ ժամանակի ծնունդն էր: Մհերը ծնւում է, և ծնւելուց անմիջապէս լետու լաւտնի է լինում նորա հսկայութեան երկու կողմն ևս, անսահման ովն ու ալդ ուժի դէպի չարն ունեցած ուղղութիւնը: Խանձարուրքի սովորական բինդի (կապ) տեղ նրան փաթաթած են գութանի շղթապալ. բայց Մհերը «կերը լաց ու ճմլկտած մէջ ճզօրին, ըդուր վրաւու փաթուկ զընջիլ կտոր կտոր եղաւ»: Նա ծնել է, բայց մի ձեռքը խփած է, և ոչ մի մարդ, մինչև անգամ մարզը, չի կարողանում բաց անել. Դաւթին է միայն գալիս և ձեռքը մաժում, բանում է, և ահա ինչ է անսում. «Տեսաւ որ զուլանթ մի արուն ուր ձեռվու մէջն էր», և բացականչում է հայրը. «Հայ հայ... զաշխարհք արեր է կաթ մի արուն, դրեր է ուր ձեռվու մէջ: Թ'որ ըստի մնաց, ըդուր մօտէն զարմանալի բան տ'եղնի»: Մհերի ամբողջ կեանքի ճիշդ բնաւորական նկարագիրը իւր հօր հենց աչ մի քանի խօսքով արտաշաբուսւմ է: Մհերի չար և աւելիչ բնութեան արտաշատութիւնն է նորա ձեռքի մէջ ծնած մի կաթ արիւնը, ինչպէս և մի և նոյն աւանդութիւնը, որ Լանկթամուրի համար ևս ասւում է, մեկնում է և Լանկթամուրի ամբողջ կեանքը: Լանկթամուր և Մհեր, մէկը պատմական անձնաւորութիւն, միւսն աւասպեկական զիւցազն. բայց որքան նմանութիւնն նրանց երկուսի ձեռքի մէջ ծնւած մի կաթիլ արեան մէջ և նրանց աւերիչ կեանքի մէջ:

Ռուսաւմի որդի Զոհրաբի համար զրում է Ֆիրդուսին. «Զարմանալի մանուկ էր Զոհրաբը. նա ծնւեցաւ ժպիտը բերնին, ոչ մի բանից երբէք լաց չէր լինում. աճում էր անպէս հրաշալի կերպով, որ մի ամսական ժամանակ արդէն տարեկան էր երեսնում. երեք տարեկան հասակում նա արդէն կարճաբար արշաւում էր ձիով դաշտի վերաց. վեց տարեկան նա հզօր էր ինչպէս առիւծ. իսկ երբ որ առան երկու տարեկան դարձաւ, ոչ ոք այլ ևս չէր կարողանում նորա հետ մրցել. նա վիթխարի հասակով էր, արի և գեղեցիկ»: Նա իւր հետ կուտողին ոլորում էր

աղեղի պէս, առլւծին սանձում էր աղւէսի նման. կազնի ծառն ուն ոճին, երբ որ նա ճօճում էր, նորա ձեռքին կռանում էին ինչպէս հասարակ ճիւղեր. նա, իրան համար ձի ընտրելիս, որ ձիու վերակ որ ձեռքը դնում էր, միայն ձեռքի երկաթի ճնշումից ճին խորհն գնանին էր կպչում (ինչպէս մեր վէպի մէջ Ձէնով. Յովանի ձեռքից). Այսպիսի էր մանակ Զոհրաբը, որ անքան շուտ է մեծանում և լրանի վերակ կուր դնում, որ Ռուսական անկամ, թէպէտե զիտէր, որ արծուկ ձագն արծիւ պլիսի վիճի, կասկածում է, որ իւր որդին անգամ ալդպիսի փոքր հասակում ալդպէս զօրեղ չէր կարող վիճնել:—Ծէսնենք ինչ է ասում մեր աղգալին վէպը Դաւթի որդի Մհերի մանկութեան մասին.

«Ինչ ուրշի տղեք տարով կը մեծանին՝ Մհեր օրով,  
ինչ ամսով Մհեր սհաթով:  
Տարին որ լրացաւ,  
Մհեր էլաւ, գնաց մէջ քաղքին ման կը գար.  
Զքարդի ծառեր կը կռուէր,  
Քաղքի տղեք կը խեծուցէր,  
կը շարէր վար բարդու ծառին,  
Ծառու ծէր կը թորկէր (բաց կը թողնէր),  
ինչ ծառը ծէր կը բարձրացնէր,  
Քաղքի տղեք, ամեն մէկ ճիժ,  
Մէկ մահլաւ (թաղ) կը թէր (կը ձգէր)»:

Մհերն աւելի արագ է աճում, քան թէ Զոհրաբը. և նա մի տարեկան արդէն արտակալսում է իւր բնաւորութիւնն և ոչը: Ի՞նչ է Մհերի քաղաքի երեխաների զլխին խաղացածը, եթէ ոչ մի երեխաւական, բաց հոկալական չարութիւն, որ մի առանձին դիտաւորեալ չարամիտ նպաստակ չ'ունի: Բաց ինչ է և նորա կամրջի խաղը, որ ութ տարեկան հասակում խաղում է անճար մնացած սասունցիների գլխին:—դարձեալ մի անմիտ, բաց չար գործ, որ նա կատարում է ոչ թէ չատկապէս քաղաքացիներին տանջելու նպաստակով, ալ միան նորա համար, որ ներքին ոչը սախալում էր նրան աղդ անել. նա մի ձեռվ պիտի զուրս թափէր իւր ներսում հաւաքւած զօրութիւնը, որ նորա մէջ եռում էր, նրան տանջում էր, հանգիստ չէր տալիս, մինչեւ որ զուրս չէր զեղւում. և Մհերն իւր ոչը թափում է իւր քաղաքացիների զլխին, որովհետեւ թշնամիներ չը կան, որ նրանց հետ կռւի: Դաւիթն ես մանկութեան ժամանակի զօրեղ էր, բաց նա Մհերի պէս չար գործեր չէր կատարում, որովհետեւ մնած տարբերութիւն կաէ երկուսի զօրութեան մէջ. մէկ էլ որ Դաւիթը պարապ չէր մնում, իսկ Մհերը պարապ էր, առանձին գործ չ'ունէր. իսկ աղդ պարապութեան մէջ ներքին ոչմն ուստում էր Մհերին:

Սհերն ալդ ուժի բռնկոցից մինչև անգամ իւր հօր հետ կողչում է, և յր որ սա նրան մի ապտակ է տալիս. և հազը փորձով տեսնում է, որ իւր որդին, զեռ ևս փարք, մինչեռ ինքը թուխ մօրուս երխուսարդ էր, մարմնական զօրութեամբ հաւասարում է իրան, ինչպէս երկու սար գնան, գան, դիպչնն իրար, անշպէս հասր ու որդի իրար են առել, փոշին ամպի պէս բարձրացիլ, նրանց բռնել է, նրանք արիւնի մէջ կարմրացել են, բաց գեռ չեն բաժանում, հասարակ հողածինները վախենում են մօանալ նրանց, որ տոքերի տակ չ'ընկնեն, ի՞նչ անէ Խանզութ տիկինը. Մհերը նորա մաշ-րական ձանին չէ լուսմ. Դաւիթն էլ իւր ահու է զարնում Մհերին, Վեր-ջապէս բարերար Աստուածը լսում է մօր աղաչանքին, և նորա հրեշտակն իջնում, բաժանում է լեռնանման հսկաներին, ինչպէս երկու կուող աք-լորի: Հայրը սարսափում է ալդ անասելի ուժի վերաց և մտածում՝ եթէ Մհերն ալսպէս է, հապա նորա որդին ինչ կը լինի, նա աշխարհս ան-շուշտ կ'աւերէ իւր ուժով. և ահու նա անիծում է իւր որդուն, որ նորա մօտից ժառանգ դուրս չ'ընկնի, բայց միանդաման և մահ չը լինի նրան: Անէծքի ալս երկրորդ մանճ ինչու համար է.—միան նորա համար, որ Դա-վիթը գիտէր, որ իւր որդու անչափ ուժը միան ուրիշներին չէր տանջում, ալդ աւելի ևս իրան՝ որդուն պիտի տանջէր. և թղղ լաւիտեան տանջւինա, որ իւր հօր հետ կու արեց և նրան ամաչչեցից ուրիշների առաջ: Բայց ար-դեօք Մհերն արժանի էր հօր սոսկալի անէծքին.—նա նոյնքան մեղաւոր էր հօր առաջ, որքան մեղաւոր էր, որ նա ինքն անասելի ուժի էր ծնւել. նոյնքան մեղաւոր էր իւր հօր հետ կռւելու համար, որքան հայրն ևս մեղաւոր էր, որ իւր կատաղի բարկութեան մէջ, որդուն անշպէս լա-ւիտենական տանջանքի անէծք է կարգում. որ բարի հայրը կ'անէ ալդ, միան զայրութիւնից, որի մէջ ընկնում է Մհերն անմիջա-պէս հօր մահից լետոյ: Շատ անքնական է թւում, որ Մհերին, որին Դա-վիթը լազմթել չէր կարողանում, և ոչ չար զիտաւորութեամբ,—ալդ ե-րեսում է ախ հոգեկան զրութիւնից, որի մէջ ընկնում է Մհերն անմիջա-պէս հօր մահից լետոյ: Շատ անքնական է թւում, որ Մհերին, որին Դա-վիթը լազմթել չէր կարողանում, և որ իւր հօրը չէր ականջ անում, Զէ-նով Յովանը ծեծէր և ասէր. «Մհեր, կոնդ ես, խետ քեռ իսէր կռիւ արիր, իւի, զնա մեր քաղքէն, մը դաղրի մեր քաղաք», և իւր ուժից դուրս բան չը ճանաչող Մհերը լուէր Զէնով-Յովանին և Սասմաւ քաղաքից զուրս ել-նել ողէր, Ալս կտորն աղճատուած համարել (ինչպէս առհասարակ աղ-ճատուած է Մհերի վէսի վերջին մասը) չենք կարող, որավիստն հստը կից է սորա շարունակութիւնը, որ սասանաւորով է և որ մեծ վիստական հնո-

թէ Մհերը ճանաչում էր միանդաման և հօր հականան իշխանու-թիւնը, և հայրն էլ սիրում էր Մհերին և ալդ կռւի և անէծքի եղերերգը միան զայրութիւնից, և ոչ չար զիտաւորութեամբ,—ալդ ե-րեսում է ախ հոգեկան զրութիւնից, որի մէջ ընկնում է Մհերն անմիջա-պէս հօր մահից լետոյ: Շատ անքնական է թւում, որ Մհերին, որին Դա-վիթը լազմթել չէր կարողանում, և որ իւր հօրը չէր ականջ անում, Զէ-նով Յովանը ծեծէր և ասէր. «Մհեր, կոնդ ես, խետ քեռ իսէր կռիւ արիր, իւի, զնա մեր քաղքէն, մը դաղրի մեր քաղաք», և իւր ուժից դուրս բան չը ճանաչող Մհերը լուէր Զէնով-Յովանին և Սասմաւ քաղաքից զուրս ել-նել ողէր, Ալս կտորն աղճատուած համարել (ինչպէս առհասարակ աղ-ճատուած է Մհերի վէսի վերջին մասը) չենք կարող, որավիստն հստը կից է սորա շարունակութիւնը, որ սասանաւորով է և որ մեծ վիստական հնո-

թիւն ունի իւր մէջ։ Մհերը չէ հակառակում Ձէնով-Յովանին, որովհետեւ նա մի տեսակ խղճանար հոգեկան զրութեան մէջ է ընկած իւր հօր հետ կումելուց վետոյ բայց և աշնակէս նա չէ կատարում Ձէնով-Յովանի խօսքը։ մինչև որ չէ գնում ծնողների գերեզմանի վերայ, նա այնտեղ ներողութիւն չէ հայցում հօրից, որովհետեւ ներողութեան զաղափարը նորա համար անհասկանալի է, այլ նա ծնողների գերեզմանի վերակ լավիս է և խորհուրդ է հարցնում իւր աքսորի մասին։

«Խէրիկի, վիճնչիս անեմ,  
Ասօր ձի Սատմաէ քաղքէն  
Բեհբար ի խանած»։

«Ասծու հրամանքիւ ձէն ընկաւ խօր գերեզման, գերեզմընից ձէն է։ լաւ, ասաց։

«Որդի, վիճնչիս անեմ,  
Գացիր մէջալն ի ձեւնէս,  
Թափիր մազերն նրեսէս։  
Դնա Հալաբաչ քաղաք,  
Քեռ խաց թխուկ է,  
Քեռ կերակուր սփուկ է»։

Սովոր խմաստով և գրեթէ սոյն ձևերով պատասխանում է և մալրը, միան կանացի բնութեան լատուկ եղանակով։ Հայրը թողութիւն չէ տալիս որդուն, բայց այս խօսքերով թէ՝ որդի, հապա ես ինչ անեմ, կարողութիւնը ձեռքից գնացել է, ուղում է ասել որ՝ եթէ իշխանութիւնն իմ ձեռքիս լինէր, քեզ չէին կարող տարագրել Սատմաէ քաղաքից։—ազդ ցոյց է տալիս, որ հայրը դեռ սիրում էր իւր անիծեալ որդուն։ Իսկ՝ գնա Հալաբաչ քաղաք ասելը, որ և մալրն է կրկնում, դա մի ճակատագրւած իրողութիւն էր, որ ծնողներն, իբրև հանդերձեալ աշխարհի բնակիչ, լազոնում են իրանց որդուն, որ պիտի կատարէր։ Մհերը հնազանդում է իւր ճակատագրին, և, Աստուծուն ազօթելուց վետոյ, ճանապարհ է ընկնում դէպի Հալաբ, առանց ճանապարհը ճանաչելու։ Մհերը գնում է։ Նա իւր հետ տանում է միան իւր անչափ զօրութիւնը։ Նա զէնք չ'ունի, ձի չ'ունի, մենակ է։ Թէպէսն Մհերի վէպի մնացած մասը խառն և անորոշ է և թերատ, բայց դարձեալ պարզ կերպով երեռմ է Մհերն իւր ուժով և անիծեալ գրութեամբ ամբողջապէս ճանապարհին նա հանդիպում է Գոհար խաթունի մօրը, որ աշնակս է նկարագրւած, ինչպէս հերիաթներում նկարագրւում են զեպառաւները։ Մհերն ես նորա հետ աշնակս է վարւում, ինչպէս հեթանուների մէջ հերոսները վարւում են զեպառաւների հետ, և պառաւը խոստանում է Մհերին տալ իւր աղջիկը, որ նունպէս մի կաըր-ճուճի է։ Մհերն և Գոհարը կոտորում են Հալաբաչ թագաւորի բոլոր ժողովրդին և ամուսնանում են։

Քառասուն տարի Մհերն ապրում է Գոհար խաթունի հետ, և կատարում է հօր անէծքը. նրանք անսրդի են մնում, մնոնում է Գոհարը, և Մհերն ելնում է աշխարհիս վերաչ աստանդական շրջելու իւր հօր անէծքի բոլոր ծանրութեան տակ. Նա ոչ մի նալատակ չ'ունի, որին ձգտէր, նա թափառում է իւրեւ որսորդ: Բայց թնջ է ալժմ Մհերն իւր վասնամեաց հասսակում, այսինքն այն ժամանակ, երբ որ մարդու իւր հողեկան և մարմնական կատարեալ զարգացման մէջ է լինում.—ուրիշ ոչինչ, բայց եթէ ոչ, ամբողջապէս ոչ, այնպիսի ոչ, որ նոյն խոկ իւր առակին ձնշում է և իրան զիւցաղնին: Նա իւր այս ուժի ձեռքին ոչ թէ հսկաց է, այլ մի թու արած, որին ամեն հեշտ միջոցով կարելի է լաղջահարել.

«Մհեր ելաւ, կ'ուզէր որ գնաչ,  
Որ զոտքեր կը թլէր՝ կ'երթէր մընչ խողուն.  
Խող չուջն թուլացիր էր,  
Չէր զադրի չուջն Մհերին»:

Նա ձի է հստում և ձիով է ուզում իմահեանութիւն անել.

«Զին խեծաւ, քշեց մընչ դաշտին,  
Գետին չուջն թուլացիր էր,  
Զին կը խրուէր մընչ խողին,  
Խող չէր զադրի չուջն Մհերին»:

Ի՞նչ անէ Մհերը. Նա խաղալիք է իւր չափազանց ուժի ձեռքին. մայր հողը նորա ոտքերի տակ թուլացել է, աշխարհքը նրան չէ վերցնում, որովհեան ինքն այս աշխարհի դաւակ չէ այլ ես. բայց նրան մահ էլ չը կաչ. ուրեմն հսկան լաւիտեան պիտի տան ջւի և իւր ուժի համար հէնց ծաղը ու ծանակ պիտի լինի հասարակ որսորդների և փահեանների ձեռքին: Նա այժմ շատ լաւ հասկանում է թէ ինչ բան է հայրական անէծքը, որ նրան անմահացրեց իւր ուժի տանջանքով: Նա զերագոյն զօրութեան է դիմում, որ իրան մի ճար անէ, աշխարհքից վերցնի: «Ո՛վ Տէր Աստուած, իմ խօր անէծք ձի խասիր ի... զՔեղ եմ կանչեր, Տիւ ընցկուն էնես, ձի ձգես Վանաց քար...» Բայց այդ զերագոյն զօրութիւնը, որ Գաւթի ամեն մի խնդիրքն իսկոցն լսում և կատարում էր, խուլ էր Մհերի ձայնին, երբ որ նա զէպի Հալաբաց քաղաքը գնալիս դիմում էր նրան ճանապարհի համար, խուլ է և ալժմ, երբ որ նա դիմում է նրան, որ աշխարհքից վերցնի իրան: Նա քսան տարի Խլաթաց ալրի տակ աղօթք է անում այս մի բանի համար միան, և հաղիւ թէ «Աստուած հրամանք էրաւ, զէնիկ մարմնաւոր եթալ Վանաց քար», ուր պիտի լաւիտեան մնաց կենդանի:

Մհերի պէս ալսպիսի սարսափելի ուժի տէր դիւցազներ զուրս են գալիս և ուրիշ աղգերի վէպերի մէջ. պարսից Ռուստամը քսան փղի չափ ուժ ունէր, բայց և Ռուստամն իւր ուժով բաղդաւոր էր, այն ինչ Մհերն

անբաղդ է, որովհետև Ռուստամը զեկրի հետ լարաբերութիւն ունէր, և զեկրից մէկը, մի լեռան ողի, քաջք, նորա ուժի մի մասը վերցրել էր նրանից, որ չը վեասէր նրան։ «Ռուստամն աշնալիս անչափ ոչ ունէր, որ ոչ միայն թշնամիներին, ազ և իրան էր վեաս. նրան երկիրը չէր վերցնում իւր վերադ, երբ որ նա ման էր գալիս քարքարուտ առապարով, նորա ոտքերի խոր հետքերը մնում էին քարերի վերաէ, ինչպէս աւազի վերաց ամեն մի քալափոխի նորա ոտքերը թաղւում էին գետնի մէջ և ինչպէս երկաթի արօր վարում էին հողը»։ Ռուստամն ալսպէս դժւարութեամբ մի անդամ անցնում էր ձորի միջով, որ լեռան քաջքը խղճաց նորա վերաց և նորա ուժի աւելցուկն առաւ իւր մօտ պահեց, որ ծերութեան ժամանակ, երբ որ Ռուստամն ուժից պիտի ընկնէր, նրան վերադրացնէր։

Իսկ մեր Մհերին լեռան քաջքերը չեն օգնում, ուժի մի մասը վերցնելով նրանից, որովհետև նա հարական անէծքի տակ էր. բայց և անպէս նրան օգնում է զարձեալ լեռը, Վանաչ քարը, Տոսպան բլուրը, որ վերցնում է նրան, այն ինչ աշխարհը չէր կարողանում վերցնել նման ուռաց վէպի մէջ զուրս եկած մի միթխարի հսկալին (ՔՈՂԾԵՑ), որին երկիրը չէ վերցնում, և որ պառկած է սարի վերաց Ռուսաց վէպի մէջ Մվեատօդօր հսկան ևս ապրում է լեռներում. նրան նոյնպէս երկիրը դժւարութեամբ է կրում. Մվեատօդօրն ուղում է երկրի ծանրութիւնը բարձրացնել, բայց ինչքան բարձրացնում է, այնքան աւելի նորա ոտները խրւում են գետնի մէջ։

Մհերը ներկայանում է Ռուստամին և Մվեատօդօրին համապատասխան մի հսկաչ, որոնք սկզբնական ժամանակի, մանաւանդ Մվեատօդօրը, երկրիս տարերական ուժը պատկերացնող հսկաներ են, ժամանակով աւելի առաջ, քան թէ մարդանման հսկաները. Մհերի աւագ լինելը, մինչև անդամ Դաւթից, երևում է ոչ միայն նորա ուժից, ազ և հէնց նրանից, որ նա, ինչպէս լեռան գերը—քաջքերը, բնութեան տարերական ուժերը, ապրում է ալրերի մէջ, և ինչպէս բնութեան ուժերն անմահ են, անպէս և Մհերը չէ մեռել. Բայց որ զլիսաւոր նշանն է նորա աւագութեան, այն է, որ, նախնական բիրտ ժամանակիների արիւնածարաւ բնազդումներին հակառակ, մարդանման, ալտինքն ժամանակով կրտսեր զիւցազները սիրով չեն արիւն թափում թշնամիների հետ ունեցած կռւի մէջ, ցաւում են մարդկանց համար և մինչև անգամ կարեկցում են իրանց երդւեալ թշնամիներին, ինչպէս մեր վէպի մէջ Դաւթին է զուրս գալիս,— իսկ նախկին, աւելի հին շրջանի տիտանները, որ արդէն ապրել են իրանց զարը, ալդպէս չեն. նրանք հոգում են միայն իրանց համար և լավիս են իրանց կործանւած զօրութիւնը և ձեռքից եկած ամեն մի չարիք հասցնում են ամենքին, թէ թշնամիներին և թէ ոչ թշնամիներին. Ալդպէս են վարւում մեր վէպի՝ մէջ Մսրամելվան և Մհերը.

Մհերի վէպի վերաց խօսելով, չի կարելի չը վիշել Պոօշ թագաւորի

և Արտաւազդի ջալոնի վէպերը, որոնց հետ Մհերի վէպը նմանութիւն ունի: Առհասարակ մեր ժողովրդական վէպերի մէջ վիշտակւում է, որ մէկ զօրաւոր մարդ պէտք է դուրս գալ, կամ ծնւի մի օր: Պուօշի վէպի մէջ ասւած է—երբ որ Խաղլուաչ լճի ջուրը, որի մէջ ձգւած է Պուօշի Հաւլունի թուրը, յամաքի, ազդ թուրը բռնող մի զօրաւոր ձեռք պէտք է աշխարհ գալ, իսկ թէ ազդ մարդը Հաւլունի Թրով ինչ պիտի անէ,—այդ Աստուծու գիտնալիքն է (Համով. Հոսով, 76 եր.): Մհերի վէպն աւելի ևս նման է Արտաւազդի վէպին: Մհերն իւր անհանգիւտ և չար բնաւորութեամբ և անիծեալ դրութեամբ նման է հալրական անէծքի տակ ճնշւած Արտաւազդին, որ փակւած է Մասսաչ վհի մէջ, ինչպէս Մհերը Վանակ քարի մէջ: Երկուսի վէպի մէջ ևս դուրս է գալիս մեր հեթանոսական մի հաւատալիքը, որով մեռեների ուրականները հանդերձեալ աշխարհից խօսում են. Արտաւազդի հայր Արտաւաչէս արքան թաղման ժամանակ դերևագմանի միջից անիծում է իւր որդուն և նորա ապագան գուշակում, իսկ Մհերն իւր ծնողների գերեզմանի վերաէ լալիս է և խօսում ծնողների հետ, որոնք չայտնում են նրան իւր ապագան:

Արտաւազդը Մհերի պէս փակւած է ալրում մինչև աշխարհի վերջը, երբ որ պիտի դուրս գաէ և կատարած դնի աշխարհին. բայց աշխարհը վերջ չ'ունի, և Արտաւազդը չալիսեան փակւած է. իսկ Մհերը՝ «Մհեր, դու լեբ ա'ելնես ըդ տեղէն» նախրորդի հարցմունքին պատասխանում է.— «Յեր որ ցորեն եղաւ քընց ալում, ու գարին եղաւ քընց մասուր մի. հըպա՞մ» լէ հրամանք կա, որ էլնանք իդա տեղին, ի՞նչ է Մհերի աչս պատասխանը. ցորենը երբ կը լինի ալումի չափ, իսկ գարին մասուրի չափ, որ նա դուրս գաէ: Ուրեմն նա չաւխտեան պիտի փակւած մնաչ չ'ելնի աշխարհ, որ նորա աշխարհը չէ, որովհետև նորա առաջ չէ կարողանում դիմանալ, որովհետև չատ մանրացած է, իսկ ի՞նքը, Մհերը շատ խոշոր հսկաչ է, որի ժամանակն անցիլ է: Մհերի աչս խօսքը մի դառն ծիծաղ չէ արդոք երկրագործութեան վերալ, որով նա ուզում է ասել թէ որովհետև մարդիկ չնչին երկրագործութեամբ սկսեցին պարապել, իսկ ես, որ երկրագործութեան ժամանակի ծնունդ չեմ, քանի ազդ երկրագործութիւնը կաչ, աշխարհ չեմ ելնիլ: Եւ իրաւ, Մհերը գործ ունի միշտ պարզամիտ հովիւների և վարագ որսորդների հետ. նրան տեսել են միան նախրորդն ու հորթի ետեից գնացող հարսը. Մհերը բռնի ուժի տիրապետութեան դարում է ծնւած, նա աշխարհքը զօրով, ուժով ուանել գիտէ միան, և ոչ թէ խելքով, ինչպէս ուստում են երկրագործ մարդիկը, և խելքով աշխարհ ուտելը նորա համար անհասկանալի է, ինչպէս որ անհասկանելի էր խելքով իւր հսկաչական ձիու հսկաչական տոպրակը ձիու գլուխը տալը:—

ԺԲ.

Աղդամին վէպից մնաց մեղ վիշել վէպի վերջաբանը. «Ամեն խամբարձման զիշեր Մհերի քարի տիւռ. կը բացուի. մարդ չի տեսնե, հրամանք չը կաչ մարդ տեսնալ», — ի՞նչ է այդ համբարձման գիշերը, նոյնպէս և աչուր Քրիստոս գաւ դատաստան» խօսքերը, ևթէ ոչ հեթանոսական գաղափարներ, որոնք լալտնուում են քրիստոնէական անուան տակ և ամենին չեն լարմարուում Մհերի վէպին. Քրիստոսի դատաստան դալու լաւիտինականին մարմարուում հարմարուում Մհերի վէպին. Այդ տօնի հեթանոսական անունը լայտնի չէ, բայց մինչև աչմ կինդամի մնացած տանդութիւններից և ծէսկրից երեսում է, որ զա բաղդի, բաշխքի, ճակառագրի, վիճակի, հրամանքի աստուածութիւնների տօնը պիտի լինէր հեթանոսութեան ժամանակ, ինչպէս և բոլոր բնութեան՝ բոլորի և ջրերի տօնը, որ կոչուում է մինչև աչմ ծաղկ ամօր տօն, և ամենատարածւած ազգակին տօններից մէկը պիտի լինէր, որ մինչև աչմ տարածւած և սիրելի է. Համբարձման և վարդապառի տօնները կապւած են իրար հետ. վիճակը շատ տեղ վարդապառին են բայց անում, մանաւանդ լւսնալին տեղերում. Եթէ համբարձման տօնին չի լաջողում ազջիկներին վիճակ բանալ, նրանք բանում են վարդապառին, որ զարձեալ հեթանոսական տօն է. Այդ օրն աչմ ես ամեն մարդ իւր վիճակն է բանում մեծ հանդէսներով և մեծ երգերով, ամեն մարդ իւր բաղդի համբար մի բան է ձկում մի ամանի մէջ, որ կոչուում է «Հաւգիր», մի բառ, որ իւր կազմութեան մէջ ունի հաւահ մաշութեան արմատը. Հաւգիրը, որ զարդարած է լինում ծաղկիկներով, աւելի հօրոս ու մօրոս ծաղկիներով, և միջին ունինում է հօթն աղրիւրից վերցրած ջուր, գիշերը դնում են բացօղեալ տեղում, աստղերի ներգործութեան ներքոց, աստղերի, որոնք անքան մեծ զեր են խաղում մեր ժողովրդի հաւատալիքների մէջ, և որոնք նոյն իսկ մեր վէպի մէջ երեսում են՝ «Սասմայ և Մորակ աստղերը», որոնցով Զէնովի Գովանը գուշակում է Դաւթի վաս զրութիւնը. Համբարձման գիշերը մի որոշեալ ժամում ամբողջ բնութիւնը, և ջուր, և սառ, և ծառ, և երկինք զետինք սկսում են շարժել և իրար վերաց խոճարհելով, իրար ողջոն տալ, սարը՝ սարին, ծառը՝ ծառին, երկինքը՝ գետնքին. Ահա ացդ վայր կեանին է աստղերի ներգործութիւնն անցնում վիճակի Հաւգիրի վերաց ահա ացդ րոպէին բացըում է և Մհերի ացրի դուռը, բայց «հրամանք չը կաչ որ ելնալ» նա ալրից. նորա բաղդը, նորա ճակատագիրը մի անգամ արդէն որոշւած է, որ նա լաւիտեան փակւած պիտի մնաչ Տոսպան բլրի մէջ:

Ամփոփենք մեր գրութիւնը։ Աբամելիքի, Դաւթի և Մհերի «Աղդային վէպն» ներկայանում է իբրև կէտպատմական և կէսպիցաղնական հին վեպ, որի սկզբը նախապատմական ժամանակներում է, իսկ վերջը միջին դարերում։ Նոր գարերի պատմական կեանքը գրեթէ ամենեին չէ երևում։ Անաքրօնիգմները, հարկաւ, աճխուսափելի են։ Վէպի մէջ դուրս է գալիս հեթանոսական կրօնը, խառն քրիստոնէականի հմտ։ բաց եթէ լաւ ճաէնք, կը տեսնենք, որ ազդ քրիստոնէական տարրը շատ աճզամ անունով է միայն քրիստոնէական, և եթէ նոր վարիանտներ ձեռք բերւին, թերեւս շատ քրիստոնէական բան հեթանոսական ձեռով պատմւած լինին, քանի որ երկու վարիանտներն այդ կողմից մէկ մէկու լրացնում են։ Վէպը դիւցաղներգութիւն է, հին դիւցաղներգութիւն, որ, իւր խակատիպ առանձնութիւններով հանդերձ, հարկաւ, նմանութիւն ունի ուրիշ աղքերի դիւցաղներգութիւններին։

Ազդ վէպը ժողովրդի համար մի սամկ հեքիաթ չէ, որին ժողովուրդը չէ հաւատում թէ մի ժամանակ կատարւել է. դա ժողովրդի համար մի պատմութիւն է, որին, չը նայելով որ շատ տեսլի գերբնական հրաշալիքներով է լցւած քան թէ հեքիաթները, ժողովուրդը հաւատ է ընծանում թէ մի ժամանակ կատարւած է խակութեամբ։ Ժողովրդի հաւատքը շատ տեղ երևում է վէպի ընթացքից։ ամեն մի գերբնական դործ կատարւում է «Աստուծու հրամանքիւ», իսկ այդ աստուածը, որ հնումը հեթանոսական որ և է աստուած է եղել, ներկայամ քրիստոնէական ծշմարիտ Աստուածն է, ուրին կարող է և հրաշքներ գործել։ Դաւիթն ինչ որ ուզում է, Աստուած կատարում է, որովհետեւ, ժողովրդի բացարութեամբ հնից, «էն ժամանակ արդար մարդ ին, ինչ մրագ էնին» Աստուած կը կատարէրու։ Ժողովուրդը հաւատում է, որ մինչև աչժմ էլ Մհերը Վանաչ ալրում փակւած է, և թէ ամեն համբարձման գիշեր աւրի դուռը բացւում է. նա մինչև աչժմ էլ ցուց է տալիս Դաւթի ս. նշանը, «ու հմկայ լէ ըն սուբր նշան՝ հանդ է ի զաւառ՝ Զօրկա՛ տուն»։ մինչև աչժմ էլ ցուց են տալիս խանդութ տիկնոց գլխի տեղը, երբ որ նա իրան բերդի գլխից վար ձղեց։ «ուր դլուխ ծակեց զքար, ու գլխու տեղ՝ Սամու կէս չնիկ կորեկ կըլլին լինք ու ծեծեն, սանդի տեղ։ Ուր եօթ ճիւղ ծամի տեղ լէ՝ հմկաչ կ'երեւաչ ու մկաչ լէ ըդ սանդ լանդ է բերդի առէջու։ Ուրիշ ցուցմունքների վերաց, որ թողնում ենք, աւ էլ ասենք, որ պատմող մոկացի նահապեսոը (նորա հետ անշուշտ և իւր հալրենակիցները) կատարելապէս հաւատում էր իւր պատմած վէպին, իբրև ստուգապատում իրողութիւն, և աւելացնում էր, լուսոց հանելով։ «Աչժմ էլ Սամաչ քաղաք շատ կտրիճ փէնլուան կայ»—

# ԵՐԳԵՐ

(ՀԱՅՆԵՐԵՐ)

ԱՐՄԻՒԻՆԻ

## I

Գիշեր ցերեկ միայն դու ես  
Ուշք ու միտքս գըրաւած,  
Հեղ աչերով, մատաղ ժպտով  
Սիրտս ու հոգիս կոխարդած:

Ո՛խ, ինչպէս ես կը ցանկալի  
Ս'ենակ նստած քո կողքին՝  
Ողջ գիշերներ քեզ իմ երգով  
Պատմել սէրըս, իմ անգին:

Եւ կ'ուզէի քո քնքուշիկ  
Զեռքը սեղմել շըթունքիս,  
Եւ ջերմաջերմ իմ արցունքով  
Թըջել նրան, նազելիս:

Մասկուս. 1889 թ.

## II

Դու մանուկ չքնաղ, եդեմ ծաղկալից,  
Որքան քնքուշ ես, որքան սիրասուն,  
Նայում եմ վերագ—և հոգիս նորից  
Զգում է նոր կեանք, նոր երջանկութիւն:

Այս, ինչպէս սիրով այդ փոքրիկ գլխիդ  
Չեռքերո գարսած՝ ես ջերմ, սրտեռանդ  
Ազօթք կ'անէի, որ Տէրը քեզ միշտ  
Պահպանէր ալդպէս մաքուր, անարատ:

Մօսկով. 1889 թ.

## III

Որպէս երբեմն գիշերւայ ժամին  
Լուսնի ջինջ շողքը դողում է ջրում,  
Իսկ լուսինն ինքը երկրի երեսին  
Հանգիստ ու վսեմ յառաջ է սահում.

Այդպէս իմ առջև, և՛ դու նազելի,  
Հանգիստ, սիդամեմ քայլ էր փոխում,  
Եւ քո պատկերը չքնաղ, պաշտելի  
Անդրադանում էր սրտիս խորքերում...

Մօսկով. 1889 թ.

## IV

Մանուկ, մի լինիր ալդպէս անհամբեր,  
Եւ ներիք, որ դու իմ նոր երգերում  
Անվերջ լսում ես հին վշտի ձայներ  
Եւ միայն տնցեալ տանջանքս ես կարդում:

Սպասիր, հոգեակ. կը լուէ շռւտով  
Նախկին վշտերիս տիուր արձագանք,  
Եւ ոիրալս նորից քեզ ջերմ եռանդով  
Կ'երգէ նոր գարուն, նոր սէր ու նոր կեանք:

Մօսկով. 1889 թ.

## V

## L A Z A R U S

Թէ դու հարուստ ես—անբաւ գանձի տէր,  
Բաղդը քեզ դարձեալ կը տալ լիուլի.  
Իսկ թէ աղքատ ես—շատ քիչ փողի տէր,  
Ալդ քիչն էլ բաղդը քեզնից կը խլի:

Թէ մուրտցկան ես—ամեն բանից զուրկ,  
Աւելի լաւ չէ քընես յաւիտեան...  
Ալժմ նա միայն ունի իրաւունք  
Ազտտ ապրելու, ով ունէ մի բան:

1887 թ.

## ԱՅՅ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

(հայ տուրիստի յիշողութիւններից)

ԼԵԽՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ

IV.

ՎԵՐԱԴԱՐՁ

(Շարունակութիւն և վերջ<sup>1)</sup>)

Դեռ չէր լուսացել նոյեմբերի 28-ը, երբ մենք արդէն թողել էինք զիշերւայ մեր իջեանը և առաջ էինք գնում աստիճանաբար լայնացող ձորով։ Լուսանում էր խոնաւ մռայլ օրը։

Ճանապարհի երկու կողմից ծխախոտի ու եգիստացորենի քաղած գաշտեր էին ձգւած, որոնց մէջ աեղ աեղ երևում էին ծառեր, որոնք ճիւղերի և տերևների փոխարէն կրում էին իրանց վերայ դիզած եգիստացորենի չորացած ծղօտներից փափախներ։ Ճանապարհից դուրս հանդիպում էին՝ ճկուն ճիւղերը դէպ երկիր կռած լալական ուռենիները։ Անցնում էինք մահմեդականների մի գերեզմանատեղի մօտից։ ցցւած քարերի արանքներից ուղղահայեաց բարձրանում էին բարակ բրդաձեւ դլուխներով խորհրդաւոր նոճինները (սելի, էպարիս), որոնք կարծես վառւած հսկայ ճրագներ լինէին դէպ երկինք ուղղած աև բոցերով։

Երթեւեկների թիւը, քանի գնում, շատանում էր ցեխոտ ճանապարհին։ Յոյն գիւղացիք՝ բարձած էշերի վերայ ծխախոտի չորացած տերևների կապոցներ՝ քաղաքն էին զիմում, իսկ այնտեղից մեր հան-

1) Տե՛ս «Մուշք»-ի 1889 թ. № 4, 5, 7, 9, 11, 12 և 1890 թ. № 1:

գէպ զալիս էր եւրոպական ապրանքներով բեռնաւորւած ուղտերի ահազին քարւանը, որ հեռաւոր Պարսկաստանից բերած ասիական հում բերքերի փոխարէն այժմ ատնում էր եւրոպական արդինահանութեան արտադրութիւնները սկսելու թմրած Արևելքի խորքերում:

Մի ժամ ևս և մենք հասնելու էինք Տրապիզոն, ուր իմ ուղեկցից պիտի բաժանւէինք: Ճանապարհին շատ խնդիրների մասին էինք խօսել նորա հետ և այդ օր աշխատում էինք, այսպէս ասած, վերջացնել բոլոր նախկին հաշիւները: Մեր խօսակցութիւնների մեծ մասը տաճկահայերի և ոռւսահայերի դրութեան և փոխադարձ վերաբերութեան մասին էր: Թիւրքահայաստանցիք մեծ համարում և ցոյսեր ունին ոռւսահայերի նիւթական, մտաւոր և բարոյական ուժի վերայ: Պօլսեցիներին համարում են «պմբլիկ», թեթև, «աննիւթ», ինչպէս ասում էր ուղեկիցս:

Իբրև թիւրքահայաստանցի, այն էլ վանեցի, Մ. աղան մեծ ոգևորութեամբ էր խօսում, (Խորենացու ոճով ասենք) օբանիւք պայծառ, սիրով անկեղծաւոր, ուստուցնելով անձանձոցիթ Հայրիկի մասին, որի քարոզների ու աւտիների ամեն մի խօսքը անջնջելի տպաւորւել էին նորա սրտում: Այն դժբաղդ օրից, երբ ներսէսը պիոնիեցաւ աշխարհից, անկարելի եղաւ այնուհեաև նորա գաղափարակիցներին մնալ հայ ժողովրդի մէջ, Հայաստանում: «զի բարձաւ քահանայապետ, խորհրդական և ուսուցանող. վրդովեցաւ խաղաղութիւն, կայկայեցաւ տգիտութեամբ չարափառութիւն» և Յարութիւն ու Խորէն կալան գաթոռ պատրիարքութեան...

Այդ օր իմացայ Գիւմիւշհանէի մօտ պատահած զէպքի ժամանակ վանեցու երկիւղի պատճառը: Բանը այն է, որ վանեցիք քանիցս ուղարկել են Սուլթանի անունով աղերսագիրներ, որոնց մէջ պատմւում էին հայ ժողովրդի կրած անտանելի հարատահարութիւնները ու թշւառութիւնը տեղական վարչութիւնից: Սակայն այդ դրութիւնները երբէք ուր հարկն է չէին հասնում. գոնէ հետեանքները ցոյց չէին տալիս հակառակը: Այդ տեսնելով վանեցիք ցուսահատւած մտածում են ուղարկել մի աղերսագիր ևս իրանց մարդու ձեռքով, որը մի և նոյնն է Պօլիս էր գնում: Գրութիւնը ներկայացնելով ժողովրդի անտանելի վիճակը, աղերսում էր մի ելք այդ՝ ապրելու համար այլ ևս անկարելի դրութիւնից: Աւղեկիցս գիտէր, որ եթէ այդ դրութիւնը, չը

Նայած նորա վերին աստիճանի խռնարհ և հպատակասէր բնաւորութեան, ընկնի տեղական պաշտօնեաների ձեռքը՝ բանու ու յաւիտենական աքսորը կը լինին իրան սպառնող ամենաժեթե պատիժները։ Դեռ դրանով չեր բաւականանալ տեղական տաճիկ պաշտօնեաների վրէժինդրութիւնը. անթիւ ձերբակալութիւններ տեղի կ'ունենացին և կը ստիպէին քաղաքի երեւելիներին ուղարկել Պօլիս մեծ գոհունակութեան, բարեմաղթութիւնների և դրւատների մեծաբարբառ հաւաստիքներ։

— Կը վախնացի սաստիկ, որ զիս պիտ քննեն ու թուղթը գտնեն։ Աղէկ եղաւ, որ թոյլ չը տւիք խուզարկել ձեզի. անոնք զբաղւեցան ձեզմով զիս ալ մոռցան։ Սէմարի (Փալան) մէջ պահելու էր թուղթն։ Սակայն զիտցած եղէք, էֆէնդի՛, որ մեր գրածը բացի աղաշանք պաղառանքէ, լաց ու գանգատսէ, բան մը չեր պարունակիլ իւր մէջ։ Ե՛հ, էլ ի՞նչ մեղագրեմ այլազգը, քանի որ մեր մեծաշուք էֆէնդիներ ու աղաներն ալ, արժանապատիւ եկեղեցականներու մեծամասնութեան հետ միասին, հեռու հայրենիքն փափուկ ու կուշտ ապրելով՝ չեն ուզեր հասկնալ և թեթևցնել մեր վիճակ, այլ լոկ կըսեն՝ աղէկ է ձեր դրութիւն, համբերէք։

Այդ տեսակ պատգամախօսները պատրաստ կը լինէին մի մարդու, որ դիմէր նոցա՝ «եղբացրս մնրձ ի մահ հիւանդ է, օգնեցէք» խօսքերով, պատասխանել. «Ծնաս չ'ունի, որ մերձ ի մահ հիւանդ է. այդ լաւ է, թող համբէրի. ի՞նչ է, լա՞ւ կը լինի, եթէ մի քանի տարիներից յետով ցանկարծ սաստիկ ձմեռ վրայ հասնի...»։ Հրաշալի՝ տրամաբանութիւն։ Կարծես, հիւանդի համար աւելի լաւ է հիւանդութիւնից մեռնել քան ենթագրական սառնամանիքի հանդիպել. կարծես, հիւանդը եթէ տանջւի հիւանդութիւնից՝ գալիք սառնամանիքը վրայ չի հասնիլ. կարծես, մտածելով հիւանդին օդնել, ազատել մահից, դրանով հրաւիրում լինին սառնամանիքը բարեհամել իրանց մօտ ալցելելու. կարծես... բայց մի՞թէ հարկաւոր է շարունակել...

— Թող ձեր ռուսահայերը տեսնին իրենց աշքերով զմեր երկիր և ապա դատեն։ Ահա, ինչ որ դուք տեսաք, դա Տաճկա-Հայաստանի ամենաբարեկարգ մասն է, զի մօտ է Կարբինին, լուսաւոր երկիրներ տանող մեծ ճանապարհին. ազատ է քրդերից ու չերքէվներից և որքան և է վերահսկողութիւն կայ. բայց Հայաստանի խորքերում՝ Երգնկա,

Դերսիմ, Զմշկածաղ, Խարբերդ, Բալու, Մուշ, Բուլանըզ, և այլն, ի՞նչ թշւառութիւն կը տիրէ, հարստահարութիւններ և ոճիրներ կը կատարեն—չէք այլ կարող երեակացել ձեզ Հողերը, գիւղերը՝ քիւրդ և տաճիկ բէզերի կալւածներն են. Հայ գիւղացիները իրանց մալով, տնով-տեղով այդ բէզերի և աղաների մարիբաներն են, ճորտերն են: Կառավարութեան տուրքը, ըստ կարգին, գիւղացին կը տայ, բէզին և աղացին հարկ էլի նոյն գիւղացին, զափիթիին, միւլթէզիմի և միւղիրի հաճոյքներին գոհացում տւողը՝ կրկի՞ն նոյնը: Քիւրդը սպանի հային՝ մեղաւորը հայն է. հայը զի՞նքը պաշտպանելով զարնէ քիւրդին՝ մեղը իրանն է: Այդ խուլ անկիւններում ո՛վ ի՞նչ կարող է, անում է, օրէնք ասածը է՝ «ահմանք քաջաց զի՞նք իւրեանց՝ որքան հատանի այնքան ունի...»

Լայնացած ձորի երկու կողմից ընթացող սարերը իջել խոնարհել էին իրանց բարձրութիւնից՝ ահեղ ծովին մօտենալով: Մի բլրակ էր ինձ բաժանում ծովից. քշելով ձիս վեր բարձրացայ և անպատմելի ուրախութեամբ տեսաց ճգլւած իմ առջեւ ազատ ծփող լայնածաւալ ջրացին տարածութիւն: Հասկանալի էր այժմ ինձ այն ցընծութիւնը, որ տիրեց Քսենօֆօնի զի՞նորներին, երբ, աւելի քան երկու հազար տարի մեզնից առաջ, ձմեռը Պարսկաստանից հայրենիք վերադառնալիս, Հայաստանի բարձրաւանդակներում կրած սարսափելի նեղութիւններից յետոյ՝ տեսան նոքա, վերջապէս, իրանց առաջ Սև ծովը:

Նոյնանման ուրախութիւն զգում էի և ես: Խնձ թւում էր թէ ես կրկին լոյս աշխարհ զուրս եկայ մի մութ, սարսափելի բանտից, ուր ցնցոտիներ, թշւառութիւն, տանջանք և բռնութիւններ էի տեսնում: Բարձր անմատչելի սարերը, ապառաժները և խոր ձորերը այդ բանոփի պատերն էին:

Ծփում՝ էր իմ առաջ Սև ծովը. ուռած ալիքները խաղում էին իրանց մօր լայն գրկում: Ափերին մօտենալով նոքա շարւում էին կարդ կարգ և վաղում յարձակւում ծովը կաշկանդող մուայլ անշարժ ափերի վերայ, բայց չը կարողանալով խորտակել այդ զօրեղ կապանքը, զուռում զոչում էին, փրփրում կատաղութիւնից և շիթեր երկինք բարձրացնում ու յետ նահանջում շառաչելով, որպէս զի նորից միանալով յետելից եկող ալիքների հետ՝ կրկին յարձակւեն ան-

մուռնջ երկրի վերայց Եւ այսպէս աննկուն մաքառում են անվհատ խիզախ ալիքները անսիրտ ցամաքի դէմ և կամաց-կամաց գարերի ընթացքում մաշում, քերում նորա կուրծքը, յուսալով մի օր ազառել նբանից...

Զախ, ծովի ափին, երկայն բլուրի վերայց և ստորոտում նոճիների, նարնջի ծառերի և ձիթենիների խմբերի միջից երևում էին Տրավիզօնի անշուք տները: Նաւահանգիստում կանդնած էին մի քանի նաւեր:

Սի շարք կրակներ և ծովի վերայց շինած գարշահոս «տեղեր» իմաց էին տալիս, թէ քաղաքն ենք մտել: Յածրիկ մաքսատան մօս դուրս եկաւ մեր առաջ մի տաճիկ պաշտօնեաց, որ պահանջեց մեզանից մեր անցաթղթերը և հրամայեց իջնել ձիերից, որսիս զի խուզարկի բեռները: Վանեցին կոխեց ձեռը ջիբը մի քանի սև փող հանելու, իսկ ես մինչեւ մտածէի ինչ անել, ձիապանները խորհրդաւոր կերպով փախացին տաճկի ականջին.

— Ճանապարհին ոչ միւղերին, ոչ էլ միւթեսարիվ փաշացին թողլ տւեց էֆէնդին խուզարկել իրան, երեխ...

Տղէտ պաշտօնեան յետ քաշւեց պատկառանքով և մենք շարունակեցինք մեր ճանապարհը նոյն ծովեղբեաց փողոցով:

Համնելով մի հրապարակ՝ բաժանւեցինք վանեցուց: Զիապանս տարաւ ինձ քաղաքի կենդրուում գտնուող մի հիւրանոց, որի ներքեւի յարկում թէյարան-դայվիարանն էր, իսկ վերևէ՝ համարներ: Փայտեայ սանդուղքներով փողոցից բարձրացանք վերևի յարկը: Պարշահոս նրբանցքի երկու կողմից դռներ էին, որոնցից մեկը բացեց իմ առաջ հայ հիւրանոցատիրոջ որդին: Չոր յեխից անիմանալի տախտակամածը, աղքատիկ կահ կարասիքը, դէպի փողը նայող ճեղքւած աղակիներով երկու պատուհանները և սպիտակած բարակ տախտակիներից պատերը՝ որոնց մէջ եղած լայն ճեղքերը, կարծես, հարեւան ւենեակների մէջ օդափոխութիւնը դիւրացնելու նպատակով թողած լինեին՝ ցոց էին տալիս, որ եւրոպականութիւնը դեռ քիչ է, մտել ացդ կեանքի մէջ:

Ժամի 4 էր, երբ ես հիւրանոցի հայ ծառայի ուղեկցութեամբ գնացի ռուսաց հիւպատոսարանը, որ գտնւում էր քաղաքիս ամենալաւ փողոցներից մինում նա այնքան նեղ էր, որ եթէ մի

բեռնած էշ (կառք սովորութիւն չը կայ բանացնել) անցնելիս լինէր, պէտք է անցորդը տների պատերին կպչէր, որուէս զի ակամաց պատկառանքով ճանապարհ տար բեռնաբարձ երկացնականջին։ Ինչ ասել կ'ուզի, որ մայթեր (տրօսուար) չը կան քաղաքում։

Հիւպատոսարանը քաղաքիս ամենալաւ տներից մի, կումն էր զետեղւած։

Ֆանտաստիկական գեղեցիկ հազուսով, արծաթապատ ատրճանակները ու խէնջարը լայն գոտիում խրած օկաւասը մի ենիչերին էր նմանում։ Նա յայտնեց իմ մասին հիւպատոսին, որ հրաւիրեց ինձ վերև իւր մօտ։ Այդ շինութեան երկրորդ յարկի եւրոպական ճաշակով շքեղ կահաւորւած սենեակներում ապրում էր հիւպատոսը իւր ընտանիքով։

Կարճ խօսակցութեան մէջ, ի միջի այլոց, ես պատմեցի հիւպատոսին Գիւմիւշհանէի մօտ ինձ հետ պատահած գէպքը։ Նա ասաց, որ երբէք միւթեարիվին «վէքիւ» չի արել, և որ տաճիկ վարչութեան վարմունքը ինձ հետ բոլորովին ապօրէն էր և ես կարող էի ոչինչ զիջումներ նրանց չ'անել։ Նա հրաւիրեց ինձ երեկոյեան իւր մօտ։

Հիւպատոսարանին կից էր Տրապիզոնի աղդային տղայոց վարժարանը։ Որովհետև մինչև երեկոյ տեղ չ'ունէի գնալու, ես լաւ համարեցի գնալ ուսումնարանը և ծանօթանալ ուսուցչական խմբի հետ։

Դասերը աւարտած էին։ Աշակերսները ցոյց տեխն ո՛ր սենեակում էր գտնուում տեղիս աղդային ուսումնարանների տեսուչը՝ կովկասեցի պ. Դ. Քալանթարեանը։ Անկեղծ ուրախութեամբ ընդունեց նա ինձ, ծանօթացը ուսուցիչների հետ, ցոյց տւեց մի քանի դասարաններ, պատրաստականութեամբ հաղորդելով բոլոր հարկաւոր տեղեկութիւնները։

Տրապիզոնի աղդային տղայոց վարժարանը ունէր երկու բաժանմունք։ Տաղկոց և ուսումնարան։ Առաջինը բաղկացած էր 3 դասարաններից, իսկ երկրորդը՝ 4։ Աշակերանների թիւը 400 էր, ուսուցիչներինը՝ 11։ «Ծաղկոցում աւանդուում էին՝ հայոց լեզու, թւարանութիւն, տեղական աշխարհագրութիւն, բարոյադիտութիւն, իրադիտութիւն, գեղագրութիւն, գծադրութիւն և տարրական մարմնամարզ։ Իսկ ուսումնարանում՝ հայերէն, ֆրանսերէն, թուր-

քերէն, ազգային և լնդհանուր պատմութիւն և աշխարհագրութիւն, թւաբանութիւն, բնական պատմութիւն, Փիզիկա, կրօն, գեղագրութիւն, գծագրութիւն և ձայնական երաժշտութիւն։ Նորլնատիր տեսուչը մտադրութիւն ունէր նոյնպէս մտցնել ցանկացողների համար արհեստներ։

Տրապիզոնի վարժարանը տաճկա-հայերի ամենալաւ ուսումնարաններից մինն է և կարող էր հեշտութեամբ ունենալ մի երկու բարձր բաժանմունք ևս վարժապետներ պատրաստելու համար և այդպիսով յացնի չափով կը լրացնէր այն պակասը, որ ամբողջ Թիւրքիայում հայերը ոչ մի վարժապետանոց չ'ունին։ Նամանաւանդ կարեոր կը լինէր նա այսուղ այն պատճառով, որ Տրապիզոնը և՛ մօտ է Հայաստանին և՝ ազատ է այն պայմաններից, որոնք արգելք են դնում բուն Հայաստանում՝ մի այդպիսի հիմնարկութիւն ներկայում։ Եւ զորա համար շատ քիչ զոհաբերութիւն է հարկաւոր, տարեկան մի 1500 րուբլի, որ կարող էին տալ կովկասեցիք։

Իմ նոր ծանօթներս առաջարկեցին ինձ միասին գնալ տեղիս պարուրը, որը ուսումնարանից հեռու չէր։

Անցնելով եւրոպական ձեռով մաքուր կահաւորած դահլիճով, որի մէջ տեղում բիլիարդի մի մեծ սեղան էր զբած, և աչքի անցկացնելով կովկասից ստացած թերթերը, որ երկու ամիս ձեռս չեն ընկել (այդ տեղ առաջին անգամ իմացայ «Մուրճ»-ի հրատարակութեան մասին), մենք ոլատւիրեցինք թէյ և առանձնացանք մի սենեակում։ Այսուեղ արձակ համարձակ կարող էի խօսել՝ Կարինի բոլիսներից չը վախենալով։ Ինձ պաշարում էին հարցումներով Հայաստանից։ Տրապիզոնցիներին համարեա նոյնքան է ծանօթ Թիւրքաց-Հայաստանի վիճակը, որքան, որինակի համար, Բաթումի հայերին։ Տրապիզոնը՝ ինչպէս և Պոլիսը, Զմիւռնիան ու Տաճկաստանի ծովեզրեաց քաղաքները, շիւելով եւրոպացիների հետ և մշտական հաղորդակցութիւն ունենալով լուսաւոր երկիրների հետ՝ ունի կեանքի բոլորովին այլ պայմաններ, քան Պոքր-Ասիացի կամ Հայաստանի կենդրուները, որոնք համարեա բոլորովին կարւած են լոյս աշխարհից և մատնաւծ միանդամայն խաւարի, կամայականութեան ու թշւառութեան։

Երեկոյեան նշանակած ժամանակին գնացի հիւպատոսի մօտ, ուր

կային և մի քանի հիւրեր, որոնց մէջ և ֆրանսիական ու պարսից հիւպատոսները։ Հիւպատոսը ինձ ծանօթացրեց իւր ամուսնու և հիւրերի հետ և մի քանի ժամանակից յետոց բոլորս հրաւիրւեցանք սեղանատունը։

Եւրոպական զանազան պետութիւնների ներկայացուցիչները աշխատում են տարածել իրանց կառավարութիւնների ազգեցութիւնը Տաճկաստանում և մանաւանդ նորա ամենալնդունակ տարրերի վերայ—հայերի և յոյների... Որտեղ գէշ կայ՝ այնուեղ անգներն են ժողովում... Բանը այնուեղ է հասնում, որ հանրապետական ազատամիտ Ֆրանսիան պաշտպանում է Տաճկաստանում իւր երկրից աքսորւած եզուիտներին և օդնում ամեն կերպ կաթօլիկ պրօպագանդային։ Ֆրապիզօնում, բացի հայկաթօլիկների ուսումնարաններից, որոնց թէ ֆրանսիական և թէ իտալական հիւպատոսները հովանաւորում են, կան նոյնպէս «կապուցին Փրերների» տղայոց ուսումնարան և զուտ ֆրանսիական ու իտալական երկսեռ վարժարաններ 4 տարւայ դասընթացով։ Այդ երեք ուսումնարանում սովորում էին 210 տղայ և 110 աղջիկ, որոնցից հայերը՝ 100 տղայ և 45 աղջիկ, մնացածը յոյների և եւրոպացիների զաւակներ էին։ Իսկ հայկաթօլիկների դպրոցները, որոնցից տղայոցը Վենետիկի Սիփթարեաններն են պահում, իսկ աղջկանցը՝ Անարատ ցուոթիւնն քոյրերը, ունէին 100 աշակերտուհիներ և 75 աշակերտուհիներ։

Անդիմական հիւպատոսարանը հովանաւորում է հայ բողոքականների դպրոցներին, ուր անդիմական լեզուն ու ազգեցութիւնն են տիրապետում։ Նիւթական նպաստ ստացւում է Ամերիկայի «Պօրտը ընկերութիւնից։ սովորողների թիւը՝ 20 տղայ և 12 աղջիկ, 2 ուսուցիչներով։

Ի գէսս է այսուեղ ասել և մի քանի խօսք թուրքերի ուսումնարանների մասին։ Տեղեկութիւնները հաղորդեց ինձ մի վստահելի և տեղեակ անձնաւորութիւն՝ պ. Պ. Մ.։

Տրապիզօնում կայ կառավարութեան կողմից 1886-ին բացած մի տղայոց «միջազգային դպրոց», որ մինչև այժմ ոչ մէկ արդիւնք չի տւած։ Թէպէտ «միջազգային» է, սակայն ոչ մի քրիստոնեայ չը մտաւ այդ տեղ։ Ծախքը ծածկելու համար մի սարգ միջոց ընթրեցին, — ուստանորդի տուրքի վերայ ցաւելուած մը ըներ, պօլսե-

ցիների ոճով ասենք: Աշակերտների թիւը, իմ ժամանակ, 80 էր, դասարաններինը՝ 5, ուսուցիչներինը՝ 6: Աւանդելի առարկաններն, գոռնեա թղթի վերաց, էին՝ թուրքերէն, արաբերէն, Փարսերէն, ֆրանսերէն, թւարանութիւն, ալգերրա, երկրաչափութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն, բնական պատմութիւն, երկրագործութիւն, գեղագրութիւն, գծագրութիւն:

Բացի այդ կայ կառավարական թուրք տղայոց ուսումնարան, որի ծախքը, տարեկան մօտ 2.700 րուբլի, նոյն ազբիւրից է, 360 աշակերտներով և 6 ուսուցիչներով: Յայտնի անքնական մոլութիւնը, թէև սարսափելի տարածւած է բոլոր թրքական ուսումնարաններում, սակայն բոլորից գերազանցում է սորանում:

Քաղաքին թիւրքաց լաւագոյն գպրոցը համարւումէ նրանց զինւորական վարժարանը, որի ծախքը նոյն ազբիւրից է: Դասարանների թիւը 4 է, ուսուցիչներինը՝ 11, աշակերտներինը՝ 400: Աւանդում են թուրքերէն, արաբերէն, Փարսերէն, ֆրանսերէն լեզուներ, թւարանութիւն, տարրական ալղերրա և երկրաչափութիւն, կրօնք, գեղագրութիւն, աշխարհագրութիւն և Սոմանեան պատմութիւն:

Բացի այդ կան թաղերում՝ այսպէս մնուանած՝ տարրական ուսումնարաններ (սիբեան) մի մի ուսուցիչով իւրաքանչիւրում: Այդ ուսումնարաններում ուսումը տևում է մի տարի: Նոցա թիւը 15 էր, տղաների թիւը բոլորում ի միասին առած՝ 490: Սովորեցնում են թուրքերէն, Ղուրան և ամենատարրական թւարանութիւն: Թուրքաց աղջկանց համար ուսումնարանները միմիայն այդ տիպին են պատկանում: Ամբողջ Տրապիզոնում 3 այդ տեսակ ուսումնարան կային, ընդամենը 25 աշակերտուհիներով: Ուրեմն 21 հազար տաճիկ քնակիներ ունեցող Տրապիզոնում միմիայն 25 թիւրք աղջիկ էր սովորում կարդալ և գրել:

Վերջապէս մէկդների մօտ էլ կան (մէլլեւսէներ), որոնց մէջ սովորողների թիւը ընդամենը 100 էր: Ղուրան, ծէսեր, արաբերէն, թուրքերէն և գեղագրութիւն, —ահա՛ մատակարարւող գիտութիւնը այդ կրօնական ուսումնարաններում:

Այս բոլորից յետոյ մարդ ակամայ ցիշումը է ընանի «Գիտութիւն և Խոլամ» ճառից հետևեալ խօսքերը. «Մուսուլմանական երկիրների ժամանակակից թուրութիւնը ակնյացնի է իւրաքանչիւրին՝ ով որ-

քան և է ծանօթ է գործերի զրութեան, կատարելապէս ակնյայտ-նի ընկածութիւնը այն տէրութիւնների, ուր տիրում է իսլամը, մոտաւոր ոչնչութիւնը այն ցեղերի, որոնք պարտական են իրանց կուլտուրայով և կրթութեամբ բացառապէս այդ կրօնքին... Կարծես, մի երկաթեայ մամուլ ճնշում է իւրաքանչիւր ուղղահաւատի գլուխը և դարձնում նրան բոլորովին անլրնդունակ գիտութեան համար, անընդունակ մի որ և է բան ուսանելու, ըմբռնելու որ և է նոր գաղափար... Անմիտ հպարտութիւնը—իւրաքանչիւր մուսուլմանի արմատական պակասութիւնն է»:

\* \* \*

Երեկոյեան ժամի 8-ից անց էր, երբ ես կաւասի ուղեկցութեամբ, որ լավտերը լուսաւորում էր ծանապարհը, որով հետեւ ծրապիզօնում փողոցներ լուսաւորելը դեռ անհրաժեշտ չի համարում, վերադարձայ սենեակս:

Վառելով ճրագը՝ ուղում էի պատուհանների շիլա վարագոյր-ները իջեցնել և հէնց ձեռս տարել էի կապերը արձակելու, որ սար-սափած յանկարծ տեսայ մատներիս տակ մի սե կարիճ, որ պոչը բարձրացած իւր թունաոր խայթոցով պատրաստում էր ինձ խայթել: Կանչեցի ծառալին, որ սպանի նրան և տեսնի արդե՞օք անկողնի մէջ էլ չը կան:

Մինչ ես նստած աթոռի վերայ խօսում էի այդ հայ ծառայի հետ, աննկատելի կերպով մօտեցել էր սենեակիս կիսաբաց դռան մի յաղթանդամ տաճիկ սպայ՝ կարմիր ֆէսը ծուռ դրած գլխին և ձեռ-ները կրխած վարտիկի ջիբերը. նա կանգնած նայեց մի քանի րոպէ և յետոյ առանց թոյլուութիւն խնդրելու յանդգնութեամբ մտաւ սենեակս և չը թողնելով իւր երեսի արհամարհական հեգնական ժպիտը՝ սկսեց ոտքից ցգլուխ ինձ չափել իւր լիրը հայեացքներով ու հարցնել թէ ո՛րտեղացի եմ, ո՛վ եմ և ո՛ւր եմ զնալու: Ես չը պատասխանեցի և չը շարժւելով տեղիցս, զարմացած նայում էի այդ անկոչ հիւրի ձևերի վերայ: Ստրկահոգի ծառան շողոքորթութեամբ պատասխանում էր էֆէնդիի հարցերին:

Սպան տեսնելով որ ես ոչինչ ընդդիմադրութիւն չեմ ցոյց տա-

լիս՝ կրեշչենդո բարձրացնում էր թէ իւր ձայնը և թէ լրբութիւնը։ Նա նստեց իմ հանդէպ՝ մահճակալիս վերայ և ասաց. «Հա՛, ուրեմն դու ռուսաստանցի ես, բայց չը գիտե՞ս, որ քո առաջ սպազ է նըստած. մեզանում երբ զինւորական է մանում՝ պէտք է վեր կենալ և ոչ թէ դեռ ոտներն էլ առջելը մեկնել. քաշի՛ր ոտներդ», բդաւեց նա խփելով իւր ոտներով իմ ոտներիս հնչպէս երևում է, իմ ոտներս ծակում էին տաճիկ զինւորականների աչքերը։ Ես աշխատեցի զըսպել բարկութիւնս և ասացի ծառային. զաշանի՛ր այդ մարդուն թէ՝ ես պահանջում եմ, որ նա այս բոպէիս թողնի սենեակս»։

Տառան յայտնեց նրան նոցնը աւելի մեզմացրած ձևով։

—Զայնդ կորի՛ր, քեափի՛ր, ես հրամացում եմ, անհաւա՛տ հայ, որ քաշես ոտներդ և կանգնես իմ առջես, թէ ոչ ես քեզ ցոյց կը տամ. . . գորգոռում էր անզուսպ տաճիկը։

Ես ցոյց տալով դէպի դուռը և կատաղութիւնից դողդողալով ասացի։

—Դո՛ւրս. այս բոպէիս դո՛ւրս։

—Ա՛յս զու անհաւատ. է՛ց, դիմեց նա ծառային. կանչի՛ր այս տեղ Օսման էֆէնդուն. ես այս անպիտան հային պիտի ծեծեմ։

Ահից սարսափած ծառան վազեց կանչելու սպազ Օսմանին. իսկ ես վեր կացայ տեղիցս, վերցրի թախտի վերայ գցած րեվօլվերս և ուղղելով լրբի կուրծքին՝ գոռացի։

—Դո՛ւրս. . .

Նա չէր սպասում հայից մի այդպիսի վարմունք, ապշած յետյետ քաշւեց. բայց տեսնելով զրան մօտ Օսմանին, կրկին սկսեց գորգոռալ. . . Սակայն ես արդէն զինքս կորցրել էի. կատաղի հրում էի իմ առջեւ խոնւած մարդկանց, որպէս զի խփեմ սպալին, որի ընկերը պահում էր րեվօլվեր բռնած ձեռս, իսկ ծառան միւս ձեռիցս էր քաշում։ Իմ հակառակորդին փախցրին իւր համարը։

Բոլորը թափւել էին սպազի սենեակը, որ դեռ շարունակում էր գորգուալ, բայց հիմա դանդատաւորի ձայնով. ինձ մօտ մնացել էին մի քանի հայ վաճառականներ, որոնք բնական էին գտնում տաճիկի պահանջը և անխոհեմութիւն իմ կողմից ընդդիմանալը։ Երբ ես նրանց ասում էի թէ հէնց իրանց այդ վախկոտ զիջողութեան հետևանքն է այդ տեսակ տաճիկների լրբութիւնը, կրկնում էին թէ՝ ի՞նչ կարող են

իրանք անել, ոչ դատաստանն է իրանց կողմը և ոչ ոյժը: Եթէ իրանց մշտական զիջողութիւնները և ակամայ քաղցր վարւողութիւնը չը լինէր՝ անկարելի էր ապրել այդ երկրում:

Ծառան արգէն անհետացել էր. ես կանչում էի նրան որպէս զի ուղարկեմ հիւպատոսարանը կաւասին բերելու: Վերջապէս նա երևաց նրբանցքի մի անկիւնից սարսափած, սպրանսած, բերանը չորացած, աչքերը չուած: Նա ոտների մատերի վերայ էր մանգալիս և փափսալով խօսում, որպէս զի սպան չիմանայ թէ առ ինձ օգնում է. վախենում էր վրէժիննդրութիւնից: Այդ բոպէին կանչեց նրան իւր սենեակից սպան և նա իսկոյն թողեց ինձ և վազեց նորա մօտ և վերադառնալով ուզում էր տեղեկանալ՝ արգեօք լի՞քն էր բեզօլվերս թէ զատարկ:

—Կարող ես յայտնել պարոնիդ թէ այո՛, լի է ն գնդակով և մօտս կայ մի այլ բեզօլվեր ևս ու 200 փամիսւշ: Այդ յայտնելուց յետոյ՝ կատարի՛ր իմ հրամանս և կանչի՛ր այստեղ կաւասին: —Նա դեռ չէր ուզում գնալ, բայց ես սպառնալով ստիպեցի: Աննկատելի կերպով նա զուրս եկաւ հիւրանոցից:

Եկաւ կաւասը: Պատճեցի եղելութիւնը, որպէս զի իմաց տայ հիւպատոսին, խոստանալով առաւտօտեան ինքս աւելի մանրամասն սպատմելու: Բայց այդ, ինդրեցի կաւասին բերել այժմ և տաճիկ բօլիսներից մէկին:

Մի քանի բոպէից յետոյ վերադարձաւ կաւասը բօլիսների մէկի հետ և յայտնեց թէ հիւպատոսը ինդրում է, որ գնամ իւր մօտ զիշերը անցկացնելու, որովհետեւ բան կարող է սպատահել: Ես շնորհակալութիւնս ինդրեցի յայտնել, ասելով որ զիշերը այստեղ կը մնամ:

Բօլիսին պատմելու համար հարկաւոր էր որ և ծառան ներկայ լինէր, որովհետեւ նորա աչքի առջև սկսեց այս անախորժ գէսլքը, բայց նա՝ վախենալով տաճկի առջև տաճկի դէմ աննպաստ ցուցմունք անել՝ չէր գալիս: Որպէս զի աւելի ազատ կարողանամ պատմել տաճկերէն իրողութիւնը՝ ես ստիպւած էի հարեւան հայերից մէկին կանչել իբրև թարգման: Բօլիսը աշխատում էր մեղմացնել գործը և մինչեւ անգամ արդարացնելով սպազին, մեղադրել ինձ, առելով թէ, ծառալի խօսքերին նայած, ես առաջինը սկսեցի կոիւը:

Ես պահանջեցի, որ ծառան դայ և նոյնը ասի իմ ներկայութեամբ, բայց նա թագ էր կացել:

— Լա՛ւ, այդ վաղը կը տեսնենք, ո՞վ է մեղաւորը. իսկ հիմա նախազգուշացնում եմ ձեզ, որ եթէ այն լիրը համարձակւեց մօտենալ աննեակիս դռան, ես առանց այլ և այլութեան արձակելու եմ րեվոլվերս նորա վերայ, պատասխանեցի ես:

Բոլորը հեռացան աննեակիցս. ես պնդացրի թոյլ կողբող բարակ դուռը և երկար վրդովմունքից չէի կարողանում հանգստանալ:

\* \* \*

Միւս առաւօտ, նոյնմբերի 29-ին, լւացւում էի. իսկ երեկւայ հայ ծառան պատմում էր, որ տաճիկ սպան շատ շուտ վեր էր կացել և առանց թէյ խմելու գնացել իւր ծառայութեան և որ արդէն քաղաքում բոլորը խօսում են գիշերւայ դէպքի մասին, թէ ինչպէս մի ուռահայ ուզում էր րեվոլվերով սպանել մի տաճիկ օֆիցերի:

Թէյի ժամանակ ծառան մտաւ մօտս յայտնելով, որ 0աման է ֆէնդին ինդրում է թոյլութիւն ինձ տեսնելու:

Ներս եկաւ երեկւայ սպան, որ կռւի ժամանակ բռնել էր իմ ձեռքս: Նա եկել էր տեղեկանալու թէ ի՞նչ եմ մտադիր անել և չէր կարելի արգեօք ազատել իւր ընկերին: Նա սկսեց նրանից, որ ներողութիւն ինդրեց իւր ընկերոջ համար, առարկելով թէ նա թէյի հետ երեխ քիչ րօմ էր խմել և քէփով էր եղել և հէսց է իմացել թէ մի հասարակ հայ էք:

— Հէսց հասարակ հայ էլ կամ. այնու ամենայնիւ այդ իրաւունք չէր տալիս ինձ հետ այնպէս վարւելու. ինձ համար մի և նոյն է ձեր ընկերը րօմ էր խմել թէ կօնեակ: Նս մինչեւ բաւականութիւն չը ստանամ չեմ թողնելու այդ գործը, պատասխանեցի ես:

Օսմանը դռւրս եկաւ շատ քաղաքավարի կերպով գլուխ տալով: Մի քանի ըոպէից յետոյ կրկին մտաւ ծառան, ասելով թէ մի տաճիկ ուզում է ձեզ տեսնել: Թոյլ տւի գալ: Մտաւ մի երիտասարդ բաշբօլիս, քաղցր շողոքորթ ժայխոը երեսին, քաղաքավարութեամբ և յարդանքով գլուխ տւեց և սկսեց բարձր ոճով արտա-

յայտել իւր խորին ցաւակցութիւնը երեկւաց անախորժ դէպքի համար: —Եթէ ես գիտենայի, որ մի այլպիսի թանկագին հիւր է իջել այս համարներում, մի՞թէ ես կը հեռանայի գիշերը հիւրանոցի մօտից, մի՞թէ թոյլ կը տայի, որ նրան մէկը վիրաւորի, և այլ այսպիսի գեղեցիկ խօսքեր էր ասում:

Դորա փորացաւը այն էր, որ վախենում էր, եթէ ես խնդիրը հիւպատոսարանի միջոցով բարձրացնեմ, վնասւի ինքը ևս, իբրև այդ թաղի հանգստութեան վերահսկող: Այդ պատճառով հարցնում էր թէ ի՞նչ եմ մտադիր անելու և ում գանդատելու: Տաճիկը միայն վախենում է օտարահպատակի հետ զործ ունենալուց:

Սա էլ հեռացաւ. և սենեակս մտաւ հիւրանոցառիրած որդին, որ ներողութիւն էր խնդրում կասուրւածի համար և ասում էր, թէ ահա մի ամիս է որ այն սպան ուտում է, խմում և ոչինչ վճարում, իսկ գանդատել՝ ուր հարին է՝ վախենում են:

Թէից յետոյ գնացի հիւպատոսարանը: Հիւպատոսը, լսելով մանրամասն բոլոր եղելութիւնը յայտնեց, որ երկու միջոց կայ խնդիրը բարձրացնելու. կամ հրապարակական դատ սկսել, որ շատ ժամանակ կը խլի և մեծ աղմուկ կը հանի, կամ գանգատուել սպայի անմիջական իշխանութեան՝ տեղիս գեներալ-փառաշային: Ես ընտրեցի երկրորդը և հիւպատոսարանի հայ թարգմանի հետ դիմեցի ծովափին գտնուող զինւորական շինութիւնը:

Դեռ փաշան չէր եկել. ցած շինութեան առջև կանգնած էր պահպանը և մի քանի սպաներ: Փողոյի ծայրին ահա երեւաց մի հաստափոր զինւորական, որը սիդաճեմ քայլւածքով մօտենում էր շինութեան: Նորա յետելից խոնարհաբար հետեւում էր սեւազգեստ ծառան: Զինւորական փողը հնչեց և ողջոնը տւին: Թարգմանը մօտեցաւ նրան և յայտնեց թէ խնդիրք ունինք: Նա հրաւիրեց հետևել իրան: Մտանք մի մեծ սրահ եւրոպական ձևով աղքատ կահաւորւած. փաշան իւր սուրբ հանեց և տւեց իւր օդ-նսկանին և գնացինք սրահին կից սենեակը, որի մեծ պատուհանները նայում էին ուղիղ ծովի վերաց: Խնքը նստեց մի ցածր աթոռի վերաց, որին կպած մի փոքրիկ սեղան էր շինած և մեզ ցոյց տւեց իւր հանդէպ գտնեւող թախտը: Հրամացեց մի մի ֆինչան դահլիչ բերել և առաջարկեց ծխել:

Իւր օգնականի մատուցած մի քանի հեռագիրներ ու թղթերը կարդալուց յետոյ, նա զիմեց մեզ իմանալու մեր այցելութեան պատճառը:

Թարգմանը պատմեց մանրամասն բոլոր եղելութիւնը և վերջը աւելացրեց, թէ ուռւաց կօնսուլը խնդրում է լուրջ ուշալրութիւն այս գործի վերայ և խիստ պատիժ մեղաւորին: Նա տաճկական շողոքորթութեամբ պատասխանեց թէ կօնսուլի խնդիրքը իւր համար հրաման է և թէ կարող ենք վսոահ լինել, որ ամենախիստ կերպով կը պատժէի մեղաւորը և ապա զիմեց իւր օգնականին յայտնելով մեղաւոր օֆիցերի մասին: Օգնականը ուզեց օֆիցերին պաշտպանել ասելով, թէ այն օֆիցերը, որի մասին մենք գանգատուում ենք, ամբողջ գիշերը չի հեռացել զօրանոցից: Նս ասացի, որ նա առաւաօտ կանուխ է վերադարձել զօրանոցը: Փաշան մեզ յայտնեց, որ հիմա նա կը կանչի օֆիցերին, իբրև թէ յանձնարարութեան համար, և երբ նա հեռանայ՝ ես յետոյ ասեմ արդեօք դա՞ էր:

Օֆիցերը մտաւ. տեսնելով ինձ թարգմանի հետ, այլացւեց ու սպանեց և ստանալով փաշացից թղթերը՝ հեռացաւ:

Նս յայոնեցի որ հէնց դա ինքն էր երեկւայ հերոսը և աւելացրի, թէ այն կարճ ժամանակամիջնոցում որ ես անցկացրի Տաճկաստանի ամեն աբարեկարգ անկիւններից մէկում, այս առաջին դէպքը չէ որ պատահում է հետու: Խ'նչ կարծիք կարող են օտարականները կազմել Տաճկաստանի մասին, երբ նոքա անգամ՝ չը նայած իրանց հիւպատոսարանների հեղինակութեան՝ ենթարկում են այդ տեսակ վիրաւորանքների:

—Ամեն երկրում լինում են վաս մարդիկ, էֆէնդմ, պատասխանեց փաշան և խոստանալով խառութեամբ պատժել յանցաւորին, շատ քաղաքավարի կերպով ճանապարհ դցեց մեզ, ինզրելով թարգմանին հանդստացնել հիւպատոսին:

Տեղը չէր, ի հարկէ, ապացուցանելու, որ այն դէպքերը որ ինձ հետ պատահեցին, և այն երեսով թները որ ամեն քայլափոխում մարդ նկատում է այդ երկրում՝ մասնաւոր չեն: Մարդկանց բարոյական գծերը և հատարակական ձյուումների զարդացումն էլ նոյն ֆակտորների ազդեցութեան են ենթարկում, որոնց և օրդանիզմերի ձևերի զարդացումը, ինչպէս ուսուցանում է այդ էվոլյուցիացի օրէնքը:

Այդ երեք ֆակտորներն են՝ միջնավայրը, ժառանգականութիւնը և լնտրողականութիւնը (selection): Տաճկին շրջապատող լնտանեկան-հասարակական միջնավայրը, նորա միջին-ասիստական նախահայրերից ժառանգան գածը և այդ երկրում ներկայ պայմաններում գոյութեան կուի մէջ առաւելութիւն ունենալու (ընտրողականութիւն) համար հարկաւոր յատկութիւնները՝ կոպիտ ոյժը, մահմեղական ծագումը, ստորտեսակի խորամանկութիւնը և այլն՝ չեն նպաստում, որ այդ երկրում երեւան գան առաքինի լուսաւոր անձնաւորութիւններ, մուտքգործէ ազատ, բարեկարգ կեանքը...

Կէսօրին գնացել էի տեղիս լաւ ճաշարաններից մէկը։ Այդ օրւայ խօսակցութեան նիւթը բոլորի մօս՝ զիշերս պատահած դէպքն էր։ Տեղիս հայերը և յոյները չէին կարողանում ծածկել իրանց զարմանքը, որ քրիստոնեան կարող է իւր պատիւը պաշտպանելու համար զէնք բարձրացնել տաճիկ օֆիցիերի դէմ։

Ես ցանկանում էի տեսնել և տեղիս հայոց աղջկանց վարժարանը, որ զետեղւած էր Գ. եպիս. Սրուանձտեանի հեռացնելուց թափուր մնացած առաջնորդարանի լնդարձակ շինութեան մէջ։ Երբ այ. տեսուչ Վ. Քալանթարեանի հետ մասնք ուսումնարանը, նարնջի և ձիթենի ծառերով պատած լնդարձակ մաքուր բակում խաղում էին վայելուչ հագւած աշակերտուհիներ։

Ներկայ գոնւեցայ մի քանի դասերին։ Նատ բաւարար տպաւորութիւն էր թողնում վարժարանը։ Նա նմանում էր ուսուահայերիս համեմատաբար բարեկարգ ուսումնարաններին։ Աղջկանց վարժարանն էլ, ինչպէս որ տղայոցը, բաժանեում էր երկու մասի՝ «ծաղկոց» և ուսումնարան։ Ծրագիրը համարեա նոյն էր։ Ծաղկոցը երկու դասարաններ ունէր, իսկ ուսումնարանը՝ 4։ Աշակերտուհիների թիւը՝ 251 էր։

Այս երկու աղջային վարժարանների վերայ լինում էր տարեկան ծախութ 600 օսմ. լիրա (5.500 ր.), որը մատակարարւում էր՝ աղջային մագուկից (150 ոսկի), ծնողների վճարներից (350 ոսկի) և վիճակահանութիւնից ու հանդեսներից (100 ոսկի) ստացւած գումարներով։

Տրապիզոնում կային և հայոց մի քանի մասնաւոր մանկական դպրոցներ, մօս 200 երեխաններով։ Այնպէս որ ամբողջ քաղաքում

սովորող հայ մանկաւոյ թիւը հասնում էր 1.200-ի, որ համեմատած հայ բնակիչների թւի հետ՝ 6.000, բաւականին մեծ է՝ 20%՝ մինչդեռ թիւքերի մոտ՝ սովորողների թիւը 1.450, իսկ բնակիչներինը 21.000, այսինքն 6%։ Տրապիզոնում ցոյների թիւը 10.000 է հաշւում, բայց տեղեկութիւններ սովորողների մասին չը կարողացայ ձեռք բերել:

Նոյեմբերի 30-ին, երեկոյեան ժամի  $8\frac{1}{2}$ -ին, Տրապիզոնից Բաթում պէտք է գնար աւտորիական «Apis» շոգենաւը։ Միւս օր, առաւօտեան, նա Բաթում կը հասնէր։ Ես վերցրի տոմսակ:

Երեկոյեան ժամի 5-ն էր, երբ ես պ. Քալանթարեանի և երկու ուսուցիչների հետ դիմում էինք նաւահանգիստը։ Զիազան Սիմնը, որ չէր գնացել գիւղը որպէս զի ինձ ճանապարհ զցի, մի մշակի հետ իրերս էին տանում։ Մեզ պաշարել էին ցնցուաիներով ծածկւած մուրացիան երեխաներ և աղիողորմ ճշալով ողորմութիւն էին պահնջում։

Ծովափին շատ քիչ ժողովուրդ կար։ Մի խումբ մուրացկաններ, որոնց մէջ և չարսաւներում փաթաթւած տաճիկ կանաչք, շրջապատել էին ինձ։ Մինը փէշից էր քաշում, միւսը թևքերից, երրորդը օձիքից և բոլորը ողորմութիւն էին ինդրում, որպէս զի ինձ բարի ճանապարհ մաղթեն։

Ափին շինւած էր մի փոքրիկ փայտեաց պահանորդանոց (Եյಡա), ուր նստած էր մի պաշտօնեայ. մի այլ տաճիկ, որը և ափին կանգնած երկու-երեք մակոցիների տէրն էր, վերցրեց անցաթուղթս, տարաւ նշանակել տւեց և մի քանի զուրուշ քախչիշ վերցնելով որպէս զի իրերս չը խուզարկի, հրաւիրեց մեզ իւր մակոցից, ինքն էլ նստեց մեզ հետ և հրամայեց թիւավարին մղել, շարժւել տեղից։

Խաղաղ, պարզ երեկոյ էր. երգելով սլանում էինք կապուտակ ալիքների վրայով դէպի վիթլաւրի «Apis»-ը, որ կանգնած էր հենւում։ Ահա և նորա կողքին իջեցրած երկաթեայ սանդուղքները. մենք վեր ելանք և մտանք նաւասենեակը։

Ժամանակ էր արդէն սանդուղքները բարձրացնելու, և ինձ ճանապարհ զցող բարեկամներս բաժանելով ինձնից՝ նստան մակոցից։ Նոքա արդէն հեռացել էին այնքան, որ հաղիւ էին նշմարւում. բայց ես զեռ կանգնած էի և նայում նոյա կողմը։

Արեգակը մոսց էր մտել: Եղանակը սկսում էր վատանալ: Որորները (Վայեա) անհանգիստ ճշալով և ցած ճախրելով դէս ու դէն էին թռչում: Ցուրտ քամին սաստկանում էր. մէղը թանձրանում:

Մթնել էր բոլորովին: Քաղաքի տներում վառւած ճրագների լոյսը աղօտ թափանցում էր մառախուղի միջից: Նաւածածկի մի սասում, վրանաձև քաշած կոտաի տակ մի կերպ յարմարել էին հայ և յոյն պանդուխտները, որոնցից մի քանիսը իրանց ընտանիքներով էին: Աւնեոր ճանապարհորդները փակւել էին յարմար, տաք, լուսաւոր սենեակներում:

Արդէն ժամի 9-ն էր: Անձրել սաստկանում էր. քամին խփելով կացմերին սուլում, շառաչում: Սիրտս չէր տալիս իշնել ներքեւ: Ահա նաւապետը նշան տւեց. նաւաստիները այս կողմ ու այն կողմ վազվղեցին. խիթեցին զանդը. բարձրացրին խարիսխը. սուլեց և շարժւեց տեղիցը վիթխարի «Արի»-ը պատառելով և յետ մղելով լնդդիմադրող ալիքները: Հեռանում ենք Տաճկաստանից. ծովափը և ճրագները կամաց կամաց ընկղմում են գիշերային մժութեան մէջ. տես՝ մարեց և վերջին ճրագը. մեր շուրջը այլ ևս ոչինչ, բացի ալէկոծւող անեղը ծովից և մութ-կապարագոյն երկնքից: Ցուրտ է և ախուր....

# ԹԻՖԼԻՍԻ ՍԱԼՕՆ

ԱՒԵՏԻՔ ԱՐԱՅԻԱՆԵԱՆՑԻ

## I.

Ներկայ 1890 թ. յունւարի երկրորդ կիսից Թիֆլիսում, «Փառքի» Տաճարի շինութեան մէջ, բացւած է տեղական գեղարւեառական հանդէսը: Միտքը երկար ժամանակւայ յղացածներից չէ. նա ցղացաւ, այսպէս ասած, միանդամից: Սկզբում պլ. Բաշխնջաղեանի մասին լսւեց, որ կամենում էր, անցեալ տարիների նման, իւր սեպհական նկարների հանդէսը բանալ. բայց այդ մտադրութիւնը չի բագործւեց՝ ընդհանուր հանդիսին տեղ տալու համար:

Այսպիսով ներկայ պատկերահանդէսը կազմեց էքս-պրօմակո, առանց նախապատրաստութիւնների: Նւ միայն շատ բնական է, որ այդպէս բացւելով, հանդէսը անլիիակատար պէտք է լինէր այն մտքով, որ նկարիչները չը կարողացան հասցնել բացման օրին իրանց բոլոր արտադրութիւնները: Բայց հանդէսը բաւականին երկար է տևելու—երկու-երեք ամիս, այնպէս որ հանդէսը գնալով աւելի ու աւելի պէտք է ճոխանաց նոր նկարներով:

Գեղարւեստների այս տարւայ հանդէսը, որպէս ինձ թւռմ է, պարբերական երեսովթների շարքը պէտք է ընկնի: Եւ իրօք, այժմ, քանի որ կայ մի շինութիւն, որպիսին է «Փառքի» Տաճարը, որի երկու մեծ սրահներից մէկը, աջակողմեանը, բոլորովին չէ բռնւած և երեխ տարիներ շարունակ պէտք է մնայ չը բռնւած, այժմ, ատում եմ, յարմարաւոր շինութեան պատճառով հեշտացրած պէտք է լինի գեղարւեառական հանդէսներ տալը, քան այդ յայժմ էր, երբ մի

այդպիսի գործի համար անհրաժեշտ կերպով պէտք էր զիմել երկրիս կառավարչապետի պալատը, ուր երկու տարի առաջ կայացաւ այժմեանի նման մի պատկերահանդէս:

Անցեալ 1889 թ. Կովկասեան Արդիւնահանդէսը մասամբ նաև պատկերահանդէս էր, որովհետեւ տեղական նկարիչների նկարներից մի քանիսը հանդէս էին դրւած: Բայց նկարների համար առանձին բաժանմունք չը կար և ի ցոյց դրւած նկարներն էլ միմիայն հանդիսի գեղեցկութեանը պէտք է նպաստէին: Այսպիսով նոքա, այդ նկարները, միայն ակսեսուարներ էին և չէին կազմում մի անկախ բաժին:

Յայժմ կայացած պատկերահանդէսները, Թիֆլիսում, շատ թէ քիչ պատահական են եղած: Պատահական է նաև ներկայ տարւանը. բայց ես արգելք չեմ տեսնում, որ նոյնը ամեն տարի կրկնուէր և այն էլ՝ որոշ ամիսներին: Մի խօսքով, ես կ'ուզէի, որ Թիֆլիսն էլ ունենար իւր սալօնը, ինչպէս ընդունւած է անուանել ամեն տարի կրկնող գեղարւեսաների հանդէսը Պարիզում, որից և օրինակ են առել միւս քաղաքները:

Դորա համար մի բան ամենաանհրաժեշտ է, որ Կովկասում՝ յատկապէս Թիֆլիսում, նկարիչներ բաւականի թւով լինին, որպէս զի նոցա տարեկան արդիւնաբերութիւնը կարողանայ բաւականանալ մի արդիւնահանդիսի համար:

Արդ, սա է խնդիրը.—կա՞ն արդեօք բաւականաչափ նկարիչներ մեզանում և ո՞րքան է նոցա տարեկան արդիւնաբերութիւնը: Տարեկան եմ ասում այն պատճառով, որ մի անգամ արդէն հանդէս դրած նկարը այլ ևս չի կարելի մի երկրորդ և երրորդ անգամ հանդէս բերել: Ընդունւած կանոն է այդ: Եթէ գալ տարի բացւէր այս տարւաց նման գեղարւեստական հանդէս, այժմեան հանդիսում դրած նկարները, նոցանից ամենայաջողւածներն անդամ, կարդաղրիչ մասնաժողովից չը պէտք է ընդունեին:

Արդ, ես ենթադրում եմ, և կարծում եմ թէ չեմ սխալում, որ ներկայ տարւաց գեղարւեստական հանդիսին մասնակցել են մեր բոլոր տեղական նկարիչները: Կատալոգը ձեռքիս, ես հաշւում եմ մասնադէտ գեղարւեստագէտներին, բաց թողնելով սիրողներին: Եւ ես գոնում եմ, որ առաջինների թիւը տասն և հինգ է: Եւ ահա նոցա անունները այն կարդով, ինչպէս կատալոգում նոքա երեան

են գալիս.—Լօնդօ, Սոլուխօւ, Բաշինջաղեան, Ստախօւսկի, Կեպսին,  
Նօւակ, Զանկօւսկի, Կոլչին, Արտազօւ, Մարդերօսսօ, Շամշինօւ,  
Զախարօւ, Գաբաեւ, Բօգդանօւ, Խօգօրօւիչ: Կարծում եմ, որ այն  
երեսուն և հինգի մէջ, որոնք մասնակցել են այս տարւայ հանդիսին,  
միայն դոքա են մասնագէտ գեղարւեստագէտները: Մնացածները սի-  
րողներ են կամ շատ թէ քիչ յաջող աշակերտներ, առանց բարձր  
գեղարւեստական կրթութեան: Վերջիններիս արտադրութիւնները  
ունին անշուշտ իրանց հետաքրքրութիւնը. բայց նոքա, առանձին  
վերցրած, չեն կարող յաւսկնութիւն ունենալ զճարող հասարակու-  
թիւն գրաւել դէպի իրանց: Իսկ եթէ խնդիրը բարեգործութեան  
մէջ չէ, մուտքի համար վճար նշանակելը միտք ունի միայն այն  
ժամանակ, երբ հասարակութիւնը գնում է նկարները տեսնելու թէ  
իւր մէջ գեղարւեստական ճաշակ զարգացնելու համար և թէ մեծ  
հետաքրքրութիւնից դէպի հանդիսին մասնակցող գեղարւեստագէտ-  
ների աշխատանքը: Եւ այդպիսի ինտերես կարող են ներկայացնել  
միմիայն բուն գեղարւեստագէտները, նոքա, որոնք զուտ գեղարւես-  
տական կեանքով են ապրում: Հոգ չէ, եթէ հանդէս դրւած նկար-  
ները միջակ լինին, անգամ միջակից պակաս, կամ բարձր քննա-  
դատական տեսակէտից՝ չ'աջողւած, բայց տաղանդ պահանջւում է  
անգայման կերպով, որտէս նաև տեխնիկական հմտութիւն: Իսկ վեր-  
ջինս ձեռք է բերւում, ներկայ հանդամանքներում, միմիայն բարձ-  
րագոյն գեղարւեստական դպրոցներում, իսկ ապա վարպետների մօտ  
աշակերտնելով և ինքնակրթութիւնով, մի խօսքով՝ այդ հետաքրքրու-  
թիւնը կարող են զարգացնել միմիայն մասնագէտները:

Գեղարւեստական հանդէսը պարբերական դարձնելու և յաջո-  
ղացնելու համար բաւական է, որ այն նկարները տեսնելու համար,  
որոնք ամեն տարի հանդէս են դրւում, հասարակութիւնը յօժար  
կամքով, ինքնարերաբար ամեն պատրաստականութեամբ մուտքի  
համար նշանակւած վճարը տայ և նոյն հանդէսը մի քանի անգամ  
այցելէ: Քանակութիւնը, հանդէս բերւած նկարների թիւը այդ  
դէպքում երկրորդական հանդամանք չէ, այլ առաջնակարգ: Արդ,  
ասում եմ, այժմեան թիվլիսի տասն և հինգ գեղարւեստագէտների  
ոյժերով կարելի՞ թէ ոչ ամեն տարի գեղարւեստական հանդէս  
բանալ:

Ես կը պատասխանեմ՝ այո՛: Բոլորովին հաստատ կարելի է ընդունել, որ մի 60—100 շատ թէ քիչ տաղանդաւոր վրձինով գրած նկարներ միանգամայն կ'արդարացնեն հանդիսի բանալը. իսկ տան և հինգ գեղարւեստագէտների տարեկան ազդքան և աւելի արտադրել կարող են, մանաւանդ որ հանդէսը մի նոր խթան կը լինի գեղարւեստագէտների բեղմնաւոր գործունէութեան և որ տարեց տարի գեղարւեստագէտների թիւը աւելանում է մեզանում: Աիրողների գործերը, յամենայն դէպս, չեն նւաստացնում աւելի կատարեալների արժանաւորութիւնը, և որովհետեւ նոցա թիւը աճում է մեզանում, նոցա դրած նկարներից լնտրելագոյնները կը սոււրացնեն նկարների թիւը յօդուտ և ոչ ի վնաս հանդիսի:

Ո՞հ, գիտեմ, որ մեզանում կայացնելի սալօնը շատ և շատ հեռու, անսահման հեռու կը լինի բոլոր սալօնների նախատիպարից, որ է «Պարիզի Սալօնը»: Եւ իրօք, պէտք է իմանալ թէ ի՞նչ է վերջինս, և այն ժամանակ լնթերցողս թերեւս ծիծաղելի համարէ նոյն իսկ այս անունը, որ ես յատկացնում եմ մեր այժմեան գեղարւեստահանդիսին: Սալօն! Համաշխարհային քաղաքի ռելիստան-Դաշտեր» կոչւած հսկայական մի բուլւարի վերայ գտնուում է «Արդիւնագործութեան պալատ» կոչւած երկաթեալ եռայարկ շինութիւնը, բազմաթիւ լնդարձակ սրահներով և բակերով: Պետական սեպհականութիւն է այն:—Միւս կողմից, Խրանսիայում կա «Արտիստանների ընկերութիւն»: Դա՝ բոլոր գեղարւեստագէտների լնկերութիւնն է, ինչ մասնաճիւղին և պատկանեն նոքա՝ նկարչութեան ամեն տեսակների, սկուլպտուրի: Մի ժամանակ պետական վարչութիւնն էր կառավարում սալօնը. նա էր լնդունում նկարները, նա էր կազմում դատաւորների մասնաժողովը և այլն: Այժմ՝ քանի տարիներից ի վեր, պետութիւնը ձեռք է վերցրել դրանից և սալօնը ամբողջապէս յանձնել է «Արախտանների ընկերութեան», որը և կազմում է բոլոր հարկաւոր մասնաժողովները, կարդադրում է թէ ներկայացրածներից ի՞նչ նկարներ և քանդակի գործեր պէտք է լնդունել և որո՞նց պէտք է մերժել. և այդ լնկերութիւնն է նշանակում մռւտքի համար գինը, որից գոյացած գումարը մոտում է լնկերութեան գանձարանը: Նորա ընտրած «Ժիւրին» որաշում է պարգևները լսոտ արժանաւորութեան:

Արդ, չը նայած այն մեծ խստութեան, որով վարւում է «Ժիւ-

րին» նկարները և այն ընդունելու ժամանակ, այնու ամենայնիւ այդ սալօնին, հէսց օրինակի համար, 1888-ին մասնակցող արտիստների թիւը 1.600-ից պակաս չէր, իսկ հանդէս դրած նօմերների թիւը, ըստ կատալոգի, էր ոչ աւել և ոչ պակաս քան 5.523։ Ասել, թէ այդ բոլորը նշանաւոր գործեր էին և ամեն ըննադատութիւն վերցնող, ի հարկէ չի կարելի: Բայց վերջապէս նոցանից ամեն մէկը այնքան լաւ էր, որ կարելի էր ընդունել Պարիզի սալօնում։ Արժանի թէ ոչ արժանի քարձր մրցանակի, — բայց նոքա բոլորը գեղարւեստագէտների գործեր էին, գործեր, որոնք չէին մեղանչում տարրական կանոնների դէմ և որոնք մի յայտնի չափով վարպետի գրոշմ էին կրում։ Դէ՛, եկէ՛ք ու այդ նկարների բաւկով համեմատեցէ՛ք մեր Թիֆլիսի ներկայ նկարահանդիսի հետ։ Այսուեղ ընդամենը 35 մասնակցողներ են, որոնցից միայն տասն և հինգը շատ թէ քիչ բարձր վարժութեան տէր, իսկ այնուեղ—1.600, որոնց մէջ մի քանիսը աշխարհահոչակ վարպետներ եւ ո՛ւր 5.523 նօմեր և ո՛ւր 202 նօմեր, քանի որ ներկայ նկարահանդիսի կատալոգը միայն 202 նօմեր է պարունակում։

Ես գեռ չեմ խօսում նկարների համեմատական արժանաւորութիւնների մասին. բայց այն թւերն էլ, որ բերեցի, բաւականաչափ գաղափար են տալիս Պարիզի սալօնի ինչ լինելու մասին՝ համեմատած մեր այժմեան նկարահանդիսի հետ։

Բայց մի՞թէ, իրօք, խնդիրը նրանումն է, թէ ո՛րքանով մենք կարող ենք նմանել կատարելատիպին։ Ամենուին ոչ իմ ասածը սա է, որ նկարահանդէսը դառնայ մի մշտական հիմնարկութիւն, կրկնւելով ամեն տարի և ամեն տարւայ մի և նոցն ամիսներին։ Եւ ես կարծում եմ, թէ ասկացուցեցի, որ մեր ներկայ ոյժերով այդ կարելի է իրագործել, թէ յօգուտ հասարակութեան և թէ յօգուտ նկարիչների իրանց։ Այո՛, մանաւանդ յօգուտ գեղարւեստագէտների իրանց։ Յայտնի է, որ մեղանում դեռ նոր-նոր է սկսում արթնանալ ուշադրութիւնը դէպ գեղարւեստը։ Մանաւանդ հայ հասարակութիւնը գեռ գրեթէ ոչինչ չի հասկանում գեղարւեստից, չը նայած որ նա պատկերասէր է։ Մի անշնորհք քրօմօլիտօգրաֆիա կամ իւղաներկ նկար, տւած իրը պրեմիա մի որ և է հրատարակութիւնից, բաժանորդ հայը անպատճառ կը կախէ իւր գահլիճի պատի

վերայ: Նիմիցում մի ապրանքավաճառի ձեռքով առած օլուքօնին անձունի նկար նա մի զարդ է համարում իւր տան ամենալաւ սենեակի: Բայց մի շնորհալի և տաղանդաւոր վրձինով գրած նկարը կարող է ամիսներով դրւել պալատի փողոցի մագաղբնների պատուհաններին, և գնող չը գտնել նոյն իսկ ամենահարուստներից, մարդկանցից, որոնք զարմանալով են հարցնում թէ ի՞նչքան կոպէկի կտաւ և ո՞րքան բուքլու ներկ պէտք է գնացած լինի, որ այս ինչ նկարը 50—100—200 բուքլի է գնահատում նորա հեղինակը: Ես իմ կողմից չը գիտեմ աւելի լաւ միջոց գեղարւեստագէտների նշանակութիւնը հասարակութեան աչքում բարձրացնելու համար, քան պարբերական գեղարւեստահանդիմները, որոնք, հասարակութիւնը գրաւելով, ընդհանուր խօսակցութեան առարկայ են դառնում և, որ կարեորն է, ենթարկում են պարբերական հրատարակութիւնների քննադատութեան: Այս բոլորով արթնանում է հետաքրքրութիւնը դէպի գեղարւեստը, իսկ հետաքրքրութիւնը տանում է դէպի աւելի խորը ուսումնասիրութիւն և վերջապէս նա մտնում է կենսական պահանջների մէջ: Նկարները, այն ժամանակ, գնահատում են և ոչ միայն պլատոնապէս, այլ և դրամով. գեղարւեստագէտը դառնում է կատարելապէս անկախ դիրքի տէր: Բայց, ի հարկէ, միայն գեղարւեստագէտը: Որովհետեւ միմիայն մի ընդհանուր հանդիսում հասարակութիւնը կարողանում է գտել գեղարւեստագէտին ոչ գեղարւեստագէտից, տաղանդը՝ ոչ տաղանդից, աշխատողին՝ ոչ աշխատողից: Կան անուններ նաև գեղարւեստական աշխարհում, որոնք պահպանում են միմիայն շնորհիւ քննադատութեան պակասութեան: Որպէս բոլոր միւս ճիւղերում, նաև գեղարւեստների մէջ կան այնպիսիներ, որոնց համար գլխաւորը՝ իրանց գրպանում պահած վկայականներն են, դիպլոմները, բայց ոչ տաղանդը, սէրը դէպի իրանց կոչումը և աշխատասիրութիւնը:

## II.

Ներկայ թւականի գեղարւեստահանդէսը, որպէս ասացի, բացւած է «Փառքի Տաճարում», որը ունի մի նախասենեակ, իսկ սորա աջու ձախ կողմերում՝ մի մի հաւասար մեծութեան դահլիճներ: Զախակողմեան դահլիճնում՝ դրւած են կառավարութիւնից պատւիրած

Նկարներ՝ վերաբերեալ Կովկասի նւաճման նրուսաստանի կողմից կոհւներ, հերոսներ, պատմական մոմենտներ—աշա' այդ մեծ մասամբ մ.ծաղիր նկարների սիւժետները, նկարներ, որոնցից կարեռագոյնները պատկանում են գերմանացի և, կարծեմ, Միւնիսենի դըպոցից դուրս եկած Ռիքո՛ին։ Այդ նկարները մշտական սեպհականութիւն են «Փառքի Տաճարի» և նոյնքան անփոփոխ են, որքան ուրիշ մուզէնների նկարները։ Դոքա դուրս են գեղարւեստահանդիսի ծրագրից։ Այս վերջինը գետեղւած է շինութեան աջ դահլիճում։ Նիսութիւնը չ'ունի լրւսամուտներ կողքերից։ Լոյսը թափանցում է վերևից։ Եւ ացդպէս էլ հարկաւոր է։ վերևեց եկող լոյսը աւելի մեծ է և աւելի հաւասար է տարածւում դահլիճում, քան կողքի պատուհաններով։

Մուտքը նշանակւած է 20 կոպէկ։ Համեստ վճար։ Պարիզի սալօնի մուտքը, որը միանգամայն կախւած է «Արտիստների լնիւրութեան» վճուից, տասը ֆրանկի է համում, ուրեմն մօտ 4 րուբլի։

Բայց սա մի սալօն է, որի համար կարող անձեր արժանի են համարում նոյն իսկ Ամերիկացից ճանապարհածախս յանձն առնել այն ացցելելու համար։ Այդքան հեռու չենք գնացած մենք. մեր հանդիսի մուտքի վճարը շատ թէ քի։ Համապատասխան է այն հետաքրքրութեան, որը կարող է ունենալ մեր հասարակութիւնը դէպի իւր միջի նկարիչները։ Բայց, չընայած այն մի շաբաթ տեած ձիւն, անձրեւ ու ցեխ օրերին, որոնք շուտով յաջորդեցին հանդիսի բացմանը, այնու ամենայնիւ երեք շաբթում 20-ական կոպէկ մուտքից գոյացած էր մօտ 600 րուբլի։ Ուրեմն 3.000 ացցելուներ են եղած, չը հաշւած ձրի մուտք ունեցողներին։ Ես համոզւած եմ, որ եթէ պատկերահանդէսը պարբերական դառնայ, որպէս յօդւածիս առաջի մասում բացատրեցի, յաճախողների թիւը մի քանի անգամ կը բազմապատկեցի։ Մուտքից կը գոյանան մի քանի պատիկ հազարներ, որ, հարկաւ, չեն մերժիլ հանդէսը կազմող գեղարւեստագէտները։

### III.

Մտնելով հանդիսի դահլիճը, առաջին տպաւորութիւնը առնելոց յետոց, իմ հետաքրքրութիւնն էր տեսնել, թէ ի՞նչ ժանրներին են աիրւած նկարիչները։

Նախ աչքի է ընկնում մի քանի տեսակների բացակայութիւնը: Նկարչութիւն, գծագրութիւն (dessin), ջրանկարչութիւն (աքւարէլ), պատիլ (կապարանկարչութիւն), քանդակագործութիւն (սկուլպտուր), փորագրութիւն (գրաւիւր), փորագրութիւն եռ մեդալլեր, ճարտարապետութիւն (արխիտեկտուր).—ահա՛ այն սերիաները, որ պարունակում է մի բազմակողմանի գեղարւեստահանդէս: Դոցանից մեր ներկայ հանդիսում ներկայացւած են՝ նկարչութիւնը (իւղաների), ջրանկարչութիւնը, քանդակագործութիւնը: Մնացած բոլոր տեսակները բացակայ են, որ նշանակում է, թէ Թիֆլիսը դեռ ևս չունի ներկայացուցիչներ գեղարւեստի այդ տեսակների համար, բայցի ճարտարապետութիւնից, որի համար կարող էին գտնւել, եթէ միայն մասնակցութիւնից հեռու չը մնացին տեղական ճարտարապետները:

Բայց ներկայ հանդիսում քանդակագործութիւնը և ջրանկարչութիւնը այնքան աննշան տեղ են բոնում, որ համարձակ կարելի է ասել, թէ ներկայ տարւայ գեղարւեստական հանդէսը իսկաւպէս նկարչահանդէս է: Նկարչութիւն—ահա՛ առաջմ գեղարւեստների այն միակ ճիւղը, որը հող է գտել մեր հասարակութեան մէջ:

Արդ, նկարչութիւնը, նայած նկարած առարկացին, իւր տեսակները ունի. գեկօրացիական նկարչութիւն, պատմական նկարչութիւն, սրբերի նկարներ, դիմանկարչութիւն (պօրտրէտ), կեանքի տեսարաններ, կոչւած ժանրացին նկարչութիւն, բնութեան նկարչութիւն, կոչւած պէջած և վերջապէս նկարչութիւն կենդանիների, ծաղիկների և մեռած բնութեան: Այս բոլորից ներկայ հանդէսը մեզ ներկայացնում է պէջած, պօրտրէտ, ժանր, կենդանիների և ծաղիկների նկարներ:

Ներկայ պատկերահանդիսում գերիշխողը, համարձակ կարելի է ասել, պէջածն է, և նոյնքան համարձակ կարելի է ասել, որ այդ այցպէս է շնորհիւ պ. Բաշինջաղեանի: Այդ՝ դեռ ևս երիտասարդ նկարչի նկարները առաջին անգամը չէ, որ դրւում է հասարակութեան առջև: Նորա շատ նկարների հետ Թիֆլիսի հասարակութիւնը արգէն ծանօթ է: Ես աւելին կ'ասեմ. պ. Բաշինջաղեանը, մեր տեղացի՝ Կովկասեան երիտասարդ նկարիչներից միայն է, որի մասին հասարակաց կարծիք կայ սաեղծւած, միակը, որը հանրածանօթ է

Թիֆլիսում և ոչ միայն հայերիս, այլ և այլազգիների մէջ։ Այդ համբաւը նա վաստակել է գործով։ Տաղանդը, սէրը դէպի իւր ընտրած կոչումը, տեխնիքական հմտութիւնը և բեղմնաւորութիւնը՝ ահա՛ ինչին պարտական է պ. Բաշինջաղեանը իւր նկարչական համբաւով։

Արդ, ի՞նչ է պէցաժը։ Պէցաժիսաներ նոքա են, որոնք, թէ ողնելով մի կողմը բնակիներին՝ մարդիկ թէ կենդանիներ, ներկայացնում են զլիսաւորապէս բնութիւնը։ Նոցա կարելի է անուանել՝ նկարիներ երկրի, երկնքի և ծովի։ Մի պէցաժի վերայ կարող են լինել նաև մարդիկ, կենդանիք, —բայց դոքա երկրորդական դեր են խաղում։ զլիսաւորը ինքը բնութեան տեսարանն է։ Եւ, ընդհակառակը, մի նկար կարող է ներկայացնել բնութեան տեսարան, բայց պէցաժ չը լինել, եթէ միայն այդ տեսարանում ներկայացրած է մի որ և իցէ գործողութիւն թէ առօրեայ և թէ պատմական կեանքից։ Պարոն Բաշինջաղեանի տաղանդը, որպէս այդ ապացուցանում են թէ ներկայ հանդիսում դրած նկարները և թէ նորա առաջւայ նկարները, հակւում է դէպի բուն պէցաժը։ Ես գեռ առիթ կ'ունենամ այդ մասին ներքե խօսելու։ Թւենք նախ պ. Բաշինջաղեանի նկարները, որ այս տարի ի ցոյց են դրւած։ Դոքա բազմաթիւ են։ «Արաքս գետը», «Սամացնի շրջականերից», «Ալազանի հովիտը», «Անձրևային օրը Սևանայ լճում», Էպիզօդ Նոտա Ռուսուաւելի՛ի «Ընձու Մորթի» պօէմից՝ «Նեստան Դարեջանը բերւած մի անյացտ լճի ափ», «Անտառը ձմեռ ժամանակ», «Ագրւուի գործարան Թիֆլիսում», «Մայիսեան առաւօտ», «Արարատ», «Անձրևելուց առաջ», «Սոմիների անտառը Մանզլիսում», «Ելբրուս», «Դեբեղա գետը գիշեր ժամանակ», «Լուսնեակ գիշեր Քուռի վերայ», «Գիշերը Սև ծովում», «Լուսնի ծագումը», «Ճմեռը հարաւում», «Կայծակ»։

Այս բոլոր լիշաճներից ոչ բուն պէցաժ են «Նեստան Դարեջանի մի անյացտ լճի ափ բերւիլը» և «Ագուսի գործարանը» Առաջնում թէւ բնութիւնը, այն է լճի մասը, երկինքը, լճի ափը, պարտիզապատ զղեակը բոնում են նկարի մեծագոյն մասը և խսկապէս պէցաժ են ներկայացնում, բայց տեսնողի աչքը գրաւած է ոչ այնքան այդ բնութիւնով, որքան ներկայացրած անձերի գործողութիւնով, որի բացատրութիւնը կարող է տալ միայն «Ընձու Մորթի» պօէմի հա-

մասպատասխան կտորը: Եւ ես կարծում եմ, որ մի պատկերազարդ «Ընձու մօրթի» պօէմի մէջ այդ նկարը, փոքր դիրքով, աւելի իւր տեղին կը լինէր, քան մի այդպիսի նկար, մէծ դիրքով, առանձին վերցրած և անկախ կերպով ներկայացրած հասարակութեան:

Պարոն Բաշինջաղեանը, որի նկարները, անկասկած, ներկայ սա-լօնի զարդն են կազմում, հասկանում է կօլօրատուրան, որպէս ոչ մինը մեր միւս նկարիչներից: Նորան կարելի է կօլօրիստ համարել: Նորա օդը, լոյսը և սորա անդրագարձութիւնը, այսպէս ասած, մարմ-նացած են և, մի և նոյն ժամանակ, թափանցիկ են և բնական: Նա շատ աղատ է սիրուց դէպի որ և իցէ գոյն, մի բան, որը այնքան սաստիկ աչքի է ընկնում պ. Զանկուսկու մօտ, որը, կարծես, բնու-թիւնը շի կարող ըմբոնել, առանց արեւի կարմիր շողի: Բայց պ. Բաշինջաղեանի մօտ դոյնը շատ բազմատեսակ ցոլացումներ ունի և կարծես նա մէծ հաճոյք է զգում այդ ցոլացումները արտայայտել: Զուրը, օդը, բոյսը, երկիրը՝ տարւայ զանազան եղանակներին և օրւայ զանազան ժամերին, նա արտայացառմ է հաւասար սիրով և յաջող կերպով: Հօրիզոնը, հեռաւորութեան աստիճանները, պերս-պեկտիվը, մժնոլորտը ներկայացնելու համար պ. Բաշինջաղեանը վարպետ է: Վերցրէ՛ք, օրինակի համար, նորա «Անտառը ձմեռ ժա-մանակ» և դիտեցէ՛ք նրան խողովակով և դուք ծառերի հեռաւորու-թիւնը կ'որոշէք: Նատ գեղեցիկ է նորա «Արարատ»-ը, որը նախա-տաւոր կերպով տարբերում է նոյն նկարչի մի քանի տարի առաջ նկարած «Արարատ»-ից: Բայց ինչ այդ նկարի մէջ գլխաւորն է, այդ՝ հօրիզոնն է: «Արաքս գետը» ներկայացրած է գիշեր ժամանակ լուսնի լուսաւորութեամբ, երբ սակայն լուսնի շողը միայն ջրի վերայ է ընկած: «Անձրեւերւց առաջ» նկարը ներկայացնում է ացդ ժամա-նակը պատող մժնոլորտը, որը սպասել է տալիս անձրեւը: «Անձրեւա-ցին օրը Սևանայ լճում ներկայացրած պատկերներից ամենամեծն է: Բոպէն վերցրած է, երբ անձրեւը տեղում է մի տեղում, երբ արե-գակը համատարած տարածում է իւր ծառագալթները:»

Պէջամիսաները երեք տեսակ են. ճանապարհորդող, մի և նոյն երկիրը կամ գաւառը նկարող և երրորդ՝ պէջաժիստ-բանաստեղծներ, որոնք ընտրում են իրանց սիւժեաը մի խորշ, մի զրութիւն, որը աւելի համապատասխան է իրանց հոգեկան զրութեան: Պ. Բաշին-

ջաղեանը, ըստ իս, միացնում է առաջնը՝ երկրորդի հետ։ Նորա նկարների մէջ կայ մի ոգի, որը բանաստեղծինն է։ Զի կարելի չը նկատել, որ նա ոչ միայն զրաւել է սիւժետով, այլ և տեղով, այն երկրով, որի բնութեան տեսարանները նա նկարում է։ Նորա նկարներից շատերը կապ ունին հայկական աշխարհի հետ։ Արարատը, Սևանաց լիճը, Արաքսը—նորա սիրած կենդրոններն են կազմում, որոնց վերաց նա մի քանի անգամ սիրել է վարժեցնել իւր վրձինը։ Դէպի Սանացինը, որի շրջակացի սոճիի ծառը և մայառները նա մի նկարում պատկերացնում է, նրան մղել է նոյն ներշնչանքը, որը ազդում է հայրենի երկիրը նկարիչ-բանաստեղծի վերայ։ Նոյն այդ նկատողութիւնը կարելի է անել նորա առաջւաց նկարներից շատերի մասին, բայց այդքան հեռուն ես չեմ գնում։ Հայկական աշխարհը իւր բնութիւնով, պատմութիւնով, աւանդութիւնով, բանաստեղծութիւնով զօրեղ աղքեցութեան հետքեր է թողած նկարչի ստեղծագործական տաղանդի վերայ։ և թերեւս դա անկարեւոր հանգամանք չէ հասկանալու համար պ։ Բաշինջաղեանի նկարչութեան ողին և այն մէրը, որ այնքան արտայացտիչ կերպով ցոլանում է նորա նկարներից բայց գովելին այն է, որ իւր այդ բնական հակումները ամենելին չեն խարդախում բնութեան այն տեսարանները, որ նա ներկայացնում է։ Նորա պէջամբը, խօսելով գործածական խօսքով, պայմանական չէ։ նա չի հնարում—և այդ մեծ արժանիք է։ Եւ հէնց այդպիսի անխարդախ պէջամբն է, որ մենք պէտք է ամեն կերպ խրախումնենք։ Որպէս բանաստեղծութեան մէջ մի ժամանակ կար և կայ կեղծ-կլասիկականութիւն և կեղծ-րօմանախիզմ, նոյնպէս նկարչութիւնը ունեցել է իւր շկօլաները, որոնց մէջ կեղծը գերիշխող էր։ Եւ հէնց պէջամբը մի ժամանակ, հէնց օրինակ ֆրանսիացում, պայմանական էր, իբր թէ հետեւելով 16-րդ դարու հռչակաւոր Պուսէնին։ Սակայն այդ պայմանական պէջամբն, աւաղ միայն այս դարում, յաջորդեց խսկական պէջամբը, որը բնութեան ուսումնասիրութեան մէջ, նորա մտերմութեան մէջ գտել է գեղարւեստի և բանաստեղծութեան մի բեղմնաւոր աղբիւր։ Թէօդօր Ռուսօ, Կօրօ, Կուրրէ, Պօրինի բացեցին այդ նոր ճանապարհը, բայց թողնելով բազմաթիւ աշակերտներ՝ Գիլլըմէ, Ժապի, Սուզէյ, Պուանտըլէն և շատ ուրիշներ, բայց մանաւանդ Պըլուգ, որը ներկացիս պէջամբիստների ամենավարպետը կարող է, համարւել։

Ներկայ գեղարւեստահանդիսի գլխաւոր պէզզաժիստի մասին խօսելուց յետոյ, ես թռուցիկ կերպով կը յիշեմ միւս պէզզաժիստներին։ Դոքա հն՝ Զանկօւսկի, Ստախուսկի, Սոլովիեւ։ Զանկօւսկին ներկայացրել է՝ Կովկասեան գլխաւոր շղթայի աեսարանը, Էլբորուս լեառը, Դօնդուզ-օրում լեառը Կովկասեան գլխաւոր շղթայում և Կաշտանթառ լեառը։ Այդ ցուցակից արդէն տեսնեում է Զանկօւսկու սիրած առարկան։ Պարոն Զանկօւսկու անունը և նկարները շատ վաղուց պէտք է յայտնի լինին թիֆլիսցիներին։ Նա նոր նկարող չէ և պէտք է արդէն ծերունի լինի։ Բայց և այնպէս ժողովրդական չեմ կարող անուանել նրան։ Որ նա սիրում է իւր առարկան, — այդ անկասկած է։ բայց անպատճառ սկրել բնութեան մէջ ցոլացող բազմաթիւ գոյներից միմիայն մէկը՝ ահա՛ թէ ինչը ես չեմ կարող հասկանալ, մանաւանդ մի նկարչի համար, որը այդպիսով ինքը սահման է դնում իւր նկարչական տեսողութեան։ Ստախուսկին երիտասարդ նկարիչներիցն է։ Նա ներկայացրել է Արևի մուտքը Բաթումի մօտ, փոթորկից առաջ, Կովկասի Սև ծովեան ափը Սօչի՛ի և Գուգառտի՛ մէջ, Առաւոտը Սև ծովի ափին, Բաթումի մօտերքին և մի շարք էտիւդներ Թիֆլիսի, Բաթումի, Պօտի՛ի և այլ տեղերի տեսարաններից։

Թողած ամեն ուրիշ համեմատութիւն, ես գտնում եմ, որ պ. Ստախուսկի՛ն, պ. Բաշինջաղեանից յետոյ, մեր ներկայ պէզզաժիստներից նա է, որը ամենից շատ աչքի է ընկնում։ Ստախուսկու մասնաձիւղն է՝ ծովը և նաւը։ Ի զուր չէ նա ծառայել, թէև կարճ ժամանակ, նաւային ծառայութեան մէջ և Ամերիկայում անցկացրել մի քանի տարի։ Բայց նորա նկարները տեղիք են տալիս երբեմն խիստ նկատողութիւնների։ Գոյները բաւականաչափ բնական չեն։ Իսկ նըկարներից մէկը անհասկանալի է դարձնում, թէ այդ ի՞նչպէս՝ արեգակի մայր մանելիս՝ սև ամպերը կախւած են մնում արեգակի վերայ։ Ստախուսկու լաւագոյն նկարը պէտք է համարել Սև ծովի ափը Սօչի՛ի և Գուգառտի մէջ (№ 12)։ — Կամարաձև ժայռերի մի շարք մտած են ծովը իրանց արտափայլումով։ Բայց և այսուեղ պէտք է նկատել, որ, նկարի վերայ, ջուրը, այդ ժայռերին կոլելով, կադմում է մի ուղիղ գիծ, որը հարկաւ անբնական է։ պերսպեկտիվի օրէնքը, կարծես, մոռացւած է այդտեղ։

Պ. Սօլովիեւը, առաջին երիտասարդութիւնը վաղուց անցած մի նկարիչ, խիստ շկօլա անցած լինելը չի ցոյց տալիս իւր նկարներով, որոնց մի առ մի չեմ ցիշում։ Բայց և այնպէս նկատելու արժանի է նորա կուսնեակ գիշերը Բօրժօմում—տեսարան Քուռի վերաց (№ 2)։

Պ. Նամշինովը մեր երիտասարդ նկարիներից է, ոռոսական շկօլան անցած։ Նորա մասին ես կը խօսեմ՝ քննելով ժանր նկարները։ Բայց նա ունի նաև մի քանի պէջամաներ, որոնցից են՝ Դարբիալի կիրճը և Հողակոցը թափւելուց ցետոց (Պօշտ օֆալա, № 21)—երկուսն էլ Խաղմա-վիրական ճանապարհին Կովկասեան լեռների մէջ։ Բայց այդ բաւականի մեծադիր պատկերները մեծ բան չեն վկայում նկարչի տաղանդի մասին, բացի այն, որ նա մի մեծ կօմպօզիցիացի համար բաւականաչափ պատրաստութիւն չ'ունի։ Ճանապարհի կողքին քաշած պատի գոյնը գրեթէ ոչինչով չի զանազանում ճանապարհի գոյնից։ ուղին ինքը իւր բոլոր երկարութեամբ չի ներկայացնում պերսպեկտիւմ տեսարանը։ Հսկացական լեռների առաջին կողմերի սպիտակութիւնը մողորեցնում է տեսանողին, թէ արդեօք դա ձի՞ւն է թէ կաւիճային զանգւած և թէ վերջապէս արեւի առաւօտաց շող։ Բայց ոչ մէկը, ոչ միւսը և ոչ երրորդը չեն յարմարում և բացատրուում տեսարանի մնացած մասերի գոյներով։

---

Պէջամանից յետոյ, ներկայ գեղարւեստահանդիսի այն նկարները, որոնք ամենից մեծ տեղն են բռնում՝ պատկանում են դիմանկարչութեան և ժանրին։

Դիմանկարչութիւնը, այսինքն դէմք նկարելը՝ նկարչական բոլոր ճիւղերից թերեւս ամենահինն է։ Պօրտրէտը գոյութիւն ունի շատ վաղուց, անգամ կարելի է առանց մեծ չափազանցութեան ասել, որ պօրտրէտն է, որը, հակառակ բոլոր մօդաների, ամեն երկրում կարողացել է պահպանել այն, ինչ անուանում են մեծ կամ բարձր գեղարւեստ։ Պէջամանի մասին ես արդէն առիթ ունեցայ ասելու, թէ ի՞նչ փոփոխութիւնների է ենթարկւել նա դարերի լնթացքում։ Բնութիւնը լաւ հասկանալը, ճանաչելը և սիրելը ամեն ժամանակների բաժինը չի եղած։ Նա զարգացել է կամաց կամաց՝ զբականութեան հետ միասին։ Մեծ կեղծիք այնքան հեշտ չէ մացնել

պօրտրէտի մէջ, որքան այդ կարելի է անել պէզզաժի, բնութեան նկարի մէջ։ Կարելի էր և կարելի է խսկականութիւնից դուրս շատ բաներ մտցնել մի պէզզաժի մէջ, և եթէ դա մեծ գին չի ունենալ, այնու ամենայնիւ ոչ ոք զբանով չի վիրաւորւիլ և այդպիսով կեղծ շփոլան կարող է երկար տևել առանց մեծ բողոքի։ Ճիշդ է, որ բնութեան մէջ ոդի կայ, բայց քարերը լեզու չ'ունին։

Այլ բան է պօրտրէտը, մի խսկապէս կենդանի մարդու պատկերը։ Այստեղ, որքան էլ նկարիչը ուզենայ կեղծել, շողոքորթելով կենդանի մօղելին, բայց և այնպէս այդ կեղծիքը նա չի կարող չափազանցութեան հասցնել, ամենքը կը վկայեն թէ պատկերը նման չէ։ Ուրեմն այստեղ մի հանգամանք կայ, որը հարկադրում է նկարչին իրականութիւնից չը հեռանալ ու աշխատել՝ օրիգինալին հասնել թէ գծերի և թէ գոյների և արտայալութեան նմանութիւնով։ Երևի հէնց այդ է պատճառը, որ զանազան դարերի և զանազան շփոլաների պատկանող առաջնակարդ պօրտրէտիստ-նկարիչները հաւասարապէս յաջողութիւն են ունեցել և ունենում։ Դրէ՛ք մէկը միւսի մօտ, մի պօրտրէտ Լէօնարդօ դը Վինչի՛ի, մինը Ռաֆայէլ՛ի, Տիցիանի, Ռուբենսի, Վան Դիկի, Ռեմբրանդտի, Ֆիլիպ դը Շամպայնի, Վելասկէցի, Միջնար'ի, Ռիդօ'ի, Վաստո'ի, Ռէնուլֆ'ի, Էնգը'ի կամ Մըլակրուայի (որպէս զի խօսենք միայն անցեալից), — դուք նոցա մէջ անշուշտ կը նկատէք այդ վարպետներից իւրաքանչիւրի հանձարը, նոցա նկարելու առանձին եղանակը և եպօքի բնաւորութիւնը. բայց դուք կը տեսնէք նաև մի լնդհանուր և նման ջանք ամենքի կողմից, որպէս նաև, յաճախ, հաւասար յաջողութիւն։ Բայց, օրինակի համար, ո՛րքան և որքան մեծ զանազանութիւն, եթէ նոցա կարելի լինէր համեմատել, Աթէնքի Դավրոց 15—16-րդ դարու խոալացի Ռաֆայէլի, Գիշերապահների շրջելը և կամ Անդամահատութեան դասը 17-րդ դարու հոլլանդացի Ռէմբրանդտի և Նիկակների պատկերը կամ Մանող կանանց պատկերը 17-րդ դարու իսպանացի Վելասկէղ'ի, որոնց մէջ դպրոցների, էպօքների և առարկացի ըմբռնողութեան տարբերութիւնը աչքի է զարնում։

Կովկասեան նկարիչներից նոքա, որոնք իրանց աւելի մասնաւորապէս պօրտրէտին են նւիրել, որպէս այդ երեսում է ներկայ հանդիսից, հետեւեալներն են՝ Լօնգօ, Կեպակեն, Կոլին, Արտազօւ, Գա-

բաեւ։ Աիրողներին գեռ ևս չեմ յիշատակում։ Ես համարձակ կ'ասեմ,  
որ, եթէ պէջզաժի մէջ ըլլինէր պ. Բաշինջաղեանի մասնակցութիւնը,  
ներկայ պատկերահանդիսի մէջ առաջին տեղը անկասկած կը պատ-  
կանէր դիմանկարչութեան։ Ներկայացրած պօրտէտների մէջ կան  
այնպիսիններ, որոնք գեղարւեստին են պատկանում։ Դոցանից են՝  
Կեպպենի ինքնանկարը, Կոլչինի «Հայ աղջիկ» և «Մեր հին երգիւլ»,  
Գաբաեւի «Նեգրը» և «Հայի տիպարը», որը հեղինակը սիսալ-  
մամբ անուանելէ «Վրացու տիպար», Լոնդոնի «Մուշան» (մշակ)։ Այդնկար-  
ները բոլորն էլ կենդանի օրիգինալներից նկարած պօրտրէտներ են,  
և, որպէս այդպիսիններ, նոքա բոլորն էլ այնքան յաջողւած  
են, որ համարում են գեղարւեստին։ Բայց մանաւանդ յաջողւած  
եմ համարում Կեպպենի ինքնանկարը, Կոլչինի «Հայ աղջիկը» և  
Գաբաեւի «Հայի տիպը»։ Եւ ես խօսում եմ այդ պօրտրէտների մա-  
սին, ընդունելով նոցա որպէս նկարներ առհասարակ, որովհետեւ  
նմանութեան մասին դատել չեմ կարող։ Դորա համար հարկաւոր է  
օրիգինալներին ճանաչել։ Բայց նոցա մէջ կայ գեղարւեստ, թէն  
այդ նկարները զանազան եղանակով են կատարւած։ Կեսպենի պօրտ-  
րէտը հարթանկար է։ Հեռուից թէ մօտիկից նա գրեթէ նոյն է։  
Եւ եթէ դա հին շկոլայի դործ է, զրանով պօրտրէտի յաջողւածու-  
թիւնը չի նւազում։ Կոլչինի «Հայ աղջիկ» նկարը, եթէ չեմ սիսալ-  
ւում, հեղինակի ազատինու աղջկայ իսկական պօրտրէտն է։ Մի փոքր  
հեռաւորութիւնից (աւելի սրատեսների համար, ի հարկէ, աւելի  
հեռուից) այդ պօրտրէտը ցոյց է տալիս գոյների մի բաւականի  
մեծ հասկացողութիւն և կաշւի նրբութիւնների մէծ ըմբոնողու-  
թիւն։ Օրիգինալը մի սիրուն աղջիկէ, վարդագոյն թշերով, քնքու-  
թեան արտացայտութիւնով, աև աչքերի մեղմ հայեացքով և գեմքի  
բաւականի նուրբ զծերով։ Մազերը մինչ ուսը կտրած և մի փոքր  
անկանոն ճգլած։ Ինքը փաթաթւած է մի հասարակ կարմրագոյն  
շորի մէջ։ Այդ նկարը, որպէս ես կարծում եմ, ժողովրդականու-  
թիւն կը ստանայ և կ'արժանանայ լուսանկարի։ Պարոն Գաբաեւի  
«Հայի տիպարը», որ կատալօգում, կոչւած է «Վրացու տի-  
պար», Ներկայացնում է թիֆլիսեցի մի սիրաջի հայի Միացն  
պ. Գաբաեւը չէ, որ ներկայացնում է նոյն հային։ ուրիշները ևս  
ունին նոյն հային ներկայացրած զանազան դիրքերով։ Բայց ամենից

յաջողւածն է պ. Գաբաելինը: Դէմքը արտայացտիչ և տիպական: — Պ. Կօլինի «Մեր հին երգիչը» ես պօրտէտների շարքում յիշեցի, թէև նա կարող է նաև ժանրի մէջ յիշել: Իմ այդպէս վարւելու պատճառը այն է, որ այդ նկարում աւելի աչքի է ընկնում երգչի դէմքը և, թէև օրիգինալը ինձ անցար է, պէտք է որ նկարիչը ուղեցած լինի «երգչին» նկարել այնպէս ինչպէս նա է, մի խօսքով՝ ներկայացնել նորա պօրտէտը: Դէմքը վրացու գէմք է, հազինունի հասարակ վրացի գիւղացու շորեր: Որպէս ացգլիսին, կրկնում եմ, նա շատ յաջողւած է: Բայց ինչ չէ յաջողւած, այդ՝ նկարի, այսպէս ասած, ժանրային մասն է: Այդ երգիչը բունած ունի մի թառ, իբր թէ նա թառ ածող է և խաղ ասող: Նախ, որ, եթէ տիպը վրացու է, նորա ձեռքը թառ տալը տիպական երկողթ չէ. վրացին թառ չի ածում այլ ասուիրի՛ (պարկապղուկ) ու գարմօնիկա. մեզանում թառ ածում են հայերը և թուրքերը: Երկրորդ, ոչ մի թառ ածող չի բոնիլ թառի կօթի լարերը չորս մատներով հուզ տռած, ինչպէս այդ նկարում ցոյց է տռած. երրորդ, թառի կոթը ներկայացրածի չափ կարճ չի լինում: Ես կրկնում եմ, եթէ նա ժանր նկար է, անցածող է. իսկ եթէ պօրտէտ է ամենայաջողներիցն է:

Պ. Արտազօտի պօրտէտը ներկայացնում է մի տիկնոջ՝ ծաղկաւուն սկ վուալով: Գլխաւորը այսաեղ վուալն է, որը և յաջողւած է: — Նոյնը ներկայացրած է նաև մի ձշտիւգ կնոջ զլլիի՛: Բայց ես զարմանում եմ պ. Արտազօտի չնշին բեղմնաւորութեան վերայ. նա, որ այժմ, զիննորական ծառայութիւնը թողած, իրան կարող էր նւիրել իւր արհեստին, մանաւանդ որ միջոց և ժամանակ է գտնում շրջադաշելու նւրոպան և մանաւորապէս Պարիզը: Բայց երկում է, որ նոյն իսկ Պարիզը ներշնչանք չի բերում նրան, ոչ այն չի որոնում:

Բայց ինչ մի գլուխ գործոց է, այդ է Լօնգո՛ի «Մուշա»-ն:

Վերջացնելով իմ նկատողութիւնները պօրտէտի մասին, չեմ ուղում առիթը բաց թողնել մի քանի խօսք ասելու այն տարածւած կարծիքի մասին, թէ լուսանկարչութեան (Փոտոգրաֆիայի) երեան գալովը՝ իբր թէ դիմանկարչութիւնը կորցրել է իւր նշանակութիւնը: Եւ իրօք, այժմեան լուսանկարչութիւնը ոչ միան տալիս է մեզ վոքրադիր պօրտէտներ, այլ այժմ սկսել են նաև բնա-

կան մեծութեան հասցնել պօրտրէտի դիրքը. և բաւական չէ այդ, ներկում էլ են այդ պօրտրէտները, որպէս այդ անում են նկարիչները։ Երբ լուսանկարչութեան արհեստը ացդքան կատարելագործւեց, նկարչական աշխարհում մի քանի ժամանակ տիրապետեց մի տեսակ երկիւղ՝ մի գուցէ դիմանկարչութիւնը բոլորովին անյաջտանայ։ Մի խօսքով՝ դիմանկարչութիւնը մատնւած կարծւեց զօրեղ մրցութեան շանսերին։ Խօսք չը կայ, որ Փոտօգրաֆիան դառաւ ատելի մի բան դիմանկարիչների աչքում, այն Փոտօգրաֆիան, որը ամբոխը դէպ իրան է գրաւում՝ պօրտրէտը դարձնելով էժան ապրանք։

Բայց այդ կարծիքը, որը մեզանում դեռ ևս տարածւած է, արդէն անյաջտացել է գեղարւեստների երկիրներում։ Ճշմարիտ է, որ դէմքի կօնսուրը ոչ մի նկարիչ չի կարող այնքան ճշգութեամբ դուրս բերել, որքան այդ անում է լուսանկարչութիւնը. բայց, բացի այն, որ նկարիչը նաև այդ կողմից հասցնում է արհեստը կատարելութեան, միմիան ճիշդ կօնսուրը բաւական չէ լաւ պօրտրէտի համար։ Այն, ինչ կարող է անել նկարչութիւնը դէմքի արտայացութեան համար—լուսանկարչութիւնը չի կարող առաջնի նրբութեանը հասնել։ Այժմ այդ լնոդիրը վճռւած բան պէտք է համարել։ Եւ թող մեր պօրտրէտիստները ոչ միայն չը վհատեն, այլ և այս իմանան, որ պօրտրէտը, նկարչութեան մեծ ճիւղերից մէկը լինելով, կարող է, այսպէս կոչւած, բարձր գեղարւեստին հասնել։ Պօրտրէտիստները պեշակատորներ չեն, թէև կարող են և ստիպւած են մեծ մասմբ պատւէրներով զբաղւել. բայց պօրտրէտը ընդունակ է նոցնքան գեղարւեստական գաղափարներ արթնացնել, որքան նկարչութեան միւս ճիւղերը։ Այժմեան դիմանկարիչներից՝ մի պօրտրէտիստ Բօնա՛ (Bonat) նոցնքան նշանաւոր կրող է գեղարւեստի գաղափարի, որքան մի պէջամագիստ Պլուուլ (Pelouse) կամ մարինիստ Ալեազուսկի, մի զեկորատօր Պիւչի գլ Շաւան, կամ պատմաբան-նկարիչ Սեմիրազսկի և կամ մի հանդուցեալ Կառլը բախ։ Եւ միայն պէտք է ուրախ լինել, որ մեզանում ևս, Կովկասեան գեղարւեստների մէջ, կան պօրտրէտիստներ, որոնք ձգուում են բարձր գեղարւեստին։ Հանդուցեալ Ներսիսեանը կարող է նոցա-ամենքին լաւ օրինակ ծառայել, ևս, որի «Ներսէս Վ» հրաշալի նկարով, կախւած Թիֆլիսի Ներսի-

սեան Դպրոցի հոգաբարձական դահլիճում, չի կարելի բաւականաշափ հիանալ:

Ինձ այժմ մնում է զեռ զբաղւել զեղարւեստահանդիսի ժամանքին, կենդանիների և ծաղիկների, աքւարէլի նկարներով, սիրողների բաժնով, սկուլպտուրով և յախճապակու նկարներով։ Բողնենք այդ հետեւեալ անգամին։

---

## ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՖԻՐԴՈՒՍԻ

ԱՐԵՒԵԼԱՅ ՎԻՊԱՇԽԱՐՀ, պատկերազարդ. տեսք Ա. ՌՈՒՍՏԵՄ և ԶՈՒ-  
ՐԱԲ, գերմաներէնից թարգմանեց ՓԻԼԻՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆՑ. Թիֆլիս,  
տպարան Մարտիրոսեանցի. 1889 թ., քառածալ, 46 երես, տառ-  
№ 12, գինն է 20 կոպէհ:

Ճնորհիւ պ. Փիլիպոս Վարդա-  
նեանցիւ մեղանում ևս սկիզբ է առ-  
նում գրականութիւնը Ֆիրզառուի,  
ոռվորապէս կոչւած Ֆիրզուսի. նա,  
որ ամենամնջ բանաստեղծն է Պարս-  
կաստանի և որը առընդում էր 940—  
1020 թ., ուշնին մեղնից շարջ 900  
տարի առաջ: Յատնի է, որ սորա  
գործն է հռչակաւոր Շահնամէ  
կամ թագաւորի գիրք, որի բանաս-  
տեղծական արժանաւորութիւնը նոր  
չէ գնահատւել ընդհանուր գրակա-  
նութիւնից: Իբրև իսկական բանաս-  
տեղծական գանձ, նրան աշխատել  
են թարգմանել երկոպական գլխա-  
ւոր լեզուներով, և այդ թարգմանու-  
թիւններին ձեռնամուկս եղած ան-  
ձերը, ի հարկէ, պարսիկները չեն,  
այլ երկոպացիք իրանք և այն էլ նո-  
քա, որոնց բանաստեղծական քան-  
քարը ճանաչւած է նաև իրանց հայ-  
րանի գրականութեան մէջ: Այդ մա-  
րմնի գրականութեան մէջ, Այդ բաց

ընդունեց նաև բաւականի քանակութիւնի, անկասկած, անհարազատ ոտանաւորներ։ Շատ աւելի մեծ չարձակումների են Մարտիրոս Մակարյանը, որը զերծ չէ չափի և լեզուական սխալներից, նաև նաև մի չորրորդ հրատարակութիւնը, որը ասձեռն գործածութեան համար է նշանակւած։ Նրան սկսեց Վուլլերս (Vullers), Գիտեն՝ ում (Գերմանիա), որի մահից լեռ այն շարունակեց Սամս Էլ Լանդաուէր, Սա տպւում է Լէզէն՝ ում (Բելգիա), Բուլլի տպարանում և ցաղժմ հասած է երրորդ հատորը վերջը։ Բայց արդէն հինգ տարի է, որ այդ հրատարակութիւնից նոր տեսար չի լրաց տեսել և, որպէս երեսում է, մնացած երկու վերջին հատորը իրանց զեռ ևս երկար պէտք է սպասեցնել տան։

Այժմեան գրականութիւնը գեռես, ի հարկէ, հեռու է քննադատական մշակութիւնից Ֆիրդասուի Հանամէի, Նա դժւարացած է զըլիադարապէս նրանով, որ չափազանց շատ են նորա ձեռագրերը, որոնք Ասիայի և Եւրոպայի գրադարաններում կան և որոնք բոլորը իրարից շատ թէ քիչ տարբերում են, Աւելացնենք, որ մի Ֆիրդասուի բառան կը լինէր նախապատրաստական աշխատանք, որը զեռ ևս չը կար Նորա նպատակը կը լինէր բանատեղծի բառերի իմաստը լաւ որոշել։ Ճիշդ է, սական, որ Մօնլ'ը, իւր հրատարակութեան մէջ, բնադրի հետ կից տպած է նաև մի լիակատար ֆրանսերէն թարգմանութիւն, և այս վերջինս առանձին լրաց ընծապեց Մօնլ'ի ալիքն ևօթը հատորի կներուն 1876—78 թւականներին։

Այդ Գրանցերէն լիակատար թարգմանութիւնից զատ և գյանից աւելի հեռու շրջաններում ծանօթ է գերմանական ալմինան ամենաճանահատոր բանաստեղծներից մէկի՝ կուն Շակ'ի փոխադրութիւնը գերմաններէն լեզուով։ Բայց նորա փոխադրութիւնը ամբողջ Շահնամէն չի պարունակում, այլ միայն սորու ամենաբանաստեղծական կտորները հէքիաթական-պատմական ժամանակներից։ Ճիշդ է, որ Շակ'ի „Heldensagen von Firdusi“ այնու ամենաճիշտ ամբողջի մի բաւականի նշանաւոր մասն է կազմում։

Այդ թարգմանութիւնների վերականցեալ 1889 թւականին աւելացաւ մի երրորդը՝ և այն էլ լիակատարը իտալիերէն լեզուով, և այդ թարգմանիցն է խալօ Պիցցի, պրոֆեսոր Տորդինում (Firdusi, il Libro dei Re, poema epico recato dal Persiano in versi Italiani da Italo Pizzi, Torrino, Vincenzo Bona, 8 հատորավ, փոքր 8-ածալ, 1886—89)։ Այդ հատորների ծաւալը և արտաքինը բոլորպին նման են Մօնլ'ի հրատարակութեան, որից նա տարբերում է միայն նրանով, որ Մօնլ'ի Փրանցիերէն թարգմանութիւնը արձակ է, իսկ Պիցցին թարգմանել է ոտանաւորով, որով սա աւելի մօտենում է բնագրի ոգուն։ Արդարին, մեծ համբերութիւն պէտք է ունենալ Շահնամէն ամբողջապէս ոտանաւորով թարգմանելու համար, Բնագրի մէջ այդ գիրքը բաղկացած է 50.000-ից աւելի կրկնակի ոտանաւորներից և շատ բնական է, որ այդ երկարութեան մէջ ամենազեղեցիկ, այն

անգամ ամենամեծավառ կտորների կողքին կան բաւականի երկարաբանութիւններ և կրկնութիւններ, որոնք ընթերցողին, ուր մնաց թէ թարգմանչն և ան էլ չափով թարգմանողին, պէտք է զաղրեցնեն:

Աս այս նախածանօթութիւնը հարկաւոր համարեցի նախ, որ մեր գրականութեան մէջ եթէ մի բան լայտնի է Ֆիրզառաւի մասին, այդ լոկ նորա անոնն է: Այժմ մեր ընթերցողները կարող են համոզւել, որ նորա Շահնամէն ուշադրութեան է առնած եւրոպական գրականութիւնից ոչ թէ միայն լոկ հետաքրքրութիւնից պարսկական բանաստեղծութեան համար, այլ նորա գրական արժանաւորութիւնների համար: Շահնամէն պատկանում է ան սքանչելի ստեղծագործութիւններին, որոնք նըշանակւած են անմահ մնալու համար: Բայց, ի հարկէ, որպէս վերը ասեց, նա շատ է երկար և ունի կրկնութիւններ ու ձգձգւած տեղեր, որոնք կարող են դէն դցւել հմտութարգմանչից, թողնելով միայն ան մասերը, որոնք բանաստեղծութեան մի մի մարդարիաններ են: Այդպէս է վարւել կոմո Շակ'ը, որը փոխադրութիւն է տեմ և ոչ բառացի թարգմանութիւն: Եւ առաջմ հաչ գրականութեան համար, որ մեր կարող է առաջի առաջինը, քան երկրորդը, որովհետև մենք զարդարցման դեռ ես այն աստիճանի վերակ չենք, որ թարգմաննենք դուռ ուսումնասիրութեան համար, այլ մեր թարգմանիչների ջանքը պէտք է լինի մեր զբականութիւնը հարստացնել՝ տալով թարգմանութիւններ, որոնք մի և

նույն ժամանակ մեզ ծանօթացնեն օտար հեղինակների ոճի և տաղանդի զօրութեան աստիճանի հետ: Բայց նոյն առաջին հոգու պէտք է լինի գեռ ևս հետշարժանելի զրածքները տալ հասարակութեան: Այդ տեսակէտից մի պակասութիւն չէ, եթէ Շահնամէն նման երկար էալուր մեզ տրւում է ոչ իւր լիակատարութեամբ, այլ նորանից տրւում են մեզ միայն հատընտիր կտորներ և եթէ այդ կտորներն էլ մեզ տրւում են ոչ անպատճառ չտփով, ուստածաւորներով, որպէս բնագրումն է, այլ արձակ, պրօզայով:

Պ. Փիլիպպոս Վարդանեանցի «Ռուսաէմ և Զոհրաբ» Շահնամէն էպիզոդներից մէկն է: Եւ կարող ենք աւելացնել, ամենասքանչելին և ամենաժողովրդականը: Հաչ թարգմանիչը մեզ այդ էպիզոդը տալիս է արձակ գրւած թարգմանելով զնրմաներէնից:

Պ. Վարդանեանցը աշխատել է իւր թարգմանութեան մէջ պահպանել պատմութեան առարկալին լարմար վեմ ոճը: Եւ իրօք, այդ ոճը սաղական է: բայց եթէ ի նկատի առնենք սովորական լեզուում և նոյն խակ աշխարհիկ զրականութեան մէջ սակաւ և կամ ոչ զործածական բառերի ան ահագին քանակութիւնը, որ մենք գտնում ենք պ: Վարդանեանցի գըրքովիկ մէջ, —մենք փորձւած ենք տեսնում մեզ հարցնել, թէ ում համար է հրատարակւած նա՛ հայկաբանների թէ երեխանների համար: Ինչ էլ ասէքը լոզուտ կլասիկ բառերի ու ոճերի, բայց ակներեն է, որ մեր ներթարգմանութիւններ, որոնք մի և

Նի հասակի տղաները և աղջիկները գեռ ևս սովոր չեն ալսալիսի բառերին՝ սօս, երխվար, կապարձ, ծառանել, չամբուտ, փոկ, առասան, անվկանդ, բարեմուն, համբակ, լովտակ, դամբիկ, մտրուկ, դիմագրաւ, բարպան, անջրպետ, սադաւարաւ, լովաշ, անժուժ, գուպարել, վերտ, զինադուլ, շահապ, դիահանք, կարելէր և այլն։ Գոնէ մի հաստ երես բառարան պէտք էր կցել գրքոչկի վերջին կամ սկզբին։ բայց աւելի էլ լաւ կը լինէր, պահպանելով անհրաժեշտը, նոցանից շատերը ուղղակի փոխարինել աւելի աշխարհիկ խօսքերով։

Ինձ թւում է, թէ պ. Վարդանեանցի թարգմանութիւնը, ուզում եմ ասել, բանեցրած ոճը համապատասխան է առարկակի վսեմութեանը և գոնէ մօտառապէս զգացնել է տալիս այն ճաշակը, որը կը ստանար պարսկապէտ ընթերցողը, եթէ բնադրին դիմէր։ Ի հարկէ ուրի, երբ մի դրամատիկական գործողութիւն պատուած է ոտանաւորով, որի հեղինակը սքանչելի վարպետութեամբ

Ֆիրդասի՝ Պիցցի'ի թարգմանութեամբ (երես 282—283)։

„Udii che un giorno,  
Di sua carriere nel principio, tanta  
Ebbe Rùstem da Dio possanza e  
forza,  
Che ov'ei salia co'piè sovra una  
rupe  
Ambo que' piedi suoi dentro la  
rupe  
S'affondavano entrando. Ei si dolea  
Di tanta forza sempre e sempre,  
e il suo

գիտէ խաղացնել չանգն ու չափը և ուր, երբ նոյնը պատմւած է պրօղալով, ուր դրամապական ուժգնութիւնը գրեթէ կորչում է արձակ պատմութեան ձիերի մէջ։ Ոչ աւելի, քան մի հատ օրինակ։ Որուստէմ և իւր որդի Զո՞րաբը, առանց իրար ճանաչելու, իրար ոչքը չափնել են մի գոտեմարտում։ Առաջին անդամ իւր կեանքում լաղթւեց իրանի ծեր հերսուը. իւր պատանի հակառակորդից նատափն է արւում և միան խորաման. կութեամբ կարողանում է իւր կեանքն ազատել. Երկու կուռղները համաձայնութիւն են կալացնում երկրորդ անդամ իրար գիպչելու և բաժանում են։ Զո՞րաբը անհոգ մնքով անձնատուը է լինում որսորդութեան, մինչդեռ Ոռուստէմը առանձնանում է, սիրտը վթքը ցաւով և ահի գուշակութիւններով։ Եւ ահա թէ ինչպէս է պատմում Ֆիրդասին, որի աւելին ենք դնում իտալական ճիշդ և հարազաթարգմանութիւնը, ինչպէս է նոյնը փոխադրում կոմս Շակ'ը և ինչպէս է թարգմանած հայերէնում պրօղատով։

Նոյն տեղը՝ Շակ'ի փոխադրութեամբ. (երես 180—181)։

„Es hatte Rustem, sagt man, in Beginne Durch Gottes Huld so grosse Stärke inne, Dass, wenn zü fels'gem Grund den Schrit er lenkte, Sein Fuss dort einbrach, weil der Fers sich senkte. Als lästig war ihm diese Kraft erschienen, Die ihm beschwerlich fiel statt ihm zü dienen;

Cor fu ben lungi dal cercarla mai  
Si che mesto ei pregò dinazi a Dio  
E con angoscia dimandò che parte  
Da tal vigor tolta gli fosse, libero  
Perch'ei potesse camminar sua  
strada.  
Ratto scemò, sì come chiesto avea  
Da Dio santo, il vigor del valoroso  
Pari a un gran monte. Ed or che  
grave impresa  
Eragli innanzi, or che gli venne al  
core  
Per timor di Sohràb alta ferita,  
A dio fe'un grego sospirando e disse:  
Al tuo servo, o Signor, noll'ardua  
impresa  
Tu sii custode. Or io quella ti  
chieggo  
Virtù sovrana che mi desti un  
giorno,  
Almo, santo Signor, di mia car-  
riera  
Al cominciar. — Sì come chiesto  
avea,  
Resegli allor la sua virtù sovrana,  
Ciò che scemava un dì gli accrebbe  
be Iddio  
Nella persona. Edegli allor dal fonte  
Toglieasi ratto e si redia dell'armi  
Al fatal campo. Ma d'assai pensieri  
Ingombro era quel cor, pallido il  
volto".

Er hatte früher drum sich in Gebet  
Zü Gott gewendet ünd ihn auge-  
fleht  
Dass er die Ueberkraft ihm min-  
derde;  
Weil sie auf jedem Gang ihn hin-  
derte;  
So hatte Gott auf seinen Wunsch  
geringer  
Die Stärke denn gemacht dem  
Weltbezwinger.  
Nun aber, da der Sieg ihm zweifelhaft  
Bedünkte wegen Sohrabs grosser  
Kraft,  
Rief er: O du, von dem da Gute  
kommt,  
In diesem Drangsal gib mir, was  
mir fromt,  
Gib mir zurück die einst verlie-  
hene Gabe,  
Die Kraft, idie ich vordemb esessen  
habe!  
Und sieh, da gab ihm Gott die Kraft  
der Glieder,  
Die er genommen, auf sein Flehen  
wieder.  
Aufs Schlachtfeld kehrte Rustem  
dann voll Bängniss;  
Er zagte vor dem kommenden Ver-  
hängniss".

Ահա, այս վերին աստիճանի բա-  
նաստեղծական կտորն է, որ պ. Փի-  
լիպոս Վարդանեանցի գերմաներէն  
օրինակը արտաճախում է ալսպէո.

«Մինչդեռ Զոհրաբը կազզութիչ  
քնոլ հտնդիստ էր տալիս իւր մարմ-  
նին, Ոռւստէմը դինաղուլից օգուտ  
քաղեց՝ գնալու մօտակալ հովիտը,

ուր երբեմն մի տարօրինակ հանդի-  
պումն էր ունեցել, որ և ալսոր նո-  
րից վկաց. Ան ժամանակ—թերեւ  
մի քսան տարի առաջ—Ոռւստէմն  
ախքան զօրեղ էր, որ նեղութիւն  
էր զգում իւր ուժից, և ան քարուտ  
ձորը գնալիս ախպէս ծանր ոտք  
դնում, որ ամեն մի քալլին մինչեւ

պմեղները երևում էր պինդ գետնի մէջ։ Այն ժամանակ էր, որ լանկարծ մի զւարթ ծիծաղ լսեց նա, և աչքերը վերցնելով մի ոպի նշմարեց, որ նոյն ձորի շահապն էր, «Ոռւստէմ», ասաց շահապը, ազդ ոճը, որ տեղի է քեզ մալր բնակթիւնը, անչափ շատ է մէկի համար։ Դա քեզ բնաւ օդտակար չէ, այլ ճնշում է քեզ։ Դորա մի մասը զու ինձ տուր, ևս կը պահեմ, և երբ որ քեզ պէտք լինի, կը քաս, նորից լեա կ'առնենու։

Փահնիանը տւաւ շահապին իւր զօրութեան աւելորդ մասը, որ նա պահէ։ Ազժմ գնում էր լեա ուզելու աշդ պահ տւած բարիքը, որովհետեւ վախնում էր, իւր ամբողջ զօրութիւնը ձեռք չը բերած, կուի դուրս գալ Զոհրաբի դէմ։

Շահապը նորա ձանը լսեց թէ չէ՝ լաւած եկաւ և ասաց, «Աւ կ'անես, որ զօրութեանդ ազդ մասն ինձ մօս թողնես՝ այս ժամուի ծերապի մէջ։ Ալստեղ նա աւելի ասլանով կը մնալ, քան ձևոքում։ Ալս ծեր հալօք ինչու ևս ուզում բեռնաւորել քեզ դըրանով»։

(Յետ տուր, հրամաւեց փահնիանը, ալսօր ես կարօտ եմ բոլոր ոճիս,

որ ստացել եմ բնութիւնից։ Տնւր, ասում եմ, և մի ստիպիր որ սպասեմ։ Աֆող ազգիս լինի, պատասխանեց շահապը. դու կը ստանաս պահաւած ոճդ, բաց իմացիր—զա քեզ բազդ չի բերիլ. Ազդ առուգ զօրութիւնը միայն փորձանք կը բերէ քեզ, որովհետեւ չէ լարմարուում հասակիդ. և միայն երխասասարդ կարճին է վայելուչ, և

Որպէս տեսնում է ընթերցողը, պ. Վարդանեանցի գերմանական օրինակը, որի անունը հայ թարդմանիչը զուր կերպով աւելորդ է համարել տալ, շատ և շատ տարբերուում է Ֆիլդուսից, առանց որ դրանով ես կամենալի լանդիմանութիւն անել ում և իցէ. զա մի աղաս փախաղբութիւն է, որպէս ազդ նաև նկատած է զրբուկի սկզբում։ Որպէս ազգիսին, նա լաջողւած է և մի լաւ բաւելացումն է հակական թարգմանական գրադարանին, եթէ միայն, ի հարկէ, այն Ա. տառը, որ զրքի ճակատին է դրւած, իրօք ոկիզբն է նշանակում մի շարք հրատարաթիւնների Արևելեան վիալաշխարհից և ոչ միայն ձեր համար է դրւած։

Ա. Ա.

**ԱԳԱՊԵԱՆ ԱՐԵԱԿ.** — «ՄՈՒՍԻՆԻ ԳԱՆԳԱԾԲ», պատկեր գիւղական կեանքից. (արտասոված «Նոր-Դար» լրագրից). 32 երես, փոքր ութածալ, № 10 տառ. Թիֆ., 1890 թ., տպ. Յ. Մարտիրոս. Գինն է 7 կոպ.։

Մի շատ որտաշարժ դրամա է այս պատահում է մեր հայ գիւղերում, փոքրիկ պատմութիւնը, մի դրամա, թէն մենք նորա մասին ոչ մի տեսք գուցէ ամեն տեղ, ամեն անդամ դեկութիւն չ'ունինք։ Հեղինակը իւր

աշակերտութեան ժամանակ, ամսուը, երբ նա վերադարձել է իրանց գիւղը, Ղաղախի կողմերում՝ մի օր պատահմաք տեսնել է ազդ գիւղական կեանքի իրական, կենդանի, ոչ թէ մտացածին գրամման և խոր զգացւած գրել է ազդ սալսափելիք անցըը: Պատմութիւնը այս է:—Մի խեղճ, աղքատ և աշխատասէր գիւղացի՝ Մուսին անունով, մի օր իւր միակ աղջին պահպանելիս, նկատել է, որ իրանց համագլուղացի հարուստ բաղերանց Եփրեմը՝ թշնամաբար մտել է նորա ազդին և քաղում, փչացնում է խարդուի վազերը: Ազդ Եփրեմը ուրիշ անդամ էլ շատ է արած արգալիսի չարագործութիւններ Մուսինին վեստելու նկատակով, բայց Մուսինը այդ չի նկատել: Այս անդամ վերջապէս խեղճ Մուսինի համբերութիւնը հատնում է և նա, կամենալով պատմել չարագործին, իւր ձեռի եղանով խփում է Եփրեմի զլիսին և այդպէս արնուա երեսով բերում է նորան գիւղ, Գիւղացիք միաբերան դատապարտում են ոչ թէ չարագործ Եփրեմին, այլ խեղճ Մուսինին, որ համբածակ ւել է փառով խփել հարուստի տղայ գող Եփրեմին: Հեղինակը, որ տեսնել է ազդ, խորհուրդ է տեսլ Մուսինին գանգատելու. բայց կաշառակեր գրեօխլան» նոնպէս պաշտպանում է գողին և սաստիկ անխիղճ վճիռ է տալիս Մուսինի համար: Ազդ վճռի համաձան, Մուսինի մի հատիկ «աշխաւը» խլում են նրանից և հրապարակաւ նրան թակում են բարբարս, անխիղճ եղանակով... Ազդ հրապարական պատժի նկարագրութիւնը կարդալիս, մարդ փշաքաղւում է ամ-

բողջ մարմնով... Նւ, որ ամենից վրդովեցուցիչն է, համագիւղացիք սառնութեամբ նայում են թշւառ Մուսինի տանջանքների վերակ և զեռ կարողանում են ծիծաղել՝ թէ ինչպէս իւրաքանչիւր հարուստից՝ ուղերով ցատկում, թուչկոտում էր Մուսինը... Ազդ բարբարոսութիւնը նոնպէս տնեսել է հեղինակը և աղջիւ զալուովթից զրդւած՝ ուղեցնել է սպանել քեօխպին, բայց չեն թողել: Հեղինակը մի խիստ բողոք է գրում և տալիս է Մուսինին, որ ներկաւացնէ քաղաքի զատաւորին: Բայց ոչ մի հետեանքի չի հասնում: Խեղճ Մուսինը աչառից զրկելով՝ բոլորավին քանդում է, թողնում է գիւղը, թողնում է իւր ջանել կնոջը, որդոցը և զալիս է Թիֆլիսի փող աշխատելու... Սակայն ալսուել էլ բաղզը նրան հալածում է. մի անբարողական կին, որի մօտ Մուսին ծառալութեան է մտնում, թշնամացած նորա հետ, թունաւորում և սպանում է նորան: Ահա թէ որաեղ հասցրեց Մուսինին իւր գանգատը—վերջացնելով աւելացնում է իւր կողմից լարգոյ հեղինակը:

Այս փոքրիկ պատմութեան մէջ՝ ամենից առաջ աչքի է ընկնում այն երեսովը, որ գիւղացիք, այդ «անմեղ և անարատ գիւղացիք», նոնպէս վարակուում են փողի, հարստութեան, «կուպօնի»—ինչպէս ասում է Գ. Ռւայնսիի—ազդեցութեամբ և մուանում են իրանց խիղճը, իրանց մարդկալին ազնիւ զգացմունքները: Խեղճ Մուսին, որովհետև աղքատ էր, անտէր, անօդնական էր, ուրիմն և նա՝ «մեղաւոր էր», նա իրաւոնը չունէր բողոքելու հարուստի դէմ, նա

չը պէտք է նկատէր հարուստի մեղդքերը և չարագործութիւնները. հակառակ դէպքում, այդ է նորա վախճանը, ինչ որ պատահեց: — Ահա դիւզական կեանքի նոր լօգիկան, որ առաջացել է փողի, կուպօնի շնորհիւ և որը ամենին չի զանազանում մեր, քաղաքի լօգիկաչից... Ազդպէս խօ մտածում են և մերոնք, մեր քաղաքի կուլտուրական հարուստները, աղդպէս մտածում են նոքա, որոնց մօտ ոչինչ է գիւղացին, իւր բոլոր կենսական ֆիլոսօֆակութիւններով հանդերձ: Գիւղացու մասին մենք բոլորովին ուրիշ կարծիք ունեինք առաջ:

Երկրագործական աղջիւ ու անխարդախ պարապմունքը իւր աղջըւութեան կնիքը դրել է դիւզացու վերաց և աղդպիսով՝ շատ վաղ ժամանակներից նա բարնի է իւր անմեղ, պարզ, առաքինի բնաւորութիւնով: Խակ աչժմ, մեր շահագիտական դարում, երբ փողի հաշիւը դառել է մարդոց կեանքի բարձրագուն կուլտը, երբ հայ վաճառականը՝ իւր ճարպիկութեան և փողասիրութեան ընդունակութիւններով՝ խօսելու առարկաէ է դառել, շատ հաւանական է, որ դիւզացին ել վարակի այդ ախտից, այդ անբարուսական ընդհանուր հիւանդութիւնից:

Սական պէտք է ասել՝ որ պ.

Ազապեանի նկարագրած դիւզացիք մի որոշ տեղի—Ղաղախի դիւզացիք նն, որոնք գուցչ առանձին հանգամանքներով՝ աւելի մօտ են առետրական մարդոց հետ, քան թէ այն դիւզացիք, որոնք մշտապէս երկրագործութիւնով են պարապում և շատ առանձնացած են իրանց հեռաւոր տեղիրում... Ազս վերջին դէպքում, դիւզացիք անշաւշտ աւելի մաքուր կը լինին և հարստութեան, փողի տեսակէտը ացնքան մեծ ոչք չի ունենալ նրանց աչքում:

Պ. Ազապեանի դրած պատմութիւնը, առհասարակ, այն առաւելութիւնը ունի, որ ինքը հեղինակը պատմութեան մէջ մասնակցում է և սաստիկ ջերմ պաշտպան է հանդիսանում խեղճերի, թշւառների... Ազս յատկութիւնը շատ գնահատելի է այն պատճառով, որ ընթերցողը աւելի պարզ, աւելի կենդանի է երեակալում ամեն բան և ընթերցումից ստացած տպաւորութիւնն էլ՝ շատ խոր և ուժեղ է լինում: Ախտու, որ հեղինակի լիզուն մշակւած, կանոնաւոր չէ, ալ մի խառնուրդ է համարեա դիւզական բարբառի և դրականական ոճի: Շատ ցանկալի է, որ պ. Ազապեանը լուրջուշագրութիւն դարձնէր այդ հանգամանքի վերակ:

Ե. Դ.

## ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐԱՅԻ

1. ՇԱՀՈՒՆԵԱՆՑ ՎԱՀԱՆ Քահանակ.—ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԹԵՈՍԻ  
ԱԿԵՏԱՐԱՆԻ Ի ՊԵՏԱ ԴԱՍԱԽԾՈՒԹԵԱՆ ԿՐՈՆԻ. Շուշի, տպար. Հայոց  
Հոգեոր Տեսչութեան. 1890 թ., զինն է 1. բ. 30 կողեկ:

2. EFFERTZ, OTTO.—DIE KOSTEN DES HEERES, Wien,  
Druck von Kreisel und Gröger. 1889. (Եֆֆերց, Օտո.)—Զօրքի վերած  
արւած միխոսը. Վիեննա, տպ. Կրեչել և Գրեօդեր, 1889 թ.):

3. ՅՈՎՆԱՆԵԱՆՑ. ՀԱՅՐ ԴԵՒԹՆԴ ի Միսիթարեան ուխտէն.—ԾԱՂԻԿ  
ՍՈՒՐԲ ԳՐՈՅ. ԸՆԹԵՐԳԵԱԾՔ Քաղեալ ՔԱՍՏՈՎԱԾԱՀՈՆՀ գրոց ի պէտս զըպ-  
րոցաց. Գ. տպագրութէւն. Ի Վիեննա, ի տպար. Միսիթ. 1889 թ.:

4. ԱԻԵՏԵԱՆՑ ԳՐԻԳՈՐ. —ՄՈՐԴ-ԳԱՅԼ. Մօսկւա, ձուլարան և տպա-  
րան Օ. Հերբէկ. 1890 թ.: Գիճն է 10 կոպ.:

5. ԱԳԱՊԵԱՆՑ Ա.—ՄՈՒՍԻՆԻ ԳԱՆԳԱՏԸ. Հրատարակութիւն Ղոն-  
դաղսաղի. (Արտաստանած «Եոր-Գառ» լրագրից). Թիֆլիս, տպարան Մարտի-  
րոսեանցի. 1890 թ.: Գիճն է 7 կոպէկ:

# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍԻԱՅ ՔՐՕՆԻԿ

Մեզանում իոկական թատրոնը—սիրողների ներկալացումներն են։ Ես այդ միտքը չակտնեցի նաև անցեալ տարի Ներկալացումներն են։ Այդ միտքը է շատ ցաւել մշտական բեմի բացավարութեան համար, եթէ միայն յիշ հասարակութեան մէջ նոքա, որոնց բնածին տաղանդը բեմական կոչման իրաւունք է տալիս, միշտ պատրաստ լինին խմբւել մի ներկագացման համար, երբ վերջինս ամենքից սպասում է, երբ նոքա կարող են համոզած լինել, որ հասարակութիւնը առանց ազլ և ավութեան կը դա թատրոնում իւր տեղը գրաւելու։ Բայց մի ավտափիսի լաւ խմբի գործութիւնը միանդամանքն կարեոր է նոր երեացող պիեսներ փորձելու համար։ Ան, նոյն այն սիրողների խումբը, որը անցեալ տարի ներկալացրեց «Դարրնոցապետ»-ը Փօրժ Օհնելի և որը անքան հաւանութիւն ստացաւ, նոյն այդ խումբը, ուժեղացրած մի նոր կարեոր ոլժով, ներկալացրեց ալ. Սունդուկեանցի վազուց սպասուած «Ամուսիններ» նոր պիեսը։

Բայց ահա զանազանութիւնը. եթէ անցեալ տարւակ ներկալացման առիթով հասարակութեան ուշքը գրեթէ ամբողջապէս կլանւած էր ներկալացմովների խաղով, այս տարի նոյն այն հասարակութիւնը ամբողջապէս նւիրուած էր պ. Սունդուկեանցի պիեսին, «Ամուսիններին»։ Ներկալացնողները—կին թէ մարդ—այս անդամ երկրորդ պլանի վերակ էին, չը նաւած որ նոքա անքան չաջողակ կատարեցին իրանց գերերը, որ, նոյն խոկանցեալ տարւակ խաղից չետու, գժւար էր սպասել Ներկալացնող կողմից մանաւանդ իրանց վերակ ուշք զարձրին օրիորդ Նաղարբէկեան, որը, ինչպէս անցեալ տարի, նոյնպէս և այս անդամ կնոջ գերերից կարեորագոյնն էր կատարում, և ալ. Քալանթարեան, նոր բեմ դուրս եկող երիտասարդ, որը իւր խաղով զրականապէս գերազանցեց ամեն սպասելիք։ Ներկալացնողներից միւսները՝ ալ. Աւժմանցիւեան, ալ. Խոսրովիւեան և ազն, որպէս նաև պարոններից Մամիկոնեանը, Մանդինեանը, Տիգրանեանը իրանց լատկաց.

բած դերերը կատարեցին առնւազն ալնպէս, ինչպէս ալդ պահանջւում էր ալիսի հեղինակից:

Այս հաճգամանքը ևս լիշտակում ևմ ոչ կոմպլիմենտներ անելու համար. Բանն այն է, որ դերակատարութեան լաւութիւնը միանգամացն անհրաժեշտ էր, որպէս զի հասարակութիւնը առանց խանգարւելու կարողանար իւր ուշադրութիւնը լարւած պահել զէպի պիեսը, կարողանար հետեւ պիեսի գործողութիւններին, դուրս բերած տիպերին: Շատ և շատ էր խօսացւել «Ամուսինների» մասին, որպէս զի կարելի լինէր հետաքրքրութիւնը բաժանել պիեսի և խաղացողների մէջ:

Բայց կատ հետաքրքրութիւն էլ՝ հետաքրքրութիւն էլ: Մի նոր պիես, մանաւանդ գրած մի անուն ունեցող հեղինակից, միշտ անհամբերութեամբ է սպասում հասարակութիւնից: Բայց այս անդամ հետաքրքրութիւնը լոկ դրական չէր: «Ամուսինների» մասին լաւած էր, որ ալդ պիեսում շօշափում է «ամուսնական խնդիրը», «ապահարզանի» խնդիրը:

Դիւթական խօսքեր: Մեր հասարակութիւնը, որը ալնքան անդգայ է դէպի շատ ու շատ խնդիրներ, հաղար ու մէկ կենսական երևովներ, դէպի հրապարակախօս ձախը, իրան զարմանալի զգալուն է ցոլց տալիս, երբ խօսքը մէկ՝ եկեղեցու ու կրօնի մասին է, մէկ էլ՝ ամուսնների մասին: Ինձ հարկաւոր է ազդ հանգամանքը լիշել զա կապ ունի այն տրամադրութեան հետ, որ ունէր հասարակութիւնը «Ամուսինների» ներկայացումից առաջ, ներկայացման ժամանակ և ներկայացումից հետոյ: «Ամուսինների» ներկայացումը բարձրացրեց մեծ փոթորիկ ինտելիլեկտնա շրջաններում. և դորա պատճառը անկարելի է հասկանալ առանց խմանալու մի բան, որ հետեւնալն է: Եօթանասնական թւականների վերջում, այն ժամանակադար աղատամիա կոչւած կուսակցութեան օրդան «Մշակ» լրագիրը լարուցեց «ապահարզանի» խնդիրը: Ապահարզան նշանակում է մարդ ու կնոջ իրարից օրինապէս բաժանելը, որով թէ մէկը և թէ միւսը իրաւունք ևն ձևուը բերում կրկին ամուսնանալ ում հետ և կամենան, ալսինքն ալնպէս, ինչպէս ամուրիները:

Խնդիրը, պէտք է ասած, լաւ չը դրւեց այն ժամանակ ամեն խընդիրներ «ողնող» Գր. Արծրունուց, Մի խնդիր, որը կենսական ամենանշանաւոր խնդիրներից մէկն է, մի խնդիր, որը միշտ առաջաւոր մարդկանց խորհրածութեան առարկաններից մէկն է կաղմել, մի խնդիր, որի վերակ վերանորոգիչներ, ֆիլոսոփաներ և պետական մարդիկ դուռի ևն կոտրել, մի խնդիր, վերջապէս, որը ունի մի ահազին գրականութիւն—խնդիրների մէջ ալդ, համարձակում ևմ ասել, ոչ միայն փափուկը, ալ և աղնւադոչը՝ չուզւեց մի մարդուց, որը իրան չը պէտք է ընդունակ ցոլց տար խնդրին այն լրջութիւնը և աղնւութիւնը չնորհելու, որոնց նա արժանի է: Ես չը գիտեմ, որ, եթէ խնդիրը աւելի լաւ կերպով դրւէր, ապահարզանի մէտքը չըր ունենալ արդեօք նոնքան կատաղի: հակառակորդ-

ներ, որքան ալդ եղաւ այն ժամանակ։ Դա՛ ապադավի հարց է, բայց այս բողէին բաւական է իմանալ միայն այն, որ հասարակութիւնը երկուսի բաժանելուց մէկը այն էր, որ ապահարզան էր պահանջում, միւսը այն, որ դբան միանգամայն հակառակ էր։ Ի՞նչ են հասկանում ապահարզան ասելով և կամ ինչպէս պէտք է փոխւի ամուսնական օրէնսդրութիւնը—այդ մասին խօսք չը կար. կար միան մի բողոք, դարձրած ամուսնական կաշկանդումների դէմ առհասարակ, իսկ միւս կողմից կար նոչքան անորոշ բողոք ալդ տեսակ ազատական պահանջների դէմ, ևս հետաքրքրուել եմ իմանալ մի բան՝ թէ որքան և ինչպէս են հասկանում մէկը և միւսը իրանց հայեցակէտները, Պատահում էր ինձ լինել այդ զանազան շըրջանների մէջ և մեծ մասամբ ես զարմացմամբ նկատել եմ, որ ապահարզան պահանջողները ազատ սէր են պահանջում։ Ազատ սէր ասելով առհասարակ հասկանում են այս.—Եզրի մէկի հետ քանի որ նորան սիրում ես. իսկ երբ մի ուրիշին սիրեցիր՝ գնա նորա մօտ. երրորդին սիրեցիր՝ կապէիր նորա հետ, թողնելով նորան, ում հետ կապւել էիր առաջ, մի խօսքով՝ ազատ սէրի քարոզիչները հիմնում են ամուսնական միասնակիցութիւնը սէրի դոջութեան վերաէ. և որովհետն հասարակութիւնը չի գնում ու հարցնում կնոջ և տղամարդին թէ նոքա սիրով են թէ ոչ, ալդ պատճառով երբ մի կին թողնում է իւր մարդուն՝ ուրիշի մօտ ապրելու, իսկ մի տղամարդ զուրս է անում իւր կնոջ՝ մի ուրիշի հետ ապրելու համար—ազատ սէրի վերաէ հիմնուած մի օրէնսդրութեան օրերում—ալդ երևովթը կը մնար անքննին և, որպէս ազգային, նա կը լինէր արդարացրւած, մի և նուն է, թէ ինչն է եղել բաժանման բուն պատճառը։

Ահա, ալդ է ազատ սէրի զօքորդնը, վարդապետութիւնը։ Ալդ, կարծեմ, միակ բանն է, որի համար մարդիկ խորհուրդ են հարցըմ անաստներից, և սոքա էլ առաջարկել են իրանց ամուսնական սահմանադրութիւնը, որը սակայն ընդունել են անհատներ, բայց գեռ ևս ոչ մի հասարակութիւն և պիտութիւն աշխարհին երևին։

Երբ ապահարզանի հակառակորդներին ես բան հարցնում, նոքա ուղղակի և առանց այլ և ալլութեան ժխտում են որ և է անհրաժեշտութիւն՝ ամուսների իրարից բաժաննելու գործը օրէնսդրական կերպով հեշտացնելու. Երբ դուք փորձում էք նորան հասկացնելու, որ ախար անմեղ զոհներ են լինում այլ կարդ ու կանոնի լիշտանութեան ժամանակ, նոքա ձեղ պատասխանում են, թէ բաժաննելը հեշտացնելով՝ տնաքանդութեան դուռը լայն բայած կը լինինք և թէ ժողովուրդի մեծամասնութիւնը ալդ փոփոխութեան կարիքը չի զգում և որ հակառակ մոտածողները բայցառութիւններ են, իբր թէ ապահարզանի օրէնքը մատուցնելով՝ հակական ընտանիքի հիմքը խախտւած կը լինի և որ ալդ ինդիրը օտարամուտ է, հայերին չի սապում և ալճ և ալճ։

Ալաքանը, ինչ վերաբերում է պատմութեան։ Ես ալս բոլորը լսելով,

Եկալ միայն այն եղրակացութեան, որ ամուսնական և մասնաւրապէս ապահարզանի խնդիրը միայն լուղւած է մնջանում, բայց որ նա դեռ ևս չի դրած ու չի քննւած.

Ապահարզանը ընդունում է նաև մեր եկեղեցական օրէնքը։ Սկըզբունքի մասին ուրիմն վէճ չի կարող լինել։ Խնդիրը կարող է լինել միայն այն, թէ, ներկալ հանդամանքներում, որքան է պահանջում որ օրէնքը թող տապ բաժանելը և կրկին ամուսնանալը նաև այնպիսի դէպքերում, որոնք այժմեան օրէնքով բաւարար չեն համարում վիակատար ապահարզանի համար։ Այս ասում եմ՝ աշխատան հանգամանքներում, որովհետեւ ապահարզանի հեշտացրած օրէնքները ծնունդ են ոչ թէ աղջապին առանձնալատկութիւնների, այլ սօցիալական քաղաքական հանգամանքների։ Բոլորովին դորա հակառակը ես կը պնդեմ, որ ամուսնութիւնը, հաչեացքները ամուսնութեան խորհուրդի վերադ ոչ այնքան սօցիալական հանգամանքների ծնունդ են, որքան աղդակին առանձնալատկութիւնների։ Այս աղմտել պատշաճ չեմ համարում այդ մասին երկարաբանել. բայց ես խոստանում եմ «Մուրճ»-ի ընթերցողներին մի այլ անդամ դէսքից օգտել այդ վերին աստիճանի հետաքրքրական առարկակի մասին ընդարձակօրէն խօսել։ Առ այժմ ուրեմն ես բաւականանում եմ միմիալն պնդելով՝ առանց երկար ու բարակ բացատրութիւնների։ Կ'աւելացնեմ միայն, որ հէնց նոյն իսկ այն պատճառով, որ ամուսնութեան կամ նաև ընտանիքի մասին ունեցած հափացքները աղջապին առանձնալատկութիւններից շատ մեծ կախումն ունին, հէնց այդ պատճառով էլ հեշտացրած ապահարզանի օրէնքներից օգուտ քաղելը մի երկրում այլ է, միւս երկրում այլ խոկ լինչ վերաբերում է մեզ՝ հակերիս, ես ոչինչ վախ չեմ կրում, եթէ ապահարզանի օրէնքը աւելի մեղմանաչ։ Ոչ, ես չեմ հաւատում թէ դորանով՝ հակավան ընտանիքի հիմքը կը քանդուի։ Ով այդ պնդում է, նա ամեննեին չի ճանաչում ոչ հայ մարդուն, ոչ հայ կնոջ, ոչ հայ ընտանեկան ոգին։ Այդ ոգին անպէս է, որ նա աւելի մոյ պէտք է տրամադրէ դէպի աւելի աղատ մտածողութիւն, քան դէպի մոռավախութիւն։ Բայց չարաչար սխալում են նոքա, որոնք ամուսնական խնդրի մէջ լոկ ապահարզանի խնդիր են տեսնում և երեակալում, թէ ապահարզանի ամենաաղատական օրէնքներով կարելի է նաև աղատ ընտանիք՝ բուն սիրոց վերաց հիմնաւծ ամուսնական կապեր ստեղծել։ Ոչ, ապահարզանը շատ և անսահման աւելի փոքր խնդիր է, քան ամուսնութեան խնդիրը։ Խ'նչպէս. — այդ մասին պ. Սունդուկեանցի «Ամուսինները» թերևս մի բան կ'առեն։

«Ամուսինները», այդ մէկ Արկադի Սամսոնեանն է, մէկ էլ նորա կին Մարդարիսը։ Արկադի (և այդ անունը ուսերէնում գործ են ածում հակական Առաքել, Արշակ և ուրիշ անունների տեղ), Արկադին, ասումեմ, բարձր պաշ-

տօնեաց է, մեծ աղդեցութեան տէր մարդ, ունի շատ ստորադրեալներ, որոնցից ամենամօան է Աբէլ Մաստակեանը, իւր մեծաւորի ամենահաւատարիմ և նորա համար ամեն բան չանձն առնազ ստորադրեալը, մանաւանդ օգտակար իւր տիրոջ օղտին կաշառքների գործեր զբաժելու համար: Եւ անբարուական է այդ Արկադին, վերին աստիճանի անբարուական՝ թէ իւր գործակարութեան պաշտօնում և թէ իբր մարդ և ամուսին: Իբր պաշտօնեաց՝ նա կաշառակեր է, իբր մարդ՝ ոչ ոքից չը քաշւող, խաբեբակ, իւր ամենահաւատարիմ մարդկանց հաւատարմութիւնը ի չարն գործ գնող, խկ իբր ամուսին՝ նա կատարեալ ցինիկ է, մի կատարեալ չուն-մարդ, վերին աստիճանի վաւաշոտ, ամուսնութիւնը հասկանում է նա միմիշան ձևի համար, ամուրի մարդու հասարակական գիրքից ազատւելու համար, այն էլ միան՝ եթէ կինը մեծ օժիտ ունի վերան: Մարգարիտը, որը արդէն 7—8 տարի է Արկադիի հետ ամուսնացած է, մի շատ փափուկ սրտի տէր կին է, ոնւած այն բոլոր զաղափարներով, ինչ մի անարատ և սիրող սիրու կարող է որոնել նորագոյն գրականութեան և համեստ ու իրանց գործին նկրւած մտաւոր մշակների հասարակութեան մէջ: Ա. Կադին մեծ արտիստ է իրան ձեացնելու արհեստի մէջ, ևս երեսականում ևմ, որ Արկադին՝ պատրաստելով պակւել՝ իրան ձեացնում է եղել իբր սիրելու ընդունակ, բայց և շատ խիստ բարուականութեան տէր և իւր պաշտօնական ասոլարիդին հետամուտ մի մարդ: ցատկութիւններ, որոնցից մէկը Մարգարիտին կարող էր գրաւել, միւսը՝ ծնողներին, եթէ միան Մարգարիտի ներկացով զատելու վինինը նորա անցեալի մասին: Բայց Մարգարիտը շատ շուտով տեսնում է, որ իւր մարդը ամեննեին այն չէ, ինչ պէտք էր սպասել. նա, իւր լարաբերութիւնների մէջ զէպի իւր կինը, վերին աստիճանի գորեհկութիւն է ցուց տալիս. նա իւր կնոջով չի զբաղւում, նրանով չի հետաքրքրւում ամեննեին, քէփեր ու ինջուքներ է սարգում պրոնիկալին դւարձութիւնների համար, և վերջապէս կասկածել է տալիս, որ նոյն խկ իւր տունը ծագտեալ կանաքը է ներս մտցնում: Մարգարիտը մի անգամ վերջապէս ականատես է լինում, թէ ինչպէս Արկադին, իւր մարդը, նորա սոորադրեալ Մաստակեանի կնոջ պայուսակից հանում է մի տոմսակ, բայց աչնպէս, որ կասկած չէր կարող լինել, թէ զա՝ մի սիրահարական նամակ է և կամ մի ժամադրութեան տոմսակ:

Եւ նոյն ալգ անբարուական, գէպի իւր կինը ցինիկապէս անհաւատարիմ Արկադին նախատում է իւր կնոջ, թէ ինչու սա զբօսնում է ժողովարանում և իւր տանը ընդունում է Արտաշէս Արամեանին, որը Մարգարիտին սիրել է զեռ. ևս պատանեկութիւնից, բայց, դժբաղջ զգալով իրան՝ լսելով Մարգարիտի մարդի գնալը, իրան նւիրում է զինւորական ծառալութեան և մասնակցում ուուս-տաճկական պատերազմին՝ ի զուր կերպով այնտեղ իւր մահը որոնելով: Արտաշէսի և Մարգարիտի արաբերութիւնները նկատում են ամենքից. և ստորադրեալ Մաստակեանը իւր պարտականու-

թիւնն է համարում տեղեկացնել իւր տիրոջ, սորա կնոջ ու Արտաշէսի մասին պտառղ ասէ. կոտէների մասին: Իսկ Արկադին, չը սիրելով և ոչ էլ չարգելով իւր կնոջ, միշտ կեղծել է ուրիշների մօտ, իբր նորա և կնոջ միջի լարաբերութիւնները շատ քնքով են և սիրապին: Այժմ, տեսնելով որ հասարակութիւնը ուշք է զարձրել Մարդարտի և Արտաշէսի մտերմական լարաբերութիւնների վերաս, զայտանում է և Արտաշէսին, Մարդարտի մօտ հիւր եղած ժամանակ, հեռացնում է և պատիրում է ծառաներին՝ այդ պարունին այլ ևս չընդունել: Մարդարտիսը, այդ դէպքից լեա, զայտանում է Արկադին, որ այլ ևս սորա կինը չէ և հեռանում է Արկադիի տնից, տեղափոխելով մի մասնաւոր տան մէջ: Այդ սցինաների միջոցին Մարդարտի մօտ հիւրասիրում է Թիֆլս մի քանի օրով եկած դաւառական վարժուհի Հեղինէն, որի հետ ծանօթանում է ուսում առած մի գիւղատնաես, Շիրակեան, որը ժամանակ առ ժամանակ գալիս է եղել Թիֆլս և որի միակ հոգեկան բաւականութիւնը լինում էր Մարդարտի հասարակութեան մէջ լինելը: Ծանօթանալով Հեղինէի հետ, նա սիրահարուում է և լետոյ, Մարդարտի բաժանած ժամանակ, սորա մօտ մի անգամ չալտնում է իւր սէրը Հեղինէին, որը վերջինս ընդունում է: Այդ միջոցին վերաց է հասնում ինչ որ հետազօտութիւնների համար գաւառները գնացած սպակ Արտաշէսը, որը, նորանշանւածների գնալուց լետոյ, մարդուց արդէն հեռացած Մարդարտին չալտնում է իւր սէրը և առաջարկում է իւր հետ միասին ապրել: Մարդարտիսը, սակայն, չարգելով հասարակաց կարծիքը, իւր համաձայնութեան պահմանը այն է դնում, որ նախ ապահարզանի թուղթը ստացվի: Եւ Արտաշէսը գուրս է դնում զոչելով, թէ կը վերադառնայ բաժանման թուղթը ձեռքին, որ անպատճառ այդ թուղթը նա ձեռք կը բերէ:

Ահա «Ամուսինների» կատարւող գործողութեան թելը: Բայց նշանաւոր տեղ է բռնում պիեսի, մանաւանդ երրորդ գործողութեան մէջ, Արկադիի շւաբտութեան տեսարանները, և այն, թէ ինչպէս Արկադին ուզում է համոզել մի հարուստ ալյրի կնոջ՝ Վարդուհի Վարդառեանին, թէ ինչպէս գժւած սիրում է սորան և առաջարկում է իւր հետ ապրել այժմ, երբ Մարդարտից բաժանած է, որ լետոյ պատակւի հետը: Վարդուհին հասկացնում է Արկադին, որ սա կարող է պատակւել միայն այն ժամանակ, երբ ապահարզան ստացած լինի և որ մինչ այդ օրը նա չի համաձայնվի նորա առաջարկութեանը: Արկադիի շաբատութեան տեսարաններից մէկն է նաև Արկադիի վրը առաջարկութիւնը վարժուհի Հեղինէին, երբ վերջինս հիւր էր Արկադիի տանը Մարդարտի չը բաժանած ժամանակ:

Ահա, մի ալսպիսի պիեսի հանդիսատես էր հասարակութիւնը լունարի 25-ին: Իսկ հասարակութեան սպասելիքները խօմ ևս պատմել եմ

արդէն։ Դէ, ես պէտք է նախ արձանադրեմ ալս վաստը, որ առանց բացառութեան, ամինքը, իւրաքանչիւր գործողութիւնից չետու, շարած իրար հարցնում էին, թէ այս ինչ բան է, որ զրել է պ. Սահնդուկեանցը, նա, որից սովոր էին տեսնել կեանքի բէալական պատկերներ, բէալական թէ ներկաչացրած տիպերով և թէ խօսակցութիւնով, ոճերով Գրեթէ ոչ մի գործող անձ չի վերցրած կեանքից աչնպէս, որ հասարակութիւնը կարողանաւ ալդ անձերին ճանաչել։ Ա՛վ է ալդ բարձրաստիճանը՝ ոտից մինչ զլուկ փշացած, շաւտութիւնների և զեղխութեան մէջ խարխափող Արկադի Սամսոնիան. ալդ ով է Մարգարիտը, հարուստ ընտանիքից և ալժմ մի բարձրաստիճան մարդու կինը, որի համար ոչինչ են, ոչինչ՝ նորա բարձր հասարակական դիրքը, հարստութիւնը և որը, շըրջապատած զրեթէ ամեն նիւթական բարիքներով, ապրում է գեղարւեստի և գրականութեան իդէալական աշխարհում և որին տարիները չեն կարողանում ընկճել. և ով է արգեօք այն սպան, համալսարանը աւարտելուց իւսուք, միմիանց լուսահատ սիրուց դէպի մի պատանեկական ընկերունին, ոչ թէ մէկ, ալլ երկու բարձր զինուրական ուսումնարաններ աւարտողը, մահ գտնելու համար պատերազմի դաշտը գնացողը, մնամեն սիրազործութիւններ գործողը, լոկ սիրու կրակովը վառւած դէպի արդէն մարդու գնացած մի կնիկ, որի գժբաղդութեան մասին նա տարիներ շարունակ ոչինչ չը գիտէր։ Եւ այն էլ մի սպան, որը Արկադիի բոլոր վիրաւորին խօսքերին ուրիշ ոչինչ չը զիտէ պատասխանել, քան՝ «աղարծն, պարոն... խնդրեմ, պարոն» և դորա նման մկրտումներ։ Եւ գետ ինչպիսի վիպասան է այդ սպան։ Մարգարիտը նորա վէպերը կարդալով չի կշտանում։ Եւ ալդ վէպերը գրած է մի սպան, որը 8 տարում երեք բարձրագոյն ուսումնարաններ է աւարտում, ասմինքն, այն է անում, ինչ ամենալողացնակին մէկը հազիւ 10—12 տարում կարող էր անել։ Իսկ ով է այդ ուսումնաւարտած զիւղատնտեսը, որ Փիֆլիսի շրջակակրում ֆերմերութիւնով է պարապած և որի երջանկութեան համար միմիանց մի կին է պակասում։

Երբ ես ասում եմ, ով է սա, ով է այն միւսը, ես դորանով ուզում եմ ասել՝ ցոյց տւեք այն շը ջանը, որի տիպն է մէկը, միւսը, երրորդը։ Ի զուր ներկապացման ներկաւ եղողները նացում էին մէկը միւսի երեսին՝ պատասխան գտնելու համար—և պատասխան ոչ ոք չէր գտնում։

Միակ գործող անձը, որի տիպարը կարելի է կեանքից վերցրած համարել, դա՝ վարժուհի Հեղինէն է։ Այս, արդարե, Հեղինէն հայ վարժուհի է։ նորա բերանը դրած խօսքերը—կարող է զրեթէ ամեն մի հայ վարժուհի կրկնել։ Բայց բոլոր նացած գործող անձերը՝ Փիկցիաներ են, պալմանական կամ ենթադրական անձնաւորութիւններ են։

Բայց ինչին էին հարկաւոր դրամատուրգին պալմանական անձնաւորութիւններ։ Նորա համար, կ'ասեմ ես, որ պ. Սունդուկեանցին աւելի հետաքրքրել է մի պրօբլեմ, քան կեանքի նկարագիրը։ Եւ ալդ պրօբ-

լեմը՝ բաժանման խնդիրն է։ Արկադին մեր հասարակութեան ոչ մի շըր-ջանը ներկայացնող տիպար չէ։ բայց նա անբարուսական է վերին աստիճա-նի։ Կան արգեօք անբարուսական ամուսիններ,—ահա խնդիրը։ Աչք, մինչև անգամ ծալրաւեղ անբարուսական ամուսիններ կան, որոնց կանակը ընդ-հակառակը շատ բարուսական են, կանակը, որոնք ամուսնու մէջ չեն զրտ-նում ոչինչ միմիթարութիւն, կանակը, որոնք կ'ուղէին սիրելի բայց դորա առարկան չեն կարողանում գտնել իրանց ամուսինների մէջ։ Պ. Սուն-դուկեանցի Մարգարիտը այնպէս ինչպէս բեմի վերաց նրան տեսնում ենք, ծնունդ չէ հայ հասարակութեան մէջ, զոքա այն կանակը են, որոնք իրանց ամու-սինների մէջ բարուսապէս բարձրանալու մենակէտներ չեն գտնում, այլ նո-ցա աղդեցութեան ներքոյ միմիայն կեղծւելու, ստորանալու, բարուսապէս ճնշելու մեքենաներ են տեսնում։

Ուրեմն, եթէ պ. Սունդուկեանցի պիհոսի մէջ չը կան իրական տի-պեր, կան գոնէ գրութիւններ, որոնք, եթէ ընդհանուր են, զորանով պա-կաս հաջկական չեն։ Եւ հետաքրքրականը այն է, թէ պ. Սունդուկեանցը ինչպէս է հասկանում այդպիսի գրութիւնների դէմն առնելու խնդիրը։ Եւ պէտք է ասած, որ հասարակութիւնը հէնց ազդ կէտի վերաց էր ուշադիր։ Եւ ահա այն կէտը, որի նկատմամբ քննադատութիւնը մտնում է իւր կատա-րեալ իրաւունքների մէջ։ Ընդհանուր կարծիքը, ճիշդն ասած, միանգամայն դատապարտեց «Ամուսիններ»-ի խմասուը։ Բայց ամենքը զատեցին ոչ մի և նոյն բանի պատճառով։ Եւ ահա ինչ հիմնենքներ են բերում։ Ինչո՞ւ բա-ժանեցին ամուսինները։ որովհետև մէկը հրէշ էր, միւսը հրեշտակ։ Արդ, եթէ պ. Սունդուկեանցը կամենում էր խնդիր վճռել, նա, նպաստակին հաս-նելու համար, պէտք է վերցնէր հանգամանքը ոչ ազդ աստիճանի պարզ ձեռով։ որովհետև բաժանուղները, մանաւանդ այն դէպքերում, որոնք հասա-րակաց ուշադրութիւնն են գրաւում՝ մէկ կողմից ոչ ազդ աստիճանի հրէշ-ներ են և ոչ ազդ աստիճանի հրեշտակներ։ Երկրորդ՝ վերցրէք մի այլ դէպք, երբ կնոջ մարդը մի պատական մարդ է, բայց երբ այդ նոյն կնոջ վետեից ընկած է մի ուրիշը, թէկուզ հէնց նոյն Արտաշէսը, որը ալսպէս կամ այնպէս կարողանում է թափանցել ազդ կնոջ սիրտը, աշխատում է կնոջ և մարդու մէջ եղած բարուսական կապերը քանդել, մարդուն զինա-ւորել իւր կնոջ դէմ, որը իւր ալատումը բաժանման մէջ կարող է տես-նել։ Եւ զիտէք, այդ Արտաշէսը կապւած է Մարգարի հետ ոչ թէ պա-տանեկական վիշողութիւններով, այլ իսկական ձգտումով նորա հետ կապ-ւել։ և նա ուզզակի լայտնում է զիւզատնես Շիրակեանին, որ ինքը ի-րան գժբաղդ է համարում, սիրելով մի կնոջ, որը ուրիշին է պատկանում։ Այդ Արտաշէսը ոչ մի փորձ չի փորձում Արկադիին ուղիղ ճանապարհի վերաց ընթաց։ և լինելու սու պատական մի մարդ, այնու ամենայնիւ նա կը լաձախէր Մարգարի մօս, լալտնի դիտաւորութիւնները իւր սրտումը պա-

հած: Ալսպիսի տպաւորութիւն է անում Արտաշեսը: Այս լանդիմանութիւնները, որ անում են «Ամուսիններին», ևս գոտում եմ իրաւացի, թէե «Ամուսինների» իմաստը ևս դորանում չեմ դանում: Բայց նախ ես կը կամենալի պատասխանել այն անձերին, որոնք պահանջում են «Ամուսինների» հեղինակից, որ սա բարզացնէր խնդիրը, գուրս բերելով բեմը ոչ թէ անդաւակ ամուսիններ, այլ զաւակների տէր ամուսիններ: Ըստ իս, այդ հանդամանքը թէե անկարեւոր չէ ինքն ըստ ինքնան, բայց նա խնդրին ուղղակի չի վերաբերում: Զաւակների ներկայութիւնը ազդում է ամուսնական էարարերութիւնների վերաբարակցուց նա չի խանդարում, որ մարդու կողմէ մէջ լինին Արկադիի և Մարգարտի արարերութիւնները: Զաւակների ներկայութիւնը կարող էր չը խանդարել Մարգարտին սիրել Արտաշէսին, իսկ Արկադիին՝ վարել մեղ արդէն չափսնի կեանքը: Մի՞թէ Օմուլեւուկու «Մագը և տագօմե» վէպի մէջ երեք թէ չորս զաւակների ներկայութիւնը խանդարեց Պրօզօրուահին՝ Սւեալուի հետ Զւլցերիս գնալ նոյն իսկ իւրեանների հետ միասին:

«Ամուսինների» իմաստը շատերը որոնում են նրանում, որ նա իբր թէ ցոց է տալիս մի դէպք, որտեղ ամուսինների բաժանւիլը բոլորովին բնական է և որի համար ամենքը կը վկանի, որ այդտեղ բաժանմունքը անհրաժեշտ էր, արդարացի էր, մանաւանդ մի դէպք, ուր կինն է թողնում մարդուն: Եւ իբր թէ պիեսի «քարոզականը» ուա է հասարակութիւն, մի մեղադրիք այն կնոջ, որը թողնում է իւր մարդուն՝ սորա անբարուկանութեան պատճառով:

Ես իսկապէս չը գիտեմ, ուզեցնել է արդեօք հեղինակը այդ բանը հասկացնել, ես կ'ասեմ միայն, որ, եթէ «Ամուսինների» իմաստը ալդ է, նորա զրած պիեսը անհետագրքրական է: Ինչու—Որովհետեւ նոյն իսկ համ հասարակութիւնը շատ համերող է դէպի այն կանակը, որոնք, Մարգարտի նման, իրանց անարատ պահելով, հեռացած են ապրում իրանց օրինաւոր՝ բայց անառակ ամուսիններից: Հասարակութիւնը խիստ է վերաբերում միմիան դէպի այն կանակը, որոնք, առանց ծանրակշիռ պատճառի, թողնում են իրանց ամուսիններին, մանաւանդ երբ նոքա ալդ կատարում են մէկ ուրիշ գիրիկը ընկնելու համար:

Պ. Սունդուկեանցը չէր զրիլ մի մեծ պիես՝ ալդ աստիճանի անհամ (banal) բարոզականով: Եւ իրօք, «Ամուսինների» մէջ կայ մի այլ բան, որը պէտք է զանե՛, բայց որը խուսափում է ընդհանրութեան ուշադրութիւնից: Դրածքի կենդրուակետը ախտել չէ, ուր նորան որոնում են: Ըստ իս, ապ. Սունդուկեանցի պիեսի մէջ կայ պատասխան մի հասարակական խնդրի: Նրանց, որոնք ամուսնութեան խնդիրը լուծած են համարում ապահարզանի թուլառութիւնը հեշտացնելով, Պ. Սունդուկեանցը, իւր «Ամուսիններով», պատասխանում է սխալուում էք,

պարոններու կարծելով, որ, եթէ ամուսինների օրինական կերպով բաժանելը հեշտանակ, զորանով իբր բարօրութիւն մտած կը լինի ընտանիքների մէջ, որովհետև, եթէ ապահարզանի մեղմ օրէնքներով կարող է օգտվել Մարդարիտը, նոյն հեշտութիւններից կ'օգտվ: Եմի Արկադի՛ մէկին (Մարդարտին) գժբաղդացնելու համար: Ուրեմն, ուզում է ասել հեղինակը, եթէ բաժանելու հեշտութիւնը կարող է տանել Մարդարտին զէպի երջանկութիւնը, միւս կողմից նոյն օրէնքը Վարդուհուն կը գցի: Արկադի՛ ձեռքը: Հասարակութեան առջև ցոց է տրւում, թէ ինչպէս ապահարզանը պահանջում է և՛ մի պատական կին և՛ մի փչացած մարդ: Եւ եթէ ազդ զիւլեմից կատ մի եղբակացութիւն անելու, այդ աէն է, որ ապահարզանը անպահման կերպով դեռ ևս չի տանում դէպի փոխադարձ սիրոց վերաէ հիմնւած կրկնամուսնութիւն: Ուրքան ուրախ կը լինի հասարակութիւնը, եթէ Մարդարիտը կարողանար մի լաւ մարդու հետ ապրել, նոյն քան կը ալիրէր հասարակութիւնը, եթէ Արկադիին հեշտ միջոց տրւէր մի երկրորդ կնոյշ անբաղդացնելու:

Ահա, ըստ իս, «Ամուսինների» խմաստը: «Ամուսիններով» պ. Սունդուկեանցը ասում է թէ՝ զուր եք ամուսնութեան խնդիրը վերածում ապահարզանի խնդրի:

## ԳԵՒԱԹԵԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ՄԵՐ ԿԵԱՆՔԻՑ

III.

Ծանօթացանք մեր վերանորոգւող ընտանիքի մի քանի գծերի հետ. տեսանք որ նա աւազի վերաց հաստատած շինութիւն է: Կը դանւին մարդիկ, որոնք դժգո՞ն կը լինին այդ հարեանցի ծանօթութիւնից: Անբաւականութիւնն ինքն ըստ ինքեան հասկանալի է, ինչպէս կարելի է վատ անուանել այն, ինչ որ գեղեցիկ, ցանկալի է ամբողջ աշխարհի համար. ուրիմն վատարանում են լուսաւորութիւնը, քաղաքակրթութիւնը, վերանորոգութիւնը, իսկ սրանք անպիսի գեղեցիկ, պաշտելի բառեր են... կան մարդիկ, որոնք գմւում են այդ գեղեցիկ բառերի վերաց, հողով ու մարմնով գերի ու ստրուկ են դառնում այդ բառերին. մինչև անդամ լանցանքներ են գործում նրանց պատճառով, գործում են և իրանց խիզճը հանգստացնում են նրանով, որ լանցանք գործել են լանուն և ի փառս լուսաւորութեան, քաղաքակրթութեան: Ինչ որ ուզում է թող լինի, միայն թէ մէջ տեղ լուսաւորութիւն, քաղաքակրթութիւն, լառաջադիմութիւն բառերը գործ ածւին: Դնենք թէ կեանքի մի որ և լից կողմը այսանդակութիւն կարելի է անուանել, բայց միթէ հէնց այդ պատճառով պէտք է չմտադիմնել, զզել լրսկից, փակից, չորհքից: Ացգպէս դառնում են, ացգպէս համոզւում և ականջ խցած, ոչ մի սուարկութեամ, ոչ մի բողոքի ուշադրութիւն չը զնելով, առաջ են վագրում: Անընկճելի ոց է առաջ վագելու ովքը: Կարելի է երեսի վերաց թողնել ծերացած հալը ու մակը, եթէ սրանք մի քիչ խանդարում են առաջ զնալիս. կարելի է երեխաներ քաղցած թողնել, կինը վերջին թշւառութեան հասցնել, եթէ սրանք ծանրանում են առաջ վագողի ուսերի վերաց, հարկադրում են երբեմն կանգ առնել, իրանց համար մտածել տալ: Ժամանակն այս է պահանջում, համոզմունքը, հասկացողութիւնը անդադար կարդում են ականջի մէջ, որ պէտք է լիտ չը մնալ: Միայն այն է լաւ, ինչ որ սիրտ է ուրախացնում, զւարձութիւն, զմազլութիւն է՝ պատճառում, ինչ որ լարմար է մի թեթև և սիրուն կեանք վարելու համար, ինչ որ գեղեցիկ է, կոկ, լաստած, սիրունացրած: Տեսնել շուք և դարդարանք, նստել վասփուկ ու լարմար կառքերում, տեսնել մի անհոգ, զւարձացող ամբոխ, ակնել սիրուն թիթեռնիկ-

Ների պէս դէպի ամեն կողմ սրացող գեղեցիկ արարածներին, խառնւել մի աղմուկի, իրարանցումի մէջ, զգալ մի թեթև, գւարթարար մենակութիւն, չ'իմանալ թէ ինչ է զրկանքը—ում չէ լավանի, որ ժամանակակից կեանքի—և գեղեցիկ կեանքի—տեհնչալի պատկերը սա է: Այս ասելով ես ի նկատի չ'ունիմ միայն մեծ քաղաքների կեանքը, գաւառական փոտած ու հոտած քաղաքներում, նոյն իսկ մեծ գիտերում, նկատելի է նոյն ձզտումը, այդ տեղերում ոչ մի բան արդելք չի լինում մարդկանց կերպարանափոխելու ցանկութեանը, տեսնում էք նեղ ու հոտած փողոցներում թեթև և սիրուն կեանք վարողներին, տեսնում էք աղբակուտի վերաչ կանգնած մարդուն, որի ամեն մի շարժողութիւնը, ամեն մի խօսքը պարզ և հասկանալի պահանջ է: Նոյն իսկ մի խեղճ կօշկակարը Աստուած գիտէ թէ ինչ է երեակագում իրան...

Ազգանի տենդալին արագութեամբ է մեր մէջ թափանցում ժամանակի պահանջը, այն, ինչ որ լուսաւորութիւն, լաւաջաղիմութիւն է կոչում: Այդ պահանջը այնքան խառնել, տակն ու վրաչ է արել մեր մըտքերը, հասկացողութիւննը, անպիսի մեծ ուժով է ճմէկը, տափակացրել մեր կամքը, որ մենք միավճ մի բան գիտենք—յարմարել ժամանակին, զնալ նորա հետ արագութեամբ: Յետ նախել, քիչ կանգ առեկել և մոտածել անցած թողածի մասին, մտածել թէ ինչ են նրանք, որ իւտ են մնացել, որ չեն կանողանում առաջ դնալ, կերպարանափոխել, հասկանալ կեանքը անպէս, ինչպէս հասկանում են նոր հոտով, նոր համով հարածները—այդ անկարելի է, անօգուտ է, աւելորդ աշխատութիւն է: Յետամացը հն է, փոտած է, ժամանակից դուրս է: Հեռո՞ւ այդ փոտած, նեխւած կեանքից, այդ ճահճապին անշարժութիւնից:

Բայց այդ վիշտակութեան, ինքնամոռացութեան ժամանակ էլ լինում են ժամեր, րոպէներ, երբ միաքը իրանն է պահանջում, մարդը որոնում է իւր հոգու համար հանգստացնող, թարմացնող կերակուր: Նա չոգնում է անչափ ոգեսրութիւնից, նա կշտանում է սէրից և տիսուր ու լուսահատ կանչում է: «այս ամենը շատ լաւ, բայց ինչնո՞վ ապրել, ինչն ընարել նպատակ, ինչնո՞վ զեկավարելու: Սարսափելի հարց... Մարդն իմանում է որ հոգին քաղցած է, ծարաւ է, նա որոնում է մի բան, աչքի առաջն է բերում հարիսրաւոր երևովթներ, փշում է նրանց մանրամասնութիւնները, բայց տեսնում է որ ներքինը դրանցով չի կշտանում, ընդհակառակն, իւտ է մղում, չի ուզում հաշտուել նրանց հետ: Ուրեմն չը կաչ հոգու աշխարհ, վճռում է մարդը և սաստիկ տիրած, սաստիկ ճանձրացած՝ իւր տեսած կեանքին այնպիսի անուններ է տալիս, որպիսի երեք չի տալ «եօթն սար իւտ մնացածը», անպիսի մարդը, որ անշարժ է, այդ անշարժութեամբ պախարակւած, մոռացւած: Նա ինքն իրան ասում է, որ այդ փալուն կեանքը մի գեղեցիկ գատարկութիւն է, մի սիրուն անմոռութիւն: Զը կաչ իդէալ, նա չը գիտէ թէ ինչը պիտի պաշտէ, որն է

այն սրբութիւնը, որի առաջ հոգին կը բացի, ցուց կը տաէ գործելու, տաքանալու, ստեղծելու եռանդն ու մեծ կարողութիւնը: Ո՛չ, այս բոլոր եռաշման, այս բոլոր փալի, շուքի մէջ միաք, հոգի չը կաչ, կրկին և կրկին հաստատում է նա և լուսահատում, կծկում, կուշ դալիս: Վաղուց է, որ մենք բոլորս գանգատում ենք աղ հիմաթափման վերաչ, վաղուց մենք հասկացել ենք, որ մեր դժբաղութիւնը նրանում է միան, որ մենք իդէալ սրբութիւն գտնել չենք կարողանում և հենց այդ պատճառով այնքան թուզ ենք, անզօր, կամքից զուրկ, անհաստատ, երերուն: Խեղճ հաջ երխտասարդ... Ինչը չի արել նա, որ մի քիչ առաջ գնաչ, ինչ զոհեր չի տռել ժամանակի: պահանջին, ինչը չի կորցրել իւր ոգնորութեան համար: Նա անգիր է արել երսպացի հեղինակներին, անթիւ անգամ կրկնել է նրանց մտքերը. Նա ատել, մոռացել է իւր մալրենի լեզուն, համարելով նրան անկարգ և անպիտան մի բան, որ անարժան է մեծ մտքերին, մեծ զաղափարներին սպասաւորելու համար: Բաւական չէ որ ինքն է մոռացել, ատել, գեռ նոյնը սովորացրել է իւր քրոջը, իւր մօրը, որպէս զի միաքը, երջանկութիւն տռող գաղափարը ամեն կողմից զրկէ նրանց: Եւ չը նայած այդ բոլորին, նա դարձեալ առում է, որ իդէալ չը կաչ. Նա իւր արածներից, իւր իմացածից չի կարողացել մի բան ընտրել, որին հանդիսատ խղճով և հոգով երկրպագութիւն տար: Նա այդ բոլորից յետոյ տեսնում է, որ փակած է մի նեղ, փոքրիկ աշխարհի մէջ, ուր իւր եսամոլութիւնն է միան երսում: Նա միան իրան է ճանաչում, միան իրան է հաւանում: Ամեն մէկի բարի ցանկութիւնն է ցուց տալ որ ինքն այդպէս չէ, որ նա գտել է մի անձնական լուսալ, վերացական բարձր գաղափար, որի սրբութեան առաջ ամենքը պիտի զլուխ բաց անեն: Բայց և արդաւալ զարձեալ նկատում է դատարկութիւնը, դարձեալ լսում է ամենքի բերանից. «Տէր Աստուած, միթէ աշխարհում այլ ևս բարձր ու գեղեցիկ միաք չը կաչ. միթէ իդէալը այն ստոր հաճուքներն են, որ կլանել են մեզ»: Որքան խղճալի դրութիւն:

Մենք այս ու այն պատին ենք զարկում մեր գլուխները, մենք տրաքւում ենք այդքան ի զուր որոնելուց: Բայց մի անգամ չենք ուզում հասկանալ, որ այդ պաշտամ իդէալը երկնքի մանանաչ չէ, որ, մեր կամքը չը հարցնելով, թափի մեր գլխին: Ո՛չ, երկինքը այդպիսի բան անել չի կարող. միտքը, գաղափարը, իդէալը պիտի ծնւի մարդկանց միջից, նրանց կեանքից, նրանց անցկացրած օրերից: Չունինք համբերութիւն, չենք կանգնում, նակում, հանգիստ կերպով հետազոտել, մաքրել ու մաքուրը վերցնել չենք ուզում, այլ ընդհակառակն, հոսանքի հետ լողալով, միան արտաքին փալ, դրախ սիրութիւն որոնելով, մեղ վերաց ամենաստոր կարծիքն ունենալով, միշտ իդէալի ծարաւ կը մնանք, միշտ կը զգանք, որ մենք մի բան պիտի լինէինք, բայց մի բան չենք: Միթէ ճիշդ է, որ մեր կեանքը ամբողջապէս մի ապականութիւն է, մի աճնական տգեղ բան, որից մի-երկու հատ բան

չի կարելի վերցնել և ապա դիմել գէպի լուս, գէպի քաղաքակրթութիւն։ Մենք այս հարցը չենք տալս մեղ, որովհետև միանգաման մենք մեղ վատ ենք համարել, պրծել։ Հարցը վճռելու համար՝ մի թեթև ծանօթութիւն էր հարկաւոր մեր «ունեցած-չունեցածի» հետո Բայց «մեղաւորին ովկ է տւել արգայութիւն», ասում է մեր ժողովուրդը։

Նս չեմ կարծում թէ մեղանում կը լինի մարդ, որ չի ընդունիլ թէ ինքը երբէք սիրած չէ մեր հասարակ դասի աջ ու աջն կողմը։ Ամենքը գիտեն, որ կայ հետաքրքրութեան արժանի ժողովրդական կեանք, բայց բաւականանում են նրանով, որ իրանք այդ բանը գիտեն։ Միմեանցից պահանջում են ուսումնասիրել այդ կեանքը, միմեանց շլինքին են դժում այդ դժւարութիւնը, կարծում են թէ աղջպէս պահանջնելով, կատարել են իրանց պարտքը։ Ինչո՞ւ չեն տեսնում, ինչո՞ւ չեն մտնում, իմանում և ամեն մէկը իւր կարողացածի չափ չի ուսումնասիրում։ Նո հաւատացած եմ, որ մեր տխուր երիսասարդութիւնը շատ բան կը գտնէր հասարակ ժողովրդի կեանքի մէջ, գուցէ աղտօնդից նա կը վերցնէր իւր իդէալները, զուցէ այդ կեանքի միտքը հասկանալով նա կ'ազատւէր իրան տանջող հարցից՝ թէ ինչը նպատակ ընտրել, ինչը պաշտել։ Այդ կեանքը, որ խոստանում է մեղ շատ բան հասկացնել, մնջանից հեռու է։ Նա գտնում է մոռացած, կեղտոտ գիւղերում, նա գտնում է նաև քաղաքների հետու, անձակտ անկիւններում։ Ազդպիսի տեղերում է ապրում հայ նախնական ընտանիքը, որ դեռ ևս չի հողմահարւում ամեն կողմից։

Այդ այն կեանքն է, որը մենք ոզեւուած անուանում ենք նահապետական պարզ կեանք։

Նահապետական ասելով, մենք, ի հարկէ, չենք երեակացում այնպիսի կեանք, որ գոյութիւն ունէր Հոմերոսի ժամանակ։ մենք շատ լաւ գիտենք, որ մեր գիւղերում չը կայ հին, նահապետական աշխարհի այն կենցաղը, որի պարզութիւնը, աւանդութիւնները ոգեսրել են բազմաթիւ բանաստեղծական հանձարներին։ Հոնութիւնից ալսուեղ քիչ բան է մնացել. չը կայ այն միամտութիւնը, այն պարզութիւնը, որ հոնութեան հոգին էր. և մենք նահապետական ենք անուանում գիւղի կեանքը աւելի այն պատճառով, որ այդ կեանքը շատ հեռու է մնացել մեր չառաջադիմութիւնից։ Ասելով պարզ կեանք, մենք, ի հարկէ, չենք հասկանում նախնական հովական կեանքը. պարզ ենք անուանում այն պատճառով, որ այդ կեանքը չ'ունի մեր չառաջադիմ աշխարհի անհամար պահանջները, ճաշակի խորութիւնները, մի խօսքով այն բոլոր մանր թէ մեծ ցանկութիւններն ու քմահանջութիւնները, որոնք այդ աշխարհի հոգին ու կրակն են կաղմում։ Նահապետական պարզ կեանքը, որ մենք երբեմն վիշտում ենք մեր զրութիւնների մէջ, երբ խօսք ենք մկնում միամտութեան, անմեղութեան և աղիտութեան մասին, ոչ այն սիրուն, դիւցազնական և ասպետական կեանքն է, որի վիշտակը, որի պատկերը մարդու անփոխարի-

նելի քաղցրութիւններից դլխաւորն է, ոչ էլ ալնքան է պարզ, որ կարողանանք մի երկու գծերը ըմբռնելով ասել թէ հասկացել ենք ամեն ինչ: Ո՛չ, դա մի բարդ բան է. զորա մէջ կան մարդարիտներ, որոնց վերաէսթրանարեւել կարիլի է, կան և սարսափելի դառն պառական ենք, որոնցով հարիւրաւոր կեանքեր են թունաւորւում: Դառնութիւնն ու քաղցրութիւնը ալնպէն ասերտ կապակցութիւն ունին միմնանց հետ, որ բաժանել, մէկը կամ միւսն ընտրել անկարելի է: Մեր կողմից դեռ բաւական աշխատութիւն է հարկաւոր դառնութիւնը քաղցրութիւնից բաժանելու համար, մեզ վերաէ դեռ պարունական կամ ընտրութիւն անելու, լաւի և վատի ընտրութիւն:

Մեր նահապետական պարզ կեանքը ունի իւր գորութեան համար մի անհրաժեշտ պահանջ, որի մէջ պարզ երեւում է նորա կոչումը, նշանակութիւնը: Այդ պահանջը աշխատութիւնն է: Առանց ֆիղիքական, կոպիտ աշխատանքի, առանց մշտական գործունէութեան անհասկանալի է այդ կեանքը, նա հաճախութիւն չ'ունի: Աշխատութիւն ասած բանից աւելի հասկանալի, ընդհանուր միտք չը կայ նահապետական կեանքի մէջ. ամեն ինչ—ժողովրդական իմաստութիւն, աւանդութիւններ, բազմաթիւ ծէսեր, սովորութիւններ միւան ալդ աշխատութիւնը իրբե անհրաժեշտ պահանջ, իրբե կենսական ինդիր պարունակութիւնը համար է: Աշխատութիւնն է, որ ահագին գործեր է կատարում, ընտանիք, հասարակութիւն է կազմում, մարդուն հասկացնում է այս աշխատանքի միտքը, նշանակութիւնը, տուն, սեպհական շահ, զաւակ, ուրախութիւն և դառնութիւն է ստեղծում: Աշխատութիւնը սուրբ է, աղնիս մարդու դրամագլուխը, բարօրութեան գրաւականը իւր թափած արիւնքը տիկնիցն է և դրանից, լոկ դրանից, ստանում է իւր ապրուսքը: Նա ունի մի միտք, որ միակ կանգնած է նորա աչքի առաջ—ապրել, ինչպէս ուրիշներն են ապրում: Եւ այդ մտքի համար նա հոգով ու մարմնով նւիրում է աշխատանքին: Նա աշխատութիւնից չի վախում, որովհետև մի ուրիշ բան չէ իմանում, որ ապրելու համար նոյն աղնիս միտքն ունենայ, որպիսին ունի աշխատութիւնը: Անպայման կերպով հաւատարով իւր գործին, նա անում է, աշխատում, մաշեցնում է իւր մարմինը առաջնորդ ունենալով միւան մի լուս: Նա զործունի բնութեան հետ, իսկ բնութիւնը մարդու կամքին ու ցանկութիւններին չի հնազանդում. բնութիւնը անթիւ և անհամար արգելքներ է զնում մարդու առաջ, գմւարացնում է նորա գործը: Բայց քանի կամ մեծ, անխախտ լուսը, որ աշխատութեան հիմքն է, բնութիւնից ձեռք վերցնող չը կամ գործի մարդը իրանն է անում, ցոյց աալով մի զարմանալի տոկութիւն, կամքի ուժ: Նա մեծ պահանջ չ'ունի. Նա չկամ չէ. միանգումից բարձրացնել իւր պրութիւնը, աղատուել ճնշող հսնդամենքներից,

ապրել աւելի անհոգ, աւելի լաւ, աշխատէս, որ գոնէ իւր չարչարանքի մի մասը պակասացնէ—այդ բոլոր ցանկութիւնները նորա համար մեծ զին չ'ունին. նորա համար բաւական է անարտունջ նստել իւր տաճը և գո՞ս օրտով ասել թէ իւր երիխան, իւր ընտանիքը կուշտ է: Ահա այն վերջնական նպատակը, որին ծառակում է նահապետական մարդը: Այդքան աշխատել, ալզքան զրկանք կրել, գտուն արտասուզ, առաս քրոնինք թափել իւր ընտանիքի ամերդջութեան, բարի օրւա համար—ազ է սուրբ գաղափարը: Ծնանիք—այս է այն որոշ, աչքի առաջ կանգնած կենդրոնը, որ դէպի իրան է ձգում մարդկանց ոգերը, միտքը, հասկացողութիւնը:

Ինչպէս ուղում է, թող լինի, ուրախութեամբ թէ արտավութեամբ, յաջողութեամբ թէ բիւրաւոր ցաւեր կրելով, բայց ամեն մէկն աշխատում է ընտանիքի օգտին: Անձնական ոչինչ չը կատ իւրաքանչիւր անդամի համար: անձնաւորութիւնը, «եսը» մոռացում է ընտանիքի շահերի առաջ: Սշխատում, հաւաքում ևն մեղուների պէս: Մէկը արտից է մի ջւալ ցորեն բերում, միւսը իւր ծախած մի բերն փալտից մի քանի կոպէկ, մի ուրիշը օտարի զրանը արած ծառալութեան վարձը: այդ բոլորը զուցէ չնչին, անշան արդիւնքներ են, բայց հալալ աշխատանք են, որ միատեսակ եռանդով, չօժարութեամբ հաւաքում է միասին. ամեն մէկն իւր պարագը կատարում է, իւր բաժինը ներս բերում և ալնունետե իւր բաժնի տէրը չէ: այդ ժողովածուն, մատների ծայրելով մի կերպ հաւաքածը ամբողջ ընտանիքի սեղականութիւնն է: Աչքի առաջ կատ մի ընդհանուր մերկութիւն, որ պիտի ծածկւի անխտիր. ամենքը գիտեն մի քաղցածութիւն, որ պիտի վերացէ տանից: Ել չեն հարցնում թէ ովէ է արժանաւորը կամ անարժանը, ովէ չ շատ բերել և շատ ստանալու իրաւունք ունի: Ամենքը հաւասար են, ամենքը միատեսակ ծառայ են, որ պիտի խոնարհւին այն առողջ և ամբողջ մարմնի առաջ, որ ընտանիքն է:

Սական, ընտանիքը մենակ զրսի բերածով չէ կենդանի. ոչ, ընդհակառակն, դրսից այդպիսի հնաղանդութեամբ բերելը, ամեն կոշտ և ուժասպառ աշխատանքի լանձնառութիւնը հաստատ և անխախտ է վնում ներքին ոսկի ազդեցութիւնից: Ընտանիքն ունի և մի բարդ, ներքին կեանք, որ նունպէս աշխատութիւն է պահանջում, նոյնպէս կենդանի է միան աշխատութեան չնորհիւ: Թէս դրսի աշխատութեան տէրը տղամարդն է, իսկ ներքինի տէրը—կինը, բայց աշխատութեան լատկութիւնն ալնպէս է, որ երկուսն էլ խառնւում են միմեանց հետ, մի և նոյն աշխատաւորներն են սպահանջում: Տղամարդը և կինը ձեռք ձեռքի տւած են կատարում այն, ինչ պահանջում է կեանքը: Տղամարդը անխոնջ աշխատում է, կինը նրանից պակաս բաժին չ'ունի աշխատութիւնից: Մեր քաղաքակրթւած կեանքը կնոջը հեռացնում է ծանր աշխատանքից, տալիս է նրան միջոց հանդիսաւ անհոգ ապրելու, որովհետեւ այդ կեանքում կինն ունի իւր նշանակութիւնը, իւր կոչումը. Նա պիտի պատկերացնէ քնքշութիւնը, որ թուլութեան

և անկարողաւթեան է հասնում. նա պիտի գեղեցիկ լինի, պիտի սրտի լարեր շարժէ, պիտի մարդ զարմացնէ, չափշտակութիւն պատճառէ իւր թեթև, ուղախն կազմածքով, իւր անաղ ու սազով։ Բայց նահապետական կինը բոլորովին ավ կոչում ունի Նորա վերայ ծանրանում է ահազին լուծը. նա մարդ է, տանտիկին է, նա և տղամարդ է, երբ տղամարդը կամ բացակաչ է, կամ թէ հիւանդ, մեռած. նա ալնքան աննշան անձնաւորութիւն չէ. նա ինքն է, որ կապում է ընտանիքի անդամներին միմեանց հետ, նա ինքն է, որ պահում է տունը, այն մեծ բանը, որ օջախ է կոչում. Չը նաւելով ալդ մեծ զերին, նա չ'ունի գոռողութիւն, ինքնահաւան չէ և բոլորովին այն միտքը չ'ունի, թէ իւր գոռողութիւնը ընտանիքի միւս անդամներից շատ զերաղանց է, թէ առանց իրան մնացածները չեն կարող ապրել։ Նա ընկեր է իւր տղամարդին, բառի բուն նշանակութեամբ։ Ամեն օր, ամեն մի քավում պատահում են դէպքեր, որոնք ալդ են հաստատում։ Ես կը բներեմ մի դէպք։

Մի սարսափելի վատ օր ես ճանապարհորդում էի Սիւնեաց երկրում. Զիւնախառն անձրեղ թափւում էր անդաղար և նրանից ծածկւելու համար բաւական չէին ոչ անձրեակալը, ոչ էլ «եափունջին». մանաւանդ անտանելի էր Սիւնեաց աշխարհի հոչակւած ցեխը, որ անասելի տանջանք էր պատճառում ձիուն. նորա ոտները կամ խրում էին մինչև ծնկերը, կամ սահում էին երկար տեղ և նա զօռով էր սպանում վայր ընկնելուց։ Ալդպիսի մի օր ես տեսավ մի կնոջ, որ զնում էր տարբիկ մի ձիւատր տղամարդի հետ։ Կինը բաւական նեղացած էր երեսում, քըրտնած ալդ գժւար ճանապարհից. այն ինչ տղամարդը հանգիստ նստած էր ձիու վերակ, փաթաթւած կնոջ կարմիր շալի մէջ և գեռ ժպտում էլ էր։ Ես հարցրի և իմացալ, որ նա ալդ կնոջ ամուսինն է. և երբ չանդիմանեցի նրան, որ տղամարդ վնելով ձի է նստել, հարկադրելով կնոջը ալդպիսի տանջանքներ կրել, նա շարունակեց ժպտալով ինձ նաև էլ. իւկ կինը նորա փոխարէն հասկացրեց ինձ, որ ինքն էլ է ալդ ձիու վերակ նստել երկար տեղ, բայց որովհետեւ իւր տղամարդը նեղացել է, ալդ պատճառով հիմա էլ ինքն է ոտառ զնում, որ մարդը հանգստանաց։ Ալդ բաւական չէր, նա ինձ հասկացրեց, որ ձի նստած մարդը առհասարակ հեշտ է մրսում, ուստի ինքը իւր գլխի շալը վերցրել է և նրանով իւր մարդուն փաթաթել. Նա ալդ պատճում էր առանց արտունջի, նորա խօսքերը հասարակ էին, զանգատ չէին չափանում, իսկ տղամարդի ժպիտը—ես չետու հասկացակ—արտացայտում էր զարմացք՝ թէ բնչպէս է, որ ես չեմ հասկանում ալդպիսի հասարակ բանը։ Նոյն օրը ես տեսավ գիւղերի մօտ հայ կանանց, որոնք ուարսափելի ցեխը կոխ տալով, այս ու այն կողմն էին զնում. նրանք շալակած էին փափ, մեծ մեծ կողովներով զարման, ջւալներով չոր խոտ Ոչ, մտածում էի ես, նահապետական կինը բոլորովին ուրիշ կոչումն ունի, բոլորովին ուրիշ դեր է խաղում ընտանիքում։

Նա մեծանում է, իւր հօր տանից ուրիշի տուն է գնում իբրև օսար մարդու կին, տանելով իւր հետ այն միտքը, որ նա օգնական պիտի լինի իւր տղամարդին, մասնակից պիտի լինի նորա աշխատութեամ: Աշխատութիւնը շատ ձեռքեր է պահանջում, որքան մեծ է ընտանիքի կաղմածքը, նորա տարած գործը, ազնքան շատ պիտի լինի օգնողների, անողների թիւը, Ռենեալոյի աճպիսի առաջնակարդ կինսակութիւն, աշխատութիւնը մի և նոյն ժամանակ այն փորձաքարն է, որի միջոցով կինը կամ աղջիկը ցուց է տալիս իւր գեղեցկութիւնը, իւր հրապուրը: Երիտասարդը իւր ձնողների կամքին հնազանդւելով, շտապում է տուն բերել մի նոր գործող ոչժ,—այդ իւր կինն է, որ մեծ մասմբ անչափահաս աղջիկներից է լինում: Խնչով է նա առաջնորդում իւր ընտրութիւնների ժամանակ:— Ըստ մեծի մասին նրանով, թէ որքան է աղջիկը համապատասխանում այն նպատակին, որին նա պիտի ծառացէ մինչև կեանքի վերջը, այսինքն որ աստիճան դիմացկան է, որքան կարող է աշխատել: Քաղաքացի երիտասարդն էլ երբեմն անչափահաս աղջիկ է նշանում: բայց նա ինչ դաշտափառ ունի այդ աղջիկակ վերաբ:—Ոչի՞նչ, նա զիտէ միայն, որ այդ աղջիկը մի օր իւր կինն է դառնալու, հենց այդ պատճառով նա տքնում, աշխատում է ամեն կերպ, որ կարողանալ նորա սիրու չափշտակել: Գեռ այդ ժամանակ նրան տանջում է այն միտքը, թէ ինչպէս պիտի լինի, որ կինը տաք կերպով կապէի իւր հետ, միայն իրան ճանաչէ: Աւրիշ մի միջոց չը կայ, նա սկսում է զարմացնել նրան իւր հարստութիւններով, իւր առատածեռնութեամբ և այլ աւսպիսի չատկութիւններով, որոնք այս աշխարհի հասկացողութեամբ ամենագեղեցիկ, խնկելի բաներն են: Նա բերում է անչափահաս երեխալի համար ոսկի մատանիներ, քորոցներ, մանեակներ, շայցնում է խեղճ անչափահասին աղնիւ մետալի փազով, թանկագին քարերի շողջողոցով, սովորացնում է նրան չը հաւանել իրեղիններից մէկը, չետ դարձնել, նորից աւելի լաւը բերել տալ: Խսկ երբ մի քանի անգամ այդպէս կրկնելուց վետով անչափահաս նշանածը, տեսնելով իւր չորս կողմը ուրախ և սիրող գէմքեր, մի քիչ խստութեամբ է պահմանջում նորը, լաւ առնել, աւելի սրամիտ կերպով է ծաղրում իւր չը հաւանած իրեղէնը,—փեսան հրճում է, ինքն իրան բազգաւոր է անուանում և ասում է, որ իւր սրտի բազգանքը կատարւել է: Այս ինչ զիւղացի երիտասարդը աչքի տակով նալում է, դիտում թէ իւր ասկագատ ամուսինը ինչքան «հալալ ծծկեր է», այսինքն ինչպէս է շինում, սարքում, որքան ուժեղ է, որքան դիմացկան: Նա այն ժամանակն է ուրախանում, այն ժամանակն է մի նշանած երիտասարդի քաղցր լուսերի մէջ ընկնում, երբ, օրինակ, տեսնում է հեռուից, որ աղջիկը ջրով լիքը մեծ կուժը շալակած՝ տղամարդի պէս տուն է տանում կարմրած, բայց առանց քըրտինքի, հաստատ և ամուր քաջեր անելով: Այդ քաղցրութիւնն է համապատասխանում քաղաքակրթւած երիտասարդի վակելած վերև նկարա-

գրած քաղցրութեանը։ Այդ քաղցրութիւններից ո՞րն է բաղդաւորութեան հասցնում։ Ուկու և աղամանդի փալվն սովորած աղջիկը, ամուսին դառնալուց չետու, իւր ճաշակն է զարգացնում։ Նորա ուշն ու միտքը աց տեսակ թանկապին իրերի վերակ է մնում։ Նա իւր ամբողջ մտաւոր կարողութիւնը փակցնում է աչքի ընկած ամեն զգեստի, պաճուճանքի քննադատութեան մէջ։ Նա ստանում է մի զարմանալի ընդուժակութիւն՝ ոչ մի բանի չը հաւանելու, ամեն ինչ ծաղրելու։ Հիմա տեսէք գիւղացի նորահարսին։ Համարեա բոլոր գիւղերի հեռաւոր ծացրերում կարելի է տեսնել գետնափոր խորշեր, որոնց առաջին անգամից չը գիտես թէ ինչ անուն տաս։ Խոզի բոխն անուանես թէ հին, անուշաղիր թողած դարմանանոց։ Բաց իրօք դրանք մարդկալին բնակարաններ են, ազտեղ են ապրում նոր կաղմած ընտանիքները։

Քիչ հետեւնք այդ նորակազմ ընտանիքներին։

Մենք տեսանք, որ գիւղացու բարօրութիւնը, տնտեսական կարողութիւնը ընտանիքի ամբողջութիւնից է կախւած։ Քանի որ մի չարկի տակ ապրում են մի քանի մարդիկ, քանի որ այդ մարդկանց մէջ կայ միասին ապլիկու ցանկութիւն, այդ ընտանիքը մի կենդրոն է, որի գոյութիւնը անհնարին է առանց փոխադարձ համերաշխութեան, առանց սերտ կապակցութեան։ Հէնց որ թուլանում է կապը, հէնց որ խզում է մի տեղ հաւաքող շաղկապը, ընտանիքի ծոցից դուրս է գալիս մի հատւած, որ խկոն բոյն է զնում մի ուրիշ տեղ, խկոն կազմակերպում է նոյն սկզբանքների վերաց և հաստատ հիմք է բռնում։ Այդ բաժանումը խկապէս ընտանիքի նշանակութիւնը, ոչքը չի թուլացնում։ Կթէ վնասում է տընտեսական կողմը, բաց բաժանւածները դրանով չեն փոխում իրանց չարաբերութիւնը դէպի ան տեղը, ուր օր ու գիշեր բնակում են։ Բաժանւողները ըստ մեծի մասին նոր պատկաներն են լինում։ Նրանք են, որ չ'ունենալով կարողութիւն, առաջին անգամ հաստատում են մեր վիշտ գետնափոր խորշերում։ Ակզրում կեանքը այդ տեղերում վերին անտիճանի աղքատ է, չուսահասութիւն պատճառող, շատ անգամ չոր անգամ չը կայ, որ ծածկւեն ու քնին։ Բաց օրէցօր նկատելի է լինում փոփոխութիւն դէպի լաւը։ Գետնափոր խորշը հետզհետէ ընդունում է բնակարանի տեսք, հետզհետէ մաքրում է, տաքանում և մի քանի տարուց չետող արդէն մի օրինաւոր օջախ է դառնում։ Այդ գործի մէջ ամենամեծ ծանրութիւնը նորահարսի վերակ էր։ Տղամարդը իւր աշխատութիւնն էր տանում, այդ ճիշդ է, բաց կինն էր, որ համ ներսումն էր աշխատում, համ էլ դրասում երկպատիկ, եռապատիկ շատ էր աշխատում, միանգամացն տղամարդի անելիքն էր անում, որպէս զի աշխատողը մէկը չը լինի, այլ եթէ հնարաւոր է երկուսով երեք աշխատաւորի գործը կատարվի։ Ահա այդպէս թուլ և անօդնական ընտանիքը հետզհետէ զօրեղանում է, հաստատում, տիրանում է մի լայտնի աստիճանի անկախութեան և անցնում է միւս սովորական ընտանիքների կարգը։

Նահապետական պարզ ընտանիքում կինը և առհասարակ ամենքը, որ տանն են նստում, աղաս չեն դրսի հանգամանքների աղդեցութիւնից, նրանք էլ կրում են այն ամենը, ինչ կրում է դրառում գործող տղամարդը: Վճռական բոպէներում, արտաքին աշխարհի պահանջները ամբողջ ընտանիքի վերաց են ընկնում և ոչ միան տղամարդի վերակ, թէն տղամարդն է այն միակ անձը, որ պատասխանատու է պահանջողների առաջ: Պէտք է հարկերը վճարել, խստութեամբ պահանջում են, ինտաճդելու իրաւունք չեն տալիս, իսկ փող չը կայ: Միւս կողմից տան տղամարդը պարտքի տակ է, վաշխառուն վաղոց է լավանել թէ վճարելու ժամանակն է և ացժմ կաշի է քերթում, ամեն օր մի հրապարակական խալտառակութիւն է անում: Ի՞նչ պատասխան պէտք է տալ հարկահանին կամ վաշխառուին: Ինչպէս և լինի պատասխանը, բայց նա միան տղամարդին չի վերաբերում. նրանց առաջն են դուրս դալիս ընտանիքի բոլոր անդամները, խալտառակչութիւն, ծեծ, հաճովանք—այդ բոլորը միասին են ստանում: Եւ միասին էլ հոգում են իրանց ցաւերը: Տեսնում ես, ամբողջ ընտանիքը մի և նոյն կերպով սկսում է աշխատել, պակասեցնում է իւր ծախքերը. ամենքը լուռ ու մունջ իրանց կաշին են քերթում որ պարագից, պատուհասից ազատւեն: Ամեն մէկն իւր բաժինն է դնում. մինչև անգամ տասն տարեկան աղջիկն էլ իւր գործած մի ջուխտ գուլան է մէջ տեղ բերում, իսկ նրանից քիչ մեծ տղան մէկի ծառան է դառնում, կոպէկներ հաւաքում: Տան տղամարդի վերաց ընկած ծանրութիւնը, ինչպէս տեսնում էք, այլ ևս այնքան չի ցաւացնում նորա մէջքը: Գիւղացի կինն ինքն է ասում թէ տղամարդի մէջքը բարակ կը լինի: Բարակ մէջքը շատ բանի չէր դիմանալ, շուտ կը կոտրե, եթէ միշտ մենակ մնար: Բայց այդ մէջքը պահում է, չի կոտրում, որովհետեւ կինը, որ գիտէ մէջքի բարակութիւնը, գիտէ նաև թէ ինչպէս պիտի լինի, որ մէջքը հաստանայ, դիմանալու կարողութիւն ունենալ: Դորա համար նա ուրիշ միջոց չ'ունի, նորա գիտեցածն այն է, որ այդ թանկագին մէջքին պիտի օդնութիւն տաք իւր սեպհական մէջքը: Աղջպէս անելով, նա տղամարդին ընդ միշտ չի աղատում ծանրութիւնից, այլ թեթևացնում է այն բեռը, որ տղամարդը կրում է իւր ընտանիքի համար:

Նահապետական ընտանիքում տղամարդը մեր երեակալածի չափ բռնաւոր չէ: Նա, ծշմարիս է, ընտանիքի տէրն է. նրան պատում են, նրան հնազանդուում են. նրան համարում են տան արեգակ, նորա արևովն են երդուում: Բայց աղամարդը միան ընտանիքի տէրն է և ոչ մի ինքնակալ բռնաւոր, որի կամքին պիտի «մասալ գնան» բոլորը, որի ցանկութիւնիցն է կախուած այս կերայ գործ տեսնելը, ընտանիք պահելը: Նա ընտանիքի անդամների հետ խորհրդակցելով է գործում. եթէ չ'ունի հայր կամ եղբայրներ, հաճութեամբ խորհրդի է նստում իւր կնոջ, իւր մօր հետ ընտանիկան խորհուրդները շատ լաճախ են կախանում. ամեն մի շատ

թէ քիչ նշանաւոր դէպք, ամեն մի հարց ալդ խորհուրդների առարկան է դառնում: Մանաւանդ պատկառելի են ալդ խորհուրդները այն տներում, ուր կան ծերունի նահապետ և մի քանի եղբայրներ: Ընտանիքի անդամների մէջ ծածուկ բան չէ մնում: ամենքին ձան է հասնում, ամեն մէկը իրաւունք ունի կարծիք չալտնելու: Թէև ժողովրդի հասկացողութիւնն է, որ տարիները աւելացնում են մարդու խելքը, հմտութիւնը և ալդ պատճառով վճռական խօսքը տարիքով մնանին է պատկանում, բայց և ալդպէս փոքրահասակն էլ խօսելու, ձան բարձրացնելու իրաւունք ունի, եթէ միան նա չալտնի է իրրե ընտանիքի համար աշխատող, նորա շահերը միան ի նկատի ունեցող մարդ: Խորհում են, վճռում են մի բան և անում ևն ալճպէս, ինչպէս «խելք խելքի տալով» են վճռել: Միմեանց շատ քիչ են հակառակւում, շատ քիչ են ընդդիմանում: Նրանք բոլորը գիտեն, որ զատ զատ մարդիկ չեն, այլ հաւասար պարտականութիւն ունեցող անդամներ մի միջ և սուրբ հիմնարկութեան, որ օջախ է ասւում:

Օջախ—ահմ այն քարը, որի վերաէ հաստատւած է նահապետական ընտանիքը: Դա մի բարդ հասկացողութիւն է, դա մի սրբութիւն է, որ բազմած է ընտանիքի մէջ, ընտանիքի սիրտն է, նրան հոգի, կենդանութիւն տւողն է: Օջախի սէրից բարձր, վառվուն սէր չընկաէ նահապետական աշխարհում:

Նահապետական հաչ կնոջ մասին մեր տւած տեղնկութիւնները դեռ նրան ամբողջապէս չեն լուսաւորում, չեն պարզում նորա էութիւնը: Եթէ ուղում ենք լաւ իմանալ թէ ինչ է հաչ կինը, պիտի ուսումնասիրենք թէ ինչ բան է օջախը:

Ուրեմն մեր կարողացածի չափ ծանօթացանք ալդ ընտանեկան սըրբարանի հետ:

Լ է 0

## ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Համաձան Ընկերութեան բազուարարութեան, լունւարի 27-ին, երեկոցնան 7 ժամին, քաղաքային խորհրդարանի ղաճիճում կալացաւ Ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը. Ներկայ էին 74 հոգի, որոնցից 60 անդամներ էին, իսկ 14 հիւրեր. Առաջինների թւումն էին մի քանի տիկիններ և օրիորդներ. Ժողովը բացեց խորհուրդի պ. նախագահը, առաջարկելով, համաձան կանոնադրութեան, ընտրել ամսօրւաչ ժողովի համար մի նախագահ և մի ատենադպիր. Զաների առաւելութեամբ ընարեւցին նախագահ՝ պ. Աստուածատուր Կանկանեանց, իսկ ատենադպիր՝ պ. Հ. Պուկասեանց:

Ժողովի սկզբում կարգացւեց քննիչ լանձնաժողովի ղեկուցումը վերաբերմամբ 1888<sup>ի</sup>, թւականի դրամական հաշիւնների, որը, զտնելով ըստ ամենայնի ձիշդ, վաւերացրել էին իրանց ստորագրութիւններով: Նոյն լանձնաժողովը ներկապացրած ղեկուցագրին կցորդել էր իւր մի քանի առաջարկութիւնները, որ ժողովը ուրախութեամբ լսեց: Այդ առաջարկութիւններն են՝ 1) Ընկերութեան խաղարկական տոմսերը, որոնք անօդուս կերպով դրւած են կառավարութեան գանձարանում իրբե պահեստ, վերցնեն և դրաւ դնեն, իսկ ատացած վողերը շահեցնեն՝ արդիւնքը շատացնելու համար: Ժողովը, համաձան լինելով այդ առաջարկութեամբ, որոշեց ալղակս էլ վարւել ապագանում: 2) Բարւոք է համարում լանձնաժողովը նշանակել պ. հաշւառահին մի լաբոնի ռածիկ, որով նոյն իսկ կարելի է նորա հիւանդութեան կամ բացակազութեան պատճառով վարձել մի ժամանակաւորը, որպէս զի Ընկերութեան գործերը առկախ չը մնան: Այս առաջարկութեանը խորհուրդի պ. նախագահը պատասխանեց. քանի որ ակժմեան հաշւառահ պ. Պ. Տէր-Մարկոսեանը կատարում է յօժարութեամբ առանց մի որ և իցէ վարձատրութեան, ուստի այդ հարցը լաւ է թողնել մինչև նոր ընտրութիւնները: Ժողովը լամացնեց իւր չնորհակալութիւնը պ. Տէր-Մարկոսեանցին: Անշուշա ատենադպրին ուոճիկ նշանակելու հարցն էլ կը բարձրանաչ, կ'աւելացնենք մենք: 3) Ընկերութեան մօտ զտնւող պահեստ և պահմանաւոր գումարները հարկաւոր է զտնում աւելացնել մայր գումարի վերաբ Այդ առաջարկութիւնը, հակառակ լինելով նւիրողների պապմաններին, ժողովը մերժեց:

Ցիտ անորիկ կարգացւեց Ընկերութեան անդամ-քարտուղար պ. Ա. Գալաստեանցի կաղմած տեղեկադպիրը, որը վերաբերում է Ընկերութեան 1889 թւականի դործունէութեան: Այդ աւելեկադպիրց քաղում հնք հետեւեալ տեղեկութիւնները—Անցեալ 1889 թւականին խորհուրդը բազկացած է եղել՝

նախագահից, ատենադպրից, հաշւապահից, գանձապահից և հինգ խորհրդական անդամներից. ընդամենը 9 հոդի: Դոքա ունեցել էն 19 նիստ: Ընկերութեան գործունէութիւնը 89 թւականին շատ էլ նախանձելի չէ. նախընթաց տարիների հետ համեմատած՝ նա թուզ է եղել, դանդաղ և մինչև անգամ անպատւաբեր: Անդամների մէջ, բացի մի քանիսից, նկատելի է եղել քիչ եռանդ և աշխատութիւն, իսկ մի քանիսների մէջ մինչև անգամ, կարծես թէ, բացակալում էին դոքա, որը, ի հարկէ, պատիւ չէ բերում նոցա, որոնք այդքան ի չարն են գործադրում հասարակութեան իւր վերաէ դրած լուսերը: Նատերը կանոնաւոր չեն եղել լաճախում նիստերին, իսկ մի քանիսները մինչև անգամ բոլորովին բացակաչ ևն եղել քաղաքից, ներկաւ լինելով ժողովներին մի կամ երկու անգամ: Հենց այդ է եղել պատճառը, որ Ընկերութեան գործերը կատել են, եղել են շատ գործեր, որոնք պահանջում են եղել անգապաղ վճիռներ՝ չեն կատարել, չորհնւա մի քանի անդամների անտարբերութեան և բացակալութեան, որի պատճառով նիստեր չեն կատացել. իսկ կանոնադրութեան դօրութեամբ նիստը կարող է կալանալ այն ժամանակ, երբ անդամների թիւը 5-ից պակաս չէ: Թւանշանները այս տեսակ զէպքում աւելի պերճախօս են լինում, ուստի զնում եմ այսուեղ նոցա, որից կ'երեւաց թէ ով քանի անգամ է լաճախել նիստերին: Նշանակւած է եղել 28 նիստ, իսկ զոցանից կալացել է ընդամենը 19, որոնց նախագահը ներկաւ է եղել 19 անգամ, ատենադպիրը 19, գանձապահը 18, հաշւապահը 17, իսկ միւս անդամներից մասնակցել են՝ որը 11, որը 2, որը 4 և վերջապէս 1 անգամ:

Ընկերութեան գործունէութիւնը կազմում է հասեալում. նա նպաստել է 8 դպրոցների, այն է՝ 1) Բագուաչ հալոց դպրոցներին, 2) Ամրւանի, 3) Սուլթան Նուխտու, 4) Բէզլարքենդի, 5) Վարդաչնի, 6) Պուբագի, 7) Շամախու օրիորդական և 8) Փիլարի դպրոցներին: Վերոիշեալ դըպրոցների վերաէ ծախս եղել է 4.150 ր., որից ամենամեծ բաժինը ընկել է Բազուալ դպրոցներին, այն է 3.000 ր.: Վերջինիս մասին եղան երկար վիճաբանութիւններ, որը կը գտնէք մի փոքր ներքեւ: Այդ բոլոր նպաստ ստացող դպրոցների մասին ստացւած են տեղեկութիւններ թէ անմիջապէս իրանց հոգաբարձութիւնից և թէ Ընկերութեան անվտավոխ անգամ և ուսումնարանական գործին ծանօթ անձն պ. Բէզլար Ստեփանեանից, որին իրհուրդը ինդրել էր քննել այդ դպրոցները և իւր կարծիքը լավոնել: Այդ տեղեկութիւններից մի քանիսը շատ էլ ուրախավի չեն, օրինակ, Ընկերութիւնը նպաստել է այնպիսի դպրոցի, ուր կանոնաւոր ուսման և կրթութեան փոխարէն տիրում է եղել հին խալֆախականը, աշակերտները տարւակ վերջին հազիւ են եղել կարդալ գրելը իմանում և այն էլ առանց հասկանալու կարդացածի միտքը: Այդ հանդամանքը աչքի առաջ ունենաւով, ժողովականներից մի քանիսը այն միտքը լավոնեցին, թէ աւելի լաւ կը լինի, որ նպաստ արւի այն դպրոցներին, որոնք մի որ և իցէ շօշափելի

օգուտ ևն տալիս: Ժողովը, համաձան լինելով այդ պարոնների կարծիքին, վճռեց, որ նախ քան նախահաշմ կազմելը, խորհուրդը աշխատի տեղեկութիւններ ժողովել դոցա օգտաւէտութեան մասին և ապա մտցել նախահաշուի մէջ:

Նուն թւականի ընթացքում Ընկերութիւնը պահել է Բազուաչ բէա-  
լական դպրոցում 4 թոշակառու հաչ աշակերտներ և մի որդեգիր ծննի  
համալսարանում, որը, աւարտելով իւր ուսումը, այժմ վարում է ուսուց-  
չական պաշտօն հաջոց դպրոցներից մէկում: Դոցա վերաց ծախսւած է 280  
րուբլի: Անցեալ տարի լրացաւ Ընկերութեան քսաննինգամեակը, Ընկերու-  
թիւնը կատարեց լօբելեանը, որի նկարագրութիւնը չափուի է «Մուրձուի-  
ընթերցողներին: Աց հանդէսի առթիւ ծախսւած է 161 ր. 25 կ.: Ընկե-  
րութեան գործունէութեան մի ճիւղն էլ պիտի համարել ուսումնարանա-  
կան պատկառելի շինութիւնը, որը գդրազգաբար միջոցների սղութեան  
պատճառով այժմ շատ դանդաղ է առաջ զնում: Ազդ մասին եղան վիճա-  
բանութիւններ, որը ընթերցողը կը գտնի ստորև: Ընկերութեան նշանա-  
ւոր գործունէութիւնը տարածում է և Գրադարան-Ընթերցարանի վերակ,  
որի զարգացնելու և առաջ տանելու գործը չանձնւած է գրազարանի մաս-  
նաժողովին, որը բազկացած է հինգ հոգուց: Շնորհիւ այդ չանձնա-  
ժողովի, այժմ գրադարանը կարգաւորուում է և շարունակում է հա-  
րըստանալ ամեն տեսակ գրքերով, լրագիրներով և ամսագիրներով: Աւե-  
լորդ չեմ համարում զնել աշտաղ հետեւեալ տեղեկութիւնները Գրազարան-  
ընթերցարանի մասին: Առ 1-ն լունւարի 1889 թ. գրազարանը արժեր գրքե-  
րով 4.760 ր. 21 կ., իսկ այժմ առ 1-ն լունւարի 1890 թ. գրազարանը  
արժէ 6.111 ր. 11 կ. զանազանութիւնը 1.350 ր. 90 կ. 1) է: Առ 1-ն լուն-  
ւարի 1889 թ. մնում է գրատան գումար 525 ր. 44 կ., զնթաց 89 ամի  
ստացւած են: 1) Երեկոյթից 950 ր., 2) Աղամինաց և զբարեներից նէր  
500 ր., 3) Տոկոս 125 ր., 4) Բաժանորդների ամսավճար 949 ր. 80 կ.,  
5) Ացելուներից 56 ր. 89 կ., 6) Տոկանք 3 ր. 50 կ., 7) Հին լրագիր-  
ների վաճառումից 6 ր., 8) Գրաւականներ 855 ր., 9) Նաւուներ 1 ր. 25  
կոպէկ: Գումարն է 3.978 ր. 88 կոպէկ:

ԾԱԽ. Փ. 1) Վերազարձւած են գրաւականներ 819 ր. 2) Գրեսանց  
վճար—595 ր. 62 կ. 3) Կազմադիմ 242 ր. 56 կ. 4) Լրագիրների 300 ր.  
5) Ծառաւալի ոռնիկ 60 ր. 6) Գրապահին 600 ր. 7) Վառելափալսուի  
15 ր. 62 կ. ընդամենը ծախսք է եղել 2.715 ր. 56 կ.: Հանելով ծախսքը  
մուտքից, մնում է առ 1-ն լունւարի 1890 ամի գրազարանական գումար

1) Այս գումարի մէջ մոնում է 1889-թւականում ըերած գրեանց արժողու-  
թիւնը կազմագնով 800 ր., իսկ մնացեալ 550 ր. 90 կոսք: Կազմում է ամսագրերի և  
շաբաթաթերթերի արժողութիւնը կանդերձ, որ չէր մնած նախընթաց  
տարիների հաշեները մէջ ըստ մայր մատեանի:

1.263 ր. 32 կ., որից գանձապահի մօտ է 1.146 ր. 28 կ., իսկ դրատան կաս-սացում՝ 117 ր. 4 կ.: Յընթացս 1889 ամին դրատունը ունեցել է 180 բա-ժանորդ այլ և այլ կարգի, ի թիւս որոց 54 հազ և 126 օտարադղի. բացի դրանից եղել են 35-ի չափ ծրի օգտողներ, որոնք բացառապէս եղել են հաչ ուսանողներ և ուսուցիչներ: Յընթացս 89 ամին կարգացւել են 783 հաւե-րէն և 9.101 ուսուերէն դրքեր, ի վերջու տեղեկագրից լաւոնւեց, որ մի խումբ դրասէրներ դիմել են Ընկերութեան մի առաջարկութիւնով և լավոնի պաշ-մաններով, այն է՝ մտադրութիւն ունենալով հրատարակել զանազան բովան-դակութեամբ դրքեր, զվասաւորապէս կրօնա-բարոյագիտական ուղղութեամբ, խոնդրում է Ընկերութեան ընդունել իւր հոլանաւորութեան ներքոյ և հա-մարել իւր ճիւղերից մէկը, Խորհուրդը գտնելով դրասէրների առաջարկու-թիւնը համապատասխան իւր կանոնադրութեան, իսկ պայմանները ձեռըն-տու՝ լաւանել է իւր համաձայնութիւնը:

Այս մանրամասն և բարեխղճօրէն կաղմած տեղեկագրի ընթերցումից լետով, եղան վիճաբանութիւններ, զվասաւորապէս շինութեան գործի մասին: Խորհուրդի յարգու անդամները շինութեան դանդաղ առաջ գնալը վերա-դրում են հասարակութեան անտարբերութեան և սառնութեան, որ այլ ևս չեն նկատում այն առաս զոհաբերութիւնները, որ երեսում էր գործի սկիզբներում: Այս կարծիքին ժողովականներից շատերը պատասխանեցին, ասելով, որ հասարակութիւնը ամնենին մեղաւոր չէ, նորա զդացմունքները և զոհաբերութիւնը ազգակին զործերում նուն է, ինչ որ առաջ, այս դէպ-քում մեղքը բարդում է խորհուրդի վերակ, որ նորա գործ դրած միջոց-ները շատ էլ չաջող չեն եղել:—Դիմել մի քանի պարոնների և չը ստանալ բաւարար տուրք, դրանով դէռ չի բացատրում, թէ ժողովուրդի զգաց-մունքը մարել է դէպի շինութիւնը: Հարկաւոր է այդ դէպքում դիմել փո-խանակ անհատների ամբողջ հասարակութեան, թէ հարուստի և թէ աղքատի, թէ վաճառականի և թէ արհստաւորի և այն: Հարկաւոր է միայն դոցա ուշադրութիւնը գրաւել, իսկ այդ կարելի է անել թէ եկեղեցու բեմից քահանաների միջոցով և թէ հասարակական ժողովներ կազմնով: Թէ եղան կարծիքներ, թէ սխալ քայլ էր մի աղդպիսի մնծա-ծախս շինութեան ձեռնարկելը, բայց որովհեան զորա մասին մտածելը արդէն ուշ է, ուստի պէտք է աշխատել նրան, որքան կարելի է, շուտ վերջ տալ, որպէս զի գալ տարի կարելի լինի ուստամբարանը տեղափոխել նոր շինութեան մէջ, քանի որ հինը գտնում է խալտառակ դրաւթեան մէջ, որը պատիւ չէ բերում բագուակ հակ հասարակութեան: Երկար վիճաբա-նութիւնից լետու ժողովը որոշեց՝ 1) Ընտրել շինութեան գործում երկու հմուտ մարդիկ, իբրև օգնականներ պ. Պ. Պուկառեանցի, որը մինչեւ այժմ միահակ վարել է այդ պաշտօնը, իսկ այժմ իւր մասնաւոր զործների պատ-ճառով անկարող է մէնակ վարել այդ զործը: Ընարւեցան պ. Պ. Հարա-բանդեանց և Գրիգոր Առանեանց. 2) Կաղմել մի մասնաժողով հանգանա-

կութեան դործին օդնելու. դորա համար ընտրւեցան պ. պ. Հ. Մէլիքեանց, Միքայէլ Արամեանց. Գ. Թումանէանց, Յովակիմ Աղամեանց, և Յակ. Աղբեսեանց, Ինչպէս լսում ենք, արդէն նոյն պարոնների շնորհիւ մի օրում ժողոված է մօտ 6.000 ր., լուս կայ, որ եթէ աղապէս գնալու լինի ստորագրութիւնը, ալս տարի շնորթիւնը կը վերջանաէ:

Սրանից չետոյ կարգացմաց խորհուրդի 1890 թւականի համար կաղմած նախահաշիւը, որ նմանապէս երկար վիճաբանութիւններից լիտոյ հաստատեց ալսպէս.

Մ Ո Խ Տ. 1) Դրամագլխոց տոկոսիք—4.500 ր. 2) Խաղատոմսերի կտրօններից 240 ր. 3) Տարեկան անդամներից 200 ր. 4) Ներաբերութիւններից 500 ր. 5) Բանկից գիվիդէնդ և պրեմիա 10 ր. 6) Նկուղի վարձ 300 ր. և 7) Անակնկալ աղբիւրներից 300 ր., ընդամնը 6.150 ր.:

Ծ Ա. Խ. Բ. 1) Բաղուաէ երկսեռ դպրոցներին 3.000 ր. 2) Ընկերութեան ծառակին 60 ր. 3) Խաղատոմսերի ասլահովութեան 70 ր. 4) Շինութեան ապահովութեան 40 ր. 5) Շինութեան կարկատանաց 100 ր. 6) Տպագրական և պօստի ծախք 200 ր. 7) Գործավարական ծախք 100 ր. 8) Բարեգործական դէպքերի համար 100 ր. 9) Բաղուաէ Ռէալական դըպրոցի աղքատ համ ուսանողներին 130 ր. 10) Շամախու օրիորդաց ուսումնարանին 150 ր. 11) Կուբամի դպրոցին 200 ր. 12) Քլլվարի դըպրոցին 300 ր. 13) Խաչմազի դպրոցին 100 ր. 14) Ամրվանի դպրոցին 200 ր. 15) Սուլթան Նուխտաւ դպրոցին 200 ր. 16) Բէզլարքենդի դպրոցին 150 ր., 17) Վարդաշէնի դպրոցին 100 ր. 18) Հաղորութի դպրոցին 125 ր. 19) Գիրք գիւղի դպրոցին 125 ր. 20) Ղալակալի դպրոցին 100 ր. 21) Մէկսարի գիւղի դպրոցին 300 ր. և 22) Որդեգիր ուսուցչութեան համար 300 ր.: Գումարն է 6.250 ր.:

Նախահաշւի վերաբերմամբ վիճաբանութիւնները գլխաւորապէս վերաբերում են տեղոյն երկսեռ և Մէկսարի գիւղի դպրոցներին: Բաղուաէ դպրոցների վերաբերմամբ խուրհուրդի նախագահ պ. Անոնեանցը այն կարծիքի էր, որ մի այլպիսի պատկառելի գումար 3.000 ր. տալ տեղոյն դպրոցներին՝ մի այլպիսի չնչին ծրագիր իրագործելու համար՝ աւելորդ է համարում: Ընկերութիւնը անելիք գործեր շատ ունի, բայց դժբաղդաբար փող չ'ունի: Նորա համոզունքն է, որ ժամանակ է այդ գումարը կամաց-կամաց կրծատելով վերացնել և այդ հոգսը թողնել հողաբարձութեան և ժողովուրդի վերաբ: Խորհուրդի երկրորդ պատճառաբանութիւնը այն է, որ նորա համար պարզ չէ Ընկերութեան վարաբերութիւնը թէ գէպի ուսումնարանը և թէ գէպի հոգմոր իշխանութիւնը, և առ հասարակ նորա միջամտութիւնը դպրոցական կեանքի մէջ, նոր կանոնադրութեան զօրութեամբ, իրանից վերցրւած է: Խորհուրդի այս կարծիքը չարուցեց բուռն վիճաբանութիւններ: Ժողովականներից մի քանիսը կատարեալ համաձան լինելով պ. նախագահի կարծիքին, աւելացրին

և այն, որ ազդ օժանդակութիւնը կարելի է վերացնել և թող հոգաբարձութիւնը աշխատի միջոցներ ձեռք բերել. որ չնորհիւ պատրաստի դրամի, դատապարտաւած է անզործութեան: Ժողովականներից ոմանք էլ պնդում էին թէ աչժմ ուսումնարանին զրկելով իւր օժանդակութեան մի մասից, հոգաբարձութեան կարելի է նեղ դրութեան մէջ զնել, քանի որ նա իւր նախահաշիւը կազմել է՝ ի նկատի ունենալով Ընկերութեան իրան հասանելիք օժանդակութիւնը: Խոյա ցանկութիւնն է որ, եթէ կարելի է, ընդհակառակը, աւելացնեն, որպէս զի կարելի լինի ժամանակով այս դպրոցը վերածել թեմականի, որպիսի ցանկութիւն ունի և սրբազն առաջնորդը: Ազդ հարցը պաշտպանողներից կային և աճնպիսիները, որոնք հարկաւոր են համարում ուսումնարանին օգնել հէնց այն պատճառով, որ իրը թէ շատերը տեսել են և կտակել դումարներ, աչքի առաջ ունենալով Բագուաչ դպրոցները: բայց ազդ հերքուեց, ասելով որ ազդ տեսակ սահմանափակ զգացմունքներ չարդու հիմնադիրները և անդամները չեն ունեցել: Այս առթիւ եղած երկար վիճաբանութիւններից լետու խորհուրդի ակ. Նախազահը լալտնեց, որ ինքը բարւոք է համարում ընտրել մի չանձնաժողով, չանձնելով նրան մշակել մինչև գալ ընդհանուր ժողով այս հարցերը, թէ ինչ ուսման ծրագիր սիրտի ունենան մեր այստեղի ուսումնարանները, ինչ կազմութիւն, ինչ վարչութիւն և ինչ չարաբերութիւն պիտի ունենայ Ընկերութիւնը դէպի հոգևոր իշխանութիւնը և ընդհակառակը: Ընդհանուր ժողովը քննելով նոյա ներկայացրած՝ իւր կողմից կ'առաջարկի ուր հարկն է: Ժողովը հաւանութիւն տալով այս առաջարկութեան, ընտրեց չանձնաժողովի անդամներ հետեւեալ պարուներին. պ. պ. Բէղլար Ստեփանեանցին, Պուկասեանցին, Միքայէլ Յովանեանցին, Եսավի Սաֆարեանցին, Ն. Աբելեանցին, Հ. Ղուկասեանցին, Աստուածատուր Կաճկաճեանցին, Ա. Գալստեանցին, Միքայէլ Ալիքէղեանցին, Եղիշէ քահ. Գեղամեանցին, Խորէն քահ. Միրզաքեպսանցին, Էմմանուէլ Փերբուդաղեանցին, Գ. Թումաչեանցին և Խրիստափոր Անտոնեանցին:

Գալով Մէսարի գիւղի դպրոցին, որի մասին սրբազն առաջնորդը մի լինդրագրով զիմել է Ընկերութեան, լինդրելով 300 ր. նպաստ վերցիշեալ գիւղում դպրոց ունենալու համար, ժողովականներին երկար վիճաբանութեան առիթ տևեց: Սրբազնը իւր գրութիւնով մի և նոյն ժամանակ բացատրում է, թէ ինչն է ստիպում ազդ գիւղում դպրոց ունենալու: Գրութիւնից չալտնեց, որ ազդ գիւղին սպառնում է վտանգ, այն էլ կրօնափոխութեան կողմից, եթէ շուտափովթ օգնութիւն չը հասցնեի: Սրբազնի միտքն է՝ նշանակել ազդ դպրոցում մի քահանակի, որը մի և նոյն ժամանակ և քարոզչի դեր էլ պիտի կատարի: Որովհետեւ վիճաբանութիւնները այս առթիւ երկար տևեցին, ուստի լիտաճգւեց միւս նիստին, որ որոշեց նշանակել լուսւարի 29-ին:

Յունւարի 29-ին կալացաւ քաղաքացին խորհրդարանի դահլիճում ընդ-

հանուր ժողովի երկրորդ նիստը, Ներկայ էին 36 անդամներ և 22 հիւրեր։ Նախագահը և ատենադպրութեան էր, որ այս նիստի մեծ մասը ևս նւիրւեց նրան։ Այս անգամ ժողովականներից մի քանիսի տեղեկութիւնները աւելի ևս հաստատեցին սրբազն առաջնորդի ասածները։ նոյա ասելով, փրաւի որ ամբողջ գաւառում հազիւ թէ գտնւի մի այսպիսի քառ ընկած, գոեհիկ, կոպիտ, տղէտ և դիւրահաւատ ժողովուրդ։ Դժնւեցան և ավալիսի անձինք, որոնք այս հարցի մէջ աւելի խորը մտան։ ալապէս պ. պ. Ս. Թառաւնանցը, Էմմանուէլ Փիրաւդաղեանցը և ն. Աբելեանցը բացարեցին, որ կրօնափոխութեան ախտը վերաբերում է ոչ միայն փշեալ գիւղին, այլ և համախու գաւառի գիւղերի մեծ մասին և այդ պատճառով հարկաւոր են համարում, քանի որ գեռ ուշ չէ, չուտափութ օգնութեան հասնել, եթէ ոչ շատ շուտով կարող ենք զրկել մի ամբողջ գաւառից։ Դորա համար իւրաքանչիւրը առաջարկում էր իւր միջոցները։ Մէկի կարծիքով գիւղական զպրոցը անզօր կը լինի այդ ախտի առաջը առնելու, որ առ այժմ հարկաւոր է ունենալ քարողիչ ամբողջ գաւառի համար, միւսը չարմար է զանում զպրոցը իւր քարողիչ քահանացով, իսկ երրորդը երկուսն էլ անհրաժեշտ է գտնում այդ գործում։ Ժողովը երկար քննելուց լեռու վճռեց սրբազնի առաջարկութիւնը լարգել և տալ խնդրած 300 ր., մի և նոյն ժամանակ պարտաւորացրին, որ խորհուրդը այդ մասին բանակցի սրբազնի հետ, որ նշանակվի մի այնպիսի հմուտ քահանայ, որ ունենար մի և նոյն ժամանակ և ուսուցչական իրաւունք և կարողանար արդարացնել իւր վերակ դրած լուսերը։ Մեր համեստ կարծիքը այս հարցում այն է, որ այդ երկու ծանր պաշտօնները միացնելով մի անձնաւորութեան մէջ, դրանով և ոչ մի նպատակի չննք հասնիլ, կը կաղի ե՛ զպրոցական գործը և՛ քարողչականը։ հարկաւոր է անպատճառ իրարուց զատել այդ երկու պաշտօնները, համանաւանդ որ այդ տեսակ անձնաւորութիւն հազիւ թէ մեր մէջ գտնւի, որ վերոիշեալ չնչին ոռնիկով համաձանէր դնալ գիւղը մի այդ տեսակ միստիչի համար։ Այդ գործարով կարելի է շատ թէ քիչ կանոնաւոր ուսուցիչ վարձել, որը լաջողութեամբ կը տանէր ուսումնարն գործը, իսկ քահանացի մասին պիտի առանձին մտածել։

Որովհետև Ընկերութիւնը այդ նպատակով ամելորդ դրամ չ'ունէր, ուստի Հայր Նղիշէն և պ. Դորուխանեանցը խոստացան ներկայացնել խորհուրդին, երբ վերոիշեալ վճուի մասին բաւարար պատասխան կը ստացւի սրբազն առաջնորդից։

Վերոիշեալ հարցի հետ կապ ունէր և քարողիչ հարցը, որը քանիցս ընդհանուր ժողովներում վարուցմել է, բայց միշտ մնացել է անկատար, չը նալած, որ դրամը պատրաստ է, Բանը նրանումն է, որ մենք չ'ունինք քարողիչ, ինչպիս երեաց խորհուրդի տւած տեղեկութիւնից, որը քանիցս դորա մասին դիմել է կաթուղիկոսին, բայց միշտ ստացւել է բացասական-

պատասխան, այն է, որ հողեռականացս մէջ քարոզիչ չը կայ: Այս որգան ցաւալի լինի, բայց և աշնապէս դառն ճշմարտութիւն է: ի վերջոյ հարցը վճռւեց ախտէս: լանձնել խորհուրդին դորս մասին դարձեալ բանակցել հոգեոր իշխանութեան հետ, լայտնելով որ նշանակած է քարոզչի համար 1.500 ր., եթէ անձնաւորութիւն կայ ի նկատի, բարեհաճի նշանակել:

Սրանից լետոյ կարդացւեցին խորհուրդին ուղղւած խնդիրները: Դոցանից նորա, որոնք վերաբերում էին Ընկերութիւնից օժանդակութիւն խնդիրուն, գումար չը լինելու պատճառով, մերժւեցան. բայց և այն պէս որոշւեց 300 ր. տալ այն որդեգրին, որը կը կամնար պատրաստւել ուսուցչական ասպարիզի համար: Լսւեց և խորհուրդի անդամներից մէկի, այն է պ. Պ. Ղուկասեանցի հրաժարականը, որով նա չափանում է, որ անձնական գործերի շատութեան պաճառով այլ և ս անկարող է վարել Ընկերութեան գործերը: Ժողովը աչքի առաջ ունենալով նորա օգտաէտ գործունէութիւնը և նորա անհրաժեշտ լինելը շինութեան գործում, վճռեց մի պատզամատորութիւն ուղարկել նորա մօտ և խնդրել որ ստանձնած պաշտօնը լանձն առնի վարել մինչև տարւայ վերջը, երբ կը լինի բոլոր անդամների վերընարութիւնը: Լսւեց նոյնպէս խորհուրդի անդամներից երկուսի հրաժարականը՝ այն է պ. պ. Կարապետեանցի և Զալեանցի: որոնք հրաժարաւում են քաղաքիցս առ միշտ բացակաչ լինելու պատճառով: Ժողովը նոցա տեղ գաղտնի քւէարկութեամբ ընտրեց հայր Եղիշէ Գեղամեանցին և պ. Դոլուխանեանցին, առաջնին 11, իսկ երկրորդին 21 ձախով. որովհետև առաջինը վերստուգոյ լանձնաժողովի անդամ էր, այդ պատճառով նորա տեղ ընտրեցին պ. Ն. Սարումեանցին:

Սրանից լետոյ պ. Անտօնեանցը լայտնեց, որ Ընկերութեան խաղատումներից մէկը այս տարի տարել է 500 ր., և խնդրում է որոշել, թէ ինչ պէտք է անել այդ գումարը. Ժողովը որոշեց միացնել մայր գումարի հետ: Ժողովը լսեց հասարակութեան գրաւոր խնդիրը, որ վերաբերում է քաղաքիս աղքատանոցին: Խնդրատու պարոնները խնդրում են չարգոյ ժողովից, որ աղքատանոցի վարչութիւնը և գործավարութիւնը ամելի կանոնադրուի և ենթարկել հասարակական հսկողութեան: Սորա մասին եղան վիճաբանութիւններ, որից լետոյ եկան այն եղբակացութեան, որ հասարակական շինելու համար հարկաւոր է նրան կապել եկեղեցու հետ: Գորա համար աղքատանոցի հոգաբարձութիւնը արդէն դիմուլ է ուր հարկն է և առաջարկել է կանոնադրութիւնը ի հաստատութիւն, որից լետոյ նա պարտաւոր է տալ տեղեկութիւններ աղքատանոցի վիճակի մասին:

Ժողովը փակւելուց առաջ նախագահը առաջարկեց իւրաքանչիւր տարի, մայիսի 21-ին, տօնել Ընկերութեան տարեղարձը: և ի պատիւ այդ օրւայ կազմուլ մի ժողովուղական զքոսանք չօգուտ Ընկերութեան:

Այս առաջարկութիւնը միաձայն ընդունեց, որից լետոյ ժողովը փակւած համարեց:

Ժողովը վերջացաւ ժամը 10-ին:

### ԱԽԵՑԻՄ ԶԼԻՑԵԱՆՑ

Բաղու:

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՅՍԵՐ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

«Մուրճ»-ի ընթերցողների առջև դնում ենք այսուեղ թարգմանօրէն գերմանական կայսեր Վիլհելմ II-ի երկու հրամանագրերը, որոնք ուղղած են գերմանական կանցլէր իշխան Բիսմարկին և Պրուսիայի առևտրական մինիստրին՝ բանտորների դրութեան մասին։ Այդ հրամանագրերը տպւած են „Reichsanzeiger“ թերթում, որը գերմանական կայսերութեան պաշտօնական թերթն է։ Ահա՝ դոքան ցես վճռած եմ զերմանական բանտորների դրութեան բարելաւելուն ձեռք մեկնել, որքանով որ ինձ կը ներեն այն սահմանները, որոնք սահմանած են իմ խնամատարութեանս՝ գերմանական արդիւնագործութիւնը համաշխարհային վաճառանոցում մրցութեան ընդունակ պահպանելու և դրանով՝ նորա և բանտորների ապրուստը ապահովելու պայմանով։ Բնիկ արդիւնագործութեան յետագնացութիւնը՝ արտասահմանում վաճառատոններ կորցնելով՝ ոչ միայն գործատերերին, այլ և բանտորներին հացից կը զրկէ։ Մեր բանտորների դրութիւնը բարելաւելու դժւարացնող հանգամանքները՝ միջազգային մրցութեան սպայմանների մէջն են թագնւած։ և այդ պատճառով այդ դժւարութիւնների եթէ ոչ ջնջելը, գեթ նոցա թուլացնելը կարելի է միայն համաձայնութիւն կայացնելով այն երկիրների հետ, որոնք տիրապետում են համաշխարհային առևտրին։ Համոզւած լինելով, որ նաև ուրիշ կառավարութիւններ ներշնչւած են ցանկութիւնով՝ այդ ձգտումները մի ընդհանուր քննողութեան ենթարկել, որոնց մասին այդ երկիրների բանտորները իրար մէջ արդէն միջազգային բանակցութիւններ են կցած, ես ցանկանում եմ,

որ նախ Ֆրանսիացում, Անդլիայում, Բելգիայում և ԶԼիցերիայում իմ աջանեղի ներկայացուցիչների միջոցով պաշտօնապէս հարցնեի, թէ այդ կառավարութիւնները հակւա՞ծ են արդեօք մեզ հետ բանակցութիւն անելու՝ անմնելու թէ կարելի՞ է արդեօք միջազգային համաձայնութիւնով բանտորների այն ցանկութիւններին և կարիքներին բաւարարութիւն տալ, որոնք երեան եկան վերջին տարիների գործադուլներով։ Հենց որ իմ զրդման համար համաձայնութիւնը ձեռք բերւած կը լինի, ես ձեզ յանձնարարում եմ, բոլոր այն կառավարութիւնների կաբինետներին, որոնք բանտորական խնդրի մէջ հաւասար մասնակցութիւն ունին, հրաւիրել մի համախորհուրդի (կօնֆերենց) առաջարկելի հարցերի մասին խորհրդակցելու համար։ Բերլին, 4-ն փետրվարի, 1890 թ. ՎիլհելմԿ. Պ.-Պետական կանցլերին։

Եմ կառավարութեան մէջ մտնելուն պէս՝ ես իմ վճիռը յայտնեցի, մեր օրէնսդրութեան զարդացումը նոյն ուղղութեամբ առաջ տանել, ինչպէս Աստուծոյ գոգում հանգչող իմ պասպ իմ ժողովրդի տնտեսապէս աւելի թոյլ մասի հոգատարութեան համար քրիստոնէական բարոյականութեան վարդապետութեան ոգով լնդունել էր։ Որքան էլ մեծարժէք և մեծայաջող են եղած օրէնսդրութեան և վարչութեան կողմից գործադրած միջոցները բանտոր դասակարգի զրութիւնը բարելաւելու համար, բայց նոքա դեռ ևս ամբողջապէս շեն լրացնում ինձ առաջադրած խնդիրը։ Բացի այն, որ օրէնսդրութիւնը բանտորների ապահովացման մասին պէտք է շարունակել կատարելագործելու, պէտք է քննութեան ենթարկել գոյութիւն ունեցող գործարանական օրէնսդրութեան որոշումները վերաբերեալ գործարանների բանտորներին, այդ առիթով լսւած գանգատներին և ցանկութիւններին բաւարարութիւն տալու համար։ Այդ քննութիւնը պէտք է այն տեսակէտից բղխէ, որ պետական իշխանութեան խընդիրներից մէկը այն է, որ աշխատանքի ժամանակը, տեսդութիւնը և տեսակը անպէս կանոնաւորւի, որ բանտորների առողջութեան պահպանումը, բարոյականութեան պահանջները և տնտեսական կարիքները և նոյն օրինական իրաւունքների հաւասարութիւնը պաշտամնաւած լինին։ Գործառէրերի և բանտորների մէջ հաշտութիւնը

պահպանելու համար՝ պէտք է ձևեր ստեղծել, որոնցով բանւորները, իրանց հաւատարմութիւնը վայելող ներկայացուցիչների միջոցով, ընդհանուր գործերի կանոնաւորելուն մասնակից լինին և ընդունակ՝ գործատէրերի և իմ կառավարութեան օրգանների հետ բանակցելու ժամանակ՝ նոցա շահերը պաշտպանել: Մի այլպիսի ձև ստեղծելով պէտք է կարելիութիւն արևի բանւորներին, որ սոքա իրանց ցանկութիւնները և գանգատները ազատ և հաշտ կերպով արտայատեն և պետական վարչութիւններին առիթ տան՝ բանւորների. դրութեան մասին միշտ տեղեկանալ և նոցա հետ շփւել:

Պետական հանքագրքարանները, կամենում եմ ես, վերաբերեալ բանւորների խնամատարութեան, իբր օրինակելի գործարաններ՝ զարգացած տեսնել, և մասնաւոր անձերի հանքագործութեան համար ձգտում եմ ես մի օրգանական յարաբերութիւն ստեղծել իմ հանքասլաշտօննեաների հետ, նման գործարանների վերահսկող վարչութիւնների գիրքին, որպիսին գոյութիւն ունէր մինչ 1865 թւականը: Այս հարցերի նախապատրաստութեան համար կամենում եմ ես, որ պետական խորհուրդը ժողովւի իմ նախագահութեամբ և մասնակցութեամբ այն գործին հմուտ անձերի, որոնց ես գորա համար կանչելու եմ: Վերջիններիս ընտրութիւնը ես ինձ եմ վերապահում:

Այն դժւարութիւնների շարքում, որոնք իմ նախադիտած բանւորների հանգամանքների կարգաւորելու դէմի են կանգնած, մի նշանաւոր տեղ են բռնում նոքա, որոնք յառաջանում են անհրաժեշտութիւնից՝ բնիկ արդիւնագործութիւնը արտասահմանի մրցութեան դիմաց ինսյել: Այդ պատճառով ես պատվիրել եմ պետական կանցլէրին, այն պետութիւնների կառավարութիւնների մօտ, որոնց արդիւնագործութիւնը մերի հետ միասին համաշխարհային առևտութիւն տիրապետել են, զրդել մի կօնֆերենց գումարելու խնդիրը, միջազգային հաւասար կարգ ստեղծելու համար, որպէս զի բանւորներից պահանջւող գործունէութեան սահմանները որոշւեն: Պետական կանցլէրը ձեզ կը հաղորդէ իմ դէպի նրան ուղղած հրամանագիրը: Քերլին, 4-ն գետրւարի, 1890 թ. Վիլհելմ Թ. Հասարակաց աշխատանքների և առևտութիւն ու արդիւնագործութեան մինիստրներին»:

Z.

«ՄԱԻՐՃ»-ի ԽՄԲԱԳՐԱՏԱՆ ՄԷՋ ՎԱՃԱՌԻՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԳՐԲԵՐԸ.

թ. կ.

|                                                                                                             |    |   |
|-------------------------------------------------------------------------------------------------------------|----|---|
| «ՄԱԻՐՃ» ամսագիր, 1889 թ., երկու հատորով . . .                                                               | 12 | — |
| ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ ԱԿ. — «Ազգաբնակութիւնը և ազգա-<br>բնակչական շարժումները» . . . . .                              | 40 | — |
| ՆԱՅՆ ՀԵՂԻՆԱԿ. — «Հողատիրութիւնը և հասարա-<br>կութիւնը» . . . . .                                            | 40 | — |
| ԲՈԿ բժիշկ. — «Փիղիքական և մտաւոր զարգացման<br>մասին» . . . . .                                              | 30 | — |
| ԱՐԱԾԽԱՆԻԱՆЦЪ А. — „Закавказская хлѣбная тор-<br>говля“ . . . . .                                            | 75 | — |
| ” ” ” — „Закавказские шелкометальные<br>заводы“ . . . . .                                                   | 80 | — |
| ԱՄԱՍԱՐԴԵԱՆՑ ՑԻԳՐԱՆ. — «Փողովրդական հեքիաթ-<br>ներ», 4-րդ գիրք . . . . .                                     | 50 | — |
| ” ” ” «Փողովրդական հեքիաթ-<br>ներ», 5-րդ գիրք . . . . .                                                     | 50 | — |
| ՊԻՇԵՍԵԱՆՑ ՊԵՐՃ. — «ՅԵՅԵՐ» — (վէպ) . . . . .                                                                 | 1  | — |
| ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ ԳՐԻԳՈՐ ԳԱՍՊԱՐԻ (Ղ.ՂԱՐԳԻ)՝ Ման-<br>կառածութիւն . . . . .                                      | 50 | — |
| ԱՏՐՊԵՏԵԱՆ ՍԱՐԳԻՍ. — «ԽԵՒ-ԿԱՐՍԱԳԵՏ» — վէպ հայկաթօլիկոն-<br>իկ կեանքից . . . . .                              | 1  | — |
| Լ.Յ.Օ. — «ԿՈՐԱԾՆԵՐ» — (վէպ) . . . . .                                                                       | 50 | — |
| ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ ԳՐԻԳՈՐ, բժշկ. (Ղ.ՂԱՐԳԻ)՝ «ՄԱՆՈՒԿՆԵՐԻ<br>ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ. ՄԻ ՔԱՆԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԵ» — 5 |    |   |
| Ճանապարհածախոս խմբագրութեան վերայ է; Դրամի տեղ կա-<br>րելի է ուղարկել պօստի մարկաներ:                       |    |   |

ՀԱՆԴԵՍ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ

Ժողովածուի երրորդ և չորրորդ գրքերը լոյս կը տեսնեն ներկայ 1890 թ.  
կանոնաւորապէս իւրաքանչիւր կիսամեակում; Ամեն մի գիրքը բաղ-  
կացած կը լինի 25—32 թերթից; Բաժանորդագինն է երկու գրքի  
համար 3 ր., իսկ առանձին ամեն մեկը 2 բուբլի:

Յանկացողները դիմում են հետևալ հասցեով՝

Москва, Газетный переулокъ, д. Ліанозова. Типографія М. Бар-  
хударянцъ.

# ԵՃԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

(ԹԻՖԼԻՍ, ՄԻՔԱՅԵԼԵԱՆ ՓՈՂՈՑՈՒՄ)

Տրւումնեն հայերէն գրքեր։ Ամսական վճարը 20 կոպէկ է։  
Սկզբնական գաղրոցների աշակերտոնները և աշակերտուհիները վճարում  
են 10 կոպէկ։

Գրադարանը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 2, և երե-  
կոյեան 5 ժամից մինչև 8 ժամը, իսկ կիրակի օրերը առաւօտեան  
9—12 ժամը։

## ԹՂԹԵՐԻ ՊԱՀԵԱԾ



### ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏԻԱԾ

ԹԻՖԼԻՍԿՈՎՍԿՈՒ ԹՂԹԵԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ։

Ունի մեծ քանակութեամբ պօստի, գրելու, գրքերի, լրագրա-  
կան, ծխախոտի, գոյնաւոր, փաթեթների և այլ թղթերի՝ գործարա-  
նական գներով, որպէս նաև մեծ ասօրարիմնու դրամականի իրեղէնների։

Հասցէն նամակների համար՝ Տիֆլիս. Դարձավա ոլ., ճ. Դարձա-  
սկаго банка, складъ Дитяковск. фабрикъ.

Հեռագրերի համար՝ Տիֆլիս. Դիտյաковское Общество.

## РЕСТОРАНЪ ШУРЬ-ГВИНО

На Головинскомъ проспектѣ, въ домъ князя Багратион-Мухран-  
ского (подъ Тифлисскимъ собориемъ).

Ежедневно приготавляютъ кушанья Европейской и Азіатской кухни.  
Специальность гурйскихъ блюдъ. Обѣды по-мѣсячно изъ 2-хъ блюдъ  
отъ 12 руб. Отпускаются также и на домъ.

Напитки и вина изъ лучшихъ фирмъ кн. И. К. Багратионъ-  
Мухранского и другихъ фирмъ отъ 40 коп. бутылка и дороже. Пиво  
местныхъ заводовъ, а также одесское и жигулевское.

При ресторанѣ отдѣльные семейные кабинеты. Билларды русский  
и французский, нардъ и шахматъ. Получаются журналы и газеты мѣ-  
сячные и столичные. Для пріѣзжихъ меблированные комнаты отъ 50  
коп. до 1 р. 50 коп. по-суточно и отъ 12—30 руб. по-мѣсячно. Рус-  
ский биллардъ приобрѣтенъ на кавказской выставѣ, гдѣ получилъ пер-  
вую награду.

# Ի ՍԿԱԿԱՆ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐ

## „ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԶԻՆԳԵՐԻ“ ՚ՆԻՒ-ԵՇՎԿՈՒՄ

### ԱՐ Փ Ա Ն Ա Ց Ա Ռ



աշխարհի մէջ կարևոսեքինաների բոլոր ցուցահանդէմներում

### ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ

Կարիոր ընկերներ տան տիկինների և աղջիւ օգնականներ  
բոլոր արհեստաորների համար

### ԳՏՆԻՈՒՄ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ

Թիֆլիսում: Զեղերի ընկերութեան կենդզոնական պահեստում: Գո-  
վինսկի պրօսպեկտի վերայ, Ֆիբեմանովին տան նրա բաժանմունք-  
ների մէջ:

Բագրում: Մեքայէլեան փողոցում: Թաթումում: Պոլիցիական փողո-  
ցիցայ Աւագեանի տ.  
Քոթայիսում: Բուլվարի գէմ: Թէհանում: Մարշ-Մէյզանի  
գէմ: Բուլվարի վերայ:

և յանց ճանապարհորդող գործովաչէրի հայ

Միջին և Հիմսիսցին և Բարօղացի ՀԱՐՄԱՐ ԶԻՆԳԵՐԻ և ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՐԴՅՈՒՆ ՊՈՐԾԱԿԱՆԻ ՄՈՏ



Ա Ր Ա Վ Կ Ա Ջ Ա Կ Ա Ր

Գնողները կարող են, ևթէ կամենում են, զբամբ հետզեաէ վճարել սակաւ քանակութեամբ, այն է՝ շարաթով կամ  
ամսով և կամ ժամանակամիջոց սատնալ զբանականով զբամբ վճարելու համար:



Յ. Գ. Զինգերի և ընկ. բոլոր պահեստներում գանձում են մեքենաներին ուստիշանելի զործիքները, ինչպէս են.  
ասեղներ, թել, մետաքս և այլ մեքենակին ուստիշանելի իրեղեններ ամենաչափաւոր գներով:

■ ■ ■ ■ ■

# the Laffer

—

— ■ ■ ■ ■ ■



■

TECHNIKUM MITTWEIDE

## ՏԵԽՆԻԿՈՒՄ ՄԻՏՎԱՅԴԵ

### Սաքսոնիայում

ԴԻՐԵԿՏՈՐ՝ ԻՆԺԵՆԵՐ Կ. ՎԵՑՑԵԼ

ՄԵՐԵՆԱՆԵՐԻ-ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ-ԴՊՐՈՑ.-ԱՐՀԵՍՏԱՆՈՅՆԵՐԻ  
ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ԴՊՐՈՑ

23-ԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Այս գպրոցը, որը գտանւում է Միտվայդէ քաղաքում, Գերմանիայում, (թագաւորութիւն Սաքսոնիա), տալիս է մի ամբողջացրած կրթութիւն Մեքենաներ շինելու և դորա ամենամօտ առարկաների հետ ծանօթացնելու համար. որպիսիք են՝ ելեկտրօ-տեխնիկ և ջրաղացների շինութիւն:

Սիստեմական ուսումնական ազդ հիմնարկութիւնը պատրաստում է հետեւալ մասնագիտութիւնների համար.

1. Ինժեներներ և կօնսարուկորներ՝ մեքենաներ շինելու, ելեկտրօտեխնիկի և ջրաղացներ շինելու համար:

2. Ապագայ մեքենաների զործարանների տէրերին, որոնք իրանց ստորագրեալների չափ սիչաք է հասկացողութիւն ունենան, ազդ զպրոցը տալիս է պատշաճաւոր կրթութիւն:

3. Ամեն ուրիշ տեսակ զործարաններ ունենալու համար, ուր հարկաւորում է մեքենաների սարք ու կարգ, որպէս՝ թղթի, փալտենիւթերի գործարաններ, շողի և ջրի աղացներ, մանելու, գործելու, ապակու, կրախմալի, շաքարի, ասեղների, պողպատէզըիների, կահ-կարասիների, քիմիական զործարաններ, գաղի, լուցկի գործարաններ և այն և այլն:

4. Գիրեկտորներ և կառավարիչներ պատրաստելու համար չիշւած գործարանների համար:

Արհեստանոյների վարպետների զպրոցը պատրաստում է վարպետներ՝ ազդ բոլոր տեսակ մեքենաները շինելու համար:


Ընդունելութիւնը լինում է ամեն տարւակ առլրիլի և հոկտեմբերի միջին:

ՏԵԽՆՈՒԹԻՒՆԸ ուսման սուացին զպրոցում, նախած աշակերտի նախապատրաստութիւններին, լինում է  $2\frac{1}{2}$  կամ 3 տարի, երկրորդ զըպրոցում  $1\frac{1}{2}$  տարի:

ՏԱՐԻՔԸ ԸՆԴՈՒՆՈՂԻ պէտք է լինի 16 տարեկանից ոչ պակաս:

Սուն 18<sup>99</sup>/<sub>90</sub> թւականին բոլոր աշակերտողների թիւն է 886, ունցից իրուսաստանից՝ 66 հողի:

Դպրոցի բոլոր միւս մանրամասութիւնների համար կարելի է զիմել՝ «ՄՈՒԻՔԸ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐԱՑՈՒՆԸ, ուր ի միջի ալլոց կարելի է իմանալ ծրագրի, ամեն տեսակ ծախչերի և Միտվալդէի կեանքի, և դըպրոցի վարչութեան պահանջմունքների մասին:



# ՄՈՒՐԴ

## ԱՄՍԱԳՐԻ

1890 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԵՐ, ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ է:

|                               |                   |
|-------------------------------|-------------------|
| Տարեկան բաժանորդագիր. . . . . | <b>10 ր.</b>      |
| Կէս տարւամը . . . . .         | <b>6 ր.</b>       |
| Երեք տամսամը. . . . .         | <b>4 ր.</b>       |
| Մի գրքովը . . . . .           | <b>1 ր. 50 կ.</b> |

Հնդունառում է բաժանորդագրութիւն նաև մաս-մաս առաջին կիսամետկում ամերոջը վճարելու պայմանով:

Ուսուցիչները, վարժուհիները և բարձրադոյն դպրոցների ուսանողները վայելում են զիջումներ, համեմատ առանձին տպած յայտարարութեան:

«ՄՈՒՐԴ»-ի ծառալը տարեցտարի մեծացնելլ միանդամայն կախւած է բաժանորդագրութեան յաջողութիւնից: Ծառալիցն է կախւած նիւթերի հարատութիւնը: Այդ ոլառածառով մ.նք յորփորուց ենք մ.ը ներկայ բաժանորդներին՝ իրանց կողմից հարկաւոր ջանքը չը խնայել «ՄՈՒՐԴ»-ը իրանց ծանօթ շրջաններում տարածելու համար:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՈՒՄ ԵՆ

|                                  |              |
|----------------------------------|--------------|
| Ամսակուն մի երեսի համար. . . . . | <b>10 ր.</b> |
| , կէս երեսի համար . . . . .      | <b>6 ր.</b>  |
| , քառորդ երեսի համար . . . . .   | <b>4 ր.</b>  |

Դրքերի յայտարարութիւնների համար կարելի է վճարել նաև յայտարարւած դրքերով՝ ողա գների համաձայն:

Խմբագրութեան հասցեն՝ Տիֆլիս. Въ Редакцію журнала „МОУРЧІ“. Խմբագրութիւնը գտանւում է՝ Գանովեան փողոց, նոխիին առևն Յովհաննիսեանի, (Гановская улица, домъ бывш. Йоаниисиапи), բոլորովին մօտ երեանեան հրապարակին:

Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la Revue «MOURTCHI».